

**ՀՀ ԳԱԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ, ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

Արեն Վահրամի Տեր-Բալյան

Իրավունքի գլոբալացումն արդի ժամանակաշրջանում

(տեսական-իրավական վերլուծություն)

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԺԲ.00.01- «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար

Գիտական ղեկավար՝

իրավաբանական գիտությունների

թեկնածու

Լ. Ա. Ղազանյան

Երևան – 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1.

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԼՈՐԱԼԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱԼԻՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

- 1.1. «Իրավունքի գլոբալացում» հասկացության վերաբերյալ ժամանակակից հայեցակարգի մոտեցումներ11
- 1.2. Գլոբալ սոցիալական համակարգի ընդհանուր բնութագիրը 21
- 1.3. Իրավունքի գլոբալացման առաջացման նախապայմանները.....40

ԳԼՈՒԽ 2.

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԱՐԵՐԻ ԳԼՈՐԱԼԱՑՈՒՄԸ

- 2.1. Իրավունքի գլոբալացման դրսևորումները պոզիտիվ իրավունքում 60
- 2.2. Իրավաբանական գործունեության գլոբալացման առանձնահատկությունները. 100

ԳԼՈՒԽ 3.

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԼՈՐԱԼԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

- 3.1. Իրավունքի գլոբալացման եղանակների և ձևերի առանձնահատկությունները 112
- 3.2. Համեմատական իրավունքի պատմական զարգացումը, իրավունքի գլոբալացման ակունքներում124
- 3.3. Իրավունքի գլոբալացման ներառումը գլոբալացման ինդեքսներում.տեսական-կիրառական առանձնահատկություններ..... 135
- 3.4. Իրավակարգավորիչ մրցակցության առանձնահատկությունները իրավունքի գլոբալացման համատեքստում.....147
- ԱՄՓՈՓՈՒՄ..... 154**
- ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....161**
- ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....186**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի հետազոտության արդիականությունը. Քաղաքակրթությունների զարգացման արդի պայմաններում գլոբալացումը, որպես տարբեր քաղաքակրթական համակարգերի մերձեցման գործընթաց, ենթադրում է նաև այդ քաղաքակրթությունների իրավական համակարգերի ինտեգրում մեկ միասնական իրավական տարածություն՝ միևնույն ժամանակ պահպանելով ազգային-իրավական մշակույթների հարաբերական ինքնուրույնությունը և առանձնահատկությունները:

Զարգացումների այս համայնապատկերում իրավունքը ձեռք է բերում որակական նոր հատկանիշներ (օրինակ՝ ինտեգրման, հարատև փոփոխականության, փոխօրինակման, ճկունության, համադասման (կոորդինացման) և այլն) և նոր հնարավորություններ՝ վերածվելով վերպետական, վերազգային իրավունքի: Այս առումով գտնում ենք, որ իրավունքը աստիճանաբար ձեռք է բերում համաիրավական մշակութային նշանակություն և հասարակական հարաբերությունների համապարփակ սոցիալական կարգավորիչի հատկություն: Բացի դրանից անհրաժեշտ է ընդգծել, որ իրավունքը, որպես զուտ սոցիալ-նորմատիվ կարգավորիչ, ավանդական գործառույթից վերափոխվում է նաև քաղաքակրթությունների ինտեգրման հզոր գործիքակազմի:

Պետությունների, միջազգային և տարածաշրջանային քաղաքական և տնտեսական կազմակերպությունների ինտեգրացման գործընթացը տարբեր բնագավառներում իր ավարտական ձևակերպումն է ստանում իրավունքի միջոցով, որում արտացոլվել է նաև այդ գործընթացի մասնակիցների ազատ կամարտահայտությունը:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ համաշխարհային մակարդակով գլոբալացման գործընթացները չեն կարող իրականացվել առանց իրավունքի և իրավական գլոբալացման, որը շոշափում է ոչ միայն միջազգային, այլև ազգային-իրավական համակարգերը:

Բացի վերոնշվածից, թեմայի հետազոտության արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետությունը թավշյա, ոչ բռնի հեղափոխության արդյունքում միջազգային ասպարեզում ձեռք է բերել մեծ հեղինակություն ու համակրանք, ինչի շնորհիվ ակտիվորեն ներգրավվել է

միջազգային համապարփակ և տարածաշրջանային կառույցներում ու իրավական համակարգերում: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջացել նաև գիտականորեն ուսումնասիրել նոր իրողությունների պայմաններում իրավական գլոբալացման և իրավական ինտեգրման հետ կապված հիմնախնդիրները:

Հիմնականում վերոնշվածով է պայմանավորված թեմայի ընտրությունը և հետազոտության արդիականությունը:

Թեմայի գիտական ուսումնասիրության վիճակը: Սույն ատենախոսական աշխատանքի թեման հայրենական իրավագիտության մեջ գրեթե չուսումնասիրվածներից է, և այս առումով, սույն հետազոտությունը, մեծամասամբ լրացնելու է առկա բացերը: Չնայած դրան, հայրենական գրականության մեջ քննարկվող հիմնախնդիրը որոշակիորեն շոշափվել է հատկապես իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Վ.Ն. Այվազյանի, Գ.Գ. Հարությունյանի, Գ.Հ. Սաֆարյանի, Հ.Մ. Ստեփանյանի, Ա.Գ. Վաղարշյանի աշխատություններում, որոնք սույն ատենախոսության համար հանդիսացել են տեսական և մեթոդաբանական հիմք:

Քննարկվող թեմային անդրադարձ են կատարել նաև արևմտյան և ռուս գիտնականները, մասնավորապես՝ Վ. Բերնամը, Ռ. Դավիթը, Հ. Հարթը, Ս.Ս. Ալեքսեևը, Մ.Ի. Բայտինը, Գ.Վ. Մալցևը, Մ.Ն. Մարչենկոն, Վ.Ս. Ներսիսյանցը, Մ.Ա. Պշենիչնիկովը և այլոք:

Հավուր պատշաճի գնահատելով վերոնշյալ գիտնականների էական ներդրումն իրավական գլոբալացման հիմնախնդիրների լուսաբանման խնդրում՝ այնուհանդերձ գտնում ենք, որ սույն ատենախոսական աշխատանքը ընդգրկում է քննարկվող հիմնախնդիրների հետ կապված համալիր հարցադրումների շրջանակը և ներկայանում է որպես համակարգված ու ամբողջական գիտական հետազոտություն:

Հետազոտության օբյեկտն է իրավական գլոբալացումն որպես այդպիսին:

Հետազոտության առարկան է իրավական գլոբալացման հետ կապված համալիր հիմնախնդիրների ամբողջությունը, դրանց էությունը, առանձնահատկությունները, ժամանակակից հայեցակարգային մոտեցումները:

Հետազոտության նպատակն ու խնդիրները. Սույն ատենախոսական աշխատանքի նպատակն է արդի իրավագիտության դիրքերից և իրավական

պրակտիկայի վերլուծության հիման վրա կատարել համակարգված ու համալիր հետազոտություն՝ իրավական գլոբալիզացիայի էության և բովանդակային առանձնահատկությունների վերաբերյալ:

Դրված նպատակին հետամուտ՝ հեղինակն իր առջև դրել է **հետևյալ խնդիրների լուծումների անհրաժեշտությունը**.

- բացահայտել իրավական գլոբալացման հասկացությունը և էությունը,
- վեր հանել իրավական գլոբալացման բովանդակային առանձնահատկությունները,
- ներկայացնել իրավունքի գլոբալացման նախապայմանները,
- պարզաբանել իրավունքի գլոբալացման դրսևորումները պոզիտիվ իրավունքում,
- լուսաբանել համեմատական իրավունքի պատմական զարգացման ուղենիշներն՝ իրավական գլոբալացման համատեքստում,
- վերլուծել իրավակարգավորիչ մրցակցության առանձնահատկություններն իրավունքի գլոբալացման ընդհանուր համայնապատկերում:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը. սույն ատենախոսական աշխատանքում հեղինակն օգտագործել է ինչպես ընդհանուր գիտական, այնպես էլ՝ մասնավոր գիտական մեթոդները: Որպես ընդհանուր գիտական մեթոդաբանական հիմունքներ կիրառվել է համընդհանուր դիալեկտիկական մեթոդը, իսկ մասնավոր գիտական մեթոդներից՝ իրավահամեմատական, ձևական-իրավաբանական վերլուծության, համակարգային-կառուցվածքային վերացության և այլ մեթոդներ:

Հետազոտության տեսական հիմք են հանդիսացել հայրենական և արտասահմանյան գիտնականների՝ Ն.Ա. Այվազյանի, Պ. Արչերի, Ե.Ռ. Դանիելյանի, Վ.Վ. Լազարևի, Վ.Ն. Կարտաշովի, Պ.Ա. Կրուգի, Դ.Օ. Կուտաֆինի, Վ.Հ. Հովհաննիսյանի, Լ.Ա. Ղազանջյանի, Գ.Վ. Մալցևի, Մ.Ն. Մարչենկոյի, Օ.Վ. Մարտիշինի, Ա.Մ. Միրզոյանի, Լ.Հ. Մորգանի, Վ.Ս. Ներսեսյանցի, Ռ. Ռոբերտսոնի, Զ.Վ. Սալմոնդի, Գ.Հ. Սաֆարյանի, Տ.Գ. Սաֆարյանի, Օ.Ֆ. Սկակունի, Հ.Մ. Ստեփանյանի, Ա.Գ. Վաղարշյանի, Ա.Ա. Վասիլևի, Ա.Բ. Վենգերովի, Յու.Ա. Տիխոմիրովի, Ա. Քինգի, Լ.Լ. Ֆուլլերի և այլոց աշխատությունները:

Հետազոտության նորմատիվ հիմքն են կազմում միջազգային և ներպետական նորմատիվ-իրավական ակտերը, այդ թվում՝ ՀՀ Սահմանադրությունը, ինչպես նաև՝ դատական պրակտիկայի նյութերը:

Հետազոտության գիտական նորույթն ամենից առաջ կայանում է նրանում, որ հեղինակը համակարգված և համալիր վերլուծության է ենթարկել իրավական գլոբալիստիկայի հետ կապված համալիր հիմնախնդիրները, մասնավորապես՝ իրավունքի գլոբալացման էությունը, բովանդակային առանձնահատկությունները, զարգացման հիմնական միտումները, իրավական գլոբալացման ներգործության հիմնական ուղղությունները՝ ազգային իրավունքի և իրավակիրառ պրակտիկայի զարգացման վրա:

Սույն ատենախոսական հետազոտությունը աչքի է ընկում ներառված հարցադրումների բազմազանությամբ, դրանց համարժեք լուծումների հիմնավորվածությամբ և տրամաբանական փաստարկվածությամբ, ինչի շնորհիվ այն դրականորեն առանձնանում է հիմնախնդիրն նվիրված այլ գիտական աշխատություններից և ներկայանում է որպես համակարգված ու ամբողջական հետազոտություն, որը նորույթ է ոչ միայն հայրենական, հետխորհրդային, այլև՝ մասամբ արևմտյան իրավագիտության ոլորտում:

Հետազոտության գիտական նորույթի տարրեր են պարունակում նաև **պաշտպանության ներկայացվող հետևյալ հիմնական դրույթները.**

1. Արդի դարաշրջանի հիմնական մարտահրավերներից են իրավունքի համընդհանրացման, ստանդարտացման և տարբեր իրավական համակարգերի ինտեգրման օրինաչափ ու օբյեկտիվ գործընթացները, որոնք նշանակալի ներգործություն կունենան ազգային իրավաստեղծ և իրավակիրառ գործընթացների բովանդակային զարգացման վրա:

2. Իրավական գլոբալացման գործընթացն անխզելիորեն փոխկապակցված է համաշխարհային տնտեսական, քաղաքական գործընթացների, ինչպես նաև՝ սոցիալ-մշակութային արժեքների մերձեցման ու փոխազդեցությունների գործընթացների հետ, քանի որ վերջիններիս ներգործությունն ուղղակի կանխորոշում է իրավական

գործընթացի բովանդակությունը, որոշակիացնում է իրավական գործընթացներն ու եղանակները, իրավական ինտեգրման հիմնական ուղղությունները:

3. Համընդհանուր գլոբալացումը ենթադրում է, նախ և առաջ, սոցիալ-իրավական հարաբերությունների ինտեգրացում, ինչը պայմանավորված է իրավական սահմանների հաղթահարմամբ և նոր «իրավական տարածքների» նվաճմամբ, իրավահարաբերության սուբյեկտների կազմի ընդլայնմամբ:

4. Իրավական գլոբալացումը ենթադրում է նաև աշխարհում գոյություն ունեցող տարբեր իրավական համակարգերի մերձեցում, մասնավորապես խոսքը վերաբերում է անգլո-ամերիկյան իրավական ընտանիքների կոնվերգենցիայի գործընթացին: Այդ գործընթացի համատեքստում օրենսդրական ակտերը անգլոսաքսոնական իրավունքում ձեռք են բերում առաջնային իրավունքի աղբյուրներ, իսկ մայրցամաքային (ռոմանոգերմանական) իրավական համակարգում դատական նախադեպերը աստիճանաբար վերածվում են իրավունքի աղբյուրների:

5. Գլոբալ իրավական համակարգի կայուն զարգացման մոդելի ձևավորումն ու զարգացումը բազմաթիվ առումներով պայմանավորված են տարածաշրջանային և ազգային ենթահամակարգերի նպատակաուղղված, փոխհամաձայնեցված և փոխակերպվող գործընթացների արդյունավետությամբ, որոնք որպես կոնվերգենցիոն և տրանսֆորմացիոն գործընթացներ տևական ժամանակաշրջան կպահանջեն:

6. Ատենախոսությունում հեղինակը հիմնավորում է, որ գլոբալ համաշխարհային իրավունքը միմյանց հետ փոխկապակցված և փոխներգործող իրավական կառուցակարգերի ու միջոցների միասնական ամբողջական համակարգ է, որը որպես համաքաղաքակրթական իրավական մշակույթ և համընդհանուր նորմատիվ կարգավորիչ՝ կոչված է ապահովել անհատ-հասարակություն-պետություն-վերպետական կառույց փոխհարաբերության գործընթացը՝ սահմանելով իրավաբանորեն ամրագրված հանձնարարականների իրացման կարգը:

7. Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ իրավական գլոբալիստիկայի ձևավորումը տեղի է ունենում երկու ուղղությամբ՝ լայն և նեղ: Զարգացման լայն ուղղությունը հանդիսանում է գլոբալ իրավական համակարգի ձևավորման հեռանկարի ուսումնասիրություն, որն ընդգրկում է. 1) համընդհանուր իրավական

հասկացություններն ու սկզբունքները, 2) համընդհանուր նորմատիվ-իրավական ակտերը, 3) իրավահարաբերությունները, 4) համաշխարհային իրավական քաղաքականությունը, մշակույթն ու խորհրդանիշները, 5) միասնական իրավական պրակտիկան, 6) համընդհանուր ճանաչում ստացած իրավական ինստիտուտները, կազմակերպությունները, որոնք իրականացնում են իրավական քաղաքականությունը, ինչպես նաև զբաղվում են իրավաստեղծ, իրավակիրառ և իրավապաշտպան գործունեությամբ:

8. Իրավական գլոբալիստիկայի ձևավորման և զարգացման առաջին ուղղությունը հեռանկարային է և նախատեսում է գլոբալ իրավական համակարգի մեջ ներառել միջազգային իրավունքը, որը կարգավորում է պետությունների և միջազգային, միջպետական կազմակերպությունների միջև հարաբերությունները: Ավելին՝ կարգավորման ծավալն էականորեն խորանում է միջպետական հարաբերությունների ամրապնդման շնորհիվ, որոնք ներառում են միջազգային հանցագործությունների դեմ պայքարը, անձի իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ու երաշխավորվածությունը, էկոլոգիական խնդիրների լուծումը, գլոբալ ֆինանսական համակարգի կարգավորումը և այլն: Այստեղ են ի հայտ գալիս իրավական համակարգերի ներդաշնակեցման և միասնականացման գործընթացները:

9. Իրավական գլոբալիստիկայի ձևավորման և զարգացման երկրորդ՝ նեղ ուղղությունը, սահմանափակված է աշխարհում գլոբալ գործընթացները կարգավորող համընդհանուր նորմերի ձևավորման ուսումնասիրությամբ: Իրավական գլոբալիստիկան իրականացնում է գլոբալ հաղորդակցության սուբյեկտների հարաբերությունների, գլոբալ խնդիրների լուծման միջազգային գլոբալ նորմերի ձևավորման և կիրառման ոլորտի ուսումնասիրություններ և ընդգրկում է միջազգային իրավունքի այն բոլոր ոլորտները, որոնք իրենց ուրույն ազդեցությունն են թողնում արդի ազգային-իրավական համակարգերի ձևավորման վրա: Դրանցից են. ներպետական օրենսդրությունում ամրագրված միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքները, միջազգային քրեական իրավունքը, մարդու իրավունքների պաշտպանության միջազգային կառուցակարգերը, միջազգային էկոլոգիական իրավունքը և այլն:

10. Արդի ժողովրդավարական, իրավական պետությունում, որպես իրավունքի գլոբալացման արդյունք, բնական իրավունքն ու գործող իրավունքը միմյանց չեն հակադրվում, քանի որ դրական իրավունքն իրավաբանորեն ամրագրում է մարդու բնական, անքակտելի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի ամբողջությունը՝ ստեղծելով վերջիններիս պաշտպանության և իրացման համապատասխան երաշխիքներ և կառուցակարգեր:

Հիմք ընդունելով բնական և դրական իրավունքների փոխկապակցվածությունն ու փոխներգործությունն իրավունքի գլոբալացման համատեքստում՝ իրավունքը հանդես է գալիս հասարակական գիտակցության ձևի տեսքով, քանի որ յուրաքանչյուր օրենքի նորմ գործում է այն մարդկանց իրավահասակացության պրիզմայի ներքո, ովքեր ստեղծում, կիրառում և իրականացնում են դրանք:

11. Իրավական միջազգայնացումը հիմնականում գլոբալացման ընդհանուր գործընթացների հետևանք է, որն ընդգրկված է ժամանակակից հասարակության կյանքի հիմնական ոլորտներում: Իրավական միջազգայնացման էությունը կայանում է նրանում, որ ներպետական իրավունքը սերտորեն կապվում, միահյուսվում է ներպետական այլ իրավական համակարգերի հետ:

12. Աշխատանքում արդի պետության և իրավունքի տեսությունում իրավունքի միջազգայնացումը դիտարկվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործընթացների համատեքստում: *Իրավունքի միջազգայնացումը օբյեկտիվ համադրեքստում* մատնանշում է, որ շրջակա միջավայրը, ազատ տնտեսական հարաբերությունները իրենց ուրույն ազդեցությունն են թողնում անձի վրա, իսկ վերջինս, լինելով հասարակության անդամ, ձգտում է կյանքի ավելի բարենպաստ պայմանների և չափորոշիչների, ինչն էլ իր հերթին հանգեցնում է պետությունում միասնական իրավական կարգավորումներին:

Իրավական միջազգայնացման սուբյեկտիվ կողմն իր բնույթով նպատակաուղղված է և կազմում է որոշակի կանոնների, սկզբունքների, մեթոդների, եղանակների ամբողջություն, որի շնորհիվ իրագործվում է իրավունքի միջազգայնացումը: Իրավական միջազգայնացման միջոցների (ձևերի), շարքին են դասվում՝ ընդօրինակումը (ռեցեպցիան), ներդաշնակեցումը և միասնականացումը

(ունիֆիկացիան): Հարկ է նշել, որ արդի իրավաբանական գրականությունում իրավական միջազգայնացման ձևերի առանձնացումը հանդիսանում է դիսկուրսի առարկա, քանի որ իրավաբաններից ոմանք նույնականացնում են այդ բոլոր ձևերը, իսկ մյուսները հիմնավորում են դրանց տարանջատման անհրաժեշտությունը:

13. Իրավունքի գլոբալացման ներառումը գլոբալացման ինդեքսներում կարող է էապես նպաստել գլոբալ իրավական համակարգի կայուն զարգացմանը, իրավական ընտանիքների մերձեցմանն ու ներպետական իրավական համակարգում առկա խնդիրների լուծմանը:

Հետազոտության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ հետազոտության արդյունքների հիման վրա ձևավորված տեսական դրույթները և եզրահանգումները որոշակիորեն կզարգացնեն իրավունքի տեսության համապատասխան բաժինները, ինչպես նաև՝ ստացված արդյունքները կարող են օգտագործվել հետագա հետազոտողների կողմից՝ իրենց գիտական ուսումնասիրությունների գործընթացում:

Հետազոտության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ աշխատանքում ձևակերպված հիմնարար դրույթները կարող են օգտագործվել իրավաստեղծ և իրավակիրառ գործընթացներում, ինչպես նաև ուսումնական դասընթացների ժամանակ:

Հետազոտության արդյունքների փորձարկումը. Ատենախոսական աշխատանքը նախապատրաստվել է ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի Պետաիրավական հետազոտությունների բաժնում, որտեղ իրականացվել է աշխատանքի քննարկումն ու գրախոսությունը:

Ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի մի շարք գիտական հրապարակումներում:

Ատենախոսության կառուցվածքը: Աշխատությունը բաղկացած է՝ ներածական մասի երեք գլխից, որոնցում ներառված են ինը ենթագլուխներ, ամփոփումից և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԼՈՐԱԼԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱԼԻՐ ԻՐԱՎԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

1.1. «Իրավունքի գլոբալացում» հասկացության վերաբերյալ
ժամանակակից հայեցակարգի մոտեցումները

«Գլոբալացում» եզրույթը (լատ.-globus) լատիներենից թարգմանաբար նշանակում է գունդ, մոլորակ¹: Ակնհայտ է, որ «գլոբալացում» ներառում է «գլոբալ» բառը, ինչը նշանակում է «ամբողջ աշխարհին վերաբերող կամ ներառող» և համարժեք է հայերեն «համաշխարհայնացում» եզրույթին²:

«Գլոբալացում» եզրույթի լավագույն բացատրությունը ներկայացված է Քեմբրիջի անգլերեն բացատրական բառարանում համաձայն որի. «գլոբալացումը իրավիճակ է, որի դեպքում հասանելի ապրանքները և ծառայությունները կամ մշակութային և սոցիալական ազդեցությունները ամբողջ աշխարհում աստիճանաբար դառնում են միանման»³: Այս հասկացությունը և բազմաթիվ այլ հեղինակավոր բառարաններով տրված հասկացություններ չեն անդրադառնում իրավունքի և իրավական համակարգերի աստիճանաբար միասնական դառնալու հակվածությանը, ինչն էլ, ներկայիս իրականությունում դարձնում է իրավունքի գլոբալացման ուսումնասիրությունն արդիական և հրատապ: Ավելին, ծագումնաբանական և բառարանային հասկացությունները բավարար չեն գլոբալացման նման բազմատարր երևույթի էությունը հասկանալու համար:

Այսպես, «գլոբալացում» եզրույթի առաջին մեզ հայտնի կիրառությունը կարող ենք գտնել 1930 թ.-ին, սակայն, ինչպես նշվեց, ժամանակակից իմաստով այն կիրառվել և իր հանրային ճանաչվածությունն է ստացել 1980-ական թվականներին Թ. Լևիտի «Շուկաների գլոբալիզացիա» աշխատության շնորհիվ⁴: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ գլոբալացումը սկսվել է դեռևս մարդկության պատմության հնագույն ժամանակներից, երբ ցեղերը միավորվում էին ցեղախմբերի մեջ, երբ հզոր

¹ Տե՛ս Большая российская энциклопедия, <https://bigenc.ru/sociology/text/2364517/./08.10.2016/>.

² Ցանկանում ենք ուշադրություն հրավիրել այն փաստին, որ հայերենում հիմնականում կիրառվում է «գլոբալացում» եզրույթն, այլ ոչ թե դրան համարժեք «համաշխարհայնացումը»:

³ Տե՛ս globalization, <https://dictionary.cambridge.org/dictionary/english/globalization/./08.10.2016/>.

⁴ Տե՛ս **Levitt Th.** The Globalization of Markets// Harvard Bussiness Review. May-June 1983. № 3. P. 92-102.

պետությունները իրականացնում էին նվաճումներ՝ պարտադիր կերպով տարածելով իրենց մշակույթը նվաճված հողերում (հելլենիզմ, խաչակրաց արշավանքներ, ընդհուպ մինչև դեմոկրատիայի տարածում և այլն): Նշված օրինակներում գլոբալացումը դրսևորվում է առավելապես ռազմական ուժի կիրառմամբ, ինչը, կարծում ենք, հանդիսանում է գլոբալացման դրսևորման ամենից հին եղանակը:

Ուշագրավ է, որ Մ. Ալբրոուի և Է. Քինգի աշխատություններում «գլոբալացում» եզրույթը բնութագրում է բոլոր այն գործընթացները, որոնց միջոցով աշխարհի բոլոր մարդիկ միավորվում են մեկ հասարակության՝ աշխարհի հասարակության մեջ⁵: Մեկ այլ սոցիոլոգի՝ Է. Գիդդենսի «Արդիականության հետևանքները» աշխատությունում նշված է. «Գլոբալացումը, այսպիսով, կարող է սահմանվել որպես համաշխարհային սոցիալական հարաբերությունների ինտենսիֆիկացիա, որը կապում է հեռավոր բնակավայրերն այնպես, որ որևէ վայրում կատարվող իրադարձությունները հետևանք են երևույթների, որոնք տեղի են ունենում շատ մղոններ հեռու և հակառակը»⁶: Հարկ է նշել, որ Է. Գիդդենսը տարանջատում է գլոբալացման չորս հիմնական ոլորտներ, որոնցում իրականանում է գլոբալացումը: Դրանք են. 1) համաշխարհային կապիտալիստական տնտեսությունը, 2) ազգ-պետություն համակարգը, 3) համաշխարհային ռազմական կարգը, 4) աշխատուժի միջազգային բաժանումը⁷:

Սոցիալական հարաբերությունների գլոբալացման ուսումնասիրությունները կարևորում է հանրահայտ բրիտանացի քաղաքագետ Դ. Հելդը՝ մատնանշելով. «գլոբալացումը հանդիսանում է գործընթաց (կամ գործընթացների համակցություն), որը ներառում է սոցիալական հարաբերությունների և գործարքների տարածական կառույցի վերափոխումը, գնահատվում է դրանց ընդլայնմամբ, արագությամբ և ազդեցությամբ, ինչը ստեղծում է գործառույթների, փոխհարաբերությունների և ուժի կիրառման մայրցամաքային և տարածաշրջանային ցանց և հոսքեր»⁸: Իր հերթին, Ռ. Ռոբերթսոնն, անդրադառնալով համաշխարհային պատմության տարբեր

⁵Տե՛ս **Albrow M., King E.**, Globalization, Knowledge and Society: Readings from International Sociology, London, SAGE publications Ltd. 1990. P. 9.

⁶**Giddens A.** The Consequences of Modernity. Stanford. Stanford University Press. 1990. P. 64:

⁷Տե՛ս նույն տեղում, էջ 71:

⁸**Held D., A. G. McGrew, Goldblatt D., Perraton J.** Global Transformations: Politics, Economics and Culture. Stanford, SUP. 1999. P. 16.

դարաշրջաններին, նշում է, որ ներկայիս աշխարհը գտնվում ենք 5-րդ՝ «համաշխարհային անորոշության» փուլում, որտեղ գլոբալացումը հանդիսանում է համաշխարհային գործընթացների միասնականացման գործիք⁹: Իր հերթին, Մ. Սթեյքերն իր «Գլոբալացում. շատ կարճ նկարագրություն» աշխատության մեջ նշում է, որ գոյություն ունի գլոբալացման հինգ հարթություն՝ տնտեսական, քաղաքական, մշակութային, միջավայրային և գաղափարական: Մ. Սթեյքերը նշում է, որ հենց այս հարթություններում առկա կապերի արդյունքում սահմանները դառնում են անէական և առանձնացնում է գլոբալացման չորս հատկանիշ¹⁰.

1. Գլոբալացումը ներառում է սոցիալական ցանցերի և գործառույթների նոր տեսակների ստեղծումը և առկա տեսակների կրկնապատկումը, որոնց շնորհիվ հնարավոր է լինում հաղթահարել գլոբալացման հինգ հարթություններում առկա սահմանները:

2. Գլոբալացումն արտացոլված է սոցիալական հարաբերությունների, գործառույթների ընդարձակման և ձգման մեջ,

3. Գլոբալացումը ներառում է սոցիալական փոխանակման և գործառույթների ինտենսիվացում և արագացում,

4. Սոցիալական կապերն ու փոխկախվածությունները չեն առաջանում բացառապես օբյեկտիվ, նյութական մակարդակում:

Թ. Ֆրիդմանը իր հայտնի «Աշխարհը տափակ է» գրքում գլոբալացումը բաժանում է 3 մեծ դարաշրջանների¹¹.

1. Առաջին դարաշրջանը, որը Թ. Ֆրիդմանն անվանում է Գլոբալիզացիա 1.0, սկսվում է 1492 թվականից, երբ Քրիստափոր Կոլումբոսը բացահայտեց Ամերիկան, ինչն էլ սկիզբ դրեց Հին և Նոր աշխարհների միջև առևտրին: Այս դարաշրջանում գլոբալացման շարժիչ ուժը համաձայն հեղինակի, կայանում էր նրանում, թե «որքան մկան կամ քանի ծիաուժ ուներ երկիրը և որքան ստեղծագործ կերպով կարող է շահագործել դա:

⁹Տե՛ս **Robertson R.**, Globalization: Social theory and global culture. London. Sage pub., 1992. P. 8.

¹⁰Տե՛ս **Steger M.** Globalization a very short introduction. Oxford, OUP. 3 ed.2013. P. 7-9.

¹¹Տե՛ս **Friedman T.** The World is Flat. A Brief History of the Twenty-first century. New York. Picador. 2007.P. 276-277:

2. Գլոբալացման 2.0-ը սկսվում է 1800 թվականից և շարունակվում է մինչև 2000 թվականը: Այս դարաշրջանում գլոբալացման խթանը, համաձայն Ֆրիդմանի, հանդիսանում են միջազգային կազմակերպությունները:

3. Հաջորդ դարաշրջանը՝ գլոբալացման 3.0-ը սկսվում է 2000 թվականից և մինչև օրս շարունակվում է: Այս դարաշրջանում գլոբալացման շարժիչ ուժը հանդիսանում է անհատների՝ միմյանց հետ համագործակցելու կամ մրցակցելու ուժը:

Հեղինակը նշում է նաև, որ գլոբալացման 3-րդ դարաշրջանը, ի տարբերություն նախորդ երկու դարաշրջանների, որոնց ժամանակ գլոբալացման գործընթացում հիմնական ներդրումն ունեին արևմտյան երկրները՝ ամերիկյան և եվրոպական անհատները և ձեռնարկությունները, հատկանշական է նրանով, որ ներկայումս գլոբալացման գործընթացում մեծ ներդրում ունեն ոչ արևմտյան քաղաքականության ներկայացուցիչները: Այս ժամանակաշրջանում անհատները որևէ նպատակին հասնելու համար պետք է գործեն և մտածեն գլոբալ եղանակով¹²: Թ. Ֆրիդմանը, գլոբալացման 3-րդ դարաշրջանի և աշխարհի «տափակ»¹³ լինելու մասին խոսելիս, անդրադարձ է կատարում նաև այն քայլերին, որոնք զարգացող պետությունները պետք է հանձն առնեն՝ «տափակ» աշխարհում իրենց ընկերությունների և կազմակերպությունների համար ճիշտ և բարենպաստ միջավայր ապահովելու համար և այդ նպատակին հետամուտ, յուրաքանչյուր պետություն պետք է ունենա հետևյալ չորս բաղկացուցիչ տարրերը¹⁴.

1. Ճիշտ ենթակառուցվածքներ, որոնք հնարավորություն կընձեռեն քաղաքացիներին կապ հաստատել «տափակ» աշխարհի մյուս անհատների հետ: Ենթակառուցվածք ասելով, Թ. Ֆրիդմանը նշում է լավ ինտերնետային և հեռախոսային կապը:

2. Ճիշտ կրթական համակարգ, ինչի շնորհիվ տվյալ երկրի մարդիկ կկարողանան կատարել նորարարություններ՝ համաաշխարհային մակարդակով:

3. Ճիշտ կառավարման համակարգ, որը ներառում է ինչպես հարկային համակարգը, քաղաքական էլիտայի որակը, այնպես էլ **օրենքի գերակայությունը**;

¹²Տե՛ս նույն տեղում, էջ 249:

¹³Թ. Ֆրիդմանը «տափակ» բառով բնութագրում է աշխարհի մասշտաբային փոքրությունը:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 408-409:

Ըստ Թ. Ֆրիդմանի, գլոբալացման տնտեսագիտության մասին խոսելիս մարդիկ շատ հաճախ մոռանում են, որ գլոբալացումը հանդիսանում է մի պետության հանրային սեկտորի մրցակցությունը մեկ այլ պետության հանրային սեկտորի հետ:

4. Ճիշտ շրջակա միջավայրը, որը վերաբերում է հատկապես շրջակա միջավայրի պահպանման հիմնախնդրին: Ըստ հեղինակի, այն պետությունները, որոնք պահպանում են իրենց կանաչ տարածքները, ունեն ավելի մեծ հնարավորություն պահպանելու և գրավելու գիտելիքներով հարուստ աշխատողների, ովքեր շարժուն են, ունեն ընտրություն և կարող են էական ներդրում կատարել զարգացող երկիրը զարգացած երկրի վերածելու գործում:

Ուշագրավ է Ռ. Ուրզուայի դիրքորոշումը քննարկվող թեմայի վերաբերյալ: «Միջազգային միգրացիան, հասարակական գիտություն և հանրային քաղաքականություն» հոդվածում¹⁵ Ռ. Ուրզուան գլոբալիզացիան դիտարկում է որպես մի քանի հարթություն ունեցող երևույթ, օժտված հետևյալ հատկանիշներով.

- Ողջ աշխարհում տնտեսական կանոնների համընդհանրացում, ինչի արդյունքում նախատեսված է համաշխարհայնացնել շուկան և արտադրությունը:

- Տեխնոլոգիական նորարարություններ և կազմակերպական փոփոխություններ կենտրոնացած ճկունության և կիրառելիության վրա, ինչպես նաև սոցիալական կազմակերպության հատուկ ձևի ընդլայնում՝ հիմնված արտադրողականության և ուժի հիմնական աղբյուրի՝ ինֆորմացիայի վրա:

- Սոցիալական պետության նվազում, սոցիալական ծառայությունների մասնավորեցում, աշխատուժի հետ կապված հարաբերությունների ճկունացում և առևտրային միությունների թուլացում:

- Ազգային-տնտեսական քաղաքականության գործիքների, ինչպիսիք են դրամավարկային քաղաքականությունը, տոկոսադրույքները և հարկաբյուջետային քաղաքականությունը, փաստացի փոխանցում դրա ազգային կազմակերպություններին:

¹⁵Տե՛ս **Urzúa R.** International Migrationю Social Science and Public Policy//International Social Science Journal. Volume 52. Issue 165. P. 421-422

- Ընդհանուր մշակութային արժեքների սերմանում, սակայն միևնույն ժամանակ՝ ազգայնականության, մշակութային կոնֆլիկտների և սոցիալական շարժումների ակտիվացում:

Ռ. Կոքսի¹⁶ «Մոտեցումներ աշխարհի կարգին» գրքի համաձայն. «Գլոբալացման հակվածության հատկանիշները ներառում են արտադրանքի միջազգայնացում, աշխատուժի նոր միջազգային բաժանում, հարավից դեպի հյուսիս նոր միգրացիոն շարժեր, նոր մրցակցային միջավայր, որը արագացնում է այս գործընթացները և պետության միջազգայնացում, ինչի արդյունքում գլոբալացման գործընթացում պետությունները դառնում են գործակալություններ»¹⁷:

Գլոբալացման վերաբերյալ առավել ծայրահեղ կարծիք է հայտնել **Կ. Օհմաեն**¹⁸, նշելով, որ տնտեսական գործառույթների իրական հոսքերի տեսանկյունից ազգային պետությունները արդեն իսկ կորցրել են իրենց դերը որպես նպատակային միավորներ գլոբալ տնտեսության մասնակցության գործում՝ ժամանակակից սահմաններ չունեցող աշխարհում: Ըստ Կ. Օհմաեի, պետություններն համաաշխարհային տնտեսությունում օժտված չեն առանձին միավորի կարգավիճակով և ամբողջովին կախված են համաաշխարհային սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական զարգացումներից: Ավելին, արտադրվող ապրանքներն ու մատուցվող ծառայությունները ազգային ապրանքանիշով ներկայացնելը այդքան էլ իրականությանը չի համապատասխանում և չի ստեղծում ավելացված արժեք գնորդի համար¹⁹:

Վերոնշյալ աղբյուրների և հեղինակների կողմից տրված գլոբալացման հասկացությունների վերլուծության արդյունքում, սույն աշխատանքի հեղինակի կարծիքով, կարող ենք գլոբալացմանը վերագրել հետևյալ հատկանիշները.

1. Գլոբալացումը հանդիսանում է սոցիալական հարաբերությունների **արագացում**, ինչը պայմանավորված է հեռավորությունների հաղթահարմամբ կամ ինչպես նշում է Ռ. Ռոբերտսոնը՝ «աշխարհի սեղմումի» պատճառով, երբ աշխարհում

¹⁶Կանադացի քաղաքագետ, ինչպես նաև ՄԱԿ-ի նախկին աշխատակից:

¹⁷Cox R. W., Sinclair T. J. Approaches to World Order. Cambridge. CUP. 1996.P.155:

¹⁸Ճապոնացի գիտնական, կազմակերպությունների կառավարման խորհրդատու, ով զարգացրել է կառավարման աշխարհահռչակ «3C» բիզնես մոդելը:

¹⁹ Ohmae K. The End of the Nation State: The Rise of Regional Economies. New York: Simon and Schuster Inc., 1995. P. 11-16:

սահմանները աստիճանաբար վերանում են, տարբեր տարածական հեռավորությունները արդեն մեծ նշանակություն չունեն և սոցիալական հարաբերությունները կարող են տեղի ունենալ առանց խոչընդոտների՝ մեծ հեռավորությունների վրա²⁰:

2. Գլոբալացումը ենթադրում է նաև աշխարհում գոյություն ունեցող **տարաբնույթ երևույթների միավորում**, որը կատարվում է մարդկանց հարաբերությունների արագացման հետևանքով՝ դրանց աստիճանաբար միասնական դառնալու գործընթացով: Նշվածը ենթադրում է ոչ թե միևնույն հասարակության մեջ առաջացող հարաբերությունների, այլ տարբեր՝ միմյանցից մշակութային, տնտեսական առումներով էականորեն տարբերվող հասարակությունների անդամների միջև հարաբերությունների ինտենսիֆիկացիա: Հատկանշական է հատկապես Մարտին Ալբրոուի և Էլիզաբեթ Քինգի սահմանումը, որտեղ տարբեր երևույթները միավորումը ներկայացվում է մեկ հասարակության մեջ միավորման ձևով:

Այս հատկանիշների շնորհիվ է, որ գլոբալացման գործընթացը տեղի է ունենում ոչ միայն քննարկումների առարկա հանդիսացող երևույթների, ինչպիսին է օրինակ տեխնոլոգիական, մշակութային գլոբալիզացիան, այլ նաև՝ իրավունքի հետ²¹, ինչը հասկանալու համար անհրաժեշտ է, նախ և առաջ անդրադարձ կատարել իրավունքի հասկացությանը:

Իրավունքի գլոբալացման գործընթացը, ինչպես ընդհանուր գլոբալացումը, հանդիսանում է այն գործընթացը, որը սկիզբ է առել բավականին վաղ, սակայն քննարկման առարկա է դարձել բավականին ուշ: Իրավաբանական գրականությունում *իրավունքի գլոբալացման գործընթացի ծագման* վերաբերյալ առկա են տարաբնույթ մոտեցումներ: Այսպես, տեսաբանների գերակշիռ մասը, համակարծիք լինելով Ադամ Սմիթի հետ, գլոբալացման սկիզբ են համարում են Քրիստափոր Կոլումբոսի և Վասկո դա Գամայի հայտնաբերումների ժամանակահատվածը, մյուսները՝ ավելի վաղ, քան Ալեքսանդր Մեծի կողմից կատարված նվաճումները, հելլենիզմի տարածումը կամ Չանգրագուպտա Մաուրյայի կողմից Հնդկաստանի միավորումը, հավելելով, որ հին

²⁰Տե՛ս **Robertson R.** Globalization: Social theory and global culture. London. Sage pub., 1992. P.10-11:

²¹ Մանրամասն տե՛ս **Марченко М. Н.** Государство и право в условиях глобализации. М., Проспект. 2008.

աշխարհում գլոբալացման լայնածավալ գործընթացներից էին նվաճումներն ու պետությունների միավորումը: Տեսաբանների երրորդ խումբը, առավելապես շեշտը դնելով ժամանակակից գլոբալացման վրա վերջինիս սկիզբ են համարում 19-րդ դարում ակտիվացած տնտեսության գլոբալացումը²²: Անկախ ամենից, գլոբալացման, որպես օբյեկտիվորեն տեղի ունեցող երևույթի, վերաբերյալ ուսումնասիրություններ կատարել են շատ քիչ գիտնականներ, իսկ երևույթի նկատմամբ հանրային և գիտական հետաքրքրությունը ծագել է վերջին ժամանակաշրջանում: Հարկ է նշել, որ նշված ուշացած գիտական հետաքրքրությունը հանդիսանում է բնական երևույթ, ինչը գլոբալացման վերաբերյալ գիտության՝ գլոբալացման ոլորտի հեղինակավոր ռուս գիտնական Ա. Չումակովն անվանում է «ուշ ընկալման էֆեկտ»: «Ուշ ընկալման էֆեկտը» կայանում է նրանում, որ այս կամ այն իրադարձությունների մասնակիցները հաճախ սկսում են գիտակցել այդ իրադարձությունները ավելի ուշ այն պահից, երբ դրանք տեղի են ունեցել: Չնայած այդ իրադարձությունները տեղի են ունեցել իրենց աչքի առաջ և վերջիններիս մասնակցությամբ, այնուամենայնիվ այդ ժամանակ դրանց չէին ընկալվում որպես նոր իրականություն: Ա. Չումակովը նշում է, որ նույնը տեղի է ունեցել գլոբալացման խնդիրների հետ, քանի որ դրանք սկսվել և հասունացել են հարյուրամյակների ընթացքում, առանց նկատվելու և նկատելի են դարձել միայն այն ժամանակ, երբ վերջիններիս մասշտաբներն ու ազդեցությունը կյանքի տարբեր ոլորտների վրա աճել են այն աստիճան, որ հնարավոր չէ այլևս դրանք անտեսել²³:

Համաշխարհային զարգացման և իրավունքի միասնականացման պայմաններում գլոբալացման բացառումը կհակասի ժամանակակից գիտական մտքին և ուսումնասիրություններին: Գլոբալիզացիայի օբյեկտիվությունն իրավունքի զարգացման գործում այնքան ակնհայտ և անխուսափելի է, որ նույնիսկ զարգացման «փակ» մոդելն ընտրած հազվադեպ հանդիպող պետությունների դեպքում էլ այն գոյություն ունի: Իր դրսևորումներն ունենալով մարդկային գործունեության գրեթե բոլոր ոլորտներում գլոբալիզացիայի ուսումնասիրությամբ ներկայումս զբաղվում են

²²Տե՛ս **O'Rourke K. H., Williamson J.G.** When Did Globalization Begin? NBER Working Paper №7632. Cambridge. 2000. P. 2-3:

²³Տե՛ս **Чумаков Н.А.** Метафизика глобализации. Культурно-цивилизационный контекст. М., Канон. 2006. С.27-28:

ամենատարբեր ոլորտների մասնագետներ, ովքեր ուսումնասիրում են դրա ազդեցությունը հենց իրենց ոլորտի վրա: Ավելին, գլոբալիզացիայի հարցը ներկայումս հանդիսանում է հանրային թեժ քննարկումների առարկա և հասարակությունը գլոբալիզացիայի վերաբերյալ իր կարծիքով բաժանված է երկու խմբի.

1. «գլոբոֆիլիա» ունեցողներ, ովքեր կողմ են գլոբալիզացիային և համարում են այն դրական երևույթ,

2. «գլոբոֆոբիա» ունեցողներ, ովքեր պարբերաբար քննադատում են գլոբալիզացիան, համարելով այն իրենց ազգը և ինքնորոշումը վտանգող երևույթ²⁴:

Գլոբալացումը, որպես սոցիալական գիտություն, ներկայումս հանդիսանում է տարբեր ոլորտի մասնագետների ուսումնասիրության առարկա: Գլոբալացման գիտական ուսումնասիրությունից խոսելիս ուշագրավ է Է. ՄաքԳրյուի կարծիքը: Իր «Գլոբալացումը դժվար ժամանակներում. Ակադեմիական և ակադեմիականից դուրս հակասություններ» աշխատության մեջ հեղինակը ներկայացնում է արդի գլոբալացման վերաբերյալ չորս ուղղություններն ակադեմիական գիտության մեջ, ինչպես նաև՝ գլոբալացման վերլուծության չորս ձևերը²⁵: Այսպես, Է. ՄաքԳրյուի գլոբալացման ակադեմիական գիտելիքի 4 ուղղություններն են.

1. Թեորիստական ուղղությունը: Այս ուղղության հետևորդների առաջին խնդիրն է տալ գլոբալացման հասկացությունը, իսկ երկրորդ խնդիրն է պարզել, թե ինչ հիմնական գործընթացներ են առկա գլոբալիզացիայում:

2. Պատմական ուղղությունը: Ինչպես անունը հուշում է, այս ուղղության հետևորդներն ուսումնասիրում են գլոբալիզացիայի պատմությունը և տանում են զուգահեռներ ներկայումս կատարվող գլոբալիզացիայի հետ:

3. Ինստիտուցիոնալիստական ուղղություն: Այս ուղղության շրջանակներում շեշտը դրվում է սոցիալական ինստիտուտների, հատկապես՝ տնտեսական, քաղաքական և մշակութային ինստիտուտների ուսումնասիրության վրա:

4. Հետստրուկտուրալիստական կամ կառուցողական ուղղությունը, համաձայն որի գլոբալացումը հանդիսանում է ամեն ինչ ներառող մակրո գործընթաց:

²⁴Ritzer G. The Blackwell Companion to Globalization. Malden. Blackwell Publishing Ltd. 2007. P. 16:

²⁵Տե՛ս նույն տեղում, էջ 33-34:

Համաձայն է. ՄաքԳրյուի՝ գլոբալացման ուսումնասիրության չորս հիմնական ձևերն են.

1. Պաշտպանողական գլոբալացում, համաձայն որի ուսումնասիրության ընթացքում գլոբալացումը համարում են գոյություն ունեցող և շարունակական գործընթաց, ինչը փոխում է հասարակությունները ամբողջ աշխարհում: Այս ձևը ներառում է երկու մոտեցում. ազատական մոտեցումը, համաձայն որի գլոբալիզացիան առավելապես տնտեսական գործընթաց է և բերում է շուկաների և տեխնոլոգիաների ինտեգրացիային, իսկ երկրորդ՝ վերափոխման ուղղության համաձայն այն, ի թիվս տնտեսականի, դրսևորվում է նաև քաղաքական, մշակութային, սոցիալական և այլ գործընթացներում:

2. Հետգլոբալացում, որի դեպքում ենթադրվում է, որ գլոբալացման գործընթաց ընդհանրապես տեղի չի ունենում, կամ այդ գործընթացը նահանջում է, քանի որ պետությունները պարբերաբար վերահաստատում են իրենց տարածքները, իսկ ազգայնականությունը նորից մեծ թափ է ձեռք բերում:

3. Քննադատական գլոբալիզմ, որտեղ քննադատական մոտեցումը պայմանավորված է նրանով, որ այս գործընթացի հիմքում ընկած է իշխանության ընդլայնումը և միջազգայնացումը, նաև՝ կոնֆլիկտը կայսրության և անհատի միջև, ինչը բերում է միջոցների և հավասարության վերաբերյալ իրավունքների պայքարի:

4. Գլոկալիզմ, որի համաձայն գլոբալացման ուսումնասիրությունները պետք է վերաբերեն ոչ միայն դրա համաշխարհային բնույթին, այլ նաև պետք է ներառեն դրա տեղական, լոկալ բնույթը: Ուսումնասիրության այս ձևը ոչ միայն ենթադրում է համաշխարհային և տեղական ինտեգրացիաների վերլուծում, այլ նաև ուսումնասիրում է համաշխարհայինի ազդեցությունը տեղականի վրա:

Վ. Ռոբինսոնն, իր հերթին, գլոբալացման վերաբերյալ ուսումնասիրությունները հիմնականում բաժանում է երկու մասի²⁶.

1. Գլոբալացման էությանը վերաբերող ուսումնասիրություններ, որոնց շրջանակներում կատարվում է գործընթացի խորը ուսումնասիրություն,

2. Գլոբալացման հետ կապված խնդիրների ուսումնասիրություններ:

²⁶Տե՛ս նույն տեղում, էջ 33-34:

Եթե ներկայումս գլոբալացման մասին խոսելիս հասարակության լայն շրջանակը առավելապես նշանակություն է տալիս դրա ահռելի ազդեցությանը սոցիալական և մշակութային ոլորտների վրա, ապա տնտեսական գիտությունների ոլորտի մասնագետները այն դիտում են որպես առավելապես տնտեսական երևույթ, ինչը տրամաբանական է, եթե հաշվի առնենք, որ այս տերմինն իր հանրաճանաչությունը ձեռք է բերել հենց տնտեսագետների շնորհիվ, որոնց շարքում հատկանշական է Թ. Լևիտի «Շուկաների գլոբալիզացիան» աշխատությունը: Այնուամենայնիվ, թեև էական աշխարհաքաղաքական շարժերը ներկայումս մեծամասամբ պայմանավորված են տնտեսության միասնականացմամբ, այն իրագործել հնարավոր չէր լինի իրավունքի գլոբալացման բացակայության պայմաններում: Արդյունքում, առկա ազգային-իրավական համակարգերը ունեն բազմաթիվ փոխառումներ այլ երկրների իրավական համակարգերից, գոյություն ունեն տնտեսական միություններ և վերազգային կազմակերպություններ, որոնց անդամակցությունը ոչ միայն պայմանավորում է պետությունների տնտեսական զարգացումները, այլ նաև բերում է դրանց անդամների իրավական համակարգերի մերձեցմանը²⁷: Համոզվելու համար, որ իրավունքի գլոբալացումն օբյեկտիվորեն տեղի ունեցող երևույթ է, անհրաժեշտ է նախ հասկանալ, թե ինչ է գլոբալացումը, ինչ է իրավունքը, և արդյո՞ք առաջին երևույթը առկա է նաև իրավունքում²⁸: Իրավունքի գլոբալացման օբյեկտիվությունը լիովին հիմնավորելու համար անդրադարձ կկատարվի նաև իրավունքի գլոբալիզացիայի եղանակներին:

1.2. Գլոբալ սոցիալական համակարգի ընդհանուր բնութագիրը

Գլոբալացման ազդեցության ներքո իրականացվում են այն սոցիալ-իրավական հարաբերությունների փոխակերպումները, որոնցում մարդկությունը զարգացել է վերջին տասնամյակներում: Ընդ որում, մարդն աստիճանաբար ներքաշվում է նոր հասարակական կարգի մեջ, որը բնութագրվում է անհատների, սոցիալական խմբերի և համայնքների, ազգերի և պետությունների կյանքի պայմանների էական փոփոխություններով, ինչը իրավաբանական գրականությունում բնորոշվում է որպես

²⁷Մանրամասն տե՛ս **Тихомиров Ю. А.** Курс сравнительного правоведения. М.,Норма. 1996.

²⁸Տե՛ս **Зорькин В.Д.** Право в условиях глобализационных перемен. М.,Норма.2013.С.84-91:

գլոբալ «սոցիալ-իրավական համակարգ» կամ «համընդհանուր հասարակություն»²⁹:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ տարածաշրջանային գործընթացները, իրավահարաբերությունների վերափոխումը, արտագաղթի ու միգրացիայի անմիջական և հեռահար սոցիալական հետևանքները, բնակչության վերաբերմունքը ՀՀ-ում իրականացվող սոցիալ-իրավական, քաղաքական բարեփոխումներին, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ամրապնդումն իրենց ուրույն ազդեցությունն են թողնում գլոբալ հասարակական համակարգի ձևավորման և զարգացման վրա: Ակնհայտ է, որ վերոնշյալ գործընթացների արդյունքում փոքր պետությունները հետզհետե «զրկվում» են իրենց ինքնիշխանությունից, քանի որ գլոբալ գործընթացները սկսում են կարգավորվել տարածաշրջանային կենտրոնների և գերտերությունների մակարդակով:

Հարկ է նշել, որ ժամանակակից իրավագիտությունում նկատվում է եզրութաբանական անհամաձայնություն, կապված, մասնավորապես, սոցիալական ոլորտում գլոբալ գործընթացների և երևույթների նշանակության սահմանմամբ: Որպես կանոն, գլոբալացման արդյունքում ձևավորվող համայնքի անվանակոչման համար օգտագործվում են այնպիսի տերմիններ, ինչպիսիք են «միջազգային հանրություն», «համաշխարհային հանրություն», «մեգահասարակություն» և «գլոբալ սոցիալական համակարգ», «գլոբալ հասարակություն»³⁰: Վերոնշյալ անվանումները հավասարազոր են իրենց նշանակությամբ, սակայն մասնագիտական գրականությունում հաճախ կարող ենք հանդիպել վերջիններիս տարանջատման կամ հավասարեցման փորձերի: Ուշագրավ է, որ հետխորհրդային իրավաբանական գրականությունում «միջազգային հանրություն» եզրույթը բացահայտվում է վերջինիս օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերով, որտեղ օբյեկտիվ հիմքն են հանդիսանում մարդկության համընդհանուր կյանքի հետաքրքրություններն ու արժեքները, իսկ սուբյեկտ են հանդիսանում միջազգային հարաբերությունների բոլոր մասնակիցները՝ պետություններից մինչև անհատներ³¹: Այլ

²⁹Մանրամասն տե՛ս **Moreau Defarges P.** La Mondialisation, Presses Universitaires de France. 10e ed., 2016:

³⁰Մանրամասն տե՛ս **Kuhnhart L.** The Global Society and Its Enemies: Liberal Order Beyond the Third World War. Switzerland. Springer. 2017.

³¹Տե՛ս **Мист Г. М.** Международные организации как участники мировой политики и международных отношений. Дисс. канд. полит. наук. М., 2006. С. 16-19; Մանրամասն տե՛ս **Марченко М. Н.** Государство

է իրավիճակը արևմտյան իրավաբանական գրականությունում, որտեղ «միջազգային հանրություն» եզրույթը բացահայտվում է պետությունների և ազգերի միասնականության և գլոբալացման, այդ թվում՝ իրավունքի գլոբալացման միջնորդավորմամբ³²: Ավելին, իրավագետների տեսակետների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ վերը նշված հասկացություններն արտացոլում են, նախ և առաջ, միասնական որակական առումով միատարր գլոբալ սոցիալական համակարգի ձևավորման գործընթացի տարբեր փուլեր: Այսպես, սկզբում ինքնիշխան պետություններն ինտեգրվում են միջազգային համայնք, որն իրենից ներկայացնում է ինտեգրացված պետությունների ամբողջություն, այնուհետև, միջազգային համայնքը բարեփոխվում է համաշխարհային համայնքի և, ի վերջո, իրավունքի գլոբալացման արդյունքում ստեղծվում է համաշխարհային հասարակություն, որտեղ իրավահարաբերության սուբյեկտները տարբերվում են նախորդ սուբյեկտներից³³:

Ինչ վերաբերում է «գլոբալ սոցիալական համակարգ» գործընթացին, ապա այն արդեն սկիզբ է առել և օժտված է մի շարք բնութագրիչ հատկանիշներով: Դրանցից են.

1. Գլոբալ սոցիալական համակարգն հանդիսանում է պետության, հասարակության և անհատի կողմից դժվար ընդունելի համակարգ, որը չի հանդիսանում տարրերի, կիրառման միջոցների պարզ ամբողջություն: Այլ կերպ ասած, հնարավոր չէ տանել հստակ ու ճշգրիտ սահման ուսումնասիրվող տարրերի խմբերի և դրանց արտաքին միջավայրի միջև, ինչը կարելի է անել, օրինակ, տարածականորեն առանձնացված երկու օբյեկտների միջավայրերի միջև սահմանները որոշելիս: Ի տարբերություն կենսաբանական համակարգերի սահմանների, միջազգային համակարգերի տարածական սահմանները հիմնականում կրում են պայմանական բնույթ: Ավելին, թյուր է համարվում այն մոտեցումը, որ գլոբալ միջազգային

и право в условиях глобализации. М., Проспект. 2008. **Мист Г. М.** Международные организации как участники мировой политики и международных отношений. Дисс. канд. полит. наук. М., 2006.

³²Տե՛ս **Dias Varella M.** Internationalization of Law: Globalization, International Law and Complexity. Springer., 2014. P. 185-186; **Twining W.** Globalisation and legal theory. London. Northwestern University Press. 2000. P. 50-51.

³³Տե՛ս **Бухтояров М. С.** Концепция мегаобщества и ее реализация на современном этапе развертывания процесса глобализации. Дисс. ... канд. филос. наук. Красноярск. 2007. С. 28-31:

համակարգեր գոյություն ունեն միայն բազմակողմ հարաբերություններում և թելադրված են համաշխարհային դիտորդների կողմից:

2. Գլոբալ համակարգը մարդկանց փոխհարաբերակցություններով պայմանավորված համակարգ է, իսկ համակարգի հիմնական տարրերը ներկայացված են սոցիալական համայնքներով, խմբերով և առանձին անհատներով: Միևնույն ժամանակ, անհատներն իրականացնում են ազատ կամքով, գիտակցությամբ, արժեքային կողմնորոշումներով օժտված գործողություններ:

3. Գլոբալ սոցիալական համակարգի հիմնաքարը պետությունների փոխհարաբերություններն են, իսկ անձանց գործողությունները հիմնականում կրում են քաղաքական բնույթ: Այդ պատճառով, գլոբալ միջազգային համակարգի միջուկը միջպետական հարաբերությունների համակարգն է³⁴:

Ինչ վերաբերում է **միջազգային համակարգի** առանձնահատկություններին, ապա գլխավորը կայանում է նրանում, որ սույն համակարգը բնորոշվում է բարձրագույն իշխանության բացակայությամբ, իշխանության կենտրոնացման թույլ մակարդակով: Այլ կերպ ասած, միջազգային համակարգը դա հատուկ տեսակի սոցիալական համակարգ է, որն առանձնանում է ամբողջում էլեմենտների թույլ մակարդակի ինտեգրմամբ, ինչպես նաև այդ էլեմենտների էական ինքնավարությամբ:

Իրավաբանական գրականությունում, հաճախ գլոբալ սոցիալական համակարգի ներքին կառուցվածքը պայմանականորեն ներկայանում է միմյանց փոխներգործող հիմնական տարրերով՝ անձ, միջազգային քաղաքացիական հասարակություն, պետություն ու միջազգային (միջպետական) կազմակերպություններ³⁵:

Գլոբալ սոցիալական համակարգի կայուն զարգացման մոդելի ձևավորումը կապված է կայուն կառավարման ենթահամակարգի ստեղծման հետ, որն անհրաժեշտ է մարդկանց նպատակաուղղված և փոխհամաձայնեցված գործունեության համար՝ մարդկության գործունեության բոլոր ոլորտներում և պարտադիր է գլոբալ խնդիրների լուծման համար:

³⁴Տե՛ս **Марченко М. Н.** Государство и право в условиях глобализации. М., Проспект. 2008. С.92-98:

³⁵Մանրամասն տե՛ս **Кондратов А. И.** Концептуальная модель внешнеполитической деятельности государства в теории международных отношений. Дисс. ... док. полит. наук. М., 2012; Теоретические основы внешнеполитической деятельности России/ Под общ. ред. **Проскурина С.А.** М., Изд-во РАГС. 2001.

Գլոբալ սոցիալական համակարգի կառավարման մեջ կենտրոնական տեղ է զբաղեցնում սոցիալական կարգավորիչ ենթահամակարգը: Արդի պետության և իրավունքի տեսության հիմնախնդիրներից է անձի վարքագծի կարգավորիչների բարդ համակարգի և գլոբալացվող հասարակությունում դրանց կողմից ստեղծվող կազմակերպությունների միջև փոխհարաբերությունների ուսումնասիրությունը: Այսպես, սոցիալական կարգավորման կառուցակարգը, որն ուղղորդում և կոորդինացնում է մարդկանց սոցիալական վարքագիծը, անընդմեջ փոփոխվում և կատարելագործվում է: Դա պայմանավորված է նրանով, որ հասարակությունում, ինչպես յուրաքանչյուր ամբողջական համակարգում, դրա ձևավորման պահից, առաջանում են կազմակերպման և կազմալուծման երկու հակասող միտումներ, որոնք բնորոշվում են հասարակական համակարգում նորանոր տարրերի մշտական ներգրավմամբ, նոր նպատակների և խնդիրների սահմանմամբ: Գլոբալացման գործընթացների ներքո իրար հակասող միտումների, գործողությունների սրման պայմաններում, կայուն կամ հարաբերականորեն կառավարելի սոցիալական համակարգի կառուցումը հնարավոր է բացառապես այս պայմաններին սոցիալական կառավարման և սոցիալական կարգավորման մեխանիզմների հարմարեցմամբ: Ավելին, սոցիալական նորմերի ուսումնասիրությունը բարդ և բազմակողմանի, միջգիտակարգային գործընթաց է, որն իրականացվում է տարբեր գիտությունների կողմից, որոնցից են՝ իրավագիտությունը, սոցիոլոգիան, քաղաքագիտությունը և այլն:

Գլոբալ սոցիալական կարգավորիչ համակարգի էությունը բացահայտելու համար նպատակահարմար է համեմատել իմաստով միմյանց մոտ **«կարգավորիչ համակարգ»** և **«սոցիալական կառավարում»** հասկացությունները: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ ենք համարում դիտարկել նաև «սոցիալական համակարգի կառավարում» հասկացությունը, ինչպես նաև մարդկանց՝ ուղղորդվող և կազմակերպվող գործունեությունը: Ինչպես ցանկացած գործունեություն, այն պարտադիր սկսվում է նպատակի և խնդիրների սահմանումից և ավարտվում դրանց լուծմամբ: Արդյունքներ ունենալու համար մարդիկ պետք է համաձայնեցնեն իրենց գործողությունները մեկ ուղղությամբ: Նշվածն իրականացվում է երկու տեսակի գործոններով. օբյեկտիվ (էական պայմանների առկայություն հասարակական

կյանքում և մարդկանց գործունեությունում դրանց ի հայտ գալու օրինաչափություններ) և սուբյեկտիվ (հասարակության կողմից մարդկանց գործողությունների կառավարում և ընդհանուր նպատակից և խնդիրներից շեղումը ուղղելու հնարավորություն): Այս գործոններն էլ որոշում են մարդկանց կենսագործունեության առանձնահատկությունը, որն ունի իր տեղն ինչպես նյութական արտադրության, այնպես էլ սոցիալական կյանքի բոլոր մյուս ոլորտներում: Սոցիալական կառուցակարգը և դրա կառավարման օբյեկտներն իրենց գործառույթային փոխհարաբերության մեջ հանդես են գալիս որպես կառավարվող և կառավարող գործոնների դիալեկտիկական ամբողջություն: Համակարգի գործարկման համար անհրաժեշտ է դրանում մշտապես ապահովել և կատարելագործել համակարգվածության և կազմակերպվածության վիճակը: Ընդ որում, դա պետք է ապահովվել ինչպես կառավարման մեխանիզմում, այնպես էլ՝ կառավարման սուբյեկտներում և օբյեկտներում, ինչպես նաև դրանց միջև հաղորդակցության համակարգում: Այդ խնդրի իրականացումն էլ կազմում է կառավարման ֆունկցիաներից մեկի՝ կարգավորիչ ֆունկցիայի էությունը³⁶:

Սոցիալական կարգավորման անհրաժեշտությունը հիմնված է հասարակության օբյեկտիվ զարգացման վրա, որտեղ մարդիկ գործում են օբյեկտիվորեն հնարավոր տարբերակների շրջանակներում, առաջնորդվելով ազատ կամքով³⁷:

Հարկ է նշել, որ «կարգավորում» եզրույթը հայերեն բացատրական բառարանում բնորոշվում է որպես կարգ ու կանոն մտցնել, որոշակի կարգի ենթարկել, բարեկարգել³⁸: Իր հերթին, իրավաբանական գրականությունում, հիմք ընդունելով վերոնշյալ մեկնաբանությունները, բազմիցս նշվում է, որ հասարակության կարգավորման հիմնական նպատակն է՝ անհատի, որպես հասարակության ներկայացուցչի գործողությունների, հետաքրքրությունների և նպատակների, ինչպես նաև խնդիրների միջև համապատասխանության ձեռքբերումը, որը բխում է որոշակի ժամանակի ընթացքում առկա հանգամանքներից: Այդ պատճառով, կարգավորումը ենթադրում է հասարակական հարաբերությունների բարելավում, ամրագրում և զարգացում, որոնք

³⁶Տե՛ս Шёкин Г.В. Теория социального управления. К., МАУП.1996, **Куткин В.С.** Права человека в условиях современного этапа глобализации: социально-философский анализ // Пробелы в российском законодательстве. - М.: Медиа-БАК, 2014, № 1. С. 255-259:

³⁷Տե՛ս **Arancibia J.**, *Judicial Review of Commercial Regulation* 1st ed., Oxford., OUP., 2011.P.205.

³⁸Տե՛ս **Աղայան Է. Բ.** Արդի հայերեն բառարան, Եր., «Հայաստան» հրատ., 1976, էջ 704:

ապահովում են մարդկանց սոցիալական գործունեության որոշակի ուղղվածությունը³⁹: Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ քաղաքակրթության զարգացման յուրաքանչյուր փուլին ներհատուկ են սոցիալական կարգավորման կոնկրետ տեսակներ, ձևեր և կառուցակարգեր: Անհատների վարքագծի կարգավորումը հանդիսանում է մի կողմից որպես որոշված արարքների իրականացման հնարավորությունների ամբողջություն, իսկ մյուս կողմից՝ կառուցակարգի ամբողջություն, որը պարտավորեցնում է անձին զերծ մնալ անօրինական գործողություններ կատարելուց: Համամիտ ենք իրավաբանների այն կարծիքի հետ, որ նմանատիպ կարգավորումներն իրականացվում են հատուկ միջոցների և մեթոդների մեծ խմբի բարդ փոխհարաբերությամբ:

Ավելին, հասարակությունը սահմանում է կոնկրետ նպատակներ, սկզբունքներ և դրանց հիման վրա՝ վարքագծի կանոնների կարգավորման միջոցների և մեթոդների ամբողջություն, որն անվանվում է սոցիալական կարգավորման կառուցակարգ: Առանց վերջինիս հնարավոր չէ մարդկային քաղաքակրթության, որպես ամբողջական սոցիալական օրգանիզմի, գոյությունը: Միևնույն ժամանակ, եթե սոցիալական կառավարման մեխանիզմը համեմատենք սոցիալական կարգավորման մեխանիզմի հետ, ապա, մեր կարծիքով, դրանք փոխհարաբերվում են, որպես մասը ամբողջին: Այսինքն, սոցիալական կառավարման մեխանիզմը հանդիսանում է սոցիալական կարգավորման մեխանիզմի բաղկացուցիչ մասը: Իրավաբանական գրականությունում նշվում է որ դա պայմանավորված է, նախ և առաջ, նրանով, որ կարգավորումը հանդիսանում է կառավարման նախահիմքը և հանդիսանում է ավելի պարզ կազմակերպչական ձև, քան կառավարումը: Ավելին, «կարգավորում» հասկացությունը ներառում է կառավարչական գործընթացների լայն շրջանակ⁴⁰:

³⁹Տե՛ս **Верительникова А. В.** Право в системе социальных норм в современном российском обществе: социально-философский анализ. Дисс. ... канд. филос. наук. Уфа, 2010. С. 17-20:

⁴⁰Տե՛ս **Ершов В.В.** Принцип обратной связи в правоприменительной деятельности судов//Тезисы докладов на теоретической конференции аспирантов института государства и права АН СССР и юридического факультета МГУ им. Ломоносова. М., Изд-во ИГиП АН СССР. 1985. С. 26-27; **Демидов А.И.** Правоведение: от методологического анархизма к методологическому плюрализму// Государство и право на рубеже веков (материалы Всероссийской конференции). Проблемы теории и истории. М., Изд-во ИГиП РАН. 2001. С. 125-130; **Ломакина И.Б.** Правовой плюрализм как методологическое основание обычного права: социолого-коммуникативный ракурс//Правоведение. С.-Пб.: Изд-во С.-Петербург. ун-та. 2015. № 2. С. 22-33.

Իր կայացման տարբեր փուլերում մարդկությունը ստեղծել է սոցիալական կարգավորման ճյուղավորված կառուցվածքի մեխանիզմ: Այսպես, զարգացման առաջին փուլերում առկա էին ինքնաբերական սովորություններ, որոնք դեռևս չէին ձևավորել որևէ հատուկ կանոններ, այնուհետև ի հայտ են գալիս դեռևս ինքնաբերական դրսևորումների հետ կապված վարքագծի որոշակի կանոններ, ավանդույթներ, սովորույթներ, առանց որոնց սոցիալական կյանքը հնարավոր չէր: Ունենալով կենսագործունեության համար շատ մեծ նշանակություն, դրանք ծառայում են հասարակության պահպանմանը: Առաջանալով հասարակության որոշակի պահանջի հիման վրա, վարքագծի կանոնները (նորմերը) իրենցից ներկայացնում են վարքագծի օրինակներ, որոնց պետք է հետևեն և պահպանեն հասարակության բոլոր անդամները⁴¹:

Հասարակության զարգացման գործընթացում սովորույթները և ավանդույթները լրացվում էին ավելի բարդ սոցիալական նորմերով, որոնց սկզբում աջակցում էր հասարակական կարծիքը, իսկ հետագայում՝ պետական իշխանությունը: Նոր սոցիալական նորմերը, սովորույթների և ավանդույթների համեմատ ավելի քիչ կայուն են և այդքան էլ պահպանողական չեն, ինչը, գլոբալացման պայմաններում, դրանք դարձնում է մարդկանց վարքագծի կարգավորման առավել ընդունելի կարգավորիչներ, քանի որ դրանք ավելի ճկուն են և փոփոխվում և կատարելագործվում են պարզեցված կարգով:

Արդի իրավունքի գլոբալացման ժամանակաշրջանում անձի վարքագծի կարգավորումը կապված է հասարակության զարգացումների հետ, քանի որ գլոբալացվող հասարակությունում, անձն օժտված է հասարակական գործընթացների վրա լայնածավալ ազդեցության հնարավորությունով: Անձը հասարակության կազմակերպության ամբողջական համակարգում հանդիսանում է գործուն տարր, որը գտնվում է ամբողջի, այսինքն՝ հասարակության հետ մշտական փոխհարաբերության մեջ, ինչի պատճառով էլ գլոբալ սոցիալական համակարգում մարդը ձեռք է բերում իրավունքներ և պարտականություններ, այսինքն՝ իրավասուբյեկտություն: Գլոբալ հասարակության նոր սուբյեկտները ինքնուրույն ստեղծում են հասարակական

⁴¹Մանրամասն տե՛ս **Lewis J.** Man and evolution. Lawrence & Wishart. 1st ed. 1962.

ինստիտուտներ, որոնք էլ ապահովում են իրենց իրավունքների և ազատությունների փաստացի պահպանումը, ինչպես նաև ազդեցություն են ունենում այդ սուբյեկտների վարքագծի կոնկրետ դրսևորումների վրա, պաշտպանելով հասարակությունը իրավունքների և ազատությունների խախտումներից, որոնք ամրագրված են սոցիալական նորմերում⁴²: Հարկ է նշել, որ կարգավորման մեխանիզմը, որի շնորհիվ հասարակությունը պահպանում է իր և անհատի միջև փոխհարաբերությունը, ավելի շատ կատարելագործվում է համատեղ գործունեության ապահովման ուղղությամբ: Միևնույն ժամանակ, փոխօգնությունը ծնում է մարդկանց միջև որոշակի փոխհարաբերություններ, որոնք ամրագրվում են սոցիալական նորմերում, որոնց շնորհիվ հասարակությունը ազատվում է առանձին հերթականությամբ միևնույն վարքագծի դրսևորումների կարգավորման անհրաժեշտությունից: Սոցիալական նորմերը, ինչպես ընդհանուր սովորական իրավիճակներում, այնպես էլ կոնկրետ դեպքերում, պահանջում են մարդկանցից միայն վարքագծի պարտադիր և ընդունելի տարբերակներ⁴³:

Հայտնի է, որ անձի վարքագիծն, այսպես թե այնպես, պայմանավորված է սոցիալական նորմերով, այդ պատճառով սոցիալական ակտիվության յուրաքանչյուր խթանում ընդամենը հանգեցնում է մարդու վարքագծի նորմատիվ կայունացմանը: Ըստ Ս. Ս. Ալեկսեևի՝ ոչ նորմատիվ կարգավորիչները, վերաբերում են բացառապես անհատական գործոններին: Հարկ է նշել, որ անհատական գործոններով իրականացվող կարգավորումը մարդու վարքագծի այնպիսի կարգավորում է, որն իրականացվում է միանգամյա, որոշակի հարցերին լուծում տվող որոշումներով, որոնք վերաբերում են խիստ որոշակի դեպքերի և կոնկրետ անձանց: Անհատական կարգավորումը օժտված է արժանիքներով, քանի որ թույլ է տալիս լուծել կյանքի հետ կապված հարցեր՝ հաշվի առնելով տվյալ իրավիճակի առանձնահատկությունները, անհատի անձնական որակները, առաջացող հարաբերությունների բնույթները: Սակայն, ակնհայտ են նաև էական թերությունները, որոնցից իրավագետն առանձնացնում է դրանք, քանի որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում խնդիրը պետք է

⁴²Տե՛ս **Нерсесянц В.С.** Общая теория права и государства. Уч. для вузов, М., Норма, 2015. С. 81-82.

⁴³Տե՛ս **Головистикова А.Н. Дмитриев Ю.А.** Проблемы теории государства и права. М., ЭКСМО. 2005. С.398-399.

լուծել նորից և բացակայում է համընդհանուր կարգը, ինչպես նաև գոյություն ունեն սուբյեկտիվ կամայական որոշումների բավականին լայն հնարավորություններ⁴⁴:

Ոչ նորմատիվ կարգավորումը կայանում է նրանում, որ դրանում պարունակվող՝ մարդու վարքագծի կարգավորման սկզբունքները, նպատակները և միջոցները մարդկանց վարքագծի նկատմամբ, կոնկրետ իրավիճակներում, ձևակերպված չեն, դիֆերենցված չեն և անհատականացված չեն կոնկրետ խիստ պահանջներին, գնահատականներին և վերահսկողության միջոցներին համապատասխան⁴⁵: Այնուամենայնիվ, մարդու սոցիալական վարքագծի կարգավորողի դերը կատարելուց, ոչ նորմատիվ միջոցներն ավելի ազդեցիկ են, քան նորմատիվ միջոցները, քանի որ գլոբալացման պայմաններում դրանք կատարում են հասարակական հարաբերությունների կարգավորման կանխարգելիչ միջոցների դեր: Հատկանշական է, որ իրավաբանական գրականությունում ոչ նորմատիվ կարգավորման միջոցների դասին են վերագրում **նպատակներն ու արժեքները**:

Ակնհայտ է, որ անձի վարքագծի կարգավորումը ենթադրում է նպատակի առկայություն, որն անհրաժեշտ է իրականացնել, իսկ նպատակը հանդիսանում է կարգավորման ոչ նորմատիվ տարր, քանի որ մարդն իր վարքագծում կարող է շարժվել ոչ թե սոցիալական նորմի պահանջներով, այլ իր առջև դրված նպատակներով: Ակնհայտ է, որ անձը, հասարակական նպատակների սուբյեկտիվ ընկալման հետ մեկտեղ, պատկերացում է կազմում նաև այդ նպատակներին հասնելու միջոցների մասին, որոնք, այսպես թե այնպես, համապատասխանում են սոցիալական նորմերին: Ավելին, նպատակը հանդիսանում է ինչպես անձի, այնպես էլ ողջ հասարակության ապագայի ստեղծմանն ուղղված ակտիվ գործողությունների ձեռնարկման պատճառ⁴⁶:

Ուշագրավ է Ա. Հուրիելի, Ն. Վուդսի դիտարկումն այն մասին, որ արժեքային կարգավորիչներն իրենց ուրույն ազդեցությունն են թողնում ժողովրդավարական,

⁴⁴ Տե՛ս **Алексеев С. С.** Теория права. 2-е изд., перераб., и доп., М., БЕК. 1995. С.36-37.

⁴⁵ Մանրմասն տե՛ս **Ղազանջյան Լ.Ա.** Անձի իրավական դրություն. տեսական-իարվական վերլուծություն. Եր., Լիմուշ., 2016; **Лукашева Е.А.** Человек, право, цивилизация: нормативно-ценностное измерение. М., Норма. 2014.

⁴⁶ Մանրմասն տե՛ս **Trion N.** Théorie générale du droit: Droit, pouvoir, savoir. Paris.Lancier.2012; **Roubier P.** Théorie générale du droit. Paris.Dalloz.2012; **Waters M.** Globalization. London. Routledge.1995; **Trion N.** Théorie générale du droit: Droit, pouvoir, savoir. Paris. Lancier.2012.

իրավական պետությունում հասարակական հարաբերությունների վրա, քանի որ անձը, գնահատելով շրջակա միջավայրում տեղի ունեցող գործընթացները, ձևավորում է արժեքային վերաբերմունք աշխարհի նկատմամբ, որի հետևանքով յուրաքանչյուր առարկա, երևույթ, գաղափար ստանում է անձի գնահատականը⁴⁷: Միևնույն ժամանակ, արժեքները հանդիսանում են անձի գործունեության ուժեղ կարգավորիչներից մեկը, քանի որ դրանց շնորհիվ, անձի և հասարակության միջև փոխազդեցության գործընթացում տեղի է ունենում տեղեկատվության առանձնացում, սահմանվում են սոցիալական հարաբերություններ, ձևավորվում են էմոցիաներ և զգացմունքներ, շփման հմտություններ և այլն⁴⁸: Արժեքներն օժտված են նաև սուբյեկտիվ բնույթով, քանի որ յուրահատուկ են յուրաքանչյուր անձի համար: Այդ է պատճառը, որ մասնագիտական գրականությունում տարանջատում են տարաբնույթ արժեքները, ինչպիսիք են օրինակ՝ անձնական արժեքները, տարբեր ժամանակաշրջանների և սոցիալական խմբերի արժեքները և այլն, որոնց շարքում իրենց կարևորությամբ առանձնացվում են համամարդկային արժեքները: Վերջիններս հանդիսանում են գլոբալ գաղափարախոսության, համաշխարհային կրոնների, արվեստի առաջացման և դրանց զարգացման կարգավորման հիմքը⁴⁹:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ նպատակների և արժեքների միջև առկա է հակասություն, որն արտահայտվում է անձի գործունեության բոլոր ոլորտներում, բացի այն ոլորտներից, որտեղ առկա են օբյեկտիվ և ռացիոնալ լուծումներ: Այսպիսով, մեր կողմից դիտարկվող կարգավորման ոչ նորմատիվ և նորմատիվ միջոցները հանդիսանում են հասարակության գիտակցության արտադրանքը: Դրանք միշտ կազմում են անքակտելի ամբողջություն: Որոշելով մարդկանց վարքագծի հնարավոր ծավալը և բնույթը, դրանք սոցիալական կարգավորման մեխանիզմում կատարում են նաև գաղափարական գործառույթ: Այնուամենայնիվ, որպեսզի այդ մեխանիզմը գործի, դրա գաղափարական կողմը պետք է լրացնել կազմակերպչական եղանակով: Միայն գաղափարական և

⁴⁷Մանրամասն տե՛ս **Hurriell A, Woods N.** Inequality, Globalization and World politics, Oxford, Oxford Univ. Press., 1999:

⁴⁸Տե՛ս **Ветютнев Ю.Ю.** Аксеология правовой формы М.,Юрлитинформ. 2013. С. 23-25; **Пригожин А.И.** Цели и ценности. Новые методы работы с будущим. М., Дело. 2010. С. 40-43.

⁴⁹Մանրամասն տե՛ս Социокультурная антропология права/ Под ред. **Исаева Н.А., Честнова И.А., М.,** АЛЕФ-Пресс. 2015:

կազմակերպչական միջոցների ամբողջությունն է ունակ ապահովել սոցիալական կարգավորման մեխանիզմի և դրա՝ մարդկանց վարքագծի կառավարման ֆունկցիայի գործունեությունը:

Ակնհայտ է, որ արդի գլոբալ սոցիալական համակարգում կազմակերպչական բաղադրիչը կազմում են միջազգային և միջկառավարական կազմակերպությունները, պետությունները, ինչպես նաև՝ բազմաթիվ ոչ պետական կազմակերպություններ, որոնք ստեղծվում են անհատների կողմից ինքնուրույն՝ իրենց պահանջների բավարարման նպատակով: Միևնույն ժամանակ, գլոբալացման դարաշրջանում հասարակությունում կարծրացել են սոցիալական նորմերը, որոնք հանդիսանալով ինքնուրույն, ակտիվ և բազմաբնույթ երևույթներ և իրականության արտացոլանք, ակտիվորեն ազդում են հասարակական հարաբերությունների վրա: Սոցիալական նորմերն օժտված են մի շարք առանձնահատկություններով.

1. Ձևավորվում են մարդկանց կենսագործունեության արդյունքում և կարգավորում են հասարակական հարաբերությունները:

2. Հասցեավորված են անձանց և միավորումներին, սահմանում են դրանց պարտադիր և հնարավոր վարքագծի սահմանները:

Ժամանակակից գլոբալ սոցիալական համակարգի ուսումնասիրության կարևորագույն հարցերից մեկն է նորմատիվ կարգավորման համակարգի տարրերի փոխազդեցության հարցը: Սոցիալական նորմերի, միմյանց հետ փոխհարաբերության մեջ, գործողության համակարգային ուսումնասիրությունը, ունի սկզբունքային նշանակություն անհատների և դրանց միավորումների վարքագծի ուսումնասիրության գործում:

Հասարակական կյանքի պատմական զարգացումը և դրա տարբեր տիպերի և ձևերի փոփոխությունը զուգորդվել է սոցիալական կարգավորման համակարգում էական փոփոխություններով: Գլոբալացման գործընթացի պայմաններում այս խնդիրը բարդանում է պատմական զարգացման արագացմամբ, նախորդի համեմատ ամեն հաջորդող քաղաքակրթության կյանքի փուլերի տևողության կրճատմամբ⁵⁰, ինչն իր հետքն է թողնում սոցիալական կարգավորիչների վրա, քանի որ սոցիալական նորմերի

⁵⁰Տե՛ս **Дробышевский С.А.** Политическая организация общество и права как явления социальной эволюции. Красноярск. изд. Красноярского унив., 2015. С. 84-85.

որոշ տեսակներ մահանում են, որոշներն՝ առաջանում, ընդ որում տեղի է ունենում դրանց փոխհարաբերության և փոխազդեցության փոփոխություն:

Եթե դիտարկենք սոցիալական կարգավորիչների համակարգի պատմականորեն առաջացումն ու կայացումը, ապա կարող ենք նշել, որ սոցիալական կարգավորման անհրաժեշտությունը ստեղծվել է մարդուն կենդանական աշխարհից առանձնացմամբ և այլ մարդկանց նկատմամբ իր անձի գիտակցմամբ: Այդ մեկուսացման և անհատականացման գործընթացները հանդիսանում են սոցիալական կարգավորման առաջացման նախապայմանները: Սոցիալական նորմատիվային կարգավորման տարբերակման գործընթացը բացատրող տեսությունների հակասության արդյունքում ստեղծվել են սոցիալական նորմերի տարբեր դասակարգումներ:

Ուսումնասիրության առարկայում գիտելիքների խորացումը բերում է դասակարգումների հիմնավորումների վերաբերյալ պատկերացումների փոփոխության: Արդի իրավաբանական գրականությունում պայմանավորված հասարակական հարաբերությունների վրա կարգավորիչ ազդեցության աստիճանով և բնույթով՝ սոցիալական նորմերը ընդունված է դասակարգել հինգ հիմնական տեսակների՝ սովորույթներ, բարոյականություն, իրավունք, կորպորատիվ նորմեր, կրոնական նորմեր⁵¹:

Մոնոնորմերի տարբերակման գործընթացն իրականացվում է աստիճանաբար, դարերի ընթացքում և բերում է, մեր կարծիքով, սոցիալական նորմերի տեսակների փոխազդեցության զարգացման երկու հիմնական տարբերակների առանձնացմանը:

Իրավաբանական գրականությունում կարող ենք հանդիպել սոցիալական նորմերի՝ որպես միայն հասարակական հարաբերությունները կարգավորող երևույթների վերաբերյալ մոտեցմանը: Վերջինս հակակշռում է սոցիալական նորմերի՝ որպես համընդհանուր կարգավորիչի վերաբերյալ մոտեցմանը: Այս հայեցակարգի ջատագովները մատնանշում են, որ իրավունքը ծագել է կրոնից, «արդարություն» հասկացությունը հանդիսանում է համընդհանուր արժեքներից մեկը, որը սկիզբ առել դեռևս հեթանոսական ժամանակաշրջանում, հանդիսանում է ոչ միայն իրավունք, այլև՝ պարտավորություն: Այսպես, Հին աշխարհում մարդու վարքագիծը կարգավորվել է

⁵¹ См. у Теория права и государства/Под ред. **Лазарева В.В.**, М. Право и Закон. 1996. С. 108-109.

կրոնական բարոյական նորմերով, որոնք հետագայում իրենց տեղը զիջել են իրավունքի նորմերին⁵²:

Մեր կարծիքով, նշված դրույթը հատկանշական է բոլոր կրոնական իրավական համակարգերին, բացառությամբ ռոմանագերմանական և անգլոամերիկյան իրավական ընտանիքների: Չնայած որ այս իրավական ընտանիքները ձևավորվել են մեծ մասամբ կրոնական կամ եկեղեցական իրավունքի հիման վրա, տնտեսական հարաբերությունների զարգացումն ու իրավունքի գլոբալացումն, ի վերջո, հանգեցնելու են քաղաքական համակարգի անկայունությանը, սոցիալական կարգավորիչների և կոնկրետ պետության, հասարակության գաղափարախոսության միաձուլմանը: Միևնույն ժամանակ, իրավաբանական գրականությունում գաղափարների ներխուժումը սոցիալական կարգավորման ոլորտ բնութագրվում է հետևյալ հաջորդականությամբ՝ կրոն, բարոյականություն, սովորույթ, իրավունք⁵³: Այնուամենայնիվ, կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ առաջնային և հիմնարար նորմերն են հանդիսանում բարոյականության նորմերը, քանի որ դրանց հիմքում ընկած են մարդկային համերաշխության զգացումը, որը միավորում է մարդկանց նաև գլոբալացման շրջանում, քանի որ մարդը սոցիալական էակ է: Ավելին, բարոյականության ոլորտին կարելի է վերագրել մարդու պատկերացումները բարու, չարի, արժանապատվության, խղճի, պատասխանատվության, գթության, ազնվության և այլնի վերաբերյալ: Հայտնի է, որ բարոյականությունը միշտ եղել է հասարակությունում մարդու վարքագծի նորմատիվ կարգավորման հիմնական եղանակներից և այն դիտարկվում է ոչ միայն աշխարհիկ էթիկայի վերաբերյալ գրականությունում⁵⁴:

Արդի գլոբալացման, այդ թվում նաև եկեղեցու և պետության միասնականացման պայմաններում, գերիշխում են աշխարհիկ բարոյականության նորմեր: Միևնույն ժամանակ, պետք հիշել նաև ժամանակակից աշխարհիկ նորմերի նախորդներին՝

⁵²Տե՛ս **Денщикова И.В.** Монономы как источники происхождения права // Актуальные проблемы истории, политики и права: Сборник научных трудов преподавателей и адъюнктов. Екатеринбург. Изд-во Уральск. ЮИ МВД России. 2012, Вып. 12. С. 95-97.

⁵³Տե՛ս **Дашин А.В., Ломакина И.Б.** Обычное право и правовой обычай: от социальной монономы к правовой нормативности. С.-П., Астерион, 2005. С. 22-25; Кучма В.В. Государство и право древнего мира и средних веков. В 2-х томах. Волгоград. ВолГУ. 2001. С. 5-10:

⁵⁴Տե՛ս **Мартышин О.В.** Философия права. М., Проспект. 2016.С. 40-42.

կրոնական նորմերին, քանի որ անհնար է անտեսել կրոնական նորմերի ահռելի ազդեցությունը անձի կյանքի բոլոր ոլորտների վրա: Ակնհայտ է, որ կրոնը մեկուսացված չէ և հանդիմանում է հասարակության մաս, ուստի, ստեղծում է նորմեր, որոնք կարգավորում են հասարակական հարաբերությունների որոշակի մասը:

Բարոյական նորմերի հիմքում ձևավորվել են նաև այլ տեսակի սոցիալական կարգավորիչներ, և առաջին հերթին սովորույթները՝ հատուկ տեսակի վարքագծի կանոններ: Այս կարգավորիչ երևույթը կապված է, նախ և առաջ, հասարակության հոգեբանության հետ, հասարակական գիտակցության այն մասի հետ, որը բաղկացած է պատմականորեն ձևավորված և նշանակալի աստիճանով դեռևս զգացմունքների ինքնաբուխ կանոններով զարգացող զգացմունքների, պատրանքների, ավանդույթների, բարքերի: Այնուամենայնիվ, սովորույթները, ի տարբերություն բարոյականությանը, իրենցից ներկայացնում են մարդկային վարքագծի պահանջներին ոչ մի կերպ չկապված համակարգ, հենվում են ավանդույթների վրա, որոնք այս դեպքում արդեն իսկ հանդես են գալիս որպես վարքագծի կարծրատիպեր, ընդհանրացված հասարակական երկարաժամկետ պրակտիկայով, հիմնված այս կամ այն գործողությունների բազմաթիվ կիրառվածության վրա⁵⁵: Եթե բարոյական նորմերը կարգավորում են մարդկանց վարքագիծը գնահատողական չափանիշներով, որոնք համապատասխանում են հասարակության անդամների գաղափարախոսությանը, ապա նույն նորմը, դառնալով սովորույթ, ունենում է իր կարգավորիչ ազդեցությունը հասարակության անդամների վրա, ովքեր սովոր են այդ սովորույթի պահպանմանը, որն իրենց համար վերածվել է անհրաժեշտության:

Սոցիալական նորմերի զարգացման օղակն են հանդիսանում կորպորատիվ նորմերը: «Կորպորացիա» (լատ. corporatio - միավորում) եզրույթը ճախ կիրառվում է ԱՄՆ-ի և մի շարք այլ երկրների իրավաբանական գրականությունում և սովորաբար նշանակում է իրավաբանական անձ, կազմակերպություն: «Կորպորացիա» եզրույթը կիրառվում է այն դեպքում, երբ անհրաժեշտ է ընդգծել, որ կազմակերպությունը կարող է հանդես գալ որպես մեկ ամբողջական միավորում և քաղաքացիական

⁵⁵Մանրամասն տե՛ս **Григорьян Э.Р.** Социальные нормы в эволюционном аспекте. М., Исн., 2013.

շրջանառության մասնակից⁵⁶: Միևնույն ժամանակ, համաշխարհային բանկի բնորոշման համաձայն՝ **կորպորատիվ կառավարումը** օրենքների, իրավական այլ ակտերի և մասնավոր հատվածի կամավոր գործունեության այնպիսի միասնություն է, որը ձեռնարկություններին հնարավորություն է ընձեռում ներգրավելու ֆինանսական և մարդկային կապիտալ, արդյունավետ գործելու և այդպիսով հարատևելու՝ իրենց բաժնետերերի համար ստեղծելով երկարաժամկետ տնտեսական արժեք, որը պետք է զուգորդվի շահագրգռված բոլոր կողմերի և ընդհանրապես հասարակության շահերի նկատմամբ հարգանքով (ընգծ. մերն է՝ Ա. Տ.-Բ.)⁵⁷: Հետևաբար, կորպորատիվ կարգավորումը, դա վարքագծի վրա ազդեցության միջոցների համակարգ է, որը հատուկ է որևէ միավորմանը: Այնուամենայնիվ, մեր կարծիքով, այդ մեկնաբանության մեջ «միավորում» եզրույթը լայն է, քանի որ դրանով կարելի է անվանել յուրաքանչյուր սոցիալական կազմակերպություն, նույնիսկ պետությունը: Կատարված ուսումնասիրությունները փաստում են, որ եկեղեցին հանդիսանում է սոցիալական համակարգի ամենակարևոր բաղկացուցիչներից մեկը, քանի որ հանդիսանում են հատուկ տեսակի հրապարակային կորպորացիա, որն ունի իր մասնակիցների պարզևատրման և պատժի հնարավորություններ, հանդես է գալիս բազմաթիվ, հաճախ հրապարակային իրավական հարաբերություններում, որպես պետության իրավահավասար մասնակից: Ավելին, կրոնական կազմակերպությունների ամենակարևոր նպատակն է հանդիսանում իր անդամների վրա նորմատիվ ազդեցությունը, նրանց մոտ որոշակի նպատակների, արժեքների, իդեալների ձևավորումը: Այս նպատակների իրականացումը կատարվում է մի շարք գործառույթների միջոցով, հավատքի սովորեցման, պաշտպանության և հիմնավորումների համակարգի ստեղծման, կուլտային գործունեության կառավարման և իրականացման, կրոնական նորմերի իրականացման վերահսկողության և սանկցիաների կիրառման, աշխարհիկ կազմակերպությունների հետ կապերի պահպանման, պետական ապարատի և այլնի միջոցով: Կրոնը հանդիսանում է հասարակական կյանքի, այդ թվում հասարակության հոգևոր մշակույթի անհրաժեշտ

⁵⁶Տե՛ս Большой юридический словарь. <https://gufo.me/dict/law/корпорация/27.08.2017>.

⁵⁷Տե՛ս **Maassen G. F.** An International Comparison of Corporate Governance Models, Elst, the Netherlands, 2000. P. 2-4:

բաղկացուցիչ տարրը⁵⁸: Մեր ուսումնասիրության նպատակներին համապատասխան, մենք կկանգնենք վերոնշյալ ֆունկցիաներից մեկի՝ օրինականացման ֆունկցիայի վրա, որն ունի ազդեցություն կրոնական նորմերի ձևավորման վրա: Այս ֆունկցիան ներկայացնում է իրենից արժեքանորմատիվային կարգի հիմնավորում և օրինականացում: Հենց կրոնն է պատասխանում արժեքանորմատիվային համակարգերի այն կարևոր հարցին թե հանդիսանում են արդյոք դրանք հասարակական զարգացման արդյունքը և, հետևաբար, ունե՞ն հարաբերական բնույթ, կարո՞ղ են փոփոխվել տարբեր սոցիալական մշակութային միջավայրերում կամ ունե՞ն արդյոք վերհասարակական, վերմարդկային բնություն, «արմատավորվա՞ծ» են, հիմնվո՞ւմ են ոչ անցողիկի, բացարձակի, հավերժի վրա: Այս հարցի կրոնական պատասխանը պայմանավորում է կրոնի վերածումը ոչ թե առանձին արժեքների, նորմերի և վարքագծի օրինակների հիման վրա, այլ ամբողջ սոցիալ մշակութային կարգի, այսինքն, կրոնը հանդիսանում է համաշխարհային հոգևոր նորմատիվ արժեքների ամրագրման և պահպանման ձև, որը կազմում է համաշխարհային բարոյականությունը:

Կրոնական նորմերը, հանդիսանում են մարդկային քաղաքակրթության հոգևոր բաղկացուցիչը, օժտված են կարևոր հատկանիշներով, որոնց շնորհիվ կարգավորվում են արդի հասարակական հարաբերությունները: Կարևորագույն հատկանիշը կրոնական նորմերի կայունությունն ու փոխկապակցվածությունն է, որը հանդիսանում է էվոլյուցիոն գործընթացի արդյունք:

Ինչ վերաբերում է աշխարհիկ նորմերին, ապա դրանց դասին են պատկանում հասարակական կազմակերպությունների կորպորատիվ նորմերը, արտացոլված կազմակերպությունների կանոնադրություններում: Վերջիններս հասարակական միավորումների լիազոր մարմինների կողմից հատուկ սահմանվող անդամների համար պարտադիր վարքագծի կանոններ, որոնք արտահայտում են նշված կազմակերպությունների կոլեկտիվ կամքը և որոնք հանդես են գալիս որպես ներկազմակերպական և որոշ արտաքին (պետության օրգանների կողմից փոխանցված

⁵⁸St' u Kursu церковного права/Под. ред. Павлова А.С., С.-Пб., Лань.2002. Смирнов В. В., Агамиров К. В., Габрелян Э. В., Дидикин А. Б., Доровских Е. М., Егоров В. К., Лапаева В. В., Михайлов А. М., Орлова О. В., Плигин В. Н., Поленина С. В., Скурко Е. В., Супатаев М. А. Право и религия в междисциплинарной интерпретации//Государство и право. 2018. №8. С. 5-20.

Ֆունկցիաների հիման վրա) հարաբերությունների կարգավորիչներ, որոնք պահպանվում են ներքին համոզմունքի հիման վրա և հասարակության կողմից պահպանման միջոցների, իսկ որոշ դեպքերում, պետական ազդեցությամբ: Այդ իմաստով կորպորատիվ նորմերը, որպես կանոն, տարածում են իրենց ազդեցությունը միայն հասարակական միավորումների անդամների վրա և կարգավորում են անդամակցության հետ կապված հարաբերությունները: Հասարակական կազմակերպությունների բնութագրիչ առանձնահատկությունը կայանում է ներկազմակերպական հարաբերությունների կարգավորման մեջ, ինչն էլ արտացոլում է այդ միավորումների գործունեությունը⁵⁹:

Համամիտ են իրավաբանական գրականությունում արտահայտած այն դիրքորոշման հետ, որ անհրաժեշտ է ներկայացնել կորպորատիվ նորմերի առանձնահատկությունները, որոնցով վերջիններս տարբերվում են սոցիալական նորմերից.

1. Դրանց կարգավորման առարկա են հանդիսանում այն հարաբերությունները, որոնք իրավաբանորեն կարգավորված չեն (այդ կարգավորման անհնարինության և աննպատակահարմարության ուժով): Դրանք պատկանում են քաղաքացիական հասարակության կառուցվածքային միավորներին և արտահայտում են դրանց յուրահատկությունը:

2. Ինչպես հայտնի է, հասարակական կազմակերպությունները դրանք կամավոր միավորումներ են, կոչված իրենց անդամների կոնկրետ հետաքրքրությունների և հակվածությունների բավարարմանը: Կորպորատիվ նորմերը արտացոլում են միայն կոնկրետ անձանց կամքը, այսինքն, հասարակական միությունների անդամների կամքը: Ավելին, կորպորատիվ նորմերը հեշտությամբ ենթարկվում են փոփոխության: Հարկ է նշել, որ կորպորատիվ նորմերը, արտացոլելով, ըստ էության, կորպորացիայի անդամների շահերը, ներառում են կորպորատիվ բարոյականության նորմեր, որոնք

⁵⁹Տե՛ս **Лялин Д.Ю.** Возникновение и развитие учения о корпорациях: фрагменты истории // История государства и права. М.,Юрист. 2004.№ 6. С. 23-25; **Макарова О. А.** Корпоративное право. 3-е изд. пераб. и доп, М.,Юрайт. 2018.С.27-28.

կարող են հիմնվել համաշխարհային բարոյականության վրա, իսկ կարող են նույնիսկ հակասել դրան⁶⁰:

Ժամանակակից մակրոէթնիկ շարժման սկզբնակետն է հանդիսանում «Աշխարհի էթնոսի հռչակագիրը», որի նպատակն է լրացնել ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը: Աշխարհի էթնոսի հռչակագրում մատնանշվում է, որ մարդկության հիմնարար արժեքների ամբողջությունն առկա է աշխարհի բոլոր կրոնական ուսմունքներում և հենց դրանք են հանդիսանում աշխարհի էթնոսի հիմքը:

Հռչակագրում ամրագրված են բարոյականության չորս հիմնարար հրամայականներ, որոնք ընդգրկված են աշխարհի գրեթե բոլոր կրոններում⁶¹.

1. Բռնությանը դեմ լինելու և կյանքի բոլոր ձևերի նկատմամբ բարեկամության առկայությունը,

2. Համերաշխության և արդար տնտեսական կարգի առկայությունը,

3. Զսպվածության և արդարամտության մշակույթի առկայությունը,

4. Կնոջ և տղամարդու հավասարության և գործընկերության մշակույթի առկայությունը:

Ընդ որում, չպետք է մոռանալ, որ միասնական սոցիալական կարգավորող համակարգի ստեղծումը ուղղակիորեն կախված կլինի գլոբալ սոցիումի ձևավորման այն մոդելից, որով մարդկությունը կգնա: Առավել նախընտրելի է, բնականաբար, ընդհանուր գլոբալ սոցիումում սոցիալական համակարգերի աստիճանաբար միավորման մոդելը, որի դեպքում, սակայն պետք է հաշվի առնել, որ տարբեր ազգերի սոցիալական համակարգերում գլխավորող դեր են խաղում տարբեր տեսակի սոցիալական կարգավորիչներ: Օրինակ, Ասիայի մուսուլմանական երկրներում գերակշռում են կրոնական նորմերը, Աֆրիկական երկրներում՝ սովորութային նորմերը, իսկ Եվրոպայում և Ամերիկայում՝ հիմնականում իրավունքի նորմերը:

Ինչպես հայտնի է, սոցիալական կարգավորիչների տարաբնույթ տեսակներն ունեն փոփոխության տարբեր արագություններ, հետևաբար, առավել արագ

⁶⁰Մանրամասն տե՛ս Корпоративное право. Уч. для вузов/ Отв. ред. **И.С. Шиткина**. М., Wolters Kluwer., 2018; **Пахомова Н.Н.** Цивилистическая теория корпоративных отношений. Екатеринбург. Налоги и финансовое право, 2005.

⁶¹Մանրամասն տե՛ս Декларация мирового этоса(прин.04.09.1993г.) <http://anthropology.ru/ru/text/dokumenty/deklaraciya-mirovogo-etosa#deklaraciya-mirovogo-etosa-refref/./12.09.2017/>:

կգլորալացվեն այն երկրները, որոնցում սոցիալական կարգավորիչի տեսակն առավել շատ է ենթակա գլորալացման:

1.3. Իրավունքի գլորալացման առաջացման նախապայմանները

Արդի պետության և իրավունքի տեսությունում առանձնացվում են ուսումնասիրություններ նվիրված իրավունքի գլորալացման նախապայմաններին, որոնք իրենց հիմքում բովանդակում են տարաբնույթ սոցիալ-տնտեսական, իրավա-քաղաքական գործընթացներ: Հայտնի է, որ արդի իրավահարաբերությունների զարգացման օրինաչափությունները արտացոլվում են նաև գլորալ գործընթացներում, որոնք ամփոփված են «գլորալիստիկա» հասկացությունում: Այս տեսության համաձայն, աշխարհում բոլոր գործընթացներն անցնում են գլորալ հակասությունների միջով, իսկ «իրավունքի գլորալիստիկայի» տեսությունն, իր հերթին, ուսումնասիրում է գլորալացման գործընթացներն իրավունքում⁶²: *Միևնույն ժամանակ, իրավունքի գլորալացման հիմնական նախապայմաններից է հանդիսանում տվյալ քաղաքակրթության ձևավորման և զարգացման առանձնահատկությունները:*

Հայտնի է, որ «քաղաքակրթություն» եզրույթը մասնագիտական գրականությունում ի հայտ է եկել Լուսավորականության շրջանում, մատնանշելու ազատության, արդարության և իրավունքի վրա հիմնված հասարակություն: Եթե Լ.Գ. Մորգանի աշխատություններում քաղաքակրթությունը բնութագրվում է որպես մարդկային հասարակության զարգացման փուլ, որտեղ առկա են հասարակության դասակարգերն ու մասնավոր սեփականություն, ապա Օ. Շպենգլերը «քաղաքակրթություն» բառի տակ հասկանում էր մշակութային պատմական տիպի մայրամուտի փուլը, դրա քայքայումը, այսինքն՝ վերջինս օգտագործում էր այդ տերմինը բացասական իմաստով⁶³:

Ուշագրավ են արդի իրավաբանների մոտեցումները քաղաքակրթության երեք հիմնական տեսակների վերաբերյալ: Դրանք են. 1)Քաղաքակրթության զարգացումն

⁶²Տե՛ս **Лазарев В. В., Саидов А. Х.** Закономерности развития современного права и юридическая глобалистика//Вестник международного института экономики.М., 2011. С. 85-91.

⁶³Տե՛ս **Morgan L.H.**, Ancient Society. University of Arizona Press. 1985. P. 16-24; **Spengler O.**, The Decline of the West, reprint ed, 2006.P. 24-27.

առանց առաջընթացի, 2)Քաղաքակրթության փուլային զարգացումը
3)Քաղաքակրթության առաջադիմական զարգացումը⁶⁴:

1) Քաղաքակրթության զարգացումն առանց առաջընթացի: Այդպիսի քաղաքակրթական զարգացում են ապրում այն ազգերը, որոնք ապրում են բնության հետ միասնության մեջ, պահպանելով մարդ-բնություն հավասարակշռությունն ու ներդաշնակությունը: Հասարակական հարաբերությունները կարգավորվում են հիմնականում կրոնական նորմերով, իսկ քաղաքակրթությունը գտնվում է անփոփոխ վիճակում, ինչը դրսևորվում է արգելքների խիստ պահպանվող համակարգում, որոնք բացառում են որևէ փոփոխություն: Գործող սովորույթային նորմերում գերիշխում են արգելքները: Տվյալ քաղաքակրթությունները չունեն զարգացման հեռանկարներ, հետևաբար, չեն կարող ենթարկվել գլոբալացման:

2) Քաղաքակրթության փուլային զարգացման տեսակում հասարակությունում գոյություն չունի «մասնավոր սեփականություն» հասկացությունը, անհատի շահերը ենթարկվում են կոլեկտիվի շահերին, գործում են պարտադրանքի շատ խիստ կառուցակարգեր: Նորմատիվ կարգավորիչները գոյություն ունեն հիմնականում կրոնական նորմերի տեսքով, իսկ պետության միջամտությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտների կարգավորման մեջ ահռելի է: Հասարակությունն ընկալում է իրավունքի էությունը, սակայն զարգանում է դանդաղ քայլերով: Այնուամենայնիվ, տվյալ քաղաքակրթությունում նորմատիվ-իրավական կարգավորիչների գլոբալացումը հնարավոր է:

3) Քաղաքակրթության առաջադիմական զարգացմանը բնորոշ են ազատ տնտեսական հարաբերությունները, մասնավոր սեփականության բազմազանությունը, մարդկանց իրավունքների լայն շրջանակը, պառլամենտարիզմը, անկախ անհատի ինքնադրսևորման իրավունքը և այլն: Նորմատիվ կարգավորիչների հիմքում անընդհատ զարգացող և կատարելագործվող իրավունքն է: Ավելին, քաղաքակրթությունը զարգանում է անձի շահերի և պահանջմունքների բավարարման

⁶⁴Տե՛ս **Левченко Е. Н.** Россия в современном цивилизационном процессе: социально-философский анализ: социально-философский анализ. Дисс. ... канд. филос. наук. 2007. С. 45-48. **Семенникова Л. И.**, Россия в мировом сообществе цивилизаций, М., 1995. Уч. пособ. для вузов. Изд. 4-е. Брянск. "Курсив", 2000.С. 17-20:

շուրջ, որտեղ իրավունքը հանդիսանում է անձնական իրավունքների հաստատման գործուն միջոց:

Ակնհայտ է, որ քաղաքակրթության բնականոն զարգացումն ու գլոբալացումը հնարավոր է միայն քաղաքակրթության երկրորդ և երրորդ ձևերում: Իրավաբանական գրականությունում վերջին ժամանակաշրջանում գերիշխում է այն մոտեցումը, որ գլոբալացման դարաշրջանում հասարակական հարաբերությունների հիմնական կարգավորիչ է հանդիսանում գլոբալ իրավունքը: Այնուամենայնիվ, գլոբալ քաղաքակրթության տարրերը ձևավորվում և զարգանում են անհամաչափ: Դրանցից շատերը՝ մարդը, տնտեսությունը, տեղեկատվական տեխնոլոգիաները, անմիջականորեն ենթարկվել են գլոբալացման, իսկ որոշ տարրեր, ինչպիսիք են՝ հոգևոր ոլորտը, իրավունքը, սոցիալ-քաղաքական հարաբերությունները, փոփոխման են ենթարկվում տևական ժամանակահատվածում: Հետևաբար, միասնական գլոբալ իրավական համակարգի ստեղծման համար անհրաժեշտ է պետություններին, որոնք դասվում են քաղաքակրթության զարգացման 2-րդ՝ փուլային զարգացման ձևը, ինտեգրել «քաղաքակրթության առաջադիմական զարգացմանը» ձևին դասվող պետության իրավական համակարգը⁶⁵:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ իրավական գլոբալիստիկայի ձևավորումը տեղի է ունենում երկու ուղղությամբ՝ լայն և նեղ: Զարգացման լայն ուղղությունը, հանդիսանում է գլոբալ իրավական համակարգի ձևավորման հեռանկարի ուսումնասիրություն, որն ընդգրկում է. 1) համընդհանուր իրավական հասկացություններն ու սկզբունքները, 2) համընդհանուր նորմատիվ-իրավական ակտերը, 3) իրավահարաբերությունները, 4) համաշխարհային իրավական քաղաքականությունը, մշակույթն ու խորհրդանիշերը, 5) միասնական իրավական պրակտիկան, 6) համընդհանուր ճանաչում ստացած իրավական ինստիտուտները, կազմակերպությունները, որոնք իրականացնում են իրավական քաղաքականությունը, ինչպես նաև զբաղվում են իրավաստեղծ, իրավակիրառ և իրավապաշտպան գործունեությամբ: Իրավական գլոբալիստիկայի ձևավորման և զարգացման առաջին ուղղությունը հեռանկարային է, և նախատեսվում է գլոբալ իրավական համակարգի մեջ

⁶⁵St'u **Bowden B.** In the Name of Progress and Peace: The «Standard of Civilization» and the Universalizing Project»// Alternatives: Global, Local, Political. 2004. №29 (1). P. 43–68.

ներառել միջազգային իրավունքը, որը կարգավորում է պետությունների և միջազգային, միջպետական կազմակերպությունների միջև հարաբերությունները: Ավելին, կարգավորման ծավալն էականորեն խորանում է միջպետական հարաբերությունների ամրապնդման շնորհիվ, որոնք ներառում են միջազգային հանցագործությունների դեմ պայքարը, անձի իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ու երաշխավորվածությունը, էկոլոգիական խնդիրների լուծումը, գլոբալ ֆինանսական համակարգի կարգավորումը և այլն: Այստեղ են ի հայտ գալիս իրավական համակարգերի ներդաշնակեցման և միասնականացման գործընթացները: Իրավական գլոբալիստիկայի ձևավորման և զարգացման երկրորդ՝ նեղ ուղղությունը սահմանափակված է աշխարհում գլոբալ գործընթացները կարգավորող համընդհանուր նորմերի ձևավորման ուսումնասիրությամբ⁶⁶:

Այնուամենայնիվ, ժամանակակից աշխարհում մեկ միասնական գլոբալ իրավական համակարգին անցնելը դեռ անհնարին է, քանի որ գլոբալ իրավունքն առաջին հերթին նորմատիվ-իրավական խմբերի միասնություն է, քան՝ համակարգ⁶⁷: Հատկանշական է, որ իրավունքի գլոբալացումը տարբեր իրավական ընտանիքներում ընթանում է տարբեր եղանակներով: Իրավական ընտանիքների ընդհանրություններն ու տարբերությունները հասկանալու, ինչպես նաև դրանց փոխներգործության աստիճանը որոշելու համար անհրաժեշտ է դիտարկել ազգային-իրավական համակարգերի առանձնահատկությունները համեմատական իրավունքի լույսի ներքո⁶⁸: Ուշադրության է արժանի իրավաբանական գրականությունում իրավական ընտանիքների դասակարգման վերաբերյալ ներկայացված մոտեցումը, որտեղ դրանք դասակարգվում են. կրոնական, ոչ կրոնական իրավական ընտանիքների, ինչպես նաև՝ արևմտյան և ոչ արևմտյան իրավական ընտանիքների: Կրոնական իրավական

⁶⁶Մանրամասն տե՛ս **Albrow M., King E., նշված աշխտ.;** **Cruz P.A.** Modern Approach to Comparative Law. Boston. 1993. **Dias Varella M.** Internationalization of Law: Globalization, International Law and Complexity. Springer., 2014.

⁶⁷Տե՛ս **Рубанов А. А.**, Теоретические основы международного взаимодействия национальных правовых систем. М., Наука, 1984.

⁶⁸Մանրամասն տե՛ս **Давид Р., Жоффре-Спинози К.** Основные правовые системы современности: Пер. с фр. В.А. Туманова. М., Междунар. отношения, 1999; **Цвайгерт К., Кетц Х.** Введение в сравнительное правоведение в сфере частного права. В 2-х томах. М., Международные отношения. 1998. Т.1.; **Menski W.** Comparative Law in a Global Context. London, Cambridge University Press, 2nd ed., 2006. **Twining W.**, Globalisation and legal theory, London, University College, 2000.

ընտանիքը ներառում է հինդուիզմը, կանոնական, մուսուլմանական իրավունքը, ոչ կրոնականը ներառում է անգլոամերիկյան, ռոմանագերմանական, սկանդինավյան իրավական ընտանիքները: Իր հերթին, կիսաարևմտյան իրավական ընտանիքն ընդգրկում է սոցիալիստական, իսկ ոչ արևմտյանը՝ աֆրիկական երկրների սովորութային իրավունքը, հարավարևելյան ասիայի իրավունքը⁶⁹:

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ գլոբալացման գործընթացների հետևանքով վերոնշյալ իրավական ընտանիքները այլևս չեն պահպանել իրենց դասական դրսևորման ձևերը: Ավելին, իրավունքի ինտեգրացիոն գործընթացները հանգեցրել են նրան, որ ռոմանագերմանական իրավական ընտանիքներում ավելի հաճախ կիրառվում են անգլոամերիկյանին բնորոշ գործընթացներ, որոնցից են օրինակ՝ դատական նախադեպի կիրառումը: Նույնպիսի իրավիճակ է ստեղծվել նաև կրոնական իրավական ընտանիքներում, որտեղ հանրային ոլորտը, որպես կանոն, կարգավորվում է իրավական նորմերով, որոնք ստեղծված են ռոմանագերմանական կամ անգլոամերիկյան իրավական ընտանիքների օրինակով, իսկ մասնավորը՝ շարունակում է մնալ կրոնական: Վերոնշյալ զարգացումները իրավաբանական գաղթականությունում հանգեցրեցին նոր «խառը կամ խառնածին իրավական ընտանիք» խորագրով իրավական ընտանիքի ստեղծմանը⁷⁰:

Հանրային ոլորտը աշխարհի բոլոր երկրներում կարգավորվում է կամ ռոմանագերմանական, կամ անգլոամերիկյան իրավական ընտանիքների օրինակներով: Հետևաբար, պոզիտիվ իրավունքի ինտեգրացիան հիմնականում տեղի է ունենում հենց դրանց միջև: Ժամանակակից աշխարհում հանրային իրավունքում գերիշխում է իրավունքի արևմտյան ավանդույթը, իսկ միջազգային իրավունքը լիովին համապատասխանում է ռոմանագերմանական իրավական ընտանիքին և ունի իրավունքի նույնական ձևական աղբյուրներ: Այլ կերպ՝ գլոբալ իրավունքում հիմնական տարրերի ընդհանուր ծագումը և դրանց պատկանելությունը արևմտյան մշակույթին տալիս են ինտեգրացիայի, ուստի՝ գլոբալիզացիայի մեծ հնարավորություններ:

⁶⁹Տե՛ս **Осакве К.** Сравнительное правоведение. Схематический комментарий М., Юристь. 2008. С. 133-137:

⁷⁰Տե՛ս **Лазарев В. В., Саидов А. Х.** նշված աշխտ., էջ 87;

Իրավունքը դասվում է սոցիալական համակարգերի շարքին, քանի որ այն ծնվում է հասարակության կողմից, զարգանում է հասարակության հետ և չի կարող գոյություն ունենալ հասարակությունից դուրս⁷¹: Ընդ որում, յուրաքանչյուր ազգային-իրավական համակարգի առանձնահատկությունները որոշվում են այն փուլով, որում գտնվում է տվյալ հասարակության զարգացումը այս պատմական ժամանակահատվածում և ինչպես են վերաբերում բնակչության հիմնական մասը: Ֆրանսիացի հայտնի գիտնական Ռ. Շուլցի համաձայն, իրավական համակարգը դա հասարակության տեսանկյունն է կանոնների վերաբերյալ, որոնց այն պետք է ենթարկվի այս կամ այն սոցիալական հարաբերությունները կարգավորելիս⁷²:

Իրավունքի, որպես սոցիալական համակարգի դիտարկումը որոշում է յուրաքանչյուր մեթոդոլոգիայի կիրառման հնարավորությունը, որը կիրառելի է սոցիալական համակարգերին: Մեր կարծիքով, այս դեպքում դա կարող է լինել սիներգետիկայի՝ բարդ համակարգերի գիտության մեթոդոլոգիան:

Հասարակական հարաբերություններում իրավական համակարգերի զարգացումները գտնվում են հատուկ փոխներգործության մեջ և հանդիսանում են արդի պետության և իրավունքի տեսության ուսումնասիրման հատուկ օբյեկտ, քանի այդ փոխներգործությունները կանխորոշիչ են պետության և իրավունքի ընդհանուր զարգացման հեռանկարների հարցում: Եթե պետության իրավական համակարգը դիտարկենք սիներգետիկայի տեսանկյունից, ապա կարող ենք բազմակողմանի և համապարփակ եղանակով դիտարկել ժողովրդավարական իրավական պետությունում ընթացող պետական իշխանության կառուցվածքում ինքնակառավարման և կառավարման գործընթացները, պարզաբանել վերոնշյալ գործընթացների սուբյեկտիվ գործոնները, ինչպես նաև պատճառահետևանքային կապի շնորհիվ վերհանել այդ գործընթացների միջև առկա պատահական և հնարավոր կապերը: Ինքնակառավարման դրսևորման հիմնական պայման է հանդիսանում այն, որ արտաքին էներգիան պետք է վստահորեն փակի համակարգ մտնող էներգիայից

⁷¹Մանրամասն տե՛ս Globalisation, Regionalism and Economic Interdependence/Ed. **Filippo di Mauro, S. Dees W. J. McKibbin**, Cambridge. CUP. 2011.

⁷²Մանրամասն տե՛ս **Schütze R.** Globalisation and Governance, University of Durham. 2018:

գոյացող ցնցումները⁷³: Հետևաբար, ազգային-իրավական համակարգն իր զարգացման բնականոն ընթացքն ապահովելու համար պետք է փոխհարաբերակցվի ինչպես այլ սոցիալական համակարգերի հետ, այնպես էլ՝ այլ պետությունների իրավական համակարգերի հետ, ինչն ավելի ցայտուն է դառնում իրավունքի ընդօրինակման (ռեցեպցիա) համատեքստում:

Հատկանշական է, որ իրավաբանական գրականությունում վերջին տարիներին առանձնացվում է **իրավունքի բովանդակության և ձևի գլոբալացման** վերաբերյալ տեսությունները, որոնց շնորհիվ հնարավորություն է ընձեռնվում բացահայտել ստանդարտացման և ռեցեպցիայի առանձնահատկությունները:

Ընդհանուր առմամբ, իրավունքի վերաբերյալ ուսմունքների բազմազանությունը վերաբերում է ինչպես իրավունքի բովանդակությանը, այնպես էլ վերջինիս ձևին:

Հայտնի է, որ «**բովանդակություն**» եզրույթի ներքո՝ փիլիսոփայության մեջ հասկանում ենք այն ամենն ինչ ընդգրկված է կոնկրետ համակարգում, ներառյալ տվյալ համակարգի մասը կազմող տարրերը, հարաբերությունները, գործընթացներն ու զարգացման միտումները: Այլ է իրավիճակը, երբ ուսումնասիրության ենք ենթարկում «**ձև**» բազմաբովանդակ հասկացությունը, քանի որ հաճախ ձևը դիտարկվում է որպես բովանդակության արտաքին դրսևորման միջոցը, ինչպես նաև նշվում է, որ ձևը բովանդակության տարրերի փոխհարաբերության կայուն որոշակիություն է⁷⁴:

Հարկ է նշել, որ իրավունքի ձևի և բովանդակության փոխկապակցվածությունը կոնկրետացնում է կառուցվածքի վերաբերյալ պատկերացումը որպես իրավունքի հատկանիշի, կապում է կառուցվածքը իրավունքում առաջացող հակասությունների, զարգացման (հնարավոր է նույնիսկ ավելի, քանի մասի և ամբողջի կատեգորիաներում) հետ, ընդ որում, կրճատում է դրանց ձևակերպման մեջ առկա միակողմանիությունը և վեր է հանում իրավական հարթության գլոբալիզացիայի խնդրի նոր սահմանները:

Իրավաբանական գրականությունում «իրավունքի ձև» հասկացության ներքո ընդունված է դիտարկել նաև վերջինիս ներքին կառուցվածքը, իրավունքի համակարգի

⁷³Տե՛ս **Венгерова А. Б.** Теория государства и права. Теория государства. Ч. 1. Т. 1 . М., Юристъ, 1995. С. 20; **Сырых В.М.** Логические основания общей теории права: В 2-х томах М.Юстицинформ, 2000. Т. 1. С. 48.

⁷⁴Տե՛ս **Ушаков Д.Н.** Толковый словарь современного русского языка. М., Аделант.2014.С.60, 639.

տարրերի կապի միջոցը, և այս դեպքում՝ «ձև» հասկացությունը համընկնում է «իրավունքի կառուցվածքի» հետ: Հետևաբար, անհրաժեշտ է դիտարկել ձև հասկացության ներքո իրավունքի ներքին և արտաքին կառուցվածքը, քանի որ տարբեր ազգային-իրավական համակարգերն օժտված են իրավունքի տարբեր ձևերով: Ընդ որում, դրանց միասնականացման գործընթացը ընթանում է բարդ եղանակով, սկզբում ընդօրինակվում է ձևը, որը հետագայում հազեցնում է նոր, յուրահատուկ բովանդակությամբ: Ակնհայտ է, որ ձևի և բովանդակության դիալեկտիկական փոխկապակցվածությունը բացահայտվում է մի շարք գործոններով: Դրանք են⁷⁵.

1. Բովանդակության և ձևի անքակտելիությունը:

2. Բովանդակության և ձևի միասնության հակասությունը:

3. Ձևը բովանդակությանը և բովանդակությունը ձևին համապատասխանության դեպքում զարգացման արդյունավետությունը:

1. Ձևի և բովանդակության անքակտելիությունը, նախ և առաջ պայմանավորված է այն փաստով, որ դեռևս հայտնի չէ որևէ իրավական համակարգ, որը մյուս իրավական համակարգի հետ փոխկապակցված չէ բովանդակությամբ և ձևով: Ձևի թերագնահատումը, իր հերթին, իրավաստեղծ գործընթացներում հանգեցնում է չափից դուրս նատուրալիզմի, որի դեպքում կորում է արտահայտման պատշաճությունը և հոգեբանական ազդեցությունը: Կատարյալ ձևի և խորը բովանդակության միասնությունը հանդիսանում է իրավական մտքի զարգացման հիմնաքարը: Իրավունքի ձևի և բովանդակության փոխկապակցվածությունը պայմանավորված է բովանդակության բազմաձև հատկանիշներով: Ավելին, ձևը կարող է օժտված լինել տարբեր բովանդակություններով⁷⁶:

2. Ինչ վերաբերում է իրավունքի ձևի և բովանդակության միասնության հակասությունը, ապա «բովանդակությանը» հատուկ է փոփոխությունների հակվածությունը, իսկ «ձևին», որպես համակարգի ներքին կառուցվածքին, հատուկ է

⁷⁵Մանրամասն տե՛ս, **Авраменко Л. В.** Значение категорий «сущность», «содержание» и «форма» в формулировании понятия права//Проблемы законности. 2014.С. 3-11; **Бошно С.В** Формы Российского права. М., Право и Закон. 2004:

⁷⁶Տե՛ս **Байтин И.М.** Сущность права (Современное нормативное правопонимание на грани двух веков) 2-е изд., доп. М., Право и государство. 2005. С. 59-63.

կայունության հակվածությունը: Ընդհանուր առմամբ այս հասկացությունները ներդաշնակ են, այնուամենայնիվ, գոյություն ունեն նաև իրավունքի ձևի փոփոխման սահմաններ, որոնք պայմանավորված են վերջինիս որակով:

3. Իրավունքի ձևը, հատկապես աններդաշնակ զարգացման պայմաններում, կարող է չհամապատասխանել իրավունքի փոփոխված բովանդակությանը, այնուամենայնիվ, պահպանվում է բովանդակության և համակարգի ներքին կառուցվածքի միասնությունը⁷⁷:

Վերոգրյալի հիման վրա կարող ենք փաստել, որ իրավունքի գլոբալացման և գլոբալ իրավական համակարգի ստեղծման պայմաններում պետք է իրականացվի իրավունքի ձևի և բովանդակության ընդօրինակում:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ իրավունքի գլոբալացման գործընթացում կարևորագույն դերակատարություն ունի իրավունքի բովանդակության հիմնաքար հանդիսացող իրավունքի «իմաստի» ստանդարտացումը: Հայտնի է, որ «իմաստ» հասկացությունը բացահայտում է ցանկացած երևույթի էությունը, արդարացնելով վերջինիս գոյությունը, միաժամանակ հստակեցնելով վերջինիս տեղն ու դերը ընդհանուրը՝ հատուկին հարաբերությունում: Իմաստ են անվանում նաև որոշ առարկաների, բառերի կամ գործողությունների մտացածին կամ իրական նշանակությունը, որը կիրառվում է հասարակության կողմից⁷⁸: Եթե խոսենք իրավունքի իմաստի մասին, ապա մենք նկատի ունենք ինքնաընկալումը, ինչը գտնվում է արդի պետության և իրավունքի տեսության ուսումնասիրության կիզակետում:

Հայտնի է, որ իրավաբանական գրականությունում գոյություն չունի մեկ միասնական մոտեցում իրավունքի սահմանման վերաբերյալ: Համամիտ ենք իրավագետների այն կարծիքի հետ, որ յուրաքանչյուր ժամանակաշրջանում «**իրավունք**» հասկացությունը բնութագրվում է յուրովի, քանի որ վերջինիս ձևակերպման վրա ազդում են տարաբնույթ՝ սոցիալ-իրավական, քաղաքական, գաղափարախոսական և այլ գործոններ⁷⁹:

⁷⁷Տե՛ս **Ермакова Е.В.** Основные способы формально-юридического закрепления правовых норм//Вестник ЮУрГУ. № 40. 2011. С. 10-14:

⁷⁸Տե՛ս **Cabrilac R.** Introduction général au droit.12 éd., Paris. Dalloz.2017.P.8-9:

⁷⁹Մանրամասն տե՛ս **Mouloungui C.** Notions Fondamentales du Droit. Paris. L'Harmattan.2001; **Fabre-Magnan M.** Introduction au Droit. Paris. PUF. 2018.

Ըստ Ա.Գ Վաղարշյանի՝ իրավունքի բազմազան և բազմաբնույթ բնորոշումների առկայությունը հանդիսանում է դրական երևույթ, քանի որ թույլ է տալիս իմանալ իրավունքի ամենից կարևոր կողմերը և գծերը, որոնք հատուկ են ոչ միայն մեկ պատմական դարաշրջանին, այլև մի շարք դարաշրջաններին, իրավունքը տեսնել ոչ միայն կայուն վիճակում, այլ շարժման և զարգացման մեջ⁸⁰: Ավելին, իրավահասկացման վերաբերյալ մոտեցումների բազմազանությունը պայմանավորված է օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի գործոնների բավականին լայն շրջանակով, որոնց շարքին են դասվում սվյալ պետության և հասարակության զարգացման պատմական առանձնահատկությունները, սոցիալ-տնտեսական իրավիճակը, գաղափարական ազդեցությունները, քաղաքական պատեհությունը (կոնյունկտուրան), հեղինակների գաղափարական հակումները, անձի սուբյեկտիվ հատկանիշները՝ դաստիարակությունը, կրթության մակարդակը, մասնագիտական ունակությունները, հմտություններն ու այլ գործոններ⁸¹: Դրա հետ մեկտեղ, «իրավունք» եզրույթի իմաստային խայտաբղետության շնորհիվ հնարավորություն է ընձեռվում հստակեցնել իրավագիտության սահմանները, ինչը կնպաստի տարանջատել իրավունքի առարկան այլ գիտությունների առարկայից: Իր հերթին, Մ.Ի. Բայտինը մատնանշում է, որ իրավունքի հասկացությունը ելակետային է, քանի որ միայն հստակ պատկերացում կազմելով իրավունքի մասին, կարելի է պարզել ոչ միայն իրավաբանական գիտության զարգացման և արդյունավետության բարձրացման հեռանկարները, այլև լուծել նորաստեղծական, իրավունքի կիրառման և մեկնաբանման, օրինականության, իրավակարգի, քաղաքակիրթ քաղաքացիական հասարակության և իրավական պետության կառուցման խնդիրները⁸²:

Դիտարկելով «**իրավունք**» և «**իրավահասկացություն**» հասկացությունների վերաբերյալ իրավաբանական գրականությունում առկա զանազանակերպությունները՝ Վ.Մ. Սիրիխը նշում է, որ իրավունքի տեսության առանցքային հիմնախնդրի վերաբերյալ իրավաբան գիտնականների բազմազան դիրքորոշումները պայմանավոր-

⁸⁰Վաղարշյան Ա.Գ. Պետության և իրավունքի տեսություն-2: Դասախոսություններ: Երևան, 2011, էջ 30:

⁸¹Մանրամասն տե՛ս Лапаев В.В. Типы правопонимания: правовая теория и практика. М., Российская академия правосудия. 2012; Мальцев Г.В. Понимание права. Подходы и проблемы, М. Прометей.1999:

⁸²Байтин М. И. Сущность права (Современное нормативное правопонимание на грани двух веков) 2-е изд., доп. М., Право и государство. 2005. С. 55-56.

ված են 3 հիմնական գործոններով. 1) «իրավունք» հասկացության բարդությամբ և հասարակությունում վերջինիս դրսևորման բազմաձևությամբ, 2) իրավունքի էության իմացության վրա իրավական գաղափարախոսության և դասակարգային պայքարի ազդեցությամբ, 3) գիտնականների տարբեր փիլիսոփայական և մեթոդաբանական ելակետային մոտեցումներով⁸³:

Ուշագրավ է Գ.Հ. Սաֆարյանի և Լ.Պ. Ռասկազովի դիտարկումն այն մասին, որ իրավունքի համակարգի կառուցվածքում կենտրոնական տեղ են զբաղեցնում իրավունքի էությունն ու սոցիալական նշանակությունը: Ավելին, հասարակության և անձանց վրա պետական ներգործության միջոցների համակարգում իրավունքի տեղն ու իրավունքի համակարգի տարրերի արդյունավետությունը կախված է ճիշտ ընտրված հայեցակարգային գլխավոր և հիմնական մոտեցումներից⁸⁴:

Հայտնի է, որ իրավագիտությունում իրավունքի վերաբերյալ սահմանումները բնութագրվում են համայնապարփակությամբ և բազմազանությամբ, որտեղ իրավագետներն առանձնացնում են իրավունքի էության հետևյալ բնութագրական հատկանիշները. 1) *նորմատիվությունը*, 2) *հրապարակայնությունը*, 3) *համապարտադիր բնույթը* 4) *համակարգվածությունը*, 5) *մատչելիությունը* 6) *ձևական որոշակիությունը*⁸⁵:

Ուշագրավ է, որ «իրավունք» եզրույթի վրա իր ուրույն ազդեցությունն է թողնում նաև առանձին վերցված լեզվաբանությունը, լեզվի և մտածողության փոխհարաբերության առանձնահատկությունները, որտեղ լեզուն հանդիսանում է մտքերի, երևույթների, տեղեկատվական իմաստի կրիչը: Ակնհայտ է, որ որևէ երևույթի իմաստը ճանաչվում է միևնույն լեզվական խմբի սահմաններում: Այսպես, հաճախ միևնույն լեզվում «իրավունք» բառով բնութագրվում են ոչ թե մեկ, այլ երկու տարբեր երևույթներ, ինչը կարող է դժվարություններ առաջացնել վերջինիս կոնկրետ իմաստի

⁸³Տե՛ս **Сырых В.М.** Теория государства и права. М., 2014.С. 267. Տե՛ս նաև **Толстяк В.А.** От плюрализма правопонимания к борьбе за содержание права//Государство и право, М., 2004. С. 14.

⁸⁴Տե՛ս **Սաֆարյան Գ.Հ.** Իրավահասկացման հիմնական տիպերը, Եր., Հակարիի, 2016, էջ 23; **Рассказов Л.П.** Теория государства и права. М., 2008. С. 150-152.

⁸⁵Տե՛ս **Daniels D.** The Concept of Law from a Transitional Perspective. L. 2010.Р. 5. **Нерсисянц В.С.** Общая теория права и государства. М., 2015.С. 73-75; **Алексеев С.С.** Философия права. М., 1994. С. 28-29; **Байтин М. И.** О современном нормативном понимании права. М., 2005. С. 50-58; **Мальцев Г.В.** Понимание права. Подходы и проблемы, М., 1999.С. 3-34, 395-404; **Maciver R. M.,** The Modern State. Oxford Univ. Press. L., 1994. P. 248-275;

ընկալման ժամանակ: Եթե անգլերեն լեզվում «իրավունք» հասկացությունը բնութագրվում է տարբեր «Right» և «Law» բառերով, ապա ֆրանսերենում, ռուսերենում, գերմաներենում անհրաժեշտ է հստակեցնել, թե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում «իրավունք» հասկացության որ իմաստն է կիրառվում⁸⁶:

Իրավունքի երկու տարբեր նշանակությունների իմաստը պարզ է. իրավական նորմերի ամբողջություն, որոնք արտահայտվում են պետության տարբեր ակտերում, դա տեսաբանները հաճախ անվանում են իրավունք օբյեկտիվ իմաստով, կամ ուղղակի օբյեկտիվ իրավունք, իսկ քաղաքացիների իրավունքների, ազատությունների կամ պարտավորությունների համակարգը. ամրագրված գործող օրենսդրությունում կամ բխող տարբեր իրավահարաբերություններից, ինչպես նաև անհատին հատուկ ծնված օրվանից, կազմում է իրավունքը սուբյեկտիվ իմաստով կամ սուբյեկտիվ իրավունքը: Ընդ որում, օբյեկտիվ իրավունքի մեջ են ներառվում նաև դատական նախադեպը, իրավական սովորույթը և նորմատիվ պայմանագրերը, իսկ սուբյեկտիվ իրավունքի մեջ՝ օրինական շահերը:

Արդի պետության և իրավունքի տեսությունում իր ամրագրումն է ստացել իրավահասկացության վերաբերյալ 3 հիմնական մոտեցումները, որոնք ընդգրկում են իրավաբանական գրականությունում արտահայտված իրավունքի էության վերաբերյալ տարաբնույթ մոտեցումները: Դրանք են.

1. Իրավահասկացողության իրավաբանական-պոզիտիվիստական հայեցակարգը:
2. Իրավահասկացման բնական իրավունքի տեսությունը:
3. Սոցիոլոգիական իրավահասկացությունը⁸⁷:

Արդի իրավաբանական գրականությունում իրավահասկացության **պոզիտիվիստական հայեցակարգը** ամրագրում է իրավունքը որպես պետության կողմից հրապարակվող նորմերի և հրամանների ամբողջություն, օժտված համապարտադիր և հարկադրական ուժով: Ավելին, իրավունքի հարաբերականությունն ու ձևական որոշակիությունը իրավունքի էությունն է, որով

⁸⁶Տե՛ս **McLeod I.** Legal method. 3. ed. London.Macmillan press, 1999. P. 1-24

⁸⁶Տե՛ս Black's Law Dictionary/ed. **H., Campbell Black.** 4th ed., St. Paul, Minn. West Publishing Co. 1968. P. 1486; **Ушаков Д.Н.** նշված աշխտ., էջ 512:

⁸⁷Տե՛ս **Лапаев В.В.** Типы правопонимания: правовая теория и практика. М., Российская академия правосудия. 2012. С. 29-37.

իրավունքը տարբերվում է բարոյականությունից, ինչի հետևանքով էլ «իրավունք» և «նորմատիվ իրավական ակտ» (օրենք՝ լայն իմաստով) եզրույթները դիտարկվում են որպես հոմանիշներ⁸⁸:

Ըստ Ժ.-Լ. Բերժելի՝ պոզիտիվիստական իրավահասկացությունը, իրավունքի այն հասկացողությունն է, որը մերժում է ցանկացած իրավական մետաֆիզիկա, բնական իրավունքի ցանկացած գաղափար, ճանաչելով միայն պոզիտիվ, գիտական կամ իրավական իրականությունը: Ավելին, հեղինակը առանձնացնում է պոզիտիվիստականության 2 հիմնական տեսակ՝ ա) իրավական կամ իրավաբանական պոզիտիվիզմ, բ) սոցիոլոգիական պոզիտիվիզմ⁸⁹:

Իրավաբանական պոզիտիվիզմը, որպես արժեք ճանաչում է միայն դրական իրավունքի նորմերը, ցանկացած իրավունք հանգեցնում է նորմերին, որ գործում են տվյալ դարաշրջանում, տվյալ պետության մեջ, իսկ իրավունքն ինքնին հանդիսանում է ոչ թե պետության այլ պատմության և հասարակության ծնունդ: Հետևաբար, իրավունքի աղբյուր են հանդիսանում պատմության, տնտեսության, սոցիոլոգիայի փաստերը⁹⁰: Ինչ վերաբերում է Ժ.-Լ. Բերժելին, ապա նա այն նույնականացնում է իրավակիրարկման սոցիոլոգիական տեսության հետ՝ վերագրելով վերջինիս նույնանման առանձնահատկություններ:

Հատկանշական է, որ ԽՍՀՄ փլուզումից հետո նորանկախ պետություններում նոր ձևավորված իրավագիտությունում գերիշխող է իրավունքի պոզիտիվ-նորմատիվական ընկալումը: Իրավունքի պոզիտիվիստական ընկալումը կարևորվում է այն պարզ պատճառով, որ իրավունքը հանդես է գալիս կազմակերպական երևույթի՝ որպես սոցիալական կարգավորման և ազդեցության գործիքի դերում իր յուրահատուկ իրավագիտական օրինաչափություններով: Ավելին, իրավահասկացման

⁸⁸Տե՛ս **Վաղարշյան Ա.Գ.** Իրավահասկացության տիպերը և դրանց արժանիքներն ու թերությունները//ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ, 2017, էջ 13; **Четвернин В.А.** Понятия права и государства. Введение в курс теории права и государства. М., 1997. С. 12-13:

⁸⁹Bergel J.-L. Théorie générale du droit. 5eme ed., Paris. Dalloz .2012.P.

Бержель Ж.-Л. Общая теория права/ Пер. с франц. Г.В. Чуршукова. Под общ. ред. В.И. Даниленко. М., Nota bene. 2000. С. 47-48; **Rainer** Introduction to Comparative Law. Wien, Manzsche Verlags-und Universitätsbuchhandlung. 2010.P.

⁹⁰Տե՛ս **Վաղարշյան Ա.Գ.** Իրավահասկացության տիպերը և դրանց արժանիքներն ու թերությունները//ԵՊՀ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ, 2017, էջ 17; **Бержель Ж.-Л.** նշված աշխտ. էջ 48:

պողիտիվիստական մոտեցումն օժտված է գործնական կարևորությամբ, քանզի արդի գործող իրավունքում յուրաքանչյուր օր հարաբերվում ենք պոզիտիվ նորմերի հետ, որոնց որակից է կախված ողջ իրավական համակարգի զարգացման աստիճանը:

Մինչ այդ ընդունված իրավունքի դասակարգային հասկացությունը, որի համաձայն այն կազմում է բացառապես պետության կողմից սանկցիավորված և հարկադրանքի կիրառման հնարավորությամբ ապահովված նորմերի ամբողջություն, բավականին նեղ է և չի արտացոլում ոչ իրավունքի էությունը, ոչ էլ դրա նպատակները և ուղղությունները⁹¹:

Բնական իրավունքի տեսությունն իր ուրույն ազդեցություն է թողել ինչպես ողջ իրավունքի այնպես էլ իրավահասկացության զարգացման վրա: Համամիտ ենք Լ.Ա. Ղազանչյանի այն հայեցակետի հետ, որ բնական-իրավական տեսության էությունը կայանում է նրանում, որ պետությանը նախորդել է մարդու բնական վիճակը, իսկ պետության կողմից ստեղծված դրական իրավունքից բացի գոյություն ունի այդ իրավունքից վեր դասակարգվող իրավունք, որն ընդհանուր է բոլոր մարդկանց համար և ի վերուստ տրված է նրանց⁹²: Բնական-իրավական տեսության կողմնակիցները գտնում են, որ պետությունը իրավաբանական ակտի՝ հասարակական դաշինքի արդյունք է, որը ժողովրդի բնական կամքի ծնունդն է, մարդկային ստեղծագործություն կամ նույնիսկ հայտնագործություն: Ուշագրավ է այն փաստը, որ բնական իրավունքների և հասարակական դաշինքի վերաբերյալ ուսմունքների առաջին խոշոր տեսաբան Հ. Հրոցիոսն ոչ միայն մշակեց և կատարելագործեց այդ ուսմունքը, այլև մատնանշեց, որ պետությունը ստեղծվում է ոչ թե Աստվածային, այլ մարդկային կամահայտնությամբ, որտեղ մարդիկ միավորվում են, քանի որ չեն կարող պայքարել դժվարությունների ու թշնամիների դեմ մեկուսի⁹³: Ինչպես իրավացիորեն նշում է Լ.Ա. Ղազանչյանը. «Պետությունն ազատ մարդկանց կամավոր միություն է, որտեղ մարդիկ

⁹¹Տե՛ս Актуальные проблемы теории государства и права/Отв. ред. **Шагиева Р.В.** М., Норма. 2011. 228-230.

⁹²Տե՛ս **Ղազանչյան Լ.Ա.** Անձի իրավական դրության հիմնախնդիրները ժողովրդավարական, իրավական պետությունում (տեսական-իրավական վերծրություն), Եր., Լիմուշ, 2015,

⁹³**Гроции Г.**, О войне и мире//Антология мировой правовой мысли.Т 3.М., 1999.С.20-28:

կնքում են հասարակական դաշինքի պայմանագիր՝ ընդհանուր շահերին հասնելու նպատակով»⁹⁴:

Բնական իրավունքի հայեցակարգը հանդիսանում է գրեթե բոլոր ժողովրդավարական պետությունների հիմքը: Հայտնի է, որ այդ տեսության համաձայն՝ բացի պետության կողմից ստեղծված պոզիտիվ իրավունքից, գոյություն ունի նաև բոլոր մարդկանց համար համընդհանուր հանդիսացող իրավունք: Տվյալ տեսության ջատագովները իրավունքը դիտարկում են որպես արդարության և ազատության հոմանիշ, որտեղ արդարությունն անփոփոխ է և անկախ տարբեր սոցիալական կարգերից, հասարակական կյանքի ձևախեղումներից: Ավելին, գործող օրենսդրությունը պետք է համապատասխանի մարդու բնական իրավունքներից բխող պահանջներին⁹⁵: *Հատկանշական է, որ արդի ժողովրդավարական, իրավական պետությունում, որպես իրավունքի գլոբալացման արդյունք, բնական իրավունքն ու գործող իրավունքը միմյանց չեն հակադրվում, քանի որ դրական իրավունքն իրավաբանորեն ամրագրում է մարդու բնական, անկապտելի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի ամբողջությունը, ստեղծելով վերջիններիս պաշտպանության և իրացման համապատասխան երաշխիքներ և կառուցակարգեր:*

Հիմք ընդունելով բնական և դրական իրավունքների փոխկապակցվածությունն ու փոխներգործությունը իրավունքի գլոբալացման համատեքստում, իրավունքը հանդես է գալիս հասարակական գիտակցության ձևի տեսքով, քանի որ յուրաքանչյուր օրենքի նորմ գործում է այն մարդկանց իրավահասակացության պրիզմայի ներքո, ովքեր ստեղծում, կիրառում և իրականացնում են դրանք⁹⁶:

Ուշագրավ է այն իրավագետների դիրքորոշումը, որոնք նշում են, որ իրավունքի գլոբալացման պայմաններում բնական իրավունքի իրավահասակացումն անմիջականորեն ազդում է իրավունք և բարոյականություն հարաբերության

⁹⁴ Ղազանյան Լ.Ա. նշված աշխատ., էջ 69:

⁹⁵ Տե՛ս Ղազանյան Լ.Ա. նշված աշխատ., էջ 69-70; Սաֆարյան Գ.Հ. իրավունքի պատմության և տեսության հիմնահարցեր, Եր., Լիմուշ, 2010, էջ 428-429: **Фролов С.Н.** Теологическая (божественная) концепция происхождения права: правильно ли мы ее понимаем? // История государства и права. 2006. № 12. С. 35-37.

⁹⁶ Տե՛ս **Лейст Э.О.** Три концепции права // Советское государство и право. М. Наука, 1991, № 12. С. 3-11; **Кузьмин А.В.** Понятие естественного права (к проблеме правопонимания) // История государства и права. 2003. № 6. С. 10-11.

հիմնախնդրի վրա, այդ կապը ներկայացնելով որպես այնպիսի նորմատիվ արժեքային կարգավորիչ համակարգ, որ ապահովում է հասարակական հարաբերություններում առկա հիմնարար արժեքները: Ընդ որում, բարոյականության և իրավունքի փոխհարաբերությունում բարոյականությունը հանդես է գալիս որպես իրավունքի անմիջական մասնիկ ու լրացնում է այն՝ նպաստելով քաղաքակրթության հիմնարար արժեքների պաշտպանությանը⁹⁷:

Դիտարկելով **սոցիոլոգիական իրավահասկացման** առանձնահատկությունները, հարկ է նշել, որ ի տարբերություն իրավական պոզիտիվիզմի, որն իրավաբանական գիտության խնդիրները սահմանափակում է գործող իրավունքի ձևական-տրամաբանական ուսումնասիրությամբ, սոցիոլոգիական **իրավահասկացման շրջանակներում կենտրոնական տեղ են զբաղեցնում** իրավահարաբերություններն ու մարդկանց վարքագծի դրսևորման առանձնահատկությունները: Ընդհանուր առմամբ, սոցիոլոգիական իրավագիտության հիմնադիրները⁹⁸ գտնում են, որ օրենքներում և իրավական ակտերում գրանցված նորմերը ոչ թե իրական իրավունքն են, այլ գրքային կամ մեռյալ, իսկ իրական (ռեալ) իրավունքը ձևավորվում է պետությունում առկա հասարակական հարաբերություններում: Ավելին, իրավագետներից ոմանք⁹⁹ գտնում են, որ այդ իրավունքը հիմնականում ձևավորում են դատավորները, իրենց իրավաստեղծ գործունեության շրջանակներում, հիմք ընդունելով կոնկրետ գործում առկա առանձնահատկությունները: Ճանաչվում է պետության կողմից սահմանված օբյեկտիվ իրավունքի գոյությունը, սակայն իրավունքի էությունն անհրաժեշտ է դիտարկել պահպանվող ընդհանուր շահի շրջանակներում: Տվյալ դեպքում ընդգծվում է իրավունքի կյանքի կոչման և կիրառման կարևորությունը:

Սոցիալական կյանքի և փաստերի վերլուծությունն իրականացվում է երկու հիմնական՝ պատճառական և գործառնական մեթոդների կիրառմամբ: **Պատճառա-**

⁹⁷Մանրամասն տե՛ս **Графский В.Г.** Право и мораль в истории: проблемы ценностного подхода // Государство и право. М., Наука. 1998. № 8. С. 114-119; **Лукашева Е.А.** Право, мораль, личность. М., Наука. 1986; **Мальцев Г.В.** Нравственные основания права. М., Изд-во СГУ, 2008; **Колотова Н.В.** Мораль и право: анализ традиции исследования ценностных аспектов проблемы// Проблемы ценностного подхода в праве: традиции и обновление. Сборник статей. М., Изд. Институт государства и права РАН. 1996. С. 20-28.

⁹⁸Է. Դյուրկհեյմը, Ե. Էրլիխը, Ֆ. ժենին, Գ. Կանտորովիչը, Ռ. Պաունդը, Կ. Լևելինը, Դ. Ֆրենկը և այլք:

⁹⁹Դ. Հոլմս, Բ. Կարդոզո, Ռ. Յերինգ, Ն. Կորկունով և այլք:

կան վերլուծության մեթոդը բացահայտում է սոցիալական երևույթի կախվածությունը սոցիալական միջավայրից, իսկ **գործառնականը**¹⁰⁰՝ համապատասխանությունը հասարակության, որպես ամբողջության, և որևէ երևույթի միջև, որտեղ ամբողջն առաջնային է մասերի նկատմամբ: Հարկ է նշել, որ Է. Դյուրկհայմը, դիտարկելով հասարակության կառուցվածքն ու զարգացման էվոլուցիան, կիրառում է այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են սոցիալական համերաշխությունը, կոլեկտիվ գիտակցությունը, աշխատանքի բաժանումը և այլն: Ավելին, Է. Դյուրկհայմը, իրավունքը ներկայացնելով որպես սոցիալական կյանքի կազմակերպման առավել հաստատուն ձև, գտնում է, որ վերջինս արտացոլում է սոցիալական համերաշխության բոլոր նշանակալից տեսակները¹⁰⁰:

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ իրավունքի գլոբալացումն իր անմիջական ազդեցությունն է ունենում կոնկրետ պետությունում առկա իրավահարաբերությունների ծագման, զարգացման և դադարեցման վրա:

Հայտնի է, որ *իրավահարաբերությունը* հասարակական հարաբերություն այնպիսի հասարակական հարաբերության տարատեսակ է, որտեղ կողմերը միմյանց հետ կապված են պետության կողմից պաշտպանվող փոխադարձ իրավունքներով և պարտականություններով: Հարկ է ուշադրություն դարձնել որոշ սոցիալական նորմերի օրինականացման իրական հնարավորություններին:

Իրավաբանական գրականությունում առանձնացնում են իրավահարաբերություններին բնորոշ հատկանիշներ.

1. Հասարակական բնույթը և սոցիալական նշանակությունը: Ինչպես հայտնի է, իրավական հարաբերություններն առաջանում են այնտեղ, որտեղ մասնավոր շահը դառնում է սոցիալապես նշանակալի ամբողջ հասարակության կամ կոնկրետ անձանց շրջանակի համար:

2. Իրավահարաբերությունները ծագում են այնտեղ, որտեղ մասնավոր, անուղղակիորեն միջանձնային կապերը արդեն ի վիճակի չեն արդյունավետ կերպով շարժման մեջ դնել հասարակական կարգավորիչը, մարդկանց վարքագիծը առավել խիստ կարգավորման կարիք ունի, միջանձնային հարաբերություններում

¹⁰⁰Տե՛ս **Дюркгейм Э.** О разделении общественного труда. Метод социологии/ Пер. с фр. и послесловие Л.Б. Гофмана. М., Наука. 1991.С. 64-66.

անուղղակիորեն առաջանում է անտեսանելի միջնորդ՝ պաշտոնական ձևը, որի հիմքում պետք է դրվեն որոշ սոցիալական կապեր, որոնք ձեռք են բերում որոշակի ձևական տեսք:

3. Իրավահարաբերության սուբյեկտների իրավունքների և պարտականությունների փոխադարձ կապ: Իրավական հարաբերությունների կառուցվածքային հավասարազորությունից բխում է որոշ սուբյեկտների իրավունքների հաղորդակցությունը այլ սուբյեկտների պարտավորությունների հետ, սուբյեկտիվ իրավունքը ծնում է պարտավորություն, իսկ պարտավորությունը ծնում է իրավունք, ուստի մարդու իրավունքների դոկտրինի մի շարք հետևորդների կողմից առաջադրվող կարծիքները բավականին վիճելի են, համաձայն որոնց իրավունքները կարող են գոյություն ունենալ ինքնուրույն՝ պարտավորություններից առանձին: Այս դեպքում, եթե հարաբերությունը կրում է իրավական և ոչ թե բարոյական բնույթ, իրավունքը չի ապահովվում այլ անձանց կողմից իրական հավասարազոր գործողություններով և դրանք ըստ էության «մնում են օդում»՝ կրելով դատարկ դեկլարատիվ բնույթ:

4. Իրավահարաբերություններն օբյեկտիվորեն գոյություն ունեն օրինաստեղծի կամքից անկախ և այդ հարաբերությունների ձևավորման վրա ազդում է հասարակության պահանջմունքների բնույթը: Օրենսդիրը կարող է կարգավորել այս կամ այն հարաբերությունը օրենքի նորմով, սակայն կարգավորման արդյունավետությունը կախված կլինի նշված օրինաչափությունների պահպանումից, հակառակ դեպքում՝ սոցիալական կապը կզարգանա իր սեփական օրինաչափությունների ներքո, պոզիտիվ կարգավորումը շրջանցելով, այսինքն, հարաբերությունը դառնում է ինքնակարգավորվող:

Հարկ է խոսել նաև մեր կողմից դիտարկված **իրավահասկացության երեք ասպեկտների** փոխհարաբերության մասին: Ի վերջո, և նորմատիվ (պոզիտիվ) և բնական իրավական (դոկտրինայ) իրավունքի ասպեկտները պայմանավորված են սոցիալական կապերով, սոցիալական իրականությամբ, հասարակական հարաբերություններով: Ընդ որում, իրավունքի ֆենոմենն ինքնին անհրաժեշտ է ուսումնասիրել համակարգային, միասնական՝ իրավունքի բոլոր կողմերի և սահմանների կապի ներքո, որոնցից յուրաքանչյուրին պատկանում են կոնկրետ տեղ և

նշանակություն: Միասնական մոտեցումը կայանում է այն գիտակցման մեջ, որ նշված ասպեկտները չեն սպառում իրավահասկացությունը, այլ իրենցից ներկայացնում են ընդամենը դրա միջուկը, առավել էական տարրերի միասնություն: Ավելին, Իրավունքի բազմաբովանդակությունը բացահայտում է անձի տեղն ու դերը տվյալ հասարակությունում և պետությունում: Իր հերթին, իրավահասկացության ասպեկտներից յուրաքանչյուրն ունի իր ինքնուրույն նշանակությունը, սոցիալական կյանքում իրականացնում է սեփական անկրկնելի դերը: Սակայն, միասնական մոտեցումն է հանդիսանում առավել հեռանկարայինը, հատկապես տեսական հիմնավորումների և կյանքում իրավական կարգավորման ապակենտրոնացման գործնական իրականացման դեպքում:

Իրավունքի կախվածությունը պետական կամքից այդքան էլ միանշանակ և միաչափ չէ, ինչպես դա ընդունված է անվանել: Պետության իրավաստեղծ կամքը դրսևորվում է կամ իրավական նորմերի ուղղակի ամրագրմամբ, դրանց մակնիշավորմամբ կամ պատվիրակմամբ: Ինչ վերաբերում է այդ նորմերի պետական պահպանությանը, ապա իրավունքի տեսությունը դա անվանում է «պետության պարտադրանքի հնարավորություն», ինչը խոսում է ոչ թե այդպիսի պահպանության հրատապության, այլ դրա պոտենցիալ հնարավորության մասին:

Հարաբերությունները, որոնք կարգավորվում են կամ կարող են կարգավորվել իրավունքի նորմերով և ապահովված են պետական հարկադրանքով, գոյություն ունեն տարբեր մակարդակներում, այդ թվում՝ կենտրոնացված (երբ դրանք կարգավորվում են իրավունքով, որը բխում է պետությունից) և լոկալ (երբ իրենց բնույթով իրավական հարաբերությունները գոյություն ունեն տարբեր կորպորացիաների և մարդկանց խմբերի ներսում և, կարգավորման պրոցեսում, չեն պահանջում պետական միջամտություն):

Որքան էլ հակասական չէ, սակայն սոցիոլոգիական իրավահասկացողությունը ապացուցում է նաև թեզիսը այն մասին, որ առանց պետության հնարավոր չէ իրավունք, սակայն նրա համար չէ, որ իրավունքը ուղղակիորեն կախված է վերջինից, այլ այն պատճառով, որ իրենց բնույթով իրավական հարաբերությունները կարող են գոյություն ունենալ միայն այն հասարակություններում, որտեղ դրանց սոցիալական

կապերի կազմակերպման և բարդության աստիճանը հասել է որոշակի բարձրության, այսինքն՝ առաջին հերթին պետականորեն կազմակերպված հասարակություններում, իսկ երկրորդ հերթին, մարդկանց բոլոր այլ միավորումներում:

Վերոգրյալի հիման վրա կարելի է եզրակացնել, որ «իրավունք» հասկացությունը հանդիսանալով բարդ սոցիալ-իրավական երևույթ բացահայտում է տվյալ հասարակության և պետության հիմնախնդիրը, ներկայացնում դրանց լուծման հստակ եղանակներ:

ԳԼՈՒԽ 2

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԱՐԵՐԻ ԳԼՈՐԱԼԱՑՈՒՄԸ

2.1. Իրավունքի գլոբալացման դրսևորումները պոզիտիվ իրավունքում

Իրավունքի գլոբալացման, իրավական համակարգերի միասնականացման առանձնահատկությունները բացահայտելու համար, անհրաժեշտ է դիտարկել հիմնական իրավական ընտանիքներում պոզիտիվ իրավունքի գլոբալացումը:

Օրենք: *Համընդհանուր ճանաչում ստացած սահմանման համաձայն, օրենքը հանդիսանում է բարձր իրավաբանական ուժով օժտված երկրի բնակչության շահերի և պահանջմունքների տեսակետից առավել կարևոր հասարակական հարաբերությունները կարգավորող և պետության բարձրագույն ներկայացուցչական մարմնի կողմից հատուկ օրենսդրական կարգով ընդունված նորմատիվ-իրավական ակտ¹⁰¹:* Ուշագրավ է Ա.Ս. Պիգոլկինի և Հ. Կանտորովիչի դիրքորոշումը, որի համաձայն օրենքը՝ Սահմանադրությունից հետո, բարձրագույն իրավաբանական ուժով օժտված և հատուկ օրենսդրական կարգով ընդունված նորմատիվ-իրավական ակտն է, որը կարգավորում է տվյալ հասարակության կենսականորեն առավել կարևոր հասարակական հարաբերությունները¹⁰²: Ակնհայտ է, որ վերոնշյալ հեղինակները հավասարության նշան են դնում Սահմանադրության և օրենքների միջև: Քննարկվող թեմայի շրջանակներում, հարկ ենք համարում նշել, որ ՀՀ Սահմանադրական բարեփոխումների արդյունքում, օրենսդրական նախաձեռնության իրավունքով օժտված է ոչ միայն մեր երկրի ներկայացուցչական մարմինը՝ Ազգային ժողովը, ի դեմս պատգամավորների և խմբակցությունների, այլև՝ ՀՀ կառավարությունը: Ավելին, ընտրական իրավունք ունեցող առնվազն 50000 քաղաքացի ունի Ազգային ժողովին

¹⁰¹Խրոպանյուկ Վ.Ն., Պետության և իրավունքի տեսություն, Եր, Գոշ, 1997, էջ 289; Алексеев С.С. Общая теория права. М., Юрид.лит.1982. Т. 2. С. 220-221; Марченко М.Н. Теория государства и права. М., МГУ. 2007. С. 515:

¹⁰²Տե՛ս Общая теория права. Под общ. ред. Пиголкина А.С., 2-е изд., испр. и доп. М., Изд-во МГТУ им. Н.Э. Баумана. 1998. С. 182; Kantorowicz H., The definition of Law/ed. A.H. Campbell, Cambridge, CUP., 1958. P.21-23.

քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենքի նախագիծ առաջարկելու իրավունք¹⁰³:

Ըստ կարևորության, ժամանակի և տարածության մեջ գործողության ուժի ձևական-իրավաբանական սկզբնաղբյուրներից առաջինը հանդիսանում է օրենքը: Ավանդաբար այն իրավունքի հիմնական աղբյուր է հանդիսանում այն երկրներում, որոնք պատկանում են ռոմանագերմանական իրավական ընտանիքին, ինչպես նաև՝ այն խառը կրոնական-աշխարհիկ իրավական ընտանիքներում, որտեղ հանրային ոլորտը կարգավորվում է իրավունքի համակարգի ֆրանսիական կամ գերմանական մոդելով: Այնուամենայնիվ, ներկայիս իրավունքի տվյալ սկզբնաղբյուրը կիրառում նաև անգլո-ամերիկյան իրավական ընտանիքին պատկանող մի շարք երկրներում:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ օրենքը, որպես իրավունքի աղբյուր, իր տարածումը գտել է ողջ աշխարհում մի շարք հիմնարար պատճառներով: Նախ, ժողովրդավարական, իրավական պետությունում պետության օրենսդիր և գործադիր մարմինները ձգտում են օրենքների ընդունմամբ հասնել հասարակության համար կենսական նշանակություն ունեցող խնդիրների լուծմանը: Ավելին, իր շարադրման եղանակով պայմանավորված, օրենքը հասարակական հարաբերությունների բարդացման և միասնական համաշխարհային տարածության ստեղծման դարաշրջանում հանդիսանում է հստակ նորմերի սահմանման լավագույն տեխնիկական միջոց:

Արդի իրավաբանական գրականությունում «օրենք» հասկացությունը հիմնականում դիտարկվում է լայն և նեղ իմաստներով: **Լայն իմաստով «օրենք»** հասկացությունը հանդիսանում է «իրավունք» հասկացության հոմանիշը: Օրենք է կոչվում նորմատիվ-իրավական ակտերի ամբողջությունը, որն ընդունվել է պետության կողմից, ի դեմս նրա օրինաստեղծ մարմինների¹⁰⁴: Տվյալ մոտեցման համաձայն՝ օրենքի առաջնային տարբերիչ գիծը նրա նորմատիվ բնույթն է: Սակայն, ինչպես հայտնի է, իրավունքի նորմերը պարունակվում են յուրաքանչյուր այլ նորմատիվ-իրավական ակտում: Հետևելով տրամաբանությանը, յուրաքանչյուր այդպիսի ակտ

¹⁰³Տե՛ս ՀՀ Սահմանդրություն (փոփ. 06.12.2015), հոդվ. 109; <http://www.president.am/hy/constitution-2015/. / 24.09.2018/>:

¹⁰⁴ Տե՛ս

պետք է դիտարկվի որպես օրենք, ինչը կարող է խնդիր առաջացնել իշխանության գործադիր մարմնի հրապարակած ակտերի տեսակները դիտարկելիս: Ակնհայտ է, որ օրենքի նույնականացումը ուրիշ նորմատիվ-իրավական ակտերի հետ կարող է խառնաշփոթ է առաջացնել: Այդ և մի շարք այլ պատճառներով արդի իրավաբանական գրականությունում «օրենք» հասկացությունը դիտարկում են նեղ իմաստով, որտեղ օրենքը հանդիսանում է պետության և հասարակության հիմնական խնդիրները լուծող, հատուկ կարգով ընդունվող նորմատիվ-իրավական ակտ, որը Սահմանադրությունից հետո օժտված է ամենաբարձր իրավաբանական ուժով և ուղղված է առավել կարևոր հասարակական հարաբերությունների կարգավորմանը¹⁰⁵:

Հայտնի է, որ գլոբալացման գործընթացի ազդեցության ներքո աճում են հասարակական հարաբերություններում իրավական կարգավորում պահանջող նորանոր խնդիրները՝ ստիպելով օրենսդրական նախաձեռնությամբ օժտված մարմնին ընդունել մեծաքանակ օրենքներ: Իրավաբանական գրականությունում օրենքների կայունությունը հաճախ բնորոշվում է վերջիններիս անկախ և մշտական բնույթով, օրինականության սկզբունքը կյանքի կոչելու հետևողականությամբ, ինչպես նաև դաշնային տարածքային կառավարման ձև ունեցող պետություններում դաշնային օրենքների գերակայությամբ սուբյեկտների կողմից ընդունած օրենքների նկատմամբ: Համամիտ ենք իրավագետների այն կարծիքի հետ, որ օրենքի, որպես իրավունքի աղբյուրի, վրա հիմնվելու ձգտումը պայմանավորված է պետության՝ հասարակական կյանքի տարբեր ոլորտների գործունեության կարգավորմանն ուղղված լայն հնարավորությունների շրջանակով¹⁰⁶:

Դժվար է համաձայնել իրավաբանական գրականությունում դեռևս խորհրդային ժամանակաշրջանում արտահայտած այն կարծիքի հետ, որ օրենքի կայունությունը, հստակությունն ու տևականությունը պայմանավորված են այն հանգամանքով, որ օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում է բացառապես պետության բարձրագույն օրենսդրական ուժով օժտված մարմնին, քանի որ արդի

¹⁰⁵Տե՛ս **Марченко М. Н.** Источники права: учеб. пособие. М., 2006. С. 475-479; **Худойкина Т.В.** Стабильность закона: понятие и способы обеспечения // Государство и право на рубеже веков (материалы Всероссийской конференции). Проблемы теории и истории. М., Изд-во ИГиП РАН. 2001. С. 72-77

¹⁰⁶Տե՛ս **Սաֆարյան Տ.Գ.**, Ժամանակակից իրավական համակարգերը, Եր., «Լիմուշ» հրատ., 2016, էջ 31; **Давид Р., Жоффре-Спинози К.** Основные правовые системы современности/Пер. с фр. В.А. Туманова. М., Междунар. отношения, 1999.С. 27-37:

իրավաքաղաքական զարգացումների պայմաններում պառլամենտական կառավարման ձևով օժտված պետություններում օրենսդրական նախաձեռնության իրավունքով, ինչպես արդեն նշել ենք, օժտված է նաև ժողովուրդը¹⁰⁷:

Ուշագրավ է Տ.Վ. Խուդոյկինայի՝ օրենքի կայունության, տևականության բնութագրիչ հատկանիշների առանձնացումը: Դրանցից են՝ օրենքների համապատասխանությունը միջազգային իրավունքի նորմերին և սկզբունքներին, օրենքներում սովորության նորմերի, արժեքների, հասարակության պահանջմունքների և շահերի արտացոլման, սահմանադրական սկզբունքների արտացոլման և հիմնարար հասարակական հարաբերությունների կարգավորման ունակության աստիճանը, ուղղակի գործողությունն ու տեքստերի բարձր որակական հատկանիշները, օրենքի և այլ իրավական ակտերի միջև հակասականության բացակայությունը, ինչպես նաև օրենքի իրացման արդյունավետության աստիճանը և այլ հատկանիշներ¹⁰⁸: Միևնույն ժամանակ, օրենքը, որպես իրավունքի սկզբնաղբյուր, գերիշխում է համասեռ բնակչությամբ և դարավոր իրավական ավանդույթներով երկրներում, որտեղ օրենքը հանդիսանում է նաև հասարակական կյանքի զարգացման և կարգավորման սոցիալ-իրավական գործոն¹⁰⁹: Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ օրենքներում հաճախակի փոփոխությունները խաթարում են մարդկանց վստահությունն օրենսդիրի նկատմամբ, իսկ պատշաճ ընթացակարգով ընդունված օրենքի երկարատև իրացումը ոչ միայն բացահայտում է տվյալ ոլորտում առկա խնդիրները, այլև կարող է լծակ հանդիսանալ վերջիններիս լուծման համար:

Արդի օրենքի կիրառման ակնհայտ միասնականացման դեպքում տարբեր իրավական ընտանիքներում պահպանվում են առանձնահատկությունները տվյալ ձևական-իրավաբանական սկզբնաղբյուրների մեկնաբանության և օգտագործման մեջ:

¹⁰⁷Տե՛ս **Кашанина Т.В.** Оценочные понятия в советском праве // Правоведение. М., 1976. №1. С. 25 – 31; Концепция стабильности закона /Отв. ред. **Казимирчук В.П.** М., Проспект, 2000. С.7-11; **Магомедова Е.А.**, Стабильность российского законодательства: Проблемы и пути их решения// Научные труды Калужского Государственного Университета им. К.Э. Циолковского, сборник трудов Региональной университетской научно-правктической конференции (15.04.2016). Калуга, изд., КГУ. 2016. С. 165-168.

¹⁰⁸Տե՛ս **Худойкина Т. В.** նշված աշխտ. էջ 74:

¹⁰⁹Մանրամասն տե՛ս **Миронова О. А.** Стабильность закона в поликонфессиональном государстве// Теория и практика общественного развития, Краснодар, 2015, № 18. 146-148; **Тихонравов Ю.В.** Религии мира. М., ЗАО «Бухгалт. бюл.» 1996.

Ուշագրավ է Մ.Ն. Մարչենկոյի դիրքորոշումն օրենքի վերաբերյալ, համաձայն որի օրենքը հանդիսանում է ողջ ռոմանագերմանական իրավական ընտանիքի հիմնաքարը, բովանդակում է բանականության և արդարության համընդհանուր և հավերժական սկզբունքները, երբեք չի նույնացվում իրավունքի հետ¹¹⁰: Ավելին, ռոմանագերմանական իրավական ընտանիքի որոշ երկրներում սահմանված է օրենքների և այլ իրավական ակտերի կատարման նկատմամբ սահմանադրական վերահսկողություն:

Ինչ վերաբերում է ռոմանագերմանական և անգլոսաքսոնական իրավունքների հիմնարար տարբերությունը, ապա ռոմանագերմանականն իր բնույթով հանդիսանում է հիմնադրային իրավունք՝ օրենքի գլխավորությամբ, իսկ երկրորդը՝ դատական, նախադեպային: Մինևույն ժամանակ, անգլոսաքսոնական իրավունքի համակարգում օրենքը նույնպես կարևորվում է:

Հարկ է նշել, որ իրավաբանական գրականությունում «ստատուտը» ներկայացնում է և որպես ֆորմալ-իրավաբանական՝ իր բնույթով ընդհանուր պարտադիր ակտ՝ ընդունված ոչ միայն բարձրագույն, այլև ցանկացած այլ իրավաստեղծ մարմնի կողմից, ներառյալ ինչպես օրենսդիր, այնպես էլ գործադիր կարգավորիչ պետական մարմինները: «Ստատուտը» տվյալ դեպքում հանդիսանում է «նորմատիվ իրավական ակտ» հասկացության և տերմինի հոմանիշ, իսկ **ստատուտային իրավունքը** համապատասխանաբար, նորմերի համակարգ, որոնք բովանդակվում են ոչ միայն օրենքներում, այլև՝ նորմատիվ իրավական ակտերում¹¹¹:

Անգլո-ամերիկյան իրավունքի սկզբնաղբյուրների համակարգում օրենքի (ստատուտի) տեղը և դերը մինչև այժմ մնում է վիճելի: Իրավագետներից ոմանք գտնում են, որ չնայած գլոբալացման արագ աճին, օրենքը չի կարող հանդիսանալ իրավունքի դրսևորման պատշաճ եղանակ և փոխարինել ստատուտին: Իրավագետների մյուս խումբն էլ գտնում է, որ չնայած ստատուտային իրավունքի բուռն աճին և ընդունվող օրենքների նշանակության բարձրացմանը, վերջինները այդպես էլ ձեռք չբերեցին

¹¹⁰Տե՛ս **Марченко М. Н.** Источники права: учеб. пособие. М., 2006. С.476-477.

¹¹¹Dictionary of Sociology and Related Sciences. Totowa. New Jersey, 1988. P. 308.

դատական նախադեպին հավասարազոր իրավունքի նորմի ուժ¹¹²: Իրավաբանական գրականությունում գոյություն ունի նաև այլ մոտեցում, համաձայն որի, օրենքը հանդիսանում է ժամանակակից անգլիական իրավունքի նորմերի առավել կարևոր, առաջնային սկզբնաղբյուր¹¹³:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ իրավաբանական գրականությունում «ստատուտը» ներկայացնում է և որպես ֆորմալ-իրավաբանական, իր բնույթով ընդհանուր և պարտադիր ակտ՝ ընդունված ոչ միայն բարձրագույն, այլև ցանկացած այլ իրավաստեղծ մարմինների, ներառյալ՝ ինչպես օրենսդիր, այնպես էլ գործադիր կարգավորիչ պետական մարմինների կողմից¹¹⁴: Ակնհայտ է, որ «ստատուտ» եզրույթը տվյալ դեպքում հանդիսանում է «նորմատիվ իրավական ակտ» հասկացության եզրույթի հոմանիշ, իսկ «ստատուտային իրավունքը»՝ այդպիսի նորմերի համակարգի տեսքով, որոնք բովանդակվում են ոչ միայն օրենքներում, այլև այլ նորմատիվ իրավական ակտերում¹¹⁵: Ուշագրավ է Cheney v. Conn-ի գործով դատական ակտում ամրագրված այն դրույթը, որ դատարանն իրավասու չէ կասկածի ենթարկելու Պառլամենտի ընդունած ակտերի օրինականությունը¹¹⁶: Այլ է իրավիճակը խառը (խառնածին) իրավական համակարգերում: Օրինակ, Կոնգոյում քաղաքացիական և քրեական օրենսգրքերը հիմնված են բելգիական (ռոմանագերմանական) իրավունքի վրա:

Չնայած տարբեր իրավական ընտանիքներում օրենքի ստանձնած տարբեր դերին, կենտրոնական տեղը ձևական-իրավաբանական սկզբնաղբյուրների համակարգում զբաղեցնում է օրենքի տեսակներից մեկը՝ **Սահմանադրությունը**, որն արդի ժողովրդավարական իրավական պետության իրավական համակարգում զբաղեցնում է իր ուրույն տեղը:

¹¹² Տե՛ս **Бернам У.** Правовая система Соединенных Штатов Америки. М., Новая юстиция. 2006. С. 108-109; **King A.** The British Constitution, Oxford. Oxford Univ.Press., 2007. P 41-45.

¹¹³ Տե՛ս **Романов А.К.** Правовая система Англии. М., Дело. 2000. С. 128-129; Turpin C., Tomkins A. British Government and the Constitution: Text and Materials (Law in Context). 7th ed., Cambridge. CUP., 2011.P. 3-24.

¹¹⁴ Տե՛ս **Սաֆարյան Տ.Գ.**, նշված աշխտ., էջ 45:

¹¹⁵ Անգլիայում, Կանադայում և Ավստրալիայում դա Պառլամենտն է, ԱՄՆ-ում դա շնային մակարդակով Կոնգրեսը, իսկ առանձին նահանգների մակարդակով՝ լեգիսլատուրաները: Տե՛ս **Սաֆարյան Տ.Գ.**, նշված աշխտ., էջ 43-46; **Greenwalt K.** Statutory and Common law interpretation. Oxford. OUP, 2013, p. 43-50.

¹¹⁶ Մանրամասն տե՛ս Cheney v Conn (H.M. Inspector of Taxes)(1)Cheney v Commissioners of Inland Revenue (1964-1968) 44 TC 217, https://library.croneri.co.uk/cch_uk/btc/44-tc-217/15.07.2017/:

Համընդհանուր ճանաչում ստացած սահմանման համաձայն սահմանադրությունն այնպիսի նորմատիվ ակտ է, որը պետության իրավունքի ողջ համակարգի նորմերի նկատմամբ ունի բարձրագույն իրավաբանական ուժ և կոչված է կարգավորելու մի կողմից մարդու և հասարակության, մյուս կողմից՝ մարդու և պետության միջև հարաբերությունները, ինչպես նաև հենց իր՝ պետության կազմակերպման հիմունքները¹¹⁷: Այսինքն, սահմանադրությունն, ըստ էության, կարգավորում է «անհատ-կոլեկտիվ-հասարակություն-պետություն» հարաբերությունների շղթան, ինչպես նաև՝ պետության կազմակերպման հիմունքները: Ավելին, սահմանադրությունը ներկայացնում, արտահայտում է տվյալ ժողովրդի, ազգի պատմական, սովորույթային, մշակութային, կրոնական, հոգեբանական առանձնահատկությունները¹¹⁸: Կատարած ուսումնասիրությունները վկայում են, որ արդի գլոբալացման ժամանակաշրջանում ընթանում է «սահմանադրություն» հայեցակարգի ընկալման միասնականացում, որի շրջանակներում պետությունները, ձգտելով հաստատել ժողովրդավարությունը, ընդօրինականում են որոշ դրույթներ այլ պետությունների սահմանադրություններից: Հատկանշական է, որ այդպիսի մոտեցումը բնորոշ է հետխորհրդային պետություններին: Ինչ վերաբերում է արդի իրավաբանական գրականությունում սահմանադրությունների դասակարգմանը, ապա գլոբալացման գործընթացների համատեքստում դրանք դասակարգվում են քաղաքականի և «կենդանի» նյութականի (ԱՄՆ-ում)¹¹⁹, իրավաբանական և փաստացի սահմանադրությունների: Դրա հետ տարբերություններ կան նաև ձևական սահմանադրությունների (կամ ձևական իմաստով սահմանադրությունների) և նյութական սահմանադրությունների (կամ նյութական իմաստով սահմանադրությունների) որոշման մեջ: Տարբեր երկրներում հեղինակները այդ հասկացությունների մեջ մտցնում են տարբեր բովանդակություններ:

Այնուամենայնիվ, որպես կանոն դրանք համընկնում է նրանով, որ իրավական սահմանադրությունը դա որոշակի իրավական նորմերի ամբողջությունն է, իսկ փաստացին՝ իրականում գոյություն ունեցող դրույթ է: Եթե փաստացի դրույթը չի

¹¹⁷Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք. Պատ. խմբագիր՝ Այվազյան Ն.Ա., Երևան, 2008, էջ 53:

¹¹⁸Տե՛ս նույն տեղում, էջ 74:

¹¹⁹Տե՛ս **Tomkins A.**, Our Republican Constitution, Oxford, Hart, 2005, p. 3-10; Նույնի՝ Public Law, 1st ed., Oxford. OUP. 2013. P.7-14.

համապատասխանում նորմերին, իրավական սահմանադրությունը դառնում է կեղծ: Արտասահմանյան գիտության մեջ ձևական իմաստով սահմանադրության տակ հասկացվում է օրենքը, որը ընդունվում է հատուկ կարգով և օժտված է բարձրագույն իրավական ուժով՝ համեմատած այլ նորմատիվ ակտերի հետ: Նյութական իմաստով սահմանադրության տակ հասկանում են նորմերի ամբողջությունը, որոնց կարգավորման առարկան համարվում է գլխավորապես պետական իշխանության կազմակերպումը: Ընդ որում՝ նշանակություն չունի նորմերի ծագումը, թե արդյո՞ք դրանք գտնվում են մեկ հատուկ իրավական ակտի մեջ, մի քանի ակտերի մեջ կամ ընդհանրապես համարվում են չգրված դատական և սովորութային իրավունքի նորմեր: Մեր հետազոտության նպատակին համապատասխան մենք հիմնականում կդիտարկենք իրավական սահմանադրությունները:

Ավանդաբար սահմանադրությունները, ըստ ձևի բաժանվում են գրված, չգրված և խառը տեսակների¹²⁰: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, թե ինչպիսի սահմանադրության մասին է գնում խոսքը՝ ձևական կամ նյութական: Ձևական սահմանադրությունները միշտ համարվում են գրված, նյութականները՝ միշտ խառը, այսինքն՝ մասնակի գրված (սովորութային օրենքներ) և մասնակի չգրված (սահմանադրական սովորություններ և դատական նախադեպեր): Չգրված սահմանադրությունները գործում են Մեծ Բրիտանիայում, Նոր Զելանդիայում և Իսրայելում: Նոր Զելանդիայում 1986թ. ընդունվեց սահմանադրական ակտ, որը սահմանադրական նշանակության հիմնական դրույթները մտցրեց մեկ միասնական փաստաթղթի մեջ, բայց այն չի համարվում հիմնական օրենք: Իսրայելում Կնեսետի խոսնակի կարծիքով սահմանադրական բնույթ ունի 22 օրենք: Գրված սահմանադրությունների շարքին են դասվում աշխարհի մնացած 189 երկրների սահմանադրությունները, որոնք, իրենց հերթին, բաժանվում են ամրագրվածների և չամրագրվածների: Առաջինները իրենցից ներկայացնում են մեկ միասնական նորմատիվ ակտ (դրանց թիվը մեծ է), երկրորդները՝ նորմատիվ ակտերի ամբողջություն, որոնք հավասար չափով օժտված են բարձրագույն իրավական ուժով: Առաջին խմբին է դասվում 1787թ. ընդունված ԱՄՆ Սահմանադրությունը, իսկ երկրորդ խմբին՝ Շվեդիայի

¹²⁰Տե՛ս **Tomkins A.**, Public Law, 1st ed., Oxford, OUP, 2013, p.7-14;

Սահմանադրությունը, որը բաղկացած է երեք օրենքներից (1974թ. Կառավարման ձևը, 1810թ. Գահաժառանգության մասին ակտը, 1949թ. Տպագրության ազատության մասին ակտը)¹²¹:

Վերոգրյալի հիման վրա կարող ենք նշել, որ բոլոր իրավական համակարգերում օրենքն արդեն հիմնովին օգտագործվում է նորմատիվ-իրավական կարգավորման մեջ, բայց միևնույն ժամանակ պահպանվում են դրա ընկալման առանձնահատկությունները կախված այն բանից, թե որ իրավական ընտանիքին է այն դասվում՝ ռոմանագերմանական, անգլոսաքսոնական թե խառը իրավական ընտանիքներին, չնայած հանգամանքին, որ վերջինս համարվում է հիմնական ձևական-իրավական աղբյուրը իրավունքի համակարգերի մեջ:

Դատական նախադեպ: Պետության և իրավունքի, որպես գիտության համար, անկյունաքարային նշանակություն ունի դատական նախադեպի ուսումնասիրությունը: Հայտնի է, որ գոյություն ունեն երկրներ, որտեղ արդարադատության մարմինների (դատարանների) կայացրած ակտերի մի մասը հանդիսանում են պետության իրավունքի համակարգի բաղկացուցիչ մաս: Իրավունքի տվյալ հատվածը անվանում են դատական նախադեպ կամ նախադեպային իրավունք: Վերջինիս էությունը կայանում է նրանում, որ կոնկրետ քրեական, քաղաքացիական, վարչական գործերով դատարանի ընդունած դատավճիռը, վճիռը, կամ որոշումը կիրառվում է հետագայում նմանատիպ գործերի վերաբերյալ որոշումներ կայացնելիս¹²²: Ավելին, նախադեպային իրավունքը ոչ միայն մտնում է երկրի իրավունքի համակարգի մեջ, այլև հանդիսանում է նրա չգրված սահմանադրության նորմերի էական մասը: *Ընդհանուր առմամբ, արդի իրավաբանական գրականությունում նախադեպը բնորոշվում է որպես դատարանի կողմից կոնկրետ գործի լուծման համար առաջին անգամ ստեղծված կանոն, որին այնուհետև պետք է հղում կատարել նմանատիպ գործերը քննելիս*¹²³: Դատական

¹²¹Տե՛ս Конституция США (прин. 25.05.1787), https://meet-usa.com/ru/article/konstitucija_ssha/15.03.2017/; Конституция Швеции (Королевства Швеция)<https://legalns.com/download/books/cons/sweden.pdf/15.03.2017/>:

¹²²Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք. Պատ. խմբագիր՝ Այվազյան Ե.Ա., Եր., ԵՊՀ հրատ., 2008, էջ 54:

¹²³Տե՛ս Black's Law Dictionary. 8th ed./Ed. B.A. Garner. West Group. 2004. P. 3728; Salmond J.W. Jurisprudence. 10th Edition. London. 1947. P. 192; Fuller L.L. Anatomy of the Law. New York. Praeger. 1968. P. 151:

նախադեպն ավանդաբար հանդիսանում է հիմնական աղբյուր այն երկրներում, որոնք դասվում են անգլո-ամերիկյան իրավական ընտանիքին, ինչպես նաև այն խառը՝ կրոնական-աշխարհիկ իրավական ընտանիքներում, որտեղ հասարակական ոլորտը կարգավորվում է իրավունքի անգլիական կամ ամերիկական իրավական մոդելներով¹²⁴: Վերջին ժամանակաշրջանում նախադեպային իրավունքն ակտիվորեն կիրառվում է նաև ռոմանագերմանական իրավական ընտանիքի երկրներում, որի հիմնական պատճառը իրավունքի գլոբալացումն է և իրավական ընտանիքների մերձեցումը:

Ակնհայտ է, որ գլոբալացումն իրավունքի աղբյուրներում իր ուրույն հետքն է թողել դատական նախադեպի զարգացման վրա, քանի որ ներկայիս իրավական համակարգերի մերձեցման պայմաններում խնդիր է առաջանում՝ կապված դատական իշխանության ակտերի իրավաբանական ուժի և հասարակությունում դրանց հեղինակության հետ, որոնք պահանջում են շուտափույթ և համարժեք լուծումներ: Ավելին, ռոմանագերմանական իրավական համակարգում աստիճանաբար իրավունքի աղբյուրի կարգավիճակ է ձեռք բերում դատական նախադեպը, իսկ անգլոսաքսոնական իրավական համակարգի արդի զարգացման փուլում իրավունքի աղբյուրների աստիճանակարգում հետզհետե իր հաստատուն դիրքն է գրավում օրենսդրական իրավունքը¹²⁵:

Համամիտ ենք, Ե.Ռ. Դանիելյանի և Ա.Ծ. Միրզոյանի այն կարծիքի հետ, որ դատական նախադեպը հետաքրքիր իրավական երևույթ է, որն ապահովում է դատական պրակտիկայի արդյունավետությունը, միասնականությունը և կանխատեսելիությունը¹²⁶: Ըստ իրավագետների, արդյունավետությունն արտահայտվում է նախկինում համանման գործերի քննարկման փորձի հիման վրա արագ որոշումների կայացման միջոցով: Իր հերթին, միասնականությունը ենթադրում է համանման

¹²⁴

¹²⁵Տե՛ս **Давид Р., Жоффре-Спинози К.** նշված աշխտ., էջ 111; **Романов А.К.** Право и правовая система Великобритании. М., 2010. С.93.

¹²⁶Տե՛ս **Դանիելյան Ե.Ռ.**, Հայաստանում դատական իշխանության զարգացման տեսական և մեթոդաբանական հիմնախնդիրները (պատմատեսական և իրավական վերլուծություն). իր.գիտ. թեկ. գիտ. աստ. հայցման ատենախոսություն, Եր., 2014, էջ 158; **Միրզոյան Ա. Մ.** Դատական իրավաստեղծ գործունեության հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (տեսական և կիրառական վերլուծություն), իր.գիտ. թեկնածուի իտ. աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2015, էջ 15:

գործերի վերաբերյալ միօրինակ մոտեցումների դրսևորումների վրա հիմնված դատական նախադեպի վրա: Կանխատեսելիությունը դրսևորվում է երկակի ձևով. դատական նախադեպերի իմացությունը թույլ է տալիս կամ կրճատել դատարաններում գործերի քննությունը (քանի որ պարզ է գործի ճակատագիրը), կամ էլ նախկին նախադեպերի հիման վրա ձևավորել տվյալ գործի իրավական հիմքը¹²⁷:

Ակնհայտ է, որ նախադեպը՝ որպես իրավունքի աղբյուր, հայտնի է հնագույն ժամանակներից: Հին Հռոմում որպես նախադեպեր հանդես էին գալիս համապարտադիր ակտերը (էդիկտները) կամ կոնկրետ գործերով զբաղվող պրետորների և այլ մագիստրատների որոշումները: Հարկ է նշել, որ ի սկզբանե, նախադեպային իրավունքն անվանվել է «պրետորական իրավունք», որը հանդիսանում էր դատավարությունը ղեկավարող պրետորի (հռոմեական պաշտոնատար անձի) կողմից ստեղծված նորմերի համակարգ կամ վարքագծի համապատասխան կանոն¹²⁸:

Սկզբնական շրջանում դրանք օժտված էին պարտադիր բնույթով դրանք ընդունած մագիստրատների համար նույնանման գործերով որոշումներ կայացնելիս, իսկ ավելի ուշ էդիկտները կազմեցին համապարտադիր բնույթ ունեցող նորմերի՝ պրետորական իրավունքի համակարգ¹²⁹:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ նախադեպային իրավունքի, որպես իրավունքի աղբյուրի, տարածումը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնք են՝ իրավունքի գլոբալացումը, քաղաքացիական հասարակության ակտիվ դերը իրավաստեղծ (օրինաստեղծ) գործունեությունում, դատական իշխանության լիազորությունների ընդլայնումը, որոնց շրջանակներում վերջինիս իրավաստեղծ գործունեությունը լրացնում է օրենսդիր մարմնի օրինաստեղծ գործունեության ժամանակ թույլ տված սխալները, բացերն ու հակասությունները, ինչպես նաև կարգավորում է ժողովրդավարական, իրավական պետությունում անընդհատ ծագող և զարգացող հասարակական հարաբերությունները:

¹²⁷Տե՛ս **Դանիելյան Ե.Ռ.** նշված աշխ., էջ 159; **Միրզոյան Ա. Մ.** նշված աշխ., էջ 16:

¹²⁸Տե՛ս **Հակոբյան Ա.Ա.** Դատական նախադեպը որպես իրավունքի աղբյուր. պատմատեսական և իրավական վերլուծություն, իր. գիտ. թեկ. հայցմ. ատենախոսություն., Եր., 2018, էջ 13; Червонюк В.И., Теория государства и права, Учу пособие, М., Инфра-М. 2003, С. 117:

¹²⁹ Մանրամասն տե՛ս **Հակոբյան Ա.Ա.** նշված աշխտ.: **Новицкий И.Б.** Римское право, 6-е изд., М., ТЕИС, 1997: **Сорокин В.В.**, Судебная практика как источник права: за и против// СибЮрВестник, 2002, №3.. 37-42:

Հարկ է նշել, որ նախադեպային իրավունքն օժտված է մի շարք դրական հատկանիշներով, որոնք նպաստում են վերջինիս տարածմանն ու ամրապնդմանը ժողովրդավարական, իրավական պետություններում: Նախ և առաջ, դատական նախադեպը նպաստում է **դատական ակտի հիմնավորման և պատճառաբանման որակի բարձրացմանը**, ինչն իրագործվում է դատարանի կողմից իրավական նորմերի գիտականորեն հիմնավորված մեկնաբանման միջոցով¹³⁰: Համամիտ ենք Ա.Ս. Ղամբարյանի այն դիրքորոշման հետ, որ գործի յուրաքանչյուր փաստական և իրավական հանգամանք պետք է մանրակրկիտ վերլուծվի: Ավելին, նախադեպի առկայության դեպքում գործի փաստական և իրավական հանգամանքների վերլուծության պահանջի անտեսումը դառնում է անհնարին, քանզի այդ հանգամանքների վերլուծության լրացուցիչ անհրաժեշտությունը պայմանավորված է նաև տվյալ գործի և նախադեպի միջև իրավական և փաստական հանգամանքների նմանության պարզմամբ¹³¹: Ինչ վերաբերում է դատական ակտի պատճառաբանվածության հարցին, ապա ՀՀ Վճռաբեկ դատարանը վերջինիս անդրադարձել է Ֆ. Գալստյանի գործով որոշման շրջանակներում, իրավական դիրքորոշում ներկայացնելով առ այն, որ «(...) Դատական ակտի պատճառաբանվածությունը կոչված է պարզաբանելու, թե ինչու է դատարանը եկել այս կամ այն հետևության, որ իրավանորմերով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս և միևնույն ժամանակ հնարավորություն է ստեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման համար:

(...) Պատճառաբանված որոշման բացակայությունն արդեն իսկ օբյեկտիվորեն սահմանափակում է վերադաս դատական ատյանի հնարավորությունը՝ լիարժեք դատական ստուգման ենթարկելու բողոքարկվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը և կայացնելու արդարացի որոշում, հետևաբար դատական ակտի չպատճառաբանված լինելը հանգեցնում է քրեական դատավարության

¹³⁰ **Ղամբարյան Ա.Ս.**, Դատական նախադեպը որպես իրավունքի աղբյուր// Դատական նախադեպը որպես իրավունքի աղբյուր. Հոդվածների ժողովածու. Եր. Տիգրան Մեծ, 2005. էջ 23:

¹³¹ Տե՛ս նույն տեղում, էջ 25:

կարևորագույն սկզբունքներից մեկի՝ ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտման»¹³²:

Ավելին, ՀՀ Վճռաբեկ դատարանը վերոնշյալ որոշման շրջանակներում, ինչպես նաև իր 2014 թ. մարտի 28-ի թիվ ՍԴ-3/0045/01/13 որոշման մեջ նշել է. «Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք որոշումներում՝ ներպետական դատարանների կողմից կայացված որոշումների չպատճառաբանվածությունը կամ ոչ բավարար պատճառաբանվածությունը դիտելում է որպես «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ անձի արդար դատական քննության իրավունքի խախտում (տե՛ս Սալովն ընդդեմ Ուկրաինայի (Salov v. Ukraine) 06.09.2005 թվականի որոշումը, գանգատ թիվ 65518/01, Բոլդեան ընդդեմ Ռումինիայի (Boldea v. Romania) 15.02.2007 թվականի որոշումը, գանգատ թիվ 19997/02, Գրադինարն ընդդեմ Մոլդովայի (Gradinar v. Moldova) 08.04.2008 թվականի որոշումը, գանգատ թիվ 7170/02)»¹³³:

1) Դատական նախադեպն, որպես իրավունքի աղբյուր, օժտված է զարգացող իրավաստեղծ գործառույթով, որի շրջանակներում ձևավորվում են իրավունքի նոր դրույթներ: Ավելին, դատական նախադեպային որոշումները ապահովում են դատավարության մասնակիցների համար որոշ չափով կանխատեսելի արդարադատություն, ինչպես նաև օրենքների միատեսակ կիրառություն և միասնական դատական պրակտիկա, լուծելով դատական պրակտիկայում ծագած խնդիրները¹³⁴:

2) Դատական նախադեպը ոչ միայն հնարավորություն է ընձեռում հաշվի առնել գործի կոնկրետ հանգամանքները, այլև նվազեցնում է երկակի չափորոշիչներով շարժվելու հնարավորությունը, ինչը նպաստում է դատարանի կողմից արդարացի և

¹³²Տե՛ս Ֆրունզե Գալստյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09 որոշման 18-19-րդ կետերը:

¹³³Ֆրունզե Գալստյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թ. մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09 որոշման 20-րդ կետը, http://www.datalex.am/?app=AppPrecedentCaseSearch_&page=default&tab=criminal/./15.06.2018/: Էրիկ Վալերիկի Մարգարյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2014 թ. մարտի 28-ի թիվ ՍԴ-3/0045/01/13 որոշումը <https://www.arlis.am/documentview.aspx?docid=90987/./15.08.2018:>

¹³⁴Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպերի կիրառումը ՀՀ դատարանների կողմից. Եր., Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ, 2011, էջ 11-12:

անկողմնակալ որոշման ընդունմանը: Այսպես, ստորադաս դատարանները, հետևելով վերադաս դատական ատյանի դիրքորոշմանը և նախադեպային պրակտիկային, իսկ նախադեպային որոշումներ կայացնող դատական ատյանը, հետևողականորեն բեկանելով նախկինում կայացված իր որոշումներին հակասող դատական ակտերը, ձևավորում են միասնական պրակտիկա, որի արդյունքում էականորեն սահմանափակվում է երկակի չափորոշիչներով առաջնորդվելու հնարավորությունը¹³⁵:

3) Նախադեպային որոշումները ստեղծվում են իրական (ռեալ) գործերի և առկա փաստական հանգամանքների հիման վրա, սակայն չեն կրում կանխարգելիչ բնույթ հետագայում նոր հանգամանքների և պայմանների առաջացումից խուսափելու համար:

4) Նախադեպային որոշումներում ամրագրված իրավունքի նորմերն ու դրույթները ճկուն են, քանի որ տարածվում են հասարակությունում առկա իրական հարաբերությունների վրա: Այսպես, Դոնոհյուն ընդդեմ Սթիվենսոնի գործի շրջանակներում, Անգլիա դատական համակարգը առաջին անգամ բախվեց իրենց համար նախկինում անհայտ սուբյեկտիվ իրավունքների վերականգման հիմնախնդրի հետ, որի հետևանքով ձևավորվեց սպառողների իրավունքի պաշտպանության ինստիտուտը, իսկ սպառողների նկատմամբ անփութության արգելման սկզբունքն իր տարածումը գտավ սպառողի և արտադրողի միջև առկա բոլոր հարաբերությունների վրա¹³⁶:

Ինչ վերաբերում է նախադեպի կառուցվածքին, ապա իրավաբանական գրականությունում այն բնութագրվում է եռադարձ կառուցվածքով և բաղկացած է. 1) հիմնավորումից, որտեղ ներկայացված են գործի նշանակալի, ուղղակի և ածանցյալ փաստերը, 2) սահմանումից, որտեղ շարադրված են այն իրավական սկզբունքներն, որոնք կիրառվում են կոնկրետ հանգամանքների շրջանակներում ծագած իրավական հարցերի լուծման համար, 3) որոշման եզրափակիչ մասից, որն, ըստ էության, հանդիսանում է դատավորի եզրակացությունը՝ հիմնված առաջին երկու մասերի վրա¹³⁷:

¹³⁵Տե՛ս նույն տեղում, էջ 13:

¹³⁶Տե՛ս Donoghue v Stevenson, Case Report, House of Lords, 26.05. 1932, <https://www.scottishlawreports.org.uk/resources/dvs/donoghue-v-stevenson-report.html/./15.07.2017/>:

¹³⁷Մանրամասն տե՛ս **Scalia A., Garner B.A.**, Reading Law: Interpretation of legal texts. Thomson/West. 2012; Law of Judicial Precedent/ed. **Garner B.A.**, Thomson Reuters, 2016:

Կողմերի համար նախադեպի 3-րդ մասը համարվում է հիմնական, քանի որ վերջնական կերպով հաստատում է նրանց իրավունքները և պարտականությունները: Սակայն նախադեպի դոկտրինայի տեսանկյունից առավել էական է համարվում որոշման 2-րդ մասը, ներկայացնում է գործի էությունը և անգլոսաքսոնական իրավական համակարգում կրում է «*ratio decidendi*» անվանումը¹³⁸: «*Ratio decidendi*»- ներկայացնում է նախադեպային իրավունքնի նորմը՝ ամրագրելով օրենքի ուժ ունեցող իրավական սկզբունքներ, որոնք պետք է կիրառվեն բոլոր անձանց նկատմամբ, հետագայում նմանատիպ գործեր քննելիս: Ինչ վերաբերում է որոշման առաջին մասին, ապա այն, պարունակելով գործով որոշման ընդունման համար կարևոր հիմնավորումներ և փաստարկներ, այնուամենայնիվ չի հանդիսանում դատական որոշման համար պարտադիր: Այն սովորաբար դիտարկվում է որպես համատեղ ասված, այսինքն՝ *obiter dictum*¹³⁹: Հատկանշական է, որ անգլիական իրավական համակարգում, դատական նախադեպը պետք է համապատասխանի օրենքին, իսկ օրենսդիրն, իր հերթին, օրենքի ուժով կարող է դադարեցնել նախադեպի գործողությունը¹⁴⁰: Ներկայումս դատական նախադեպը հանդիսանում է իրավունքի աղբյուր Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Կանադայի և շատ այլ երկրների իրավական համակարգերում¹⁴¹:

Ինչ վերաբերում է ռոմանագերմանական իրավական ընտանիքում ընդգրկված պետություններին, ապա այնտեղ նախադեպին, որպես իրավունքի աղբյուրի, մոտեցումները հակասական են: Նախ և առաջ, այդպիսի վերաբերմունքը պայմանավորված է այն փաստով, որ երկրների մի մասում այն ճանաչվում է որպես ձևական-իրավական աղբյուր, իսկ մյուսներում՝ ընդհանրապես չի ճանաչվում: Այստեղից որոշ իրավական համակարգերում նախադեպը կիրառվում է բավականին

¹³⁸Տե՛ս **Сипулин С. В.** Судебный прецедент как источник права. Дисс... канд. юрид. наук., Краснодар, 2008. С. 71-111; **Scalia A., Garner B.A.**, նշված աշխտ., էջ 32-44:

¹³⁹ Տե՛ս **Հակոբյան Ա. Ա.** Նախադեպային իրավունքը անգլոսաքսոնական իրավական համակարգում պատմաիրավական տեսանկյունից//Օրինականություն, №105, 2018, էջ 51-55; **Загайнова С.К.** Судебный прецедент: историко-правовой аспект. Дисс... канд. юрид. наук., Екатеринбург. 1999. С. 20-40.

¹⁴⁰ Տե՛ս **Waldron J.** Stare Decisis and the Rule of Law: A Layered Approach//Michigan Law Review. V.111. 2012. P. 1-33:

¹⁴¹Տե՛ս **Campbell Black H.** Handbook on the Law of Judicial Precedents or the Science of Case Law. West Publishing Company, 1912. P. 2-6; **Maltz E.** The Nature of Precedent// North Carolina Law Review, V.66. №2. 1988. P.367-393:

լայն, իսկ մնացած երկրներում՝ գրեթե աննշան: Արդի իրավաբանական գրականությունում դա բացատրվում է այն պարզ հանգամանքով, որ պաշտոնապես դեռ չեն մշակվել պետության իրավունքի համակարգում դատական նախադեպի տեղի և դերի վերաբերյալ ընդհանուր հայեցակարգեր¹⁴²: Այնուամենայնիվ, ներկայիս նախադեպը լայնորեն կիրառվում է ռոմանագերմանական իրավական ընտանիքին պատկանող շատ երկրներում: Օրինակ՝ Շվեյցարական Համադաշնությունում նախադեպը ճանաչել է իրավունքի աղբյուր և վերջինիս կիրառման առանձնահատկությունները օրենսդրական ամրագրում են ստացել երկրի Մայր Օրենքում: Շվեյցարական Համադաշնության քաղաքացիական օրենսգրքի համաձայն իրավունքը պետք է իրացվի առանց բացառության բոլոր դեպքերում՝ հիմք ընդունելով դրանում պարունակվող դրույթների տառն ու ոգին: Ավելին, կոնկրետ գործում իրավական բացի առկայության դեպքում դատավորը պետք է գործի այնպես, ինչպես կգործեր օրենքը կիրառելիս¹⁴³: Նման դիրքորոշում ունեն նաև Իսպանիայի Թագավորությունում, որտեղ Գերագույն դատարանի որոշումները ձևավորում են այսպես կոչված ընդհանուր իրավական դոկտրինան, որի խախտումն, օրենքի համաձայն, համարվում է Գերագույն դատարանում դատական որոշումները բողոքարկելու համար կարևորագույն հիմքերից մեկը¹⁴⁴: Մինևույն ժամանակ, տվյալ սահմանադրական միապետությունում դատավորները պետք է ենթարկվեն օրենքների և ղեկավարվեն վերջիններով, այլ ոչ թե նախադեպերով¹⁴⁵:

Վերոնշյալ դիրքորոշման հիման վրա, իրավաբանական գրականությունում առանձնացվում են այն երկրները (Իտալիան, Նորվեգիան, Ֆինլանդիան, Հոլանդիան և Հունաստանը), որտեղ դատական նախադեպը՝ որպես իրավունքի աղբյուր, օժտված է երկրորդական բնույթով: Այսպես, Հունաստանում դատական որոշումները հանդիսանում են օրենքի մեկնաբանություններ, սակայն, ձևական-իրավաբանական

¹⁴²Տե՛ս **Марченко М.Н.** Источники права. М., Проспект. 2005. С.503-509.

¹⁴³Տե՛ս Swiss Civil Code of 10 December 1907 (Status as of 1 January 2017) <https://wipolex.wipo.int/ru/legislation/details/17179/,/16.04.2017/>:

¹⁴⁴Տե՛ս **Богдановская И. Ю.** Эволюция судебного прецедента в «общем праве» // Право. ВШЭ. М., 2010, № 2. С. 75-87; **Туманов В.А.** К критике концепции «судейского права» // Сов. государство и право. 1980. № 3. С. 111-118.

¹⁴⁵Տե՛ս **Бойцова Л.В., Бойцова В.В.**, Судебный прецедент: зарубежный опыт и российские перспективы //Российский судья. М., Юрист. 1999.№ 3. С. 14-18.

առումով, դատական որոշումները չեն դիտարկվում որպես իրավունքի աղբյուր: Հատկանշական է, որ երկրի Գերագույն դատարանը կարող է ընդունել դատական նախադեպին իրավազոր որոշումներ, իսկ որոշ դեպքերում, ստորադաս դատական աստիճանները ընդունում են վերադասի կայացրած դատական ակտերը որպես նախադեպ: Ուշադրության է արժանի դատական նախադեպի կիրառման հիմնախնդիրը Ֆրանսիայի Հանրապետություն, որտեղ իրավաբանական գրականությունում ժխտվում է դատական նախադեպի կիրառումը, իսկ գործնականում այն կիրառվում է: Ավելին, Ֆրանսիայում նախադեպային իրավունքը չի համարվում իրավական նորմերի աղբյուր, քանի որ դատավորը պարտավոր չէ հաշվի առնել այն դատական ակտն կայացնելիս¹⁴⁶:

Այսպիսով, անգլո-ամերիկյան իրավական ընտանիքի երկրներում դատական նախադեպը մինչև այժմ համարվում է իրավունքի գլխավոր աղբյուրը: Երկրների մեծ մասում, որոնք դասվում են ռոմանագերմանական իրավական ընտանիքին, այն ևս հանդես է գալիս իրավունքի ձևական-իրավական աղբյուր, չնայած տեսական առումով մերժվում է որպես այդպիսին:

Խառը (խառնածին) իրավական համակարգերում, որոնք գործում են Կամերունում, Ֆիլիպիններում, Շրի-Լանկայում, Ճապոնիայում, որտեղ միահյուսվում են ընդհանուր իրավունքի, քաղաքացիական իրավունքի և տեղի ավանդական (սովորույթային) իրավունքի տարրերը, դատական նախադեպը կիրառվում է որպես իրավունքի կարևորագույն աղբյուր¹⁴⁷:

Ինչ վերաբերում է նախադեպային իրավունքի դրսևորմանը Հայաստանի Հանրապետությունում, ապա պետք է նշել, որ չնայած այն հանգամանքին, որ ՀՀ-ում դատական նախադեպը ուղիղ ձևական-իրավաբանական ամրագրում չի ստացել երկրի մայր օրենքում որպես գործող պոզիտիվ իրավունքի աղբյուր, այնուամենայնիվ, դատական նախադեպի կիրառման թույլատրելիության մասին են վկայում Սահմանադրությամբ և ընթացիկ օրենսդրությամբ ամրագրված դրույթները: Այսպես, սահմանադրաիրավական և դատաիրավական բարեփոխումների արդյունքում ՀՀ

¹⁴⁶ Цвайгерт К., Кетц Х. նշված աշխտ., էջ 132-150:

¹⁴⁷ Տե՛ս Սաֆարյան Ս.Գ., նշված աշխ., էջ 19; Жидков О.А. Судебный прецедент в правовых системах развивающихся стран // Источники права. М., Наука, 1985. С. 28-45 Itoh H. The Role of Precedent at Japan's Supreme Court// Washington University Law Review Volume 88. Issue 6. 2011. P. 1631-1667.

Վճռաբեկ դատարանը ձեռք բերեց բարձրագույն դատական ատյանի կարգավիճակ բացառությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի, որն իրավասու է իր լիազորության շրջանակներում վերանայման միջոցով ապահովել օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը, ինչպես նաև՝ վերացնել մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները¹⁴⁸: Իր հերթին, «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի համաձայն, օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը Վճռաբեկ դատարանն ապահովում է, եթե առկա է իրավունքի զարգացման խնդիր, կամ տարբեր գործերով դատարանների կողմից նորմատիվ իրավական ակտը տարաբնույթ է կիրառվել կամ չի կիրառվել տարաբնույթ իրավաընկալման հետևանքով¹⁴⁹:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ Սահմանադրական օրենքի համաձայն. «Յուրաքանչյուր ոք իր գործի քննության ժամանակ որպես իրավական փաստարկ իրավունք ունի վկայակոչելու նույնանման փաստերով այլ գործով Հայաստանի Հանրապետության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտում առկա օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի մեկնաբանությունները: Դատարանն անդրադառնում է նման իրավական փաստարկներին»¹⁵⁰: Ավելին, նույն հոդվածով ամրագրվում է այն փաստը, որ նույնանման փաստերով այլ գործով Վճռաբեկ դատարանի կողմից իրավական նորմի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանության դեպքում դատարանը պետք է հիմնավորի օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի՝ Վճռաբեկ դատարանի մեկնաբանությունից շեղվելը¹⁵¹: Նույնանման դրույթն են ամրագրված նաև դատական օրենսգրքում, որի 8-րդ հոդվածի համաձայն. «Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով Վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները, այդ թվում՝ օրենքի

¹⁴⁸Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (փոփ. 06.12.2015), հոդվ. 171; <http://www.president.am/hy/constitution-2015/./24.09.2018/>:

¹⁴⁹«ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք (ընդ. 07.02.2018թ., ուժի մեջ է մտել 09.04.2018թ.), հոդվ. 29, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=68011/./12.07.2017/>:

¹⁵⁰«ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք (ընդ. 07.02.2018թ., ուժի մեջ է մտել 09.04.2018թ.), հոդվ. 10, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=68011/./12.07.2017/>:

¹⁵¹ Տե՛ս նույն տեղում, հոդվ. 10, կետ 4:

մեկնաբանությունները, պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»¹⁵²: Միևնույն ժամանակ, ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված է, որ անձի հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ *մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան (ընդգ.մերն է՝ Ա. Տ-Բ.)*¹⁵³, որի թվին է դասվում նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան, ներառյալ այլ պետությունների վերաբերյալ կայացրած որոշումները: Կարծում ենք, որ արդի իրավունքի գլոբալացման պայմաններում, որոնք իրենց ուրույն ազդեցությունն են թողել ՀՀ սահմանադրաիրավական և դատաիրավական զարգացման գործընթացի վրա, անհրաժեշտ է օրենսդրորեն ուղղակիորեն ամրագրել ՀՀ վճռաբեկ, և ՀՀ սահմանադրական դատարանների նախադեպային որոշումներ կայացնելու իրավասությունը, ինչը թույլ կտա խուսափել իրավաբանական գրականությունում և դատական պրակտիկայում նախադեպերի կիրառման վերաբերյալ երկակի մոտեցումներից: Ավելին, անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել դատավորի պարտականությունը առաջնորդվելու նաև նախկինում իր կողմից օրինական ուժի մեջ մտած որոշումներով:

Իրավական սովորույթ: Իրավունքի գլոբալացման և օրեցօր աճող իրավունքի ինտեգրման գործընթացում կարևորվում է իրավական սովորույթների ուսումնասիրությունը պետության և իրավունքի տեսության կողմից, քանի որ սովորույթային իրավունքում է կենտրոնացած ազգային, կոլեկտիվ իրավամտաճողությունը, ինչպես նաև սոցիալ-մշակութային հիշողությունը, արժեքների, նախատիպերը:

¹⁵² ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք (ընդ.01.07. 1998) հոդվ.8 <https://www.arlis.am/documentview.aspx?docID=68011/./12.09.2017/>:

¹⁵³ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (փոփ. 06.12.2015), հոդվ. 81 <http://www.president.am/hy/constitution-2015/./24.09.2018/>:

Իրավաբանական գրականությունում իրավական սովորույթը բնութագրվում է որպես պետության կողմից վավերացված վարքագծի կանոն, որը գոյացել է նախկինում մարդկանց՝ նման որակի գործողությունների տևական կրկնության հետևանքով, որի շնորհիվ ամրապնդվել է որպես կայուն նորմ¹⁵⁴: Միևնույն ժամանակ, պետությունը վավերացնում է միայն այնպիսի նորմեր, որոնք բավարարում են իր պահանջներն, իսկ վավերացված սովորույթներն, իրենց հերթին ձեռք են բերում համապարտադիր վարքագծի կանոնի տեսք: Ինչպես իրավագիտորեն նշում է Գ.Հ. Սաֆարյանը, ամեն մի սովորույթ չի կարող դառնալ սովորութական իրավունք, այլ միայն այն սովորույթները, որոնք հասարակության մեջ երկարատև և անընդմեջ գործադրվելու հետևանքով, ձեռք են բերել համապարտադիր վարքագծի կանոնների, այլ խոսքով՝ չգրված օրենքի նշանակություն¹⁵⁵: Ինչպես դիպուկ բանաձևել է հռոմեացի իրավաբան Ուլպիանոսը, սովորույթը ժողովրդի լռեցյալ համաձայնությունն է՝ որոշված երկարատև փորձությամբ: Երկարատև սովորույթը պետք է պահպանել որպես իրավունք և օրենք այն դեպքերում, երբ չկա գրավոր օրենք¹⁵⁶:

Իր հերթին, հայտնի ռուս իրավաբան, պրոֆեսոր Գ.Ֆ. Շերշենևիչի կարծիքով, սովորութային իրավունքի նորմերը պետք է հիմնվեն իրավական համոզմունքների վրա, պետք է չհակասեն բանականությանը և չխախտեն բարի ավանդույթներն ու չմոլորեցնեն մարդկանց¹⁵⁷: Պետության և իրավունքի տեսությունում բազմիցս նշվել է, որ սովորութային իրավունքը պետք է օժտված լինի հին սովորութային բնույթով, այսինքն՝ ի հայտ եկած լինի անհիշելի ժամանակներից: Իր հերթին, ավանդույթին համաձայն են և կամովին հարգում են բոլորը, քանզի այն ոչ միայն պարտավորեցնող է, այլ նաև ճիշտ է և արդար¹⁵⁸:

Պատմականորեն ձևավորված ավանդույթի և սովորույթի համաձայն Անգլիայի դատարաններն օժտված են բավականին լայն լիազորություններով, որոնց շնորհիվ դատա-

¹⁵⁴Տե՛ս **Խրոպանյուկ Վ.Ն.**, նշված աշխտ., էջ 224; **Марченко М.Н.** Теория государства и права. М., МГУ. 2007. С. 506;

¹⁵⁵Տե՛ս **Սաֆարյան Տ.Գ.**, նշված աշխ., էջ 60:

¹⁵⁶Տե՛ս **Дигести Юстиниана.** Избранные фрагменты в переводе и с примечаниями И.С. Перетерского. / Отв. ред. Скрипилев Е.А. М., Наука. 1984.С. 31-34.

¹⁵⁷Տե՛ս **Шершеневич Г.Ф.** Общая теория права: Часть теоретическая. Философия права. Т. 1. Вып. 1-4. М., Бр. Башмаковы. 1910. С. 57-59; 431-458:

¹⁵⁸Տե՛ս **Гуревич А.Я.** Категории средневековой культуры М., Искусство.1972. С.170-173:

կան իշխանությունը հսկայական ազդեցություն ունի ոչ միայն երկրի իրավական համակարգի զարգացման վրա, այլև հասարակության ու պետության նկատմամբ, որոնք կապված են օրենսդրական ակտերի մեկնաբանությունների և սահմանադրական որոշման խնդիրների հետ:

Սովորույթը դա սոցիալական նորմ է, որը ձևավորվել է հասարակության մեջ վարքագծի որոշակի կանոնի բազմակի կամ մշտական կրկնության արդյունքում, այն ոչ մի տեղ ամրագրված չէ և փոխանցվում է սերնդեսերունդ: Այսպիսով, սովորույթն օժտված է հետևյալ հատկանիշներով. 1) նորմատիվություն (վարքագծի կանոն, հասարակության մեջ վարքագծի օրինակ), 2) կրկնություն (բազմաթիվ անգամներ և մշտապես կրկնվող), 3) կարծրատիպություն (հետևել սովորույթին): Քանի որ սովորույթը համարվում է իրավական սովորույթի հիմքը, ապա նրա բոլոր հատկանիշները տարածվում են նաև վերջինի վրա:

Բոլոր իրավական սովորույթների ամբողջությունը իրենից ներկայացնում է նորմերի, վարքագծի կանոնների համակարգ՝ հիմնված սովորույթների վրա, որոնք կոչվում են սովորութային իրավունք: Սովորութային իրավունքի ոլորտին են դասում են կենցաղային սովորությունները, համընդհանուր վարքագծի ավանդական կարծրատիպերը, սովորույթները և այլն:

Համամիտ ենք Ս.Ս. Ալեքսենի այն դիրքորոշման հետ, որ որպես գաղափարական աղբյուր իրավական սովորույթը ձեռք է բերում իրավական կարգավիճակ ոչ թե իշխանության մարմինների կողմից պատժամիջոցների կիրառման արդյունքում, այլ դրանց գոյաբանական էության շնորհիվ, որից բխում են դրանց համապատասխան հատկանիշները: Ըստ իրավագետի, իրավական սովորույթը ձեռք է բերում իրավական կարգավիճակ, ոչ թե պետության կողմից պատժամիջոցի կիրառման արդյունքում, այլև իր էության և հատկանիշների շնորհիվ¹⁵⁹: Տվյալ կարծիքը խարսխված է սովորույթի հիմնական որակի, նորմատիվության վրա: Վերջինս ենթադրում է վարքագծի որոշակի կանոնի գործողությունը ժամանակի ընթացքում, տարածության մեջ և կոնկրետ անձանց շրջանակում: Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ սոցիալական բնութագրերը թույլ են տալիս դասակարգել, որակավորել սոցիալական

¹⁵⁹Տե՛ս **Алексеев С.С.** Теория права. 2-е изд., перераб. и доп., М., БЕК. 1995.С. 75-76:

ինստիտուտները, այդ թվում նաև՝ սովորույթները: Հայտնի է, որ սովորույթային իրավունքի ծագումը կապված է պետության կայացման վաղ շրջանի հետ, երբ սկսեցին հավաքել և ամրագրել սովորույթային նորմերը գրավոր իրավական աղբյուրներում, մասնավորապես՝ Հնդկաստանի, Հունաստանի, Հին Ռուսաստանի իրավունքի հնագույն հուշարձաններում: Այսպես սովորույթային իրավունքը ձևափոխվել է օրենքների: Տվյալ գործընթացը շարունակվում է մինչ օրս ավանդական իրավական համակարգ ունեցող պետություններում, քանի որ հիմնական իրավական համակարգերում այն սկզբունքորեն ավարտված է:

Միջազգային իրավունքի մեջ նկատվում է միջազգային-իրավական սովորույթի ձևափոխում միջազգային նորմատիվ-իրավական պայմանագրերի: Ընդ որում, պետության կողմից իրավական սովորույթի անթույլատրելիությունը իրականացվում է տարբեր եղանակներով: Մի դեպքում իրավական սովորույթի բովանդակությունը մնում է նույնը, գաղափարական աղբյուրից վերածվելով ձևական-իրավական աղբյուրի: Մյուս դեպքերում, օրենքը կամ դատական նախադեպը, փոխարինելով սովորույթին, առանց բովանդակային փոփոխությունների ճշգրտում է անձի կոնկրետ իրավունքները: Այդ բոլոր ձևերից հիմնական իրավական համակարգերի մեջ կիրառվում է իրավական սովորույթների հաջորդական ձևափոխումը դրական իրավունքի այլ ձևերի՝ որպես կանոն, օրենքի կամ դատական նախադեպի: Այսպիսով, իրավական սովորույթը ստեղծվում է հասարակության կողմից ինքնուրույն, առանց պետության մասնակցության, որպես գաղափարական աղբյուր, բայց միևնույն ժամանակ պետությունները չեն թույլատրում որոշ իրավական սովորույթներ՝ դրանց տալով ձևական-իրավական աղբյուրների որակներ: Իրավական սովորույթի ձևափոխության փուլերը յուրաքանչյուր իրավական ընտանիքի մեջ անհատական են և ունեն իրենց առանձնահատկությունները:

Իրավական սովորույթի տեղի և դերի դիտարկումը արդի իրավական ընտանիքներում նպատակահարմար ենք համարում սկսել ռոմանագերմանական իրավական ընտանիքից, քանի որ այդ ընտանիքում դրանք բավականին հակասական են՝ ճանաչումից և կիրառումից մինչև բացառում: Նմանատիպ մոտեցումը պայմանավորված է ռոմանագերմանական իրավական ընտանիքին պատկանող

պետությունների մեծաքանակությամբ, ազգերի զարգացման մակարդակների տարբերությամբ և այլ գործոններով: Օրինակ, Իսպանիայում, ինչպես նաև իսպանալեզու մի շարք երկրներում, սովորության իրավունքը, լինելով իրավունքի ձևական-իրավական աղբյուր, ազդել է Կատալոնիայի քաղաքացիական իրավունքի ձևավորման և զարգացման վրա: Ի տարբերություն Իսպանիայի, որտեղ սովորության իրավունքը հանդիսանալով իրավունքի աղբյուր իր ազդեցությունն է ունեցել քաղաքացիական իրավունքի ձևավորման և զարգացման վրա, Ֆրանսիայում սովորության իրավունքի ազդեցությունն աննշան է¹⁶⁰: Արդի գերմանացի իրավագետների կարծիքով սովորության իրավունքը վերացող երևույթ է, իսկ օրենքը և սովորույթը պետք է դիտարկվեն որպես մեկ հարթակի վրա գտնվող իրավունքի երկու աղբյուր, քանի որ որոշ դեպքերում անհրաժեշտություն է առաջանում լրացնել օրենքը սովորույթով¹⁶¹: Ավելին, ռոմանագերմանական իրավական ընտանիքի երկրներում գործնականում առկա է իրավական սովորույթի օրենքով փոխարինման միտումը:

Եթե դիտարկենք իրավական սովորույթի տեղն ու դերն անգլո-ամերիկյան իրավունքի իրավական համակարգերում, ապա դրանք ևս ունեն մի շարք առանձնահատկություններ համաշխարհային միտումների պահպանման մեջ: Այդ իրավական ընտանիքի մեջ իրավական սովորույթի գլխավոր առանձնահատկությունը համարվում է այն, որ այն ավանդաբար հանդես է գալիս որպես անգլո-ամերիկյան իրավունքի ձևերից մեկը¹⁶²: Հայտնի է, որ անգլիական իրավունքի մեջ սովորույթը դա ողջ իրավական ընտանիքի համակարգ ձևավորող տարր է. պատմական առումով «սովորույթը դարձավ այն հիմքը, որի վրա սկզբում ստեղծվել, իսկ այնուհետև զարգացել էր անգլիական ընդհանուր իրավունքը ողջ միջնադարի ընթացքում»: Հենց սովորության իրավունքն էին օգտագործում դատարանները իրենց կայացման և հետագա զարգացման գործընթացում:

Մինչև XV դարը իրավական սովորույթը գերակայում էր անգլիական իրավունքի մեջ, բայց արդեն XVII դարում Անգլիայում ձևավորվեց նախադեպ, որի հիման վրա

¹⁶⁰Մանրամասն տե՛ս **Захарова М.В.** Французская правовая система: теоретический анализ.М., Проспект. 2016:

¹⁶¹Մանրամասն տե՛ս **Шумилов В.М.** Введение в правовую систему ФРГ.М., ДеКА, 2009:

¹⁶²Մանրամասն տե՛ս **Ложе Р., Грядов А.В.** Великие правовые системы современности.М., Волтерс Клувер. 2011.

որպես իրավական ուժ ունեցող սովորույթներ դատարանի կողմից ճանաչվում էին միայն նրանք, որոնց նկատմամբ կային ապացույցներ իրենց գործողությունների մասին մինչև Ռիչարդ I «Առյուծասիրտի» թագադրումը, այսինքն՝ մինչև 1189թ. սեպտեմբերի 3-ը: Հենց տվյալ նախադեպից հետո «սովորույթի բնույթը, որպես իրավունքի չգրված աղբյուր դարձավ այնպիսին, որ դրա նկատմամբ ցուցիչներ չկան և չեն կարող լինել: Ցանկացած անձ, ով ուզում է ապացուցել սովորույթի գոյությունը, պետք է դա անի դատական կարգով»¹⁶³:

Այդ ժամանակներից սկսած անգլո-ամերիկյան իրավական ընտանիքում սովորույթը միայն այն դեպքում է համարվում իրավունքի աղբյուր, երբ այն սահմանվում է դատական ակտում, այսինքն՝ հաստատվում է դատարանի կողմից կոնկրետ գործով գոնե մեկ որոշման մեջ: Ընդ որում, սովորույթը դառնում է երկրորդային ձևական-իրավական աղբյուր տվյալ իրավական ընտանիքի մեջ:

Սակայն, չնայած այն բանին, որ իրավական սովորույթը այսօր բավականին սահմանափակ դեր է խաղում և բավականաչափ նեղ է ընկալվում՝ միայն որպես հատուկ իրավունք, որը գոյություն ունի անհիշելի ժամանակներից, իրավական կարգավորման որոշ ոլորտներում նրան տրվում է ինքնուրույն նշանակություն: Անգլո-ամերիկյան իրավունքի մեջ այդպիսի ոլորտների թվին են դասվում կորպորատիվ իրավունքի ոլորտը և տեղական ինքնակառավարման գործունեության կարգավորման ոլորտը:

Ինչպես հայտնի է, Անգլիայում իշխանության բարձրագույն մարմինների գործունեությունը կարգավորվում է չգրված սահմանադրությամբ, որը հանդիսանում է հնագույն ավանդույթների և ստատուտների ամբողջություն: Այսպես, ըստ Անգլիայի սահմանադրական սովորույթների, պաշտոնատար անձանց աշխատավարձի ու կենսաթոշակի չափը սահմանում է թագուհին: Ավելին, Գերագույն վերաքննիչ դատարանում մասնագիտությամբ իրավաբան չհանդիսացող լորդերն իրավասու են իրենց լիազորությունները պատվիրակել իրենց կազմում ընդգրկված հայտնի իրավաբաններին:

Ուշագրավ է իրավական սովորույթի տեղ ու դերը ԱՄՆ-ի իրավական համակարգում, քանի որ այնտեղ իրավունքի համակարգը օժտված չէ դարավոր

¹⁶³Տե՛ս **Duxbury N.** The Nature and Authority of Precedent. Cambridge. CUP. 2008. P.31-37:

պատմական ավանդույթներով և միանգամից ստեղծվել է դատական նախադեպի և ստատուտների կիրառման գաղափարի հիման վրա: Ավելին, ԱՄՆ-ի քաղաքացիական հասարակությունն անընդհատ զարգացող և ճկուն է, ինչի հիման վրա իրավական համակարգում որպես ձևական-իրավական աղբյուր դիտարկվում են օրենքներն ու դատական նախադեպերը: Այնուամենայնիվ, սովորույթային իրավունքի նորմերով կարգավորում են պետական իշխանության գործունեության տարբեր ոլորտները: Օրինակ՝ ԱՄՆ Կոնգրեսի մշտական և ժամանակավոր հանձնաժողովների գործունեությունը, քաղաքական կուսակցությունների ձևավորման գործընթացը, երկրի նախագահի երդմնակալության արարողությունը, վերջինիս ավելին քան երկու անգամ անընդմեջ ընտրվելու անթույլատրելիությունը և այլն:

Ինքնատիպ են իրավական սովորույթի տեղը և դերը խառը իրավական համակարգերում: Ըստ Ս.Ս. Ալեքսենի, իրավական սովորույթը հանդիսանալով բնական օրենքի հնագույն ինքնատիպ տարատեսակ, պարփակում է կրոնական, ավանդական սկզբունքները, գաղափարական դոկտրինաները, որոնք լիարժեք արտացոլված են խառը կրոնական իրավական համակարգերում¹⁶⁴:

Հատկանշական է, որ Հուդայական իրավունքի հայեցակարգի համաձայն, իրավունքը համարվում է իրավունք, եթե ձևավորվել է հրեական կրոնական և հին սովորույթների, ավանդույթների հիման վրա: Ավելին, իրավաբանական գրականությունում հուդայական կրոնական իրավունքը դիտարկվում է որպես իրավական նորմերի համակարգ, որը կարգավորում է հրեաների առօրյա կյանքի և հավատքի բազմաթիվ ոլորտներ¹⁶⁵: Այսիսով, սովորույթը համարվում է համընդհանուր ճանաչում ստացած իրավական աղբյուր հրեական իրավունքի համակարգի մեջ, որն անհրաժեշտ է կրկին առաջացող իրավական և սոցիալական խնդիրների լուծման համար, նոր իրավական նորմերի ստեղծման և գոյություն ունեցող կապերը տնտեսության, սոցիալական հարաբերություններում, բարոյականության մեջ տեղի ունեցող փոփոխությունների հետ

¹⁶⁴St' u **Алексеев С.С.** Теория права. 2-е изд., перераб. и доп., М., БЕК. 199542-43:

¹⁶⁵Марченко М.Н. Основные принципы иудейского права // Вестник Московского университета. М., Изд-во Моск. ун-та, 2001, № 1. С. 65-77ж Марченко М.Н. Иудейское право как подсистема общей системы израильского права // Вестник Московского университета. - М.: Изд-во Моск. ун-та, 2001, № 3. С. 76-88

փոխելու համար¹⁶⁶: Հարկ է նշել, որ հուդայական իրավունքում գոյություն ունեն նորմեր, որոնք մի կողմից կարգավորում են կրոնական ծեսերը և արարողակարգերը, մյուս կողմից՝ հրեաների վարքագիծը մասնավոր և հասարակական կյանքում, ինչպես նաև նորմեր, որոնք ստեղծվում և գործադրվում են արդի դատարանների գործունեության արդյունքում: Այսպես, հուդայական իրավունքը հանդիսանալով ժամանակակից Իսրայելի իրավական համակարգի անբաժան մասը ձևավորում է ազգությամբ հրեա քաղաքացիների անձնական իրավունքները անձի իրավական դրությանը վերաբերող գործերով: Ավելին, հուդայական իրավունքը կարգավորում է այնպիսի հարաբերություններ, որոնք վերաբերում են հուդայական կրոնական սպասավորների ծառայությանը, ինչպես նաև կրոնական հայեցակարգերի մեկնություններին, այդ թվում՝ Իսրայելում բնակվող «օտար հրեաների» ամուսնաընտանեկան հարցերին¹⁶⁷:

Ինքնատիպ տեղ է զբաղեցնում իրավական սովորույթը մահմեդական իրավունքով երկրներում: Դրանցում մինչև այժմ գերիշխում է կարևորագույն դրույթն այն մասին, որ սովորույթն օժտված է նորմի նշանակությամբ: Այն կարող է արդարացում ծառայել նույնիսկ Ղուրանի և Սուննայի որոշ օրենքներից հեռանալու համար: Մահմեդական երկրներում բնակչության տարբեր սովորույթների առկայությունը հիմնավորվում է կյանքի անընդմեջ փոփոխվող սոցիալական և տնտեսական պայմաններով: Օրինակ մահմեդականների մոտ մինչ օրս գործում են տարբեր ազգային սովորույթներ, որոնք վերաբերվում են օժիտի վճարման միջոցներին և արժեքին: Իրավական սովորույթների բազմատեսակությունը վկայում է մահմեդական իրավունքի զարգացման համար կայուն հիմքի և ապագայում դրա զարգացման մեծ հեռանկարների մասին:

Միևնույն ժամանակ մի շարք երկրներում իրավական սովորույթը, ընդհանուր առմամբ չի ճանաչվում որպես ձևական-իրավական աղբյուր, բայց թույլ է տրվում դրա կիրառումը ազգաբնակչության առանձին կատեգորիաների համար: Օրինակ՝ Պակիստանի Իսլամական Հանրապետությունում պուշտունյան ցեղերի վրա պաշտոնապես չի տարածվում այդ երկրի քրեական օրենսգիրքը և բոլոր նորմատիվ

¹⁶⁶Հրեական իրավունքի մասին մանրամասն տե՛ս The Principles of Jewish Law/ed. **Menachem E.**, New Jersey.Transaction Publishers.2007.

¹⁶⁷Տե՛ս **Барак А.** Судейское усмотрение/ Пер. с англ. Науч. ред. В.А. Кикоть.М., Норма. 1999. С.121-125.

կարգավորումները հիմնականում իրականացվում են պուշտունների սովորությանին իրավունքի հիման վրա¹⁶⁸:

Այլ մահմեդական երկրներում իրավական սովորույթը ճանաչվում է որպես ձևական-իրավական աղբյուր, սակայն ավելի քիչ, քան մահմեդական իրավունքը, աշխարհիկ օրենքները և ենթաօրենսդրական-նորմատիվ ակտերը¹⁶⁹: Այսպես, Եգիպտոսի Արաբական Հանրապետության Գերագույն վարչական դատարանն իր որոշումներում բազմիցս նշել է, որ համալսարանների վարչակազմն իր կայացրած որոշումներում պետք է հավատարիմ մնա հաստատված ակադեմիական սովորույթներին, եթե դրանք չեն հակասում նորմատիվ-իրավական ակտերին: Իրանում, օրինակ, իրավական սովորույթը կիրառվում է, եթե բացակայում են անճշտությունները կամ իրավական նորմի հակասությունները: Այդ օրինակից կարելի է եզրակացնել, որ մահմեդական երկրներում իրավական սովորույթը կիրառվում է սահմանափակ ծավալով և համարվում է իրավունքի երկրորդական աղբյուր: Դրա կիրառության աստիճանը հիմնականում կախված է ավանդական հասարակությունից ժամանակակից և իսլամի գերակայությամբ սոցիալական միջավայրի ձևափոխման մակարդակից: Ընդ որում հստակ կերպով դիտարկվում է իրավական սովորույթի անցման միտումը ձևական-իրավական աղբյուրից՝ գաղափարականի:

Ինչ վերաբերում իրավական սովորույթին միջազգային իրավական համակարգում, ապա այն համարվում է ձևական-իրավական հիմնական աղբյուրներից մեկը: Սովորությանին նորմերի կայացման գործընթացը միջազգային իրավունքի հիմնական սուբյեկտների՝ պետությունների պայքարի և համագործակցության գործընթացն է: Սովորությանին կանոնի ձևավորումը տեղի է ունենում պետությունների շփման արդյունքում, որում յուրաքանչյուր պետություն ձգտում է, որպեսզի ամրագրի այնպիսի կանոններ, որոնք կհամապատասխանեն իր շահերին:

Միջազգային իրավունքի սովորությանին նորմն ունի նույն նշանները, ինչ այլ իրավական համակարգերում, բայց միևնույն ժամանակ նրան հատուկ են իր առանձնահատկությունները: Մասնավորապես, սովորությանին-իրավական նորմը պետք

¹⁶⁸ St'а **Белокреницкий В.Я.** Пуштуны и будущее Пакистана//Сборник «Ближний Восток и современность». Выпуск 18. М., ИИИиБВ, 2003. С.46-51.

¹⁶⁹ Մահմեդական իրավունքի մասին մանրամասն տե՛ս **Сукияйнен Л.Р.** Глобализация и мусульманский мир: оценка современной исламской правовой мысли.М., Марджани. 2012.

է լինի համընդհանուր ճանաչված իրավական դրույթ, որը ենթադրում է նրա օգտագործումը համընդհանուր պրակտիկայի մեջ: Այդ դրույթը պայմանավորված է նրանով, որ միջազգային իրավունքի մեջ դրա նորմերի ստեղծողներ են համարվում հենց սուբյեկտները: Միայն ճանաչման և օգտագործման արդյունքում ավարտվում է միջազգային իրավունքի սովորութային նորմի ձևավորման գործընթացը: Հենց այդ իմաստն է բովանդակում ՄԱԿ-ի Միջազգային Քրեական Դատարանի կանոնադրության 38-րդ հոդվածը, որի համաձայն Դատարանը, միջազգային իրավունքի հիման վրա վեճը լուծելիս, որպես համընդհանուր պրակտիկայի ապացույց, կիրառում է նաև որպես իրավական նորմ ճանաչված միջազգային սովորույթը¹⁷⁰:

Ներկայումս իրավական սովորույթը կարևոր տեղ է զբաղեցնում նորմատիվ-իրավական կարգավորման գործընթացում: Նոր նորմերի և սկզբունքների զգալի մասը, որոնք ամրագրված են պայմանագրերում, հայտնի չափով մնում են սովորութային սկզբունքներ և նորմեր: Դրանց թվին են դասվում, օրինակ, պետական ինքնավարության հարգումը, ներքին գործերին չխառնվելը, հարձակումներ չգործելը, իրավահավասարությունը: Չնայած այդ սկզբունքները ամրագրվել են ՄԱԿ Կանոնադրության մեջ, բայց ՄԱԿ-ի անդամ չհանդիսացող պետությունների համար դրանք համարվում են սովորութային-իրավական նորմեր: Միջազգային-իրավական սովորույթները էական տեղ են գրավում դեսպանության իրավունքի մեջ: Ընդ որում, հստակ կերպով դիտարկվում է միջազգային-իրավական սովորույթների փոխարինման միտումը միջազգային-իրավական պայմանագրերով:

Այսպիսով, իրավական սովորույթը իրավունքի աղբյուրներից առաջինն է, որն ունի խորը արմատներ և զգալի ծավալ աշխարհի բոլոր իրավական համակարգերում: Ընդ որում, պետության ազդեցության տակ համայնքային սովորութային իրավունքը կորցնում է իր կարգավորիչ ունակությունը, փոխարինվում է նախադեպերով և օրենքներով և ձևական-իրավական աղբյուրների շարքից անցնում է գաղափարականի, ինչն ըստ էության հաստատում է աշխարհի իրավական համակարգերում ձևական-իրավական աղբյուրների միասնականացման մասին դրույթը:

¹⁷⁰Տե՛ս Статут Международного Суда ООН, <https://www.un.org/ru/iccj/statut.shtml#chap2/26.04.2018/>:

Իրավական դոկտրինը, որպես դրական իրավունքի աղբյուր, հանդիսանում է բազմակիորեն փոխվող իրավական երևույթ, որը դատական պրակտիկայում ծուլվում է կրոնի, իրավունքի ընդհանուր սկզբունքների և այլ ձևերի ու աղբյուրների մեջ¹⁷¹: Ինչպես իրավացիորեն նշում է Ի.Յու. Բոգդանովսկայան, ողջ աշխարհում դոկտրինի, որպես իրավունքի աղբյուրի, դերն աճում է: Որպես իրավունքի աղբյուր, «դոկտրինա» հասկացությանը կարող ենք հանդիպել աշխարհի բոլոր իրավական ընտանիքներում, որտեղ այն մի դեպքում հանդիսանում է երկրորդական, գաղափարական աղբյուր, իսկ մյուսներում՝ իրավունքի ձևական-իրավաբանական աղբյուր: Այդ է պատճառը, որ արդի իրավաբանական գրականությունում տվյալ երևույթն ուսումնասիրվում է երկու եղանակով՝ մի կողմից՝ որպես իրավունքի ինքնուրույն ձև և մյուս կողմից՝ որպես գաղափարախոսություն, որը ստանում է արտաքին ձևակերպումը ուրիշ իրավական երևույթների հաշվին՝ օրենքի և դատական նախադեպի¹⁷²: Ավելին, իրավական դոկտրինն ունի վառ արտահայտված առանձնահատկություններ, որոնք դարձնում են այն գլոբալ իրավունքի կարևոր բաղկացուցիչ մասը: Դրանց են պատկանում հեղինակավորությունը, պահանջվածությունը, ազդեցիկությունը, կարգավորիչ գործառույթը և այլն:

Հատկանշական է, որ «դոկտրինա» եզրույթը կիրառվում է բավականին լայն շրջանակի երևույթների համար: Այսպես, խորհրդային իրավագիտության ժամանակաշրջանում դոկտրինան դիտարկվում էր որպես ուսմունք, գիտական կամ փիլիսոփայական տեսություն, տեսական կամ քաղաքական սկզբունքները ղեկավարող համակարգ, իսկ ներկայիս վերոնշյալ հասկացությունը դիտարկվում է որպես համակարգված քաղաքական, գաղափարախոսական կամ փիլիսոփայական ուսմունք, հայացքների համակարգ, սկզբունքների ամբողջություն¹⁷³:

Ինչպես իրավացիորեն նշում է Ա.Ա. Ջուզոյան, «դոկտրինը» որոշակի համակարգված ուսմունք է (սովորաբար փիլիսոփայական, քաղաքական կամ գաղափարախոսական), կապակցված ըմբռնում, սկզբունքների և մոտեցումների ամբողջություն: Վերոնշյալ եզրույթն, ի տարբերություն «ուսմունք», «ըմբռնում»,

¹⁷¹Տե՛ս **Васильев А.А.** Правовая доктрина как источник права: вопросы теории и истории.М., Юрлитинформ. 2009.С. 7-10:

¹⁷²Մանրամասն տե՛ս **Богдановская И.Ю.** Прецедентное право. М., Юр.Норма. НИЦ ИНФРА-М, 2019.

¹⁷³Տե՛ս **Васильев А.А.** նշված աշխտ., էջ 17-20:

«տեսություն» եզրույթների, ավելի հաճախ հանդիպում է դոգմատիզմի և սքոլաստիկության երանգավորմամբ հայացքների բնութագրման ժամանակ¹⁷⁴:

Արդի իրավական հայեցակարգում իրավական դոկտրինը սահմանվում է որպես հեղինակային ուսմունք հայացքների, գաղափարների և սկզբունքների ամբողջություն, որն է բնագավառի վերաբերյալ տեսական դրույթների համակարգ, որն է նշանավոր գիտնականի կամ մտածողի հայացքների համակարգ: Իրավական դոկտրինը դիտարկվում է նաև որպես իրավունքի ինքնուրույն ձև, որն ակտիվորեն կիրառվում է դատական պրակտիկայում իրավունքի մեջ բացերը լրացնելու համար, ինչը, որպես կանոն, դրսևորվում է անցումային փուլում գտնվող իրավական համակարգերում, ինչպես նաև՝ խառը իրավական ընտանիքներում (աշխարհիկ-կրոնական)¹⁷⁵:

Իրավաբանական դոկտրինը հանդես է գալիս որպես իրավաբանական գիտության զարգացման յուրատեսակ աղբյուր, վերջինիս կատարելագործման աստիճանի ցուցանիշ, նրա իրական հնարավորությունների արտահայտություն: Սրա հետ մեկտեղ այն հիմք է ծառայում օրենսդրության զարգացման և կատարելագործման համար: Ավելին, դոկտրինը հանդիսանում է իրավական համակարգի ներդաշնակեցման, իրավական հակասությունների (կոլիզիաների) լուծման կարևոր միջոց, իրավաբանական նորմերի մեկնաբանման և իրավակիրառական գործունեության օբյեկտիվ հիմք:

Իրավական դոկտրինի նկատմամբ վերաբերմունքը տարբեր իրավական ընտանիքներում ունի իր առանձնահատկությունները, որոնք կապված են պետությունների պատմական զարգացման, իրավահասկացության արդի իրավունքի աղբյուրների և ձևերի դոսևորման հետ: Այսպես, ռոմանագերմանական իրավական ընտանիքում իրավական դոկտրինը ձևականորեն չի ճանաչվում որպես իրավունքի աղբյուր, այլ դիտվում է որպես իրավունքի ձևավորման վրա ազդեցություն գործող երկրորդական տարր: Ընդ որում, այն ազդում է ինչպես պետության օրենսդիր, այնպես էլ իրավակիրառ մարմնի վրա: Հայտնի է, որ դոկտրինը լայնորեն կիրառվում է իրավաստեղծ և օրինաստեղծ գործընթացներում: Իրավական դոկտրինը ակտիվորեն կիրառվում է

¹⁷⁴Տե՛ս **Зузуля А.А.** Доктрины в современном праве. Дисс... канд. юрид. наук., С.-П., 2006.С. 14-20.

¹⁷⁵Տե՛ս **Емелин М.Ю.** Правовая доктрина в системе источников общего права: на основе анализа правовой системы США. Дисс... канд. юрид. наук., Пенза. 2015. С. 19-20; **Любитенко Д.Ю.** Правовая доктрина в системе источников российского права // Вестник Волгоградской академии МВД России. Волгоград: Изд-во Волгогр. акад. МВД России. 2010. № 4 (15). С. 29-34:

վիճելի հարցերով բարձրագույն դատական մարմինների կողմից որոշումների ընդունման ժամանակ: Տարածված գործընթաց է համարվում դատաքննության ժամանակ մասնագետ-իրավաբանի կարծիքը ստանալը, իրավունքի գծով ընդհանուր տեսական աշխատություններում կամ հատուկ տրակտատներում արված արտահայտություններին, տարբեր դատավարական օրենսգրքերի մեկնաբանություններին, մենագրություններին և հոդվածներին դիմելը¹⁷⁶:

Անգլո-ամերիկյան իրավական ընտանիքի երկրներում հաճախ թերագնահատվում է իրավական դոկտրինայի դերը իրավունքի զարգացման և կիրառման գործընթացում: Այնուամենայնիվ, մինչ օրս անգլո-ամերիկյան իրավական ընտանիքի երկրների դատական ակտերի մեկնաբանության նպատակով լայնորեն կիրառվում են Հ. Բրեկտոնի, Ռ. Գլենվիլի աշխատությունները: Ավելին, կարևորվում է նաև դոկտրինի, որպես իրավունքի աղբյուրի տեղն ու դերը Մեծ Բրիտանիայի սահմանադրական իրավունքում, որի շնորհիվ հնարավորություն է ընձեռվում բացահայտելու անգլիական սահմանադրության ինչպես գրված, այնպես էլ չգրված նորմերի ընդհանրությունները և վերլուծությունները¹⁷⁷:

Հարկ է նշել որ ԱՄՆ իրավական համակարգում վերջին ժամանակաշրջանում աճում է իրավական դոկտրինի, որպես իրավունքի աղբյուրի, դերը դատական ակտերի մեկնաբանման գործում¹⁷⁸: Ինչ վերաբերում է խառը իրավական համակարգերով երկրներում իրավական դոկտրինայի կիրառմանը, ապա այստեղ դոկտրինը հաստատուն կերպով զբաղեցնում է ձևական-իրավաբանական աղբյուրի տեղը: Որպես կանոն, այս իրավական համակարգերի հիմնական սկզբնաղբյուր է հանդիսանում աստծո կամքը, որի հիման վրա ստեղծվում են այլ իրավաբանական սկզբնաղբյուրներ, որպիսիք են՝ կրոնական կազմակերպության իրավունքը (ներքին իրավունք) և պետության նորմերը, որոնք կարգավորում են նրանց գործունեությունը (արտաքին իրավունք):

¹⁷⁶Մանրամասն տե՛ս **Мадаев Е. О.** Доктрина в правовой системе Российской Федерации. Дис. ... канд. юрид. наук. М., 2012; **Пузиков Р.В.** Юридическая доктрина в сфере правового регулирования (проблемы теории и практики). Дис. ... канд. юрид. наук. Тамбов. 2003.

¹⁷⁷Տե՛ս **Огнева Ю.В.** Трактат "О законах и обычаях Английского королевства", обыкновенно называемый «Глэнвилл»: структура и система // Вестник Московского университета. Серия 11: Право. М., Изд-во Моск. ун-та. 2015. № 2. С. 95-105:

¹⁷⁸Տե՛ս **Backer J.H.** An Intorduction to English History. 4rd ed., Butherworth, 2000; **Kiraify A.K.R.** The English Legal Sustem, 7th ed., London. Sweet and Maxwell.1984

Հարկ է նշել, որ Թորան և Թալմուդը (հատկապես իրավական մասը՝ Գալախան) հրեական (հուդայական) իրավունքի հիմնական աղբյուրներն են: Թորան հրեաների սրբազան, հավերժական և անփոփոխ «սահմանադրությունն» է, որը շարադրված է ոտանավորների ձևով: Հրեական իրավունքը ձևավորվել է Թորայի մեկնությունների արդյունքի հիման վրա: Պահպանելով Թորայի ոգին մեկնիչները Թալմուդը և նրա իրավական մասը Գալախան դարձրել են ճկուն զարգացման իրավական համակարգ¹⁷⁹: Իր հերթին, կանոնական իրավունքի մեջ սկզբնաղբյուրներին են վերաբերվում գրված եկեղեցական օրենքը, սովորույթը և դատական նախադեպը, գոյություն ունեցող օրենքին նմանությունը, հեղինակավոր իրավագետների կարծիքները (դոկտրինաները): Մահմեդական իրավունքում սկզբնաղբյուրներին են վերաբերվում Ղուրանի իրավական պատվիրաններն ու Սուննայի ավանդությունները՝ հադիսները և նորմերը, որոնք ձևավորվել են առավել հեղինակավոր իրավագետների մահմեդական-իրավական դոկտրինի հիման վրա միաձայն կարծիքով (իջմա) և համանմանության եզրակացությամբ (կիյաս): Ընդ որում, վերոնշյալ սկզբնաղբյուրները բնութագրվում են անփոփոխությամբ և բարձրագույն իրավաբանական ուժով, որոնք հարմարեցվում են զարգացող հասարակական հարաբերություններին դոկտրինի շնորհիվ:

Ակնհայտ է, որ իրավական դոկտրինը առկա է բոլոր խառը իրավական համակարգերում: Վերջինիս կարգավիճակի համար նպատակահարմար է դիտարկել նրա առանձնահատկությունները հրեական, կանոնիկական և մահմեդական իրավական համակարգերում:

Ինչպես իրավացիորեն նշում է Ջ. Ֆալկը, հրեական իրավունքի զարգացման վաղ փուլերում դոկտրինը հանդես էր գալիս որպես իրավունքի ձևական սկզբնաղբյուր՝ հիմնված գիտնական աստվածաբանների աշխատությունների վրա, որոնք մասամբ իրականացրել են օրենսդիրների և իրավակիրառական գործունեություն: Նորմատիվ նյութի կազմավորման և կուտակման չափով դոկտրինի դերը, որպես իրավունքի ձևական սկզբնաղբյուրի, սկսեց խստորեն նվազել, քանի որ նրա տեղը զբաղեցրեցին իրավաբանների և դատավորների մեկնաբանությունները: Սակայն մինչև այժմ իրավական դոկտրինը պահպանում է հրեական կրոնական իրավունքի գաղափարական

¹⁷⁹Սաֆարյան Տ.Գ., նշված աշխտ. էջ 94:

սկզբնաղբյուրի կարգավիճակը և խորայելական աշխարհիկ իրավունքի դոկտրինաների հետ միասին շարունակում է կարևոր դեր խաղալ հասարակական հարաբերությունների կարգավորման մեջ¹⁸⁰:

Կանոնական իրավունքում իրավական դոկտրինը հանդիսանում է օժանդակ իրավաբանական աղբյուր, որտեղ հիմնարար դեր է հատկացվում հին հռոմեացի իրավագետների հեղինակավոր կարծիքներին և աշխատություններին, որոնք ընդգրկվեցին եկեղեցական-օրենսդրական ժողովածուներում¹⁸¹:

Մահմեդական իրավունքում իրավական դոկտրինը հանդիսանում է իրավունքի հիմնական ձևական-իրավաբանական սկզբնաղբյուրներից մեկը: Մահմեդական իրավունքի մեջ դոկտրինի առանձնահատկությունը նրանում է, որ այն ամենից առաջ հիմնվում է իջթիհադի սկզբունքի վրա (դատավորների ազատ հայեցողության վրա), որի հիման վրա դատավորները իրավաբանական բնութագրեր են տվել Ղուրանի և Սուննիների պատվիրաններին: Դիտարկելով այս առանձնահատկությունը՝ իրավագետները նշում են, որ մահմեդական իրավունքը զարգանում է իրավաբանների արտահայտած դիրքորոշման հիման վրա: Կատարված ուսումնասիրությունները փաստում են, որ իրավական համակարգերի ինտեգրման և գլոբալացման պայմաններում արդի մահմեդական իրավունքի մեջ դոկտրինի դերը, որպես իրավունքի ձևական սկզբնաղբյուրի, նվազում է՝ իր տեղը զիջելով օրենքին: Այսպես, որոշ արդի իսլամական պետությունների սահմանադրություններում ամրագրված է, որ մահմեդական իրավունքը հանդիսանում է օրենսդրության գլխավոր սկզբնաղբյուրը¹⁸²:

Միջազգային իրավունքի մեջ իրավաբանական դոկտրինի դերը բավականին յուրօրինակ է, քանի որ միջազգային իրավունքն ինքնին հանդիսանում է ուսմունքային: Իզուր չէ, որ Հ. Հրոցիոսի նշանավոր «Պատերազմի և խաղաղության իրավունքի մասին» աշխատությունը, որի մեջ նա առաջին անգամ շարադրեց այս իրավական համակարգի կուրսը, հեղինակին բերեց միջազգային իրավունքի հոր փառք: Դեռևս Ֆ.Ֆ. Մարտենեն

¹⁸⁰Տե՛ս **Falk Z.** Introduction to Jewish Jurisprudence during the second temple period (hebr.)// Journal for the Study of Judaism. Vol. li. Mif'al ha-shikhpul. University of tel-aviv. 1971. P. 159-388.

¹⁸¹Առանձնահատուկ հեղինակությամբ ուղղափառ եկեղեցական իրավունքում օժտված են Անտիոքի պատրիարք Թեոդորոս Վալսամոնի աշխատությունները:

¹⁸²Մանրամասն տե՛ս Конституция Исламской Республики Иран(прин.15.11. 1979 г.), http://www.cis-emo.net/sites/default/files/imagesimce/constitution_of_iran.pdf./05.10.2018/; КОНСТИТУЦИЯ ИСЛАМСКОЙ РЕСПУБЛИКИ ПАКИСТАН (12.04.1973 г.), <https://www.worldislamlaw.ru/?p=245/>./05.10.2018/:

գրել է, որ «միջազգային իրավունքի պատմությունը և գիտությունը միջոց են ծառայում պարզաբանելու գոյություն ունեցող տրակտատների և միջազգային սովորույթների ճիշտ իմաստը, նրանք հնարավորություն են տալիս մաքուր տեսքով ներկայացնելու ժողովուրդների իրավագիտակցությունը, որը արտահայտվում է սովորության նորմերում և տրակտատներում, և այդ պատճառով էլ անվիճելիորեն պատկանում է միջազգային իրավունքի սկզբնաղբյուրների թվին»:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ նախկինում իրավական դոկտրինը, որպես իրավունքի սկզբնաղբյուր, ավելի նշանակալի դեր է ունեցել, քան ունի ներկայումս, քանի որ ինտեգրացիոն գործընթացների ճնշման ներքո սկզբնաղբյուրների իրավունքի նորմերի միասնականացումը ներգործություն է ունեցել նաև տվյալ իրավական զանգվածի վրա: Տարբեր երկրների միջազգային իրավունքի հարցերով հեղինակավոր մասնագետների կարծիքը այսօր հանդիսանում է միջազգային իրավունքի այս կամ այն նորմերի և նրանց մեկնաբանության առկայություն կամ բացակայություն սահմանելու միջոցներից մեկը: Բայց գիտնականները ևս նկատում են, որ դոկտրինի դերը, որպես միջազգային իրավունքի նորմերի սահմանման միջոցի և նրանց մեկնաբանության, նվազման միտում ունի:

Հարկ է նշել, որ ՄԱԿ-ի Միջազգային քրեական դատարանն իր որոշումների մեջ երբեք չի հիմնվում միջազգային իրավունքի դոկտրինի վրա, սակայն վերջինս անուղղակի ազդեցություն ունի դատարանի որոշումների վրա: Այդ ազդեցությունը կարող է դրսևորվել դատարանի գործունեության որոշակի օրինաչափությունների բացահայտման, առաջադիմական սկզբունքների և նորմերի սատարման, ինչպես նաև՝ քաղաքակրթության զարգացումն արգելակող հնացած նորմերի բացասական ազդեցության ներկայացման մեջ:

Նորմատիվ-իրավական պայմանագիր: Իրավունքի հատուկ ձևական-իրավական աղբյուր է համարվում նորմատիվ բովանդակությամբ պայմանագիրը: Տվյալ իրավունքի աղբյուրի ուսումնասիրումն իրականացվում էր հիմնականում արտասահմանյան իրավագիտության մեջ, չնայած այնտեղ էլ դրան անբավարար ուշադրություն էր հատկացվում: ԽՍՀՄ-ում, որտեղ գերիշխում էր իմպերատիվ կարգավորումը, պայմանագրերը օժտված էին օժանդակ դերով, և գործնականում ո՛չ կիրառվում էին,

ո՛չ էլ հետազոտվում: Իրավաբանական գրականությունում բազմիցս նշվել է, որ պայմանագրերը մի շարք դեպքերում ոչ միայն չեն ստեղծում որոշակի իրավահարաբերություններ, այլ նաև ստեղծում են իրավունքի նորմեր, այսինքն՝ հանդես են գալիս որպես իրավունքի աղբյուրներ: Տվյալ դեպքում իրավագետները շեշտադրում են նորմատիվ պայմանագրերի էությունը, որոնք, ի հակադրություն անհատականների, որոնք չեն ստեղծում իրավական նորմեր, հանդես են գալիս որպես իրավունքի աղբյուրներ¹⁸³:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ 21-րդ դարի սկզբին աճել էր իրավագետների ուշադրությունը նորմատիվ-իրավական պայմանագրի, որպես ձևական-իրավական աղբյուրի, նկատմամբ, ինչը բացատրվում էր պայմանագրային հարաբերությունների ոլորտի ընդլայնմամբ: Մեծացել է տվյալ երևույթի, դրա կառուցվածքի, դասակարգումների ուսումնասիրությունների թիվը:

Արդի իրավաբանական գրականությունում կարելի է հանդիպել պայմանագրի հետևյալ բնորոշումը. պայմանագիրն իրավական ակտ է, որը հաստատում է վարքագծի կանոններ, իրավական նորմեր, պարտադիր է մեծ թվով և ձևականորեն անորոշ անձանց շրջանակի համար, նախատեսված է ոչ միանգամյա կիրառման համար, գործում է անկախ այն բանից, թե արդյոք սկսվել կամ դադարել են նրանց կողմից նախատեսված կոնկրետ իրավահարաբերությունները¹⁸⁴:

Արդի իրավագիտությունում նորմատիվ-իրավական պայմանագրի նկատմամբ մեծ ուշադրությունը պայմանավորված է օբյեկտիվ պատճառներով: Գլխավոր պատճառներից մեկն է հանդիսանում գլոբալացման գործընթացի ընդլայնումը, որի դեպքում մեծանում է նորմատիվ պայմանագրի նշանակությունը: Այդ երևույթը պայմանավորված է, առաջին հերթին, նրանով, որ սոցիալական գլոբալ համակարգի մեջ սկսում են ավելի մեծ դեր խաղալ ֆիզիկական անձինք և քաղաքացիական

¹⁸³Տե՛ս **Гурова Т. В.** Актуальные проблемы теории и источников права. Дис. ... канд. юрид. наук. Самара, 2000.С.60-64. **Петров К.В.** Источники и формы права в советском правоведении // Ленинградский юридический журнал.С.-Пб., 2009. № 2 (16). С. 23-33.

¹⁸⁴Տե՛ս **Баумов С.С.** Индивидуально-правовой договор как регулятор общественных отношений // Юридические записки молодых ученых и аспирантов ЯрГУ. Сборник статей. Ярославль. Изд-во ЯрГУ, 2006. Вып. 6. С. 11-13; **Степаненко В.В.** Договор как регулятор общественных отношений // Современные проблемы теории и практики права глазами студентов. Материалы III Всероссийской молодежной научно-практической конференции 26-28 марта 2009 г., Улан-Удэ. Изд-во ВСГТУ. 2009. С. 66-71.

հասարակության ինստիտուտները: Դրանց ճանաչումը, որպես իրավունքի սուբյեկտների, բնորոշ է ազատական տնտեսական հասարակություններին, որոնցում գերակայում է անհատականությունը և որոնց համար պայմանագրային հարաբերությունները համարվում են գերակշռող, քանի որ թույլ են տալիս իրավաստեղծ սուբյեկտներին ինքնուրույն սահմանել նորմեր՝ համաձայնեցնելով իրենց կամքի արտահայտման հետ: Դրանց հակառակ ավանդական հասարակություններում և ժամանակակից բռնապետություններում գերիշխում են կանոնադրական հարաբերությունները, ինչն, իհարկե, ազդում է իրավունքի աղբյուրների զարգացման վրա: Նշված հասարակություններում գերիշխում են քաղաքական էլիտաների կողմից սահմանված և իրենց շահերին ծառայող օրենքները, նորմատիվ-իրավական ակտերը:

Նորմատիվ պայմանագրի նկատմամբ մեծ ուշադրության երկրորդ պատճառ է համարվում պետության դերի փոփոխությունը ժամանակակից գլոբալ սոցիալական համակարգի մեջ¹⁸⁵:

Այստեղ կարող է հարց առաջանալ երկու ձևական-իրավական աղբյուրների՝ օրենքի և նորմատիվ-իրավական պայմանագրի հարաբերակցության վերաբերյալ, ինչի մասով իրավաբանական գրականությունում գոյություն ունի երեք մոտեցում:

Առաջին հայեցակարգի համաձայն պայմանագիրը ստեղծող կողմերի կամքը գիտակցաբար ուղղված է միայն որոշակի տնտեսական արդյունքի ակնկալման կողմը: Ընդ որում, պայմանագրի հետևանքներն ընկալվում են որպես դրա իրականացման համար այնպիսի միջոցներ, որոնց մասին կողմերը չեն կարող ունենալ և հաճախ չունեն հստակ պատկերացում: Եթե երկրորդ հայեցակարգը հիմնված է օրենքի և պայմանագրի արդյունավետության առաջնահերթության վրա, ապա երրորդ տեսակետի կողմնակիցները կարծում են, որ պայմանագիրը, հանդիսանում է այն կնքող կողմերի կամքի ազատության դրսևորում, իսկ օրենքը միայն իրականացնում կամ սահմանափակում է նրանց կամքի դրսևորումը¹⁸⁶:

Հատկանշական է, որ առաջին հայեցակարգը գերիշխում էր 20-րդ դարի սկզբին, քանի որ իրավական պրակտիկայում պայմանագիրը լայնորեն չէր կիրառվում և դրա

¹⁸⁵Մանրամասն տե՛ս **Мясин А.А.** Нормативно-правовой договор как источник права. Дис. ... канд. юрид. наук. Саратов, 2003.

¹⁸⁶Մանրամասն տե՛ս **Мясин А.А.** նշված աշխտ., էջ 38-42; **Нечитайло М.А.** Нормативный договор как источник права. Дис. ... канд. юрид. наук. М., 2002.С. 73-76;

կիրառման ոլորտը միայն տնտեսությունն էր: Երկրորդ հայեցակարգը կիրառվեց, երբ սոցիալական համակարգի մեջ պետության գերիշխող դերը սկսեց սահմանափակվել քաղաքական ռեժիմների ժողովրդավարացման ազդեցության տակ: Ընդ որում, առաջանում են իրավահարաբերությունների նոր սուբյեկտներ, ոչ լրիվ հավասար, սակայն սեփական կամք և շահեր ունեցող (քաղաքացիական հասարակություն), ինչը անհրաժեշտություն է ստեղծում նորմատիվ պայմանագրերը հասարակական ոլորտում նրանց հետ հարաբերությունները հարթելու մեջ օգտագործելու համար: Իր հերթին, երրորդ հայեցակարգը լայն տարածում կստանա այն դեպքում, երբ պետությունը կկատարի գիշերային պահակի դեր, լիարժեք ստանձնելով մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության և ապահովման դերը: Պայմանագրային հարաբերությունների ընդլայնման և բարդացման գործընթացը շարունակվում է: Ընդ որում, ինչպես նշում է Մ.Ն. Մարչենկոն, տվյալ գործընթացն, ի տարբերություն հասարակության զարգացման նախորդ փուլերի, տարածվում է առանց բացառության հասարակության և պետության բոլոր ոլորտների վրա¹⁸⁷:

Ներկայումս շարունակում է գերիշխել երկրորդ տեսությունը: Դեռևս պետության կամքը գերիշխում է սոցիալական համակարգի մեջ, իսկ դա նշանակում է, որ նորմատիվ պայմանագրերը համարվում են օրենքներից և օրենքների ենթակայության տակ գտնվող նորմատիվ-իրավական ակտերից կախված: Բայց, իհարկե, պետությունների և դրանց իրավական համակարգերի զարգացման տարբեր մակարդակների պատճառով նորմատիվ պայմանագրի տեղը և դերը տարբեր է: Քանի որ նորմատիվ պայմանագիրը համարվում է ժողովրդավարությունից և ժողովրդավարական ռեժիմից կախված, միայն ժողովրդավարության դեպքում կարող են ստեղծվել պայմանագրային նորմատիվ ակտեր, երբ համաձայնագրի մասնակիցները իրավահավասար են: Հետևաբար, նորմատիվ պայմանագրերի օգտագործման և ստեղծման փորձի առկայությունը տեղ ունի հարուստ ժողովրդավարական ավանդույթներ ունեցող երկրներում: Մասնավորապես, դրանք բնութագրական են ինչպես անգլոամերիկյան, այնպես էլ ռոմանագերմանական իրավական կառուցվածքով երկրներում և գրեթե բացակայում են խառը իրավական

¹⁸⁷Տե՛ս **Марченко М.Н.** Проблемы теории государства и права.М., Проспект. 2015. С. 13-14.

համակարգերում: Տվյալ ձևական-իրավական աղբյուրը լայն կիրառություն է գտել միջազգային-իրավական համակարգում:

Որպես այս տեսակետը հաստատող օրինակ կարող է հանդիսանալ նորմատիվ-իրավական պայմանագրի կիրառումն այն երկրներում, որոնք դասվում են անգլո-ամերիկյան իրավական ընտանիքին: Այստեղ պայմանագիրը համարվում է հասարակական հարաբերությունների կարևորագույն և հնագույն կարգավորիչներից մեկը: Տվյալ հանգամանքը պայմանավորված է, նախ և առաջ, այն ազդեցությամբ, որը գործում է անգլիական իրավունքի վրա հռոմեական իրավունքը: Չնայած որոշ գիտնական-իրավաբաններ այդպիսի ազդեցությունը մերժում են: Սակայն մենք համոզված ենք, որ Անգլիայի ընդհանուր իրավունքը առաջացել է հռոմեական իրավունքի անմիջական ազդեցության ներքո: Խնդիրը կայանում է նրանում, որ նորմաները, գրավելով Անգլիան, ստեղծեցին խիստ կենտրոնացված դատարանների համակարգ, որում դատավորներ, իհարկե, դարձան իրենք՝ նորմաները՝ դաստիարակված հռոմեական իրավունքի ոգով: Ընդ որում, բոլոր դատավորները ենթարկվում էին թագավորին, իսկ դա նշանակում է, որ իրականացնում էին իրենց գործունեությունը խիստ որոշակի շրջանակներում, միատեսակ ընթացակարգով և անգլիական թագավորության ողջ տարածքում: Մեկ այլ հարց է այն, որ հետագայում նրանք ստիպված էին հռոմեական նորմերը հարմարեցնել տեղի սովորությանին իրավունքին իրավական կարգավորման առավել մեծ արդյունավետության համար: Միևնույն ժամանակ, չի կարելի պնդել, որ անգլիացիների սովորությանին իրավունքը ենթակա էր հռոմեական իրավունքի ազդեցությանը դեռևս հռոմեացիների բազմադարյա գերիշխանության շրջանում, ավելի շուտ հակառակն էր: Հռոմեական շրջափակումը չէր կարող «չթողնել որոշակի կարևոր հետք այն ազգերի իրավունքի վրա, ովքեր բնակեցրել էին ժամանակակից Անգլիայի տարածքը: Անգլիական իրավունքում պայմանագրի իրավունքներ հաստատող փաստերը կարող են կայանալ ոչ միայն գրավոր, այլև բանավոր խոստում տալու եղանակով: Արդի անգլոամերիկյան իրավական ընտանիքի մեջ նորմատիվ բովանդակության պայմանագիրը չի խաղում ինքնուրույն դեր, քանի որ «դատարանի կողմից ցանկացած իրավաբանորեն կայացած

և ընդունված պայմանագիրը առաջանում և իրագործվում է ոչ այլ կերպ, քան օրենքների հիման վրա և օրենքների շրջանակներում¹⁸⁸:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ օրենքը հաստատում և ամրագրում է պայմանագրերի առաջացման կարգը, դրանց կիրառման հիմնական ոլորտները, հիմնական մեթոդները, դրանց իրականացման սահմանները, կանխորոշում է փոխհարաբերությունների իրավական բնույթը և առանձնահատկությունները, ամրագրում է սահմանները, որոնց շրջանակներում կարող է իրականացվել պայմանագրի ազատությունը, կարգավորում է պայմանագրի տեսակները և այլ հարցեր: Այսպիսով, նորմատիվ պայմանագիրը համարվում է անգլո-ամերիկական իրավական ընտանիքի ձևական-իրավական հնագույն աղբյուր: Ընդ որում, չնայած դրա տեղը և դերը մեծանում է, այնուամենայնիվ, ներկայումս այն դեռևս չի համարվում երկրորդային ձևական-իրավական աղբյուր անգլո-ամերիկական պոզիտիվ իրավունքի համակարգում:

Նորմատիվ պայմանագրի՝ որպես ձևական-իրավական աղբյուրի տարածման վրա զգալի ազդեցություն է գործում միջազգային իրավունքը, որի աղբյուրների համակարգում այն զբաղեցնում է կենտրոնական տեղ: Դա պայմանավորված է, նախ և առաջ, այն հանգամանքով, որ արագ փոփոխվող աշխարհում միջազգային պայմանագիրը համարվում է կոնկրետացման, զարգացման, փոփոխման կամ միջազգային իրավունքի նոր նորմերի ստեղծման հարմար միջոց: Այն հանդիսանում է հստակ արտահայտված համաձայնություն պետությունների միջև, ինչը կարևոր է միջազգային իրավունքի այս կամ այն նորմի առկայության կամ բովանդակության պարզաբանման համար: Ընդ որում, միջազգային իրավունքի այլ հիմնական ձևական-իրավական աղբյուրի՝ միջազգային սովորույթի համեմատությամբ այն թույլ է տալիս շուտափույթ արձագանքել արդի միջազգային հանրությունում ընթացող իրադարձություններին և դրա ստեղծման համար չի պահանջվում երկարատև ժամանակ, այն հեշտությամբ է փոփոխվում, լրացվում և օգտագործվում:

Միջազգային նորմատիվ պայմանագրի գերակշռումը միջազգային իրավունքի աղբյուրների մեջ ևս համեմատաբար նոր երևույթ է, քանի որ մինչև 20-րդ դարի կեսերը

¹⁸⁸Տե՛ս **Марченко М.Н.** Проблемы теории государства и права.М., Проспект. 2015. С. 22-27.

միջազգային նորմատիվ համակարգում գերիշխում էր միջազգային սովորույթը: Սակայն, 20-րդ դարի երկրորդ կեսից սկսեց գերակշռել պայմանագիրը:

Միջազգային իրավունքի նորմատիվ պայմանագրի դերը իրավական տարածության գլոբալացման գործընթացում գնալով աճում է, ինչի շնորհիվ կարգավորվում է իրավական համակարգերի փոխգործակցությունը, ինչպես նաև սահմանազատվում են դրանց գործունեության ոլորտները, ինչը հանգեցնում է ազգային-իրավական համակարգերի մերձեցմանը, ներդաշնակեցմանն ու միասնականացմանը: Դրա վառ օրինակ է հանդիսանում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, որտեղ մատնանշված են մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության և ապահովման համընդհանուր չափորոշիչները և որոնց հիման վրա փոփոխության են ենթարկվել հռչակագրի անդամ պետությունների ներպետական իրավական ակտերը: Այնուամենայնիվ, դեռևս ձևավորված չէ համընդհանուր նորմ ազգային օրենքների և միջազգային պայմանագրերի հարաբերակցության վերաբերյալ, քանի որ յուրաքանչյուր պետություն տվյալ խնդիրը լուծում է ինքնուրույն: Հայտնի է, որ պետության և իրավունքի տեսությունում ներկայացված են ներպետական օրենքների և միջազգային պայմանագրերի իրավական ուժի հարաբերակցության երեք հիմնական մոտեցումներ, որոնք ամրագրում են ստացել պետությունների սահմանադրությունների և օրենքների մեջ. Դրան ենք. 1) միջազգային պայմանագրի գերակայության հաստատում ներպետական օրենքի նկատմամբ (Ֆրանսիա), 2) ներպետական օրենքի գերակայության հաստատում միջազգային պայմանագրի նկատմամբ (Իռլանդիա), 3) օրենքի և պայմանագրի հավասար իրավական ուժի ճանաչում (ԱՄՆ)¹⁸⁹: Այնուամենայնիվ, գործնականում պայմանագրի և ներպետական օրենքի կոլիզիայի դեպքում գործում է օրենքը: Տվյալ հանգամանքը պայմանավորված է պետության ինքնիշխանության պահպանման խնդրով, և այդ պատճառով միջազգային պայմանագրերը կիրառվում են

¹⁸⁹ Տե՛ս **Акшалова Р.Д.** Внутригосударственные и международные меры по обеспечению международных договоров // Современное международное право и научно-технологический прогресс: материалы Международной научно-практической конференции. Москва, 8 декабря 2011 г., М., РУДН. 2012. С. 235-238; **Осмнин Б.И.** Разрешение коллизий между внутригосударственным правом и международными договорами // Журнал зарубежного законодательства и сравнительного правоведения. М., Nota Bene. 2013. № 1 (38). С. 114-123:

միայն պաշտոնապես ներպետական վավերացումից հետո, ինչը հաղորդում է միջազգային պայմանագրին իրավական ուժ այն վավերացրած պետության տարածքում:

2.2. Իրավաբանական գործունեության գլոբալացման

առանձնահատկությունները

Իրավունքի գլոբալացման գործընթացներում իր ուրույն տեղն է զբաղեցնում «իրավաբանական գործունեություն» հասկացությանը, որն իրավաբանական գրականությունում ակտիվորեն սկսել է կիրառվել միայն 21-րդ դարի սկզբին: Իրավաբանական գործունեությունը հանդիսանում է պետության և իրավունքի տեսության և պատմության այն սակավ ուսումնասիրված ոլորտներից, որոնց շուրջ տարիներ շարունակ ծավալվել է իրավաբանական խոսույթը¹⁹⁰: Ընդհանուր առմամբ, իրավաբանական գործունեությունը բնութագրվում է որպես իրավաբանների կամային գործունեություն, հիմնված իրավագիտակցության և իրավական մտածողության վրա, օժտված ինչպես բանական, այնպես էլ բարոյական հատկանիշներով¹⁹¹: Իրավաբանական գրականությունում գերիշխում է այն տեսակետը, որ «իրավաբանական գործունեությունը» հանդիսանում է ողջ իրավական համակարգի հիմնաքարը, քանի որ իրավական մտածելակերպը թույլ է տալիս կառուցել տրամաբանական շղթա՝ իրավական տեղեկատվության ընտրություն, վերլուծություն և գնահատում, կոնկրետ իրավիճակներում առաջացած խնդիրների առավելագույն արագ և ճիշտ լուծման եղանակները: Իրավագետներից շատերը ներկայացնում են «իրավաբանական գործունեությունը» որպես եռիմաստ հսկացություն: Նախ և առաջ «իրավաբանական գործունեությունը» իրավագիտակցության կատարելագործման գործընթացն է, որի արդյունքում անձը ձեռք է բերում բավարար պատկերացում իրավունքի վերաբերյալ: Երկրորդ՝ տվյալ գործընթացը հանդիսանում է

¹⁹⁰Տե՛ս Проблемы теории государства и права/Под ред. **А. В. Малько**. М., Юрлитинформ.2012. С.315-329:

¹⁹¹Տե՛ս **Карташов В.Н.** Юридическая деятельность: понятие, структура, ценность. Саратов. Изд-во Саратов. ун-та. 1989. С. 30-31.

իրավաբանական (այդ թվում դատական) պրակտիկայի համալիր՝ ուղղված իրավաստեղծ և օրինաստեղծ գործունեությունը¹⁹²:

Կատարված ուսումնասիրության արդյունքում եկել ենք այն համոզման, որ իրավաբանական գրականությունում՝ իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայում իրավաբանական գործունեությունը նույնացվում է իրավաբանական պրակտիկայի հետ: Ավելին, իրավաբանական գործունեությունը ներկայանում է որպես իրավունքով միջնորդավորված և որոշակի մեթոդներով կառուցվող մասնագիտական, պետական-իշխանական գործունեություն՝ ուղղված իրավասու մարմինների կողմից հասարակության ընդհանուր սոցիալ-իրական շահերի պաշտպանությանն ու պահանջմունքների բավարարմանն ուղղված որոշումների կայացմանը¹⁹³: Այսինքն՝ վերոնշյալ գործունեության իրականացման առանձնահատկությունները սահմանվում են այն իրականացնող սուբյեկտների շրջանակով, որոնք առաջնորդվում են համապատասխան օրենքներով և էթիկայի կանոնագրքերով: Իր հերթին, **իրավաբանական գործունեության սուբյեկտն են** հանդիսանում այն անմիջականորեն իրականացնող անձինք, որոնց համար շատ դեպքերում այդ գործունեության իրականացումը հանդիսանում է անմիջական պարտականություն: *Այդ պատճառով վերջին ժամանակաշրջանում իրավունքի ոլորտում մեծ ուշադրության են արժանանում բարոյական նորմերը, որոնցով պետք է առաջնորդվեն դատավորները, դատախազներն ու փաստաբանները*: Օրինակ՝ ՄԱԿ-ի «Դատավորի վարքագծի բանգալորյան սկզբունքներում» (այսուհետ՝ Բանգալորյան սկզբունքներ) ամրագրված է, որ մարդու իրավունքների իրականացումն անմիջական կախվածության մեջ է գտնվում արդար դատաքննության և պատշաճ արդարադատության իրականացումից¹⁹⁴: Ուստի, ընդգծվում է բանիմաց, անկախ, նաև՝ անկողմնակալ դատական համակարգ ունենալու կարևորությունը: Բանգալորյան սկզբունքները

¹⁹²Տե՛ս **Вершинин А.П.** Соотношение категорий «правовое поведение» и «правовая деятельность» // Юридическая деятельность: сущность, структура, виды. Сборник научных трудов. Ярославль: Изд-во Яросл. ун-та. 1989. С. 32-39; **Назаров С. Н.** Теоретико-правовые основы юридической деятельности надзорно-контрольных органов в условиях формирования правового государства. Дисс. ... канд. юрид. наук. Ростов-на-Дону. 2000. С.14-17:

¹⁹³Տե՛ս **Шагиев Б.В.** Юридическая деятельность в современном российском обществе (теоретико-правовой аспект). Дисс. ... канд. юрид. наук. М., 2003.С.13-22.

¹⁹⁴Մանրամասն տե՛ս Бангалорские принципы поведения судей. ООН (прин.26.11.2002), http://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/bangalore_principles.shtml20.02.2017/:

ներառում են նաև դատավորի էթիկական վարքագծի չափորոշիչներ և դատական իշխանության կայացման կարևորագույն սկզբունքներն ու դրանց իրացման ուղիները: Այսպես, դատական իշխանության արդյունավետ իրականացման սկզբունքների թվին են դասվում՝ դատավորի անկախությունը, անաչառությունը, անկողմնակալությունը, անշահախնդրությունը, հավասարությունը, բանիմացությունն ու շրջահայեցությունը:

Հատկանշական է, որ ԵԴԽԽ Թիվ (94) 12 Հանձնարարականը սահմանում է, որ դատավորների մասնագիտական առաջխաղացմանը վերաբերող բոլոր որոշումները պետք է հիմնված լինեն օբյեկտիվ չափանիշների վրա, և դատավորների ընտրությունն ու առաջխաղացումը պետք է հիմնված լինեն արժանիքների վրա՝ հաշվի առնելով որակավորումը, ազնվությունը, կարողությունները և աշխատանքի արդյունավետությունը¹⁹⁵: Ավելին, ԵԴԽԽ-ի Թիվ 1 Կարծիքն ի լրումն հանձնարարում է. «Անդամ պետությունների այն մարմինները, որոնք պատասխանատու են նշանակումները և առաջխաղացումները կատարելու և այդ կապակցությամբ խորհրդատվություն տալու համար, պետք է ներկայացնեն, հրապարակեն և կենսագործեն օբյեկտիվ չափանիշներ՝ նպատակ ունենալով ապահովելու դատավորների ընտրությունը և առաջխաղացումը «հիմնված արժանիքների վրա՝ հաշվի առնելով որակավորումը, ազնվությունը, կարողությունները և աշխատանքի արդյունավետությունը»¹⁹⁶: Միևնույն ժամանակ, փաստաթուղթը հիմնավորում է, որ արժանիքը չի նշանակում զուտ իրավական գիտելիքներ, վերլուծական հմտություններ կամ ակադեմիական ունակություններ: Այն պետք է վերաբերի բնավորությանը, որոշումներ կայացնելուն, հասանելի լինելուն, հաղորդակցության հմտություններին, դատական ակտեր կայացնելու արդյունավետությանը և այլն: Տվյալ պարագայում կարևոր է, որ դատավորն օժտված լինի արդարության, անաչառության զգացումով: Այնուամենայնիվ, գործնականում կարող է դժվարություն առաջանալ վերոնշյալ չափանիշների գնահատման գործընթացում, քանի որ կիրառման համար անհրաժեշտ են համապատասխան փորձն ու թափանցիկ գործունեությունը: Վենետիկի հանձնաժողովի զեկույցում նաև նշվում է. «Արժանիքը լինելով առաջնային չափորոշիչ,

¹⁹⁵Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով, դատական համակարգի անկախության վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի զեկույց. ընդունվել է Վենետիկի հանձնաժողովի կողմից 82-րդ լիագումար նիստում (Վենետիկ, 12-13-ը մարտի 2010թ.).Մաս 1, Վենետիկ, 2010, էջ 4:

¹⁹⁶Տե՛ս նույն տեղում:

դատական համակարգում բազմազանությունը հնարավորություն կստեղծի հանրությանը վստահելու և ընդունելու դատական համակարգը որպես ամբողջություն: Քանի որ դատական համակարգը ներկայացուցչական չէ, այն պետք է բաց և հասանելի լինի հասարակության բոլոր ոլորտների որակավորված անձանց համար: Սկզբունքն, ըստ որի դատավորների նշանակմանը և մասնագիտական առաջխաղացմանը վերաբերող բոլոր որոշումները պետք է հիմնվեն արժանիքների վրա, օրենքի շրջանակներում օբյեկտիվ չափանիշների կիրառմամբ, անվիճելի է»¹⁹⁷:

Ինչ վերաբերում է ներպետական օրենսդրությանը, ապա պետք է փաստել, որ 2015թ. Սահմանադրական բարեփոփոխումներն ու ընդունված «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ Սահմանադրական օրենքը (այսուհետ՝ Դատական օրենսգիրք) ամրագրեցին վերոնշյալ փաստաթղթերում, ինչպես նաև «Դատավորների կարգավիճակի մասին» Եվրոպական Խարտիայում ամրագրված հիմնարար դրույթները, որոնք անմիջականորեն կապված են դատական իշխանության անկախության, դատավորի կողմից իրավաբանական գործունեության իրականացման երաշխիքների հետ: Այսպես՝ վերոնշյալ օրենքի «Դատարանների անկախություն» վերտառությամբ 7-րդ հոդվածի համաձայն, արդարադատություն և որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ, ինչպես նաև դատավորի կարգավիճակից բխող իրավունքներ իրականացնելիս **դատավորն անկախ է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, պաշտոնատար, ֆիզիկական և իրավաբանական անձանցից և հաշվետու չէ որևէ մեկի, այդ թվում՝ պարտավոր չէ որևէ բացառություն տալ (ընդգծումը մերն է՝ Ա. Տ.-Բ.)**¹⁹⁸: Ավելին, դատարանը գործը քննում և լուծում է Սահմանադրությանը և օրենքին համապատասխան, գործի հանգամանքները գնահատելով իր ներքին համոզմամբ, իսկ

¹⁹⁷ Ժողովրդավարություն իրավունքի միջոցով, դատական համակարգի անկախության վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի զեկույց. ընդունվել է Վենետիկի հանձնաժողովի կողմից 82-րդ լիազումար նիստում (Վենետիկ, 12-13-ը մարտի 2010թ.). Մաս 1, Վենետիկ, 2010, էջ 6-8; տե՛ս նաև **Մալինվերնի Զ.** Արդարադատության արդյունավետ իրականացման միջազգային սկզբունքները// Հայկական Քաղաքագիտական Հանդես 2(4) 2015, էջ 85-98:

¹⁹⁸ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ Սահմանադրական օրենքը (ընդ. 07. 02.2018թ.), հոդվ. 7, <http://www.parliament.am/legislation.php?sel=show& ID=6166&lang=arm#1.2 / 10.02.2018/>

պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են վտանգել կամ վնասել դատարանի կամ դատավորի անկախությունը¹⁹⁹:

Գլոբալացման գործընթացը ցայտուն կերպով արտացոլվել է նաև **փաստաբանական գործունեությունում**²⁰⁰՝ որպես իրավաբանական գործունեության տեսակում: Այսպես, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. «Փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով»²⁰⁰: Իր հերթին, Փաստաբանի վարքագծի կանոնակարգը սահմանում է. «Փաստաբանը կոչված է ծառայել արդարադատության շահերին, ինչպես նաև այն իրավունքներին ու արտոնություններին, որոնք նրան վստահել են պաշտպանելու իր վստահորդի շահերը: (...) Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության և ժողովրդավարության համար»²⁰¹:

Ինչ վերաբերում է փաստաբանի գործունեության էությանը, ապա, կանոնակարգի համաձայն՝ գաղտնիությունը փաստաբանի գործունեության էությունն է, այսինքն՝ վստահորդը փաստաբանին հայտնում է այնպիսի տեղեկություններ, որոնք նա չի փոխանցի ուրիշներին, և փաստաբանը պետք է այդ տեղեկատվության տիրապետող լինի գաղտնիության հիմքի վրա²⁰²: Ավելին, փաստաբանի պարտականությունը գաղտնիության վերաբերյալ ծառայում է արդարադատության իրականացմանը և վստահորդի շահերին²⁰³:

¹⁹⁹ Տե՛ս նույն տեղում:

²⁰⁰ «ՀՀ Փաստաբանության մասին» ՀՀ օրենք (14.12.2004 թ.) հոդվ.5, <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2255/./05.02.2017/>:

²⁰¹ Փաստաբանի վարքագծի կանոնակարգ (ընդ.11.02.2012թ.) կետ 1.1, http://advocates.am/images/general_meetings/2012/Kanonagirk_11.02.2012.pdf/./05.02.2017/:

²⁰² Տե՛ս նույն տեղում, կետ 2.3.1 http://advocates.am/images/general_meetings/2012/Kanonagirk_11.02.2012.pdf/./05.02.2017/:

²⁰³ Տե՛ս նույն տեղում, կետ 2.3.2 http://advocates.am/images/general_meetings/2012/Kanonagirk_11.02.2012.pdf/./05.02.2017/:

«Եվրոպական իրավական մասնագիտության հիմնական սկզբունքների» Խարտիայում (ընդ. 25.11.2006թ.), որպես սկզբունք ամրագրված է փաստաբանի անկախությունը և իր վստահորդի գործին հետամուտ լինելու փաստաբանի ազատությունը: Խարտիայի «ա» սկզբունքի համաձայն. «Փաստաբանը, հաճախորդին խորհրդատվություն տրամադրելուն և նրա ներկայացուցչությունն իրականացնելուն ուղղված իր գործունեության մեջ պետք է լինի ազատ՝ քաղաքական, տնտեսական և ինտելեկտուալ առումով: Սա նշանակում է, որ փաստաբանը պետք է անկախ լինի պետության և այլ քաղաքական շահերից և չպետք է թույլ տա, որ իր անկախությունը ոտնահարվի գործարար կապերի ոչ պատշաճ ճնշման հետևանքով: Բացի այդ, փաստաբանը՝ երրորդ անձանց և դատարանների վստահությունը վայելելու համար, պետք է անկախ լինի նաև իր վստահորդից: Իրավամբ, առանց վստահորդից նման անկախություն ունենալու փաստաբանի աշխատանքի որակի որևէ երաշխիք լինել չի կարող: Փաստաբանի ազատ մասնագիտությանը անդամակցելն ու այդ անդամակցությունից բխող հեղինակությունը օգնում է պահպանել անկախությունը, և փաստաբանների միությունները պետք է կարևոր դերակատարում ունենան փաստաբանների անկախության երաշխավորմանը աջակցելու հարցում: Մասնագիտության ինքնակարգավորումը հանդիսանում է կոնկրետ փաստաբանի անկախությունն ամրապնդելու կենսապես կարևոր գործոն: Հատկանշական է, որ ոչ ազատ հասարակություններում փաստաբաններին թույլ չի տրվում հետամուտ լինել իրենց վստահորդների գործերին, և նրանք կարող զրկվել կյանքից կամ ազատությունից նման փորձ կատարելու համար»²⁰⁴:

Հատկանշական է որ փաստաբանի անկախությունն անհրաժեշտ է մի շարք իրավաբանական գործողությունների իրականացման համար. 1) փաստաբաններին՝ իրենց վստահորդներին պետությունից պատշաճ կերպով պաշտպանելու հնարավորություն տալու, 2) փաստաբաններին՝ իրենց վստահորդների հետ նույնականացումից պաշտպանելու, 3) փաստաբանների և իրենց վստահորդների միջև վստահություն ձևավորելու, 4) իրավունքի գերակայությունը պահպանելու համար:

²⁰⁴ Charter of core principles of the European legal profession & Code of conduct for European lawyers/ed. P.Buisseret. Council of Bars & Law Societies of Europe. 2018. P. 8, https://www.ccbe.eu/fileadmin/speciality_distribution/public/documents/DEONTOLOGY/DEON_CoC/EN_DEON_CoC.pdf/./15.07.2018/:

Վերոնշյալ սկզբունքները ամրագրված են մի շարք միջազգային և տարածաշրջանային փաստաթղթերում, որոնցից են՝ ՄԱԿ-ի «Փաստաբանների դերի վերաբերյալ հիմնարար սկզբունքները», Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի «Փաստաբանի մասնագիտական գործունեության իրականացման ազատության մասին» անդամ-երկրներին ուղղված Rec(2000)21 Հանձնարարականը, «Իրավական մասնագիտության իրավական համակարգերի գործառնության հարցում ընդհանուր շահի մասին» Եվրոպական Խորհրդարանի 2006թ. մարտի 23-ի Բանաձևի «Դ» մեջբերումն ու 4-րդ կետը²⁰⁵:

Ինչ վերաբերում է իրավաբանական գործունեության տեսակներին, ապա պետության և իրավունքի տեսությունում երևան են գալիս տարաբնույթ մոտեցումներ: Այսպես, Ն.Յա. Սոկոլովն առանձնացնում է իրավաբանական գործունեության հետևյալ տեսակները՝ իրավաստեղծ, իրավակիրառ գործունեություններ և սոցիալ-իրավական վերահսկողություն²⁰⁶: Վ.Ն. Կարտաշովն ու Վ.Ի. Չեռնովնյուկն իրենց հերթին ներկայացնում են իրավաբանական գործունեության համալրված տեսակները: Դրանք են. իրավաստեղծ, իրավակիրառ, մեկնաբանման, կողմնօգնական, վերահսկիչ, հիմնադիր, իրավահստակեցնող գործունեությունները²⁰⁷:

Կատարված ուսումնասիրությունների հիման վրա եկել ենք այն եզրահանգման, որ, դիտարկելով գլոբալացումն իրավաբանական գործունեությունում, անհրաժեշտ է առանձնացնել իրավաբանական գործունեության երկու միմյանց հետ փոխկապակցված հիմնական տեսակներ՝ **իրավաստեղծ և իրավակիրառ գործունեությունը**, իսկ

²⁰⁵Մանրմասն տե՛ս Basic Principles on the Role of Lawyers (Adopted by the 8th United Nations Congress on the Prevention of Crime and the Treatment of Offenders, Havana, Cuba 27 August to 7 September 1990), <https://www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/RoleOfLawyers.aspx>./15.02.2017/; Council of Europe Recommendation Rec(2000)21 of the Committee of Ministers to Member States on the freedom of exercise of the profession of lawyer, https://www.asianajaliitto.fi/files/19/R2000_21_Freedom_of_exercise_of_the_profession_of_lawyer.pdf./15.02.2017/; Resolution of the European Parliament of 23 March 2006 on the legal professions and the general interest in the functioning of legal systems, (23.06.2006) <http://ecec.net/about-ecec/charter-for-liberal-professions/>./15.02.2017/;

²⁰⁶ Տե՛ս **Соколов Н.Я.** Профессиональное сознание юриста. М., Наука. 1988. С.70-75.

²⁰⁷ Տե՛ս **Карташов В.Н.** Юридическая технология или юридическая техника? Некоторые методологические аспекты исследования // Юридическая техника. М., 2007. № 1. С. 16-24 **Червонюк В.И.** Юридические технологии («правовая инженерия»), или прикладная юриспруденция: методологическое значение, природа, соотношение с юридической техникой, статус в системе правоведения (в 4 вып.). Выпуск 2: Юридические технологии и юридическая техника // Вестник Московского университета МВД России. М., Изд-во Моск. ун-та МВД России, 2010, № 6. С. 195-198.

իրավաբանական գործունեության մնացած բոլոր դրսևորումներն անհրաժեշտ է դիտարկել որպես երկրորդական վերոհիշյալ գործունեության տեսակների նկատմամբ:

Քննարկելով գլոբալացման առանձնահատկությունները իրավաբանական գործունեության շրջանակներում՝ չենք կարող անտեսել վերոնշյալ գործունեության դոսևորման արտաքին և ներքին ձևերը: Վերջին ժամանակաշրջանում իրավաբանական գրականությունում գերիշխում է այն տեսակետը, որ իրավաբանական գործունեության **դրսևորման արտաքին ձևերն են** հանդիսանում այն նորմատիվ իրավական ակտերը, դրանց մեկնաբանությունները, դատական որոշումները, որոնցում արտացոլված են իրավաստեղծ գործունեության նպատակները, խնդիրներն ու արդյունքները: Մինևույն ժամանակ, իրավաբանական գործունեության **դրսևորման** ներքին ձև է հանդիսանում **իրավունքի իրացման ընթացակարգային** եղանակը, որը հանդիսանում է իրավաստեղծ գործունեության արտաքին ձևին հասնելուն նպատակաուղղված գործողությունների ամբողջություն: Ուշագրավ է, որ իրավաբաններից շատերը կամ տարանջատում են «**ընթացակարգային եղանակ**» և «**դատավարական ընթացակարգ**» հասկացությունները, կամ էլ՝ նույնականացնում դրանք²⁰⁸: Այսպես, իրավագետներից ոմանք գտնում են, որ իրավապահ մարմիններն, իրենց գործունեության իրականացման ընթացքում, օգտվում են հատուկ ընթացակարգային եղանակներից: Ուշադրության է արժանի, Վ.Պ. Բելյակի և Վ.Վ. Սորոկինայի դիրքորոշումն այն մասին, որ, ընթացակարգային ձև է հանդիսանում իրավաբանական գործունեության դրսևորման ցանկացած եղանակի նորմատիվ կամ դատավարական եղանակով հաստատված կարգավորում²⁰⁹:

Հիմք ընդունելով վերոհիշյալն, անհրաժեշտ է դիտարկել իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության առանձնահատկությունները գլոբալացման համատեքստում: *Համընդհանուր ճանաչում ստացած սահմանման համաձայն իրավաստեղծ գործունեությունը գիտականորեն հիմնավորված ստեղծագործական ընթացակարգ է, որ իրականացնում են պետական մարմինները՝ իրենց իրավասության*

²⁰⁸ Մանրամասն տե՛ս **Беляев В.П.** Контроль и надзор как формы юридической деятельности: вопросы теории и практики. Дисс. ... докт. юрид. наук. Саратов, 2006. **Беляев В.П., Сорокина В.В.** Процессуальная форма юридической деятельности: вопросы теории и практики. М., Юрлитинформ. 2011; **Ленчик В.А.** Механизм действия права // Следователь. М., Юрист, 2001, № 5. С. 59-64.

²⁰⁹ Տե՛ս **Беляев В.П., Сорокина В.В.** նշված աշխտ., էջ 33-35:

շրջանակներում և կոչված է բավարարելու հասարակության և պետության իրավական պահանջմունքները²¹⁰: Համամիտ ենք իրավագետների այն կարծիքի հետ, որ «**իրավաստեղծ**» և «**օրինաստեղծ**» եզրույթները արտահայտում են նորմատիվ-իրավական ակտերի ձևավորման ստեղծագործական բնույթը, որտեղ միահյուսվում են կեցության այնպիսի տարրեր, ինչպիսիք են՝ սոցիալական շահերը, պահանջմունքները, կամային հատկանիշները, իրավական լուծման տարբերակները և այլն: Միևնույն ժամանակ, իրավաստեղծ գործունեությունը պետք է գերծ լինի մեխանիկական լուծումներից, քանի որ միմիայն ստեղծագործական աշխատանքի շնորհիվ է հնարավոր բազմաթիվ լուծումներից ընտրել առավել արտահայտիչ, սոցիալական առումով օգտակարն ու անհրաժեշտը և դրան համարժեք իրավական ձևը²¹¹:

Դեռևս խորհրդային ժամանակաշրջանում իրավաբանները առանձնացրել էին իրավական ակտերի գործողության դինամիկայի առանձնահատկությունները, որոնք բավարարում են հետևյալ կարևորագույն պայմանները.

1. Անհրաժեշտ է հաշվի առնել քաղաքացիների վերաբերմունքն ընդունվելիք նորմատիվ ակտի նկատմամբ:

2. Անթույլատրելի է ակտի ընդունման բացարձակացումն առանց վերջինիս գործողության ոլորտի ապահովման:

3. Անթույլատրելի է ընդունել նորմատիվ ակտն այլ ակտերից մեկուսացված կամ ընդունել այնպիսի իրավական ակտեր, որոնք կստեղծեն իրավական կոլիզիաներ:

4. Նորմատիվ ակտերի գերբեռնվածությունը նվազեցնում է նրանց արդյունավետ գործողությունը:

5. Անթույլատրելի է նորմատիվ ակտին բնորոշ որակական հատկանիշների անտեսումը:

6. Անհրաժեշտ է ճիշտ հաշվարկել նորմատիվ ակտի ընդունման, փոփոխման կամ

²¹⁰ Մանրամասն տե՛ս **Սաֆարյան Գ.Հ.**, Իրավունքի պատմության և տեսության հիմնահարցեր, Եր, Լիմուշ, 2010; **Ստեփանյան Հ.Մ.** Իրավունքի գոյաբանություն, Եր., Եվրոպրինտ, 2012; **Тихомиров Ю.А., Котелевская И.В.** Правовые акты. Учебно-практ. и справ. Пособ.. М., 1999.

²¹¹ Մանրամասն տե՛ս **Սաֆարյան Գ.Հ.**, Իրավաստեղծ գործունեության և օրենսդրության զարգացման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (պատմա-տեսական վերլուծություն), Եր, ԱՌՏ, 2004, էջ 71; **Марченко М.Н.** Теория государства и права.М., МГУ. 2007; Теория государства и права/Под.ред. **Н.И. Матузова, А.В. Малько.** М., Юристъ. 2004; Проблемы общей теории права/Отв. ред. **В.С. Нерсисянц.** М., Норма.2004; **Sinclair B.**, Unorthodox Lawmaking: New Legislative Processes in the U.S. Congress, 2-nd ed., 2005.

վերացման ժամանակն ու կանխատեսել անբարենպաստ հետևանքները:

7. Նորմատիվ ակտը պետք է ունենա կոնկրետ հասցեատերեր, որոնց ուղղված է տվյալ իրավունքի նորմը:

8. Նորմատիվ ակտի բովանդակության խեղաթյուրված ըմբռնումն առաջացնում է իրավաբանական կոպիտ սխալներ²¹²:

Հայտնի է, իրավաստեղծ գործունեությունը ավելի ընդգրկուն գործընթացի՝ *իրավակազմավորման* վճռական և վերջնական փուլն է¹⁰: Սակայն, կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ իրավաբանական գրականությունում, իրավագետներից ոմանք «իրավաստեղծ գործունեությունը» նույնացնում են «իրավակազմավորման» հետ, ինչը մենք անընդունելի ենք համարում: Համամիտ ենք Վ.Վ. Ստեփանյանի և Գ.Հ. Սաֆարյանի այն կարծիքի հետ, որ իրավակազմավորումը և իրավաստեղծ գործունեությունը տարբեր հասկացություններ են և դրանք չի կարելի նույնացնել²¹³: Ինչպես իրավացիորեն նշում է Գ.Հ. Սաֆարյանը. «Իրավակազմավորման գործընթացը ներառում է իրավունքի ձևավորման սկզբնական, ելակետային փուլից մինչև նորմատիվ ակտի ընդունումը: Իրավակազմավորումը բովանդակում է իրավական կարգավորմանը ենթակա հասարակական հարաբերությունների գիտական ուսումնասիրությունը, հասարակական պահանջունքների և շահերի բազմակողմանի, խորքային վերլուծությունը և գնահատումը, հասարակական կարծիքի հաշվի առնելը և այլն: Իրավակազմավորումը հանդիսանում է նորմատիվ ակտում արտահայտված պետական կամքի գործընթաց, իսկ իրավաստեղծ գործունեությունը ներառում է պետության իրավասու մարմինների կողմից նորմատիվ ակտերի մշակման և ընդունման գործընթացը»²¹⁴:

Ինչ վերաբերում է **իրավակիրառ գործունեությանը**, ապա այն բնութագրվում է որպես իրավունքի նորմերի կիրառմամբ իրավասու հանրային (պետական) մարմնի

²¹²Տե՛ս **Սաֆարյան Գ.Հ.**, Իրավաստեղծ գործունեության և օրենսդրության զարգացման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (պատմա-տեսական վերլուծություն), Եր, ԱՌՏ, 2004, էջ 71-72; **Поленина С.В.** Законотворчество в Российской Федерации. М.,ИгиП РАН,1996. С 66-67; **Тихомиров Ю.А., Котелевская И.В.** նշված աշխ. էջ 35-36

²¹³Տե՛ս **Степанян В.В.** Теоретические проблемы правообразования в социалистическом обществе. Ер.Ан АрмССР., 1986.С.29-30:

²¹⁴Տե՛ս **Սաֆարյան Գ.Հ.**, Իրավաստեղծ գործունեության և օրենսդրության զարգացման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (պատմա-տեսական վերլուծություն), Եր, ԱՌՏ, 2004, էջ 71-72;

իշխանական գործունեություն, ուղղված իրավունքի նորմերի կենսագործմանը կոնկրետ կենսական դեպքերի ու որոշակի անձանց նկատմամբ, և ավարտվում է իրավաբանական գործով անհատական որոշման կայացմամբ՝ հիմք ընդունելով իրավաբանական փաստերը և կոնկրետ իրավական նորմերը²¹⁵:

Պետության և իրավունքի տեսության մեջ կարող ենք հանդիպել իրավունքի կիրառման հետևյալ հատկանիշների. 1) իրավունքի նորմերի կիրառումն օժտված է պետաիշխանական բնույթով, 2) իրավակիրառ գործունեությունն իրականացնում են միայն պետության իրավասու մարմինները, պաշտոնատար անձինք կամ տեղական ինքնակառավարման մարմինները՝ պետության լիազորությամբ, 3) իրավակիրառ գործունեության բովանդակությունը իրավունքի նորմերի հիման վրա անհատական իրավական ակտերի հրապարակումն է, 4) իրավունքի նորմերի կիրառումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով և որոշակի փուլայնությամբ²¹⁶:

Մտահոգիչ է, որ իրավաբանական գրականությունում հաճախ կարող ենք հանդիպել այն տեսակետին, որ իրավակիրառ գործունեությամբ կարող են զբաղվել ոչ միայն պաշտոնատար անձինք, այլև քաղաքացիները: Համամիտ ենք Ա.Գ. Վաղարշյանի, Ա.Ի. Դենիսովի և Օ.Է. Լեյստի այն կարծիքի հետ, որ քաղաքացիների իրավահարաբերություններում ընգրկվածությունը, որոնց շրջանակներում դրանք ծագում, փոփոխվում և դադարում են, նպատակահարմար չէ դիտարկել որպես իրավակիրառ գործունեություն, քանի որ քաղաքացիների բոլոր գործարքները և պայմանագրերը, ոչ թե իրավունքի նորմերի կիրառում են, այլ սուբյեկտիվ իրավունքների իրականացմանը և պարտականությունների կատարմանն ուղղված իրավական ակտեր են: Ավելին, հանդիսանալով **պետաիշխանական գործունեություն, իրավակիրառ գործունեության բովանդակությունն իրավունքի նորմերի հիման վրա անհատական իրավական պարզվիրանների՝ ակտերի հրապարակումն է (ընդգ.**

²¹⁵Վաղարշյան Ա.Գ., «Իրավունքի կիրառում» հասկացության հիմնահարցերը//Բանբեր Երևանի Համալսարանի. Իրավագիտություն, Եր, 2017, № 2(23), էջ 3-17: **Скакун О. Ф.** Теория государства и права (энциклопедический курс). Учебник. Харьков, Эспада. 2005. С.629; **Лазарев В.В., Липень С.В.** Теория государства и права. Уч. для вузов. 3-е изд., испр. и доп. М., Спарк, 2004. С.363-364.

²¹⁶Տե՛ս Վաղարշյան Ա.Գ., Պետության և իրավունքի տեսություն-2: Դասախոսություն, Եր., 2011, էջ 278-279; **Сардаева О.Г.** К вопросу о стадиях применения права//Вестник Саратовской государственной юридической академии. № 2 (91), 2013. С. 52-57.

մերն է՝ Ա. Տ.-Բ.) ²¹⁷: Վերոնշյալ ակտերը վերաբերում են կոնկրետ դեպքերին և անձանց:

Ընդհանրապես, պետության և իրավունքի տեսությունում իրավաբան-գիտնականները տարբերակում են իրավունքի կիրառման 3 փուլեր. 1) իրավաբանական գործի փաստացի հանգամանքների բացահայտում (վերլուծություն և հետազոտություն), 2) հետազոտված փաստացի հանգամանքների նկատմամբ կիրառման ենթակա իրավունքի նորմի ընտրություն և վերլուծություն, 3) իրավասու պետական մարմնի կողմից որոշման ընդունում և այդ որոշումը շահագրգիռ անձանց ու կազմակերպություններին հասցնելը²¹⁸:

Մինևույն ժամանակ, անհատական ակտի կատարումը, որպես իրավունքի նորմի իրացման առանձին, եզրափակիչ փուլ, ներառված չէ իրավունքի նորմերի կիրառման փուլերի մեջ, քանի ակտի կատարումը հանդիսանում է յուրահատուկ ընթացակարգ, որին ուղղված են վերոնշյալ երեք փուլը²¹⁹:

²¹⁷Տե՛ս **Վաղարշյան Ա.Գ.**, «Իրավունքի կիրառում» հասկացության հիմնահարցերը//Բանբեր Երևանի Համալսարանի. Իրավագիտություն, Եր, 2017, № 2(23), էջ 6; **Марченко М.Н.**, Теория государства и права.,Уч. 2-е изд., перераб. и допол., М., Проспект.,2007.С.608; Теория государства и права/Отв.ред. **А.И. Денисов.** М., 1972. С.349;

²¹⁸Տե՛ս **Тарановский Ф.В.** Энциклопедия права. 3-е изд. Санкт-Петербург. СПб., 2001. С.250-263; Теория государства и права. Учебник/Под ред. **Васильев А.М.** М., Юрид. лит., 1977. С. 385-386;

²¹⁹Տե՛ս **Վաղարշյան Ա.Գ.**, «Իրավունքի կիրառում» հասկացության հիմնահարցերը//Բանբեր Երևանի Համալսարանի. Իրավագիտություն, Եր, 2017, № 2(23), էջ 10; **Марченко М.Н.**, նշված աշխտ., էջ 610; **Сардаева О.Г.** նշված աշխտ, էջ 55:

ԳԼՈՒԽ 3.

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԼՈՐԱԼԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

3.1. Իրավունքի գլոբալացման եղանակների և ձևերի առանձնահատկությունները

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ արդի իրավաբանական գրականությունում իրավունքի գլոբալացման բազմաշերտ գործընթացը ներառում է իրավունքի ինտեգրում, իրավունքի միջազգայնացում, իրավունքի անմիջական իրականացում (իմպլեմենտացիա):

Ակնհայտ է, որ համաշխարհային ինտեգրացիոն գործընթացները անվերապահորեն հանգեցնում են **իրավական ինտեգրմանը**, որը բնութագրվում է որպես համաշխարհային նորմերի համակարգի ձևավորում, որոնք կազմակերպում և ապահովում են արդի պետության, հասարակության և անհատի կյանքի տարբեր ոլորտներում միջազգային փոխներգործությունը: Այսպես, Յու.Ա. Տիխոմիրովը իրավական ինտեգրումը բնութագրում է երկակի իմաստով. մի դեպքում այն դիտարկվում է որպես պետության կողմից մեկ այլ պետության իրավունքի դրական գործոնների փոխառություն, իսկ մյուս դեպքում՝ որպես պետությանն ընձեռնված հնարավորություն մասնակցելու միջազգային հանրության գործընթացներին²²⁰:

Հատկանշական է, որ տարաբնույթ սուբյեկտիվ և օբյեկտիվ պատճառներ և գործոններ կարող են հանդիսանալ իրավական ինտեգրման հիմնաքար: Դրանցից են՝ պետությունում ծագած և զարգացող փիլիսոփայական, սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական գաղափարախոսությունները, տնտեսության սրընթաց զարգացման անհրաժեշտությունը, ինչպես նաև՝ պետությունների միջև առկա աշխարհագրական, պատմամշակութային կապերի մերձեցումն ու համերաշխության ձգտումը:

Արդի իրավաբանական գրականությունում իրավական ինտեգրումը բնութագրվում է մի շարք հատկանիշներով.

²²⁰Տե՛ս Գլոբալիզация и развитие законодательства: Очерки/Отв.ред. Ю.А. Тихомиров, А.С., Пиголкин.М., Городец. 2004.С. 38-39.

Նախ և առաջ՝ իրավական ինտեգրման գործընթացներն ընթանում են ինչպես համաշխարհային, այնպես էլ տարածաշրջանային մակարդակներում: Միևնույն ժամանակ, տարածաշրջանային ինտեգրման եռանդը, աստիճանն ու արագությունը կապված են միությունների նպատակներով և խնդիրներով²²¹:

Երկրորդ՝ իրավական ինտեգրման գործընթացի աստիճանն ու արագությունը կախված են տվյալ պետության ներքին պահանջմունքներից, ինչպես նաև՝ գործընթացից ունեցած ակնկալիքներից: Հայտնի է, որ վերջին տանսնամյակներում ինտեգրացիոն գործընթացները տնտեսության, մարդու իրավունքների պաշտպանության ոլորտներում ընթանում են ավելի եռանդուն և արդյունավետ քայլերով, քան ներպետական ենթակառուցվածքների փոփոխման ոլորտում: Հետևաբար, «իրավունք» և «իրավական տարածք» հասկացությունները հետզհետե վերածվում են անդրսահմանային երևույթների, որի շրջանակում պահանջվում են կոնկրետ լուծումներ համագործակցող պետությունների առջև ծառայած խնդիրների լուծման համար: Ավելին, այն դեպքում, երբ իրավական ինտեգրումը ավելի սերտորեն կապված է այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ միասին կազմակերպված հանցավորության դեմ պայքարի, այն ծնող և նրա տարածմանը խթանող պատճառների ու պայմանների վերացման, շրջակա միջավայրի պահպանության և այլ տարբեր համաշխարհային խնդիրների լուծման անհրաժեշտության հետ, ապա իրավական միջազգայնացման բնույթը տարբերվում է իրավական ինտեգրումից²²²:

Իրավական միջազգայնացումը հիմնականում գլոբալացման ընդհանուր գործընթացների հետևանք է, որն ընգրկված է ժամանակակից հասարակության կյանքի հիմնական ոլորտներում: Իրավական միջազգայնացման էությունը կայանում է նրանում, որ ներպետական իրավունքը սերտորեն կապվում, միահյուսվում է ներպետական այլ իրավական համակարգերի հետ:

²²¹Տե՛ս **Симонова Л.Н., Плачида Л.Ю.**, Развивая интеграцию, объединяя континенты Международный «круглый стол» ЕЭК, ЭКЛАК и ИЛА РАН, "Латинская Америка"/Латинская Америка, М., Наука. №4. 2017.С. 84-89;

²²²Տե՛ս **Зыков А.А., Шинковский М. Ю.** Проблема дефиниции феномена «трансграничность»// Территория новых возможностей. Вестник владивостокского государственного университета экономики и сервиса. 2009. С. 34-41.

Ինչպես իրավացիորեն նշում է Բ.Վ. Մակոգոնը. իրավական միջազգայնացումը բաղկացած է ինքնիշխան պետությունների ազգային իրավական համակարգերի ներգրավմամբ այն համակարգում, որտեղ գլոբալ միջազգային իրավունքը, տարածաշրջանային միությունների իրավունքն ու ազգային իրավունքը գտնվում են մշտապես փոխկապակցման և փոխներգործության մեջ, ինչի շնորհիվ մեծանում է ազգային իրավական համակարգերի միմյանց նկատմամբ ներգործության աստիճանը²²³: Հետևաբար, հիմք ընդունելով տարբեր իրավունքի նորմերի ինտենսիվ փոխկապակցվածությունն ու ներգործությունը, կարող ենք փաստել, որ իրավունքի միջազգայնացումն օժտված է երկու դրսևորմամբ: Մի դեպքում պետությունների կողմից ընդունված (վավերացված) միջազգային իրավունքի նորմերը, սկզբունքները և այլ դրույթները «ընդգրկվում են» ազգային իրավական համակարգերում, իսկ մյուս դեպքում՝ ներպետական իրավական նորմերը միահյուսվում են միջազգային իրավունքին և միջպետական միությունների իրավունքին: Այդ գործընթացի արդյունքում դատական, բնապահպանական, կառավարչական և այլ կարևոր նորմեր աստիճանաբար վերածվում են միջազգային իրավունքի հատուկ ինստիտուտների: Այսպես, միջազգային փաստաթղթերում, որոնցից են օրինակ՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը²²⁴, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը, համընդհանուր նորմերն ու սկզբունքները արտացոլվեցին և իրենց հետագա զարգացումը ստացան տարածաշրջանային միությունների, կազմակերպությունների (Եվրոպական միություն, ԵԱՀԿ, ԱՊՀ, ԵԱՏՄ և այլն) կողմից ընդունված փաստաթղթերում:

Արդի պետության և իրավունքի տեսությունում իրավունքի միջազգայնացումը դիտարկվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործընթացների համատեքստում: *Իրավունքի միջազգայնացումն օբյեկտիվ համարեքստում* մատնանշում է, որ շրջակա միջավայրը,

²²³Տե՛ս **Макогон Б.В.** Современное государство в условиях глобализации//Пробелы в российском законодательстве. Юридический журнал. 2012. № 2. С. 29-31.

²²⁴Մանրամասն տե՛ս ՄԱԿ-ի «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր», (ընդ. 10.12.1948թ.) <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=1896/./12.06.2017>; «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» (ընդ. 16.12.1966թ.) միջազգային դաշնագիր <http://www.idcarmenia.am/sites/default/files/attachments/dahsnagir.pdf/./12.06.2017>; «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների» Եվրոպական կոնվենցիա հոդվ.6, <http://pmg.am/images/conventionhumanrights.pdf/>, /27.08.2017:

ազատ տնտեսական հարաբերությունները իրենց ուրույն ազդեցությունն են թողնում անձի վրա, իսկ վերջինս, լինելով հասարակության անդամ, ձգտում է կյանքի ավելի բարենպաստ պայմանների և չափորոշիչների, ինչն էլ իր հերթին հանգեցնում է պետությունում միասնական իրավական կարգավորումների:

Իրավական միջազգայնացման սուբյեկտիվ կողմն իր բնույթով նպատակաուղղված է և ընդգրկում է որոշակի կանոնների, սկզբունքների, մեթոդների, եղանակների ամբողջություն, որի շնորհիվ իրագործվում է իրավունքի միջազգայնացումը: **Իրավական միջազգայնացման միջոցների (ձևերի), շարքին են դասվում՝ ընդօրինակումը (ռեցեպցիան), ներդաշնակեցումը և միասնականացումը (ունիֆիկացիան):** Հարկ է նշել, որ արդի իրավաբանական գրականությունում իրավական միջազգայնացման ձևերի առանձնացումը հանդիսանում է իրավաբանական խոսույթի առարկա, քանի որ իրավագետներից ոմանք նույնականացնում են այդ բոլոր ձևերը, իսկ մյուսները հիմնավորում են դրանց տարանջատման անհրաժեշտությունը²²⁵:

Իրավաբանական գրականությունում **ընդօրինակումը կամ ռեցեպցիան** բազմիմաստ հասկացություն է: Եթե արվեստի, մշակույթի, հասարակական գիտությունների մեջ այն մեկնաբանվում է որպես տվյալ հասարակության մեկ այլ երկրում կամ այլ տարածաշրջանում ծագած սոցիոլոգիական և մշակութային ձևերի փոխառում, ապա իրավավագիտությունում ռեցեպցիան կարող է բնութագրվել որպես որևէ պետության կողմից մեկ այլ պետության ավելի զարգացած իրավունքի ընդօրինակում (փոխառում): Համամիտ ենք դոկտոր, պրոֆեսոր Գ. Հ. Սաֆարյանի այն դիրքորոշման հետ, որ ռեցեպցիան ենթադրում է ոչ միայն միջազգային իրավունքի, այլև ուրիշ պետությունների առաջավոր փորձի ընդօրինակում ազգային օրենսդրությունում, որն իր «զուտ» տեսքով ժամանակակից աշխարհին այլևս բնորոշ չէ²²⁶:

Իր հերթին **ներդաշնակեցումը** հանդիսանում է իրավական համակարգերի կամ դրանց առանձին ինստիտուտների, ճյուղերի աստիճանական մերձեցմանը նպատակաուղղված գործընթաց՝ պայմանավորված արդի սոցիալ-տնտեսական

²²⁵Մանրամասն տե՛ս Глобализация и развитие законодательства/ Отв. ред. Тихомиров Ю.А., Пиголкин А.С. М., Городец. 2004:

²²⁶Տե՛ս Սաֆարյան Գ. Հ. Իրավաստեղծ գործունեության և օրենսդրության զարգացման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (պատմա-տեսական վերլուծություն), Եր, ԱՌՏ, 2004, էջ 192:

իրավաքաղաքական իրողություններով²²⁷: Ակնհայտ է, որ իրավական նորմը, նախքան տվյալ պետության իրավական համակարգում ընդգրկվելը, հղկվում է և համապատասխանեցվում տվյալ պետության սոցիալ-իրավական իրողությանը:

Դիտարկելով ներդաշնակեցման առանձնահատկությունները՝ հարկ է նշել, որ արդի իրավաբանական գրականությունում առանձնացվում են **ներդաշնակեցման երկու հիմնական տեսակներ՝ միակողմանի և փոխադարձ ներդաշնակեցում**:

Միակողմանի ներդաշնակեցման դեպքում, մի պետության իրավունքը, կամ կոնկրետ օրենքը հարմարեցվում, համաձայնեցվում է մեկ այլ պետության իրավունքին կամ օրենքին: **Փոխադարձ ներդաշնակեցման** գործընթացում մասնակիցներից յուրաքանչյուրը ջանքեր է գործադրում իրավունքի մերձեցմանն ուղղված բոլոր միջոցների իրականացման համար: Հայտնի է, որ ներդաշնակեցումը կարող է իրականացվել ինչպես ազգային իրավական, այնպես էլ միջազգային իրավական հիմքերի վրա: Ազգային-իրավական ներդաշնակեցումը միշտ միակողմանի է, քանի որ պետությունը ներդնում է օտարերկրյա օրենքի նորմերը իր ազգային օրենսդրության մեջ: Միջազգային-իրավական ներդաշնակեցումը ենթադրում է միջազգային մակարդակով իրավական նորմերի ստեղծում: Նման նորմերը հաճախ կրում են խորհրդատվական բնույթ, իսկ մասնակից պետությունները դրանք ներառում են իրենց ազգային օրենսդրության մեջ՝ կամավորության սկզբունքի հիման վրա: Օտարերկրյա և միջազգային իրավունքի ներդաշնակության միջև առկա է նույնպիսի տարբերություն, ինչպիսին որ երկկողմ և բազմակողմ միջազգային հարաբերությունների միջև է:

Համամիտ ենք Վ.Ի. Յակունինի այն կարծիքի հետ, որ փոխադարձ ներդաշնակեցումն ինքնին տարբեր իրավական համակարգերի մերձեցման համեմատաբար նոր եղանակ է, որն սկսել է լայնորեն կիրառվել 20-րդ դարի վերջից: Այն հիմնականում իրականացվում է միջազգային-իրավական կառուցակարգերի, այդ թվում՝ միջազգային կազմակերպությունների, միջպետական, միջկառավարական կազմակերպությունների միջոցով, որի արդյունքում երևան են գալիս վերոնշյալ մարմինների կողմից ընդունված որոշումները, հանձնարարականները և այլ

²²⁷Մանրամասն տե՛ս **Гаврилов О.А., Колдаева Н.П., Лукьянова Е.Г., Поленина С.В.** Воздействие глобализации на правовую систему России // Государство и право. М., Наука. 2004. № 3. С. 5-15; **Лунеев В. В.** Истоки и пороки российского законодательства. М., 2014.

փաստաթղթերը: Ավելին, ներդաշնակեցման արդյունքում տարբեր երկրներում ընդունվում են նմանատիպ, բայց ոչ նույնական իրավական ակտեր: **Հեյլաբար, ներդաշնակեցումը կարող է սահմանվել որպես իրավաստեղծ գործընթաց, որն ուղղված է տարբեր պետությունների իրավունքների համաձայնեցմանն ու մերձեցմանը, ինչպես նաև՝ կոնկրետ պետության իրավական համակարգում առկա կոլիզիաների և հակասությունների վերացմանը, որի արդյունքում ձևավորվում են ընդհանուր սկզբունքներն ու ընթացակարգերը**²²⁸: Միևնույն ժամանակ, կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ այդպիսի մոտեցումը հանգեցրել է իրավաբանական գրականությունում իրավունքի ներդաշնակեցման **լայն և նեղ ասպեկտների դասակարգմանը**²²⁹: Այսպես, **օրենքի ներդաշնակեցումը նեղ իմաստով** բացառապես **ներդաշնակեցման արտաքին** դրսևորում է, այսինքն՝ միջազգային-իրավական հարաբերության մասնակիցների իրավական համակարգերի ներդաշնակեցում: Օրինակ, արտաքին ներդաշնակեցումը կարող է ընկալվել որպես կազմակերպչական և նորմաստեղծ գործընթաց, որն ուղղված է Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների համար ազատ տնտեսական գոտու ստեղծմանը, որն միևնույն ժամանակ ընթանում է ինչպես ազգային-իրավական, այնպես էլ միջազգային-իրավական հարթությունում²³⁰:

Իրավունքի ներդաշնակեցումը լայն իմաստով ընդգրկում է ինչպես միջազգային իրավական գործունեությունն, այնպես էլ՝ ներազգային իրավական համակարգի նորմերի մերձեցմանն ուղղված գործընթացը:

Արդի իրավաբանական գրականությունում օրենսդրության ներդաշնակեցման հայեցակարգի շրջանակներում առանձնացնում են այդ հասկացության դրսևորման երկու ձևեր՝ ստատիկ ներդաշնակեցում (օրենքի բովանդակության ներդաշնակեցում) և դինամիկ ներդաշնակեցում (օրենքի գործողության ներդաշնակեցում): Նշված ձևերի

²²⁸Տե՛ս **Якунин В.И.** Проблемы международной гармонизации железнодорожного права России. М., Научный эксперт, 2008. С. 12.

²²⁹Մանրամասն տե՛ս **Деягин М. Г.** Мировой кризис: Общая теория глобализации. М., Вече. 2003; **Уткин А.И.** Глобализация: процесс осмысления. М., Логос.2002.

²³⁰Մանրամասն տե՛ս Մաքսային միության մաքսային տարածքում ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտիների եվ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի հետ կապված հարցերի վերաբերյալ՝ համաձայնագիր (18.06.2010թ.) <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=95232/12.08.2018/>:

միջև առկա տարբերությունները հնարավորություն են ընձեռում կիրառել վերջիններիս ինչպես միաժամանակ, այնպես էլ հաջորդաբար²³¹:

Ստատիկ ներդաշնակեցումը ներառում է ներդաշնակեցում կոնկրետ օրենքի բովանդակության շրջանակներում (իրավունքի նորմերի ներդաշնակեցման մակարդակ, օրենքի տարրերի համաձայնեցում): Դրանք են՝ միջօբյեկտային ներդաշնակեցումը (երկու և ավելի օրենքների ներդաշնակեցում), մոնո-առարկայական ներդաշնակեցում (օրենսդրական ակտերի համաձայնեցում մեկ ընդհանուր իրավունքի կարգավորման առարկայի շրջանակներում) հիերարխիկ ներդաշնակեցումը (մի քանի օրենքների միաժամանակյա համաձայնեցում՝ հիմք ընդունելով վերջիններիս համապատասխանեցումն ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտին): **Դինամիկ ներդաշնակեցումն**, իր հերթին, ընդգրկում է օրենսդրության ժամանակավոր ներդաշնակեցումն ու ալգորիթմային ներդաշնակեցում: Օրենսդրության ժամանակավոր ներդաշնակեցումը ընդգրկում է օրենքների միջև եղած կոլիզիաների, հակասությունների հաղթահարումը առանց բովանդակային փոփոխությունների, ժամանակավոր բաղադրիչների փոփոխությունը, որոնք ընդգրկում են օրենքի ուժի մեջ մտնելու ժամանակն ու եղանակը, օրենքի ուժը կորցրած ճանաչելը, սահմանադրական վերահսկողության իրականացումը և այլ գործընթացներ: Իր հերթին, ալգորիթմային ներդաշնակեցումը ներառում է օրենքների գործողության հաջորդականության համաձայնեցումն ու իրավական նորմի հղման հիման վրա օրենքների հերթականությամբ ուժի մեջ մտնելը²³²:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ ներդաշնակությունը, հանդիսանալով իրավաբանական **նշանակություն ունեցող գործունեություն, անհնարին է առանց պետության իրավաստեղծ, օրինաստեղծ մարմինների համակարգված գործունեության:**

²³¹Մանրմասն տե՛ս **Пшеничнов М. А.** Гармонизация Российского законодательства (теория, практика, техника) Дисс.канд. юрид. наук. Нижний Новгород, 2011; **Кутафин Д.О.** Унификация и гармонизация норм права о залоге в международном частном праве: Дис... канд. юрид. наук.М., 2007; **Шестеряхова И.В.** Правовые нормы; проблемы унификации и гармонизации // Право и государство: теория и практика. М., 2008. № 4. (40). С.21-24.

²³²Տե՛ս **Пшеничнов М. А.** նշված աշխտ. էջ. 98-136; Унификация и гармонизация в международном частном праве. Вопросы теории и практики: монография / Отв. ред. **Дмитриева Г. К., Мажорина М. В.** 2016.

Միասնականացման (ունիֆիկացիայի) դեպքում, ի տարբերություն ներդաշնակեցմանը, ազգային իրավունքում ընդգրկվում են նույնական, միասնական իրավական նորմեր և ակտեր:

Քննարկվող հարցի շրջանակներում հարկ ենք համարում նշել, որ Բ.Վ. Մակոգոնը և Ս.Ա. Շետինինն առանձնացնում են **ներդաշնակեցման և միասնականացման երկու եղանակ**: Առաջինը՝ այդ հասկացությունները դիտարկվում են միջազգային-իրավական համատեքստում, երբ նշված գործընթացների իրավական ձևերն են հանդիսանում միջազգային պայմանագրերն ու միջազգային կազմակերպությունների բանաձևերը, այդ թվում՝ մոդելային բանաձևերն ու օրենքները: Օրինակ, ԱՊՀ-ի Միջխորհրդարանական վեհաժողովի՝ ԱՊՀ-ում ահաբեկչության, հանցավորության և թմրաբիզնեսի դեմ պայքարի ոլորտի օրենսդրության ներդաշնակեցման միացյալ հանձնաժողովի նիստում (30.05.2007թ.) ընդունվել են «Տրանսպորտում անվտանգության մասին», «Օդային տրանսպորտում անվտանգության մասին», «Մարդավաճառությանը հակազդելու մասին» և «Մարդավաճառության զոհերին օգնություն ցույց տալու մասին» մոդելային օրենքների նախագծերը, որոնք հետագայում ներկայացվել են մասնակից պետությունների խորհրդարաններին հաստատմանը: Ավելին, «Պաշտոնական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը հիմնավորվում էր, ոչ միայն 2015թ. սահմանադրական բարեփոխումներով, այլև՝ ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական տարածաշրջանի երկրների համար սահմանված ստանդարտներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ: Ընդ որում, վերոնշյալ նախագիծը մշակվել էր «Արևելյան Եվրոպայի, Կովկասի և կենտրոնական Ասիայի երկրների համար՝ ՄԱԿ-ի զարգացման հաշվի նախագծի» շրջանակում մշակված «Պաշտոնական վիճակագրության մասին» մոդելային օրենքի հիման վրա, որն իր հերթին մշակվել էր ՄԱԿ-ի վիճակագրական բաժնի՝ Նյու-Յորք, ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովի վիճակագրության բաժնի՝ Ժնև, Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրաստատ)՝ Լյուքսեմբուրգ, Եվրոպայի ազատ առևտրի ասոցիացիայի՝ Լյուքսեմբուրգ, փորձագետներից կազմավորված խմբագրական խորհրդի կողմից, որի

կազմում ներառվել էին մեկական ներկայացուցիչներ Ուկրաինայից և Հայաստանից²³³: Արդյունքում, 2018 թ. մարտի 21-ին ընդունվեց «Պաշտոնական վիճակագրության մասին» ՀՀ օրենքը²³⁴:

Հատկանշական է, որ իրավաբանական գրականությունում գոյություն չունի միասնական մոտեցում **մոդելային օրենքների էության և բովանդակության** վերաբերյալ: Այնուամենայնիվ, *համընդհանուր ճանաչում ստացած սահմանման համաձայն, մոդելային օրենք է հանդիսանում տիպային օրենսդրական ակտը, որը բովանդակում է հասարակական հարաբերությունների որոշակի ոլորտին վերաբերող հարցերի լուծման նորմատիվ-իրավական առաջարկություններ*²³⁵: Հետևաբար, մոդելային օրենքը չունի մեկ միասնական տեսք: Այն կարող է հանդես գալ խնդրի իրավաբանական տեխնիկայի պահանջներին համապատասխանող կոնկրետ խնդրի լուծման առաջարկություններն ու հիմնական հասկացությունները սահմանող իրավական ակտի նախագծի, հայեցակարգի տեսքով, որը պետությունն իր հայեցողությամբ, նախընդրած ծավալով կարող է դասել ազգային իրավունքին²³⁶:

Համամիտ ենք այն իրավագետների հետ (Ի.Լ. Բաչելո, Վ. Ի. Յակուբին , Ե.Վ. Շեստակովա), որոնք առաջարկում են առանձնացնել մոդելային օրենքի բնութագրիչ հատկանիշները: Դրանք են.

- 1) Մոդելային օրենքներն օժտված են խորհրդատվական բնույթով և հանդիսանում են իրավաբանական չափանիշ: Այսինքն, իրականացնում են նորմատիվ-խորհրդատվական դեր օրինաստեղծ գործունեությունում:
- 2) Մոդելային օրենքները հնարավորություն են ընձեռում օրենսդիր մարմնին, կամ պատվիրակված օրենսդրական լիազորություններով օժտված մարմնին ինքնուրույն որոշել մոդելային օրենքների կիրարկման չափը օրինաստեղծ գործընթացում:

²³³Տե՛ս «Պաշտոնական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի նախագիծ <https://www.e-draft.am/projects/433/12.05.2018թ./>

²³⁴Մանրամասն տե՛ս ՀՀ օրենք «Պաշտոնական վիճակագրության մասին»(21.03.2018թ.), <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150563/12.05.2018թ./>

²³⁵ Տե՛ս Большой юридический словарь/Под.ред. **Додонова В.Н.**, М.Инфра-М., 2001.С. 303:

²³⁶Մանրամասն տե՛ս Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ցուցումներին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 42 արձանագրային որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ Կառավարության N° 13 արձանագրային որոշում(05.04.2012թ.), [https://www.e-gov.am/protocols/item/159/./15.06.2018/:](https://www.e-gov.am/protocols/item/159/./15.06.2018/)

3) Եթե օրենսդիր մարմնի նպատակն է բարեփոխել գոյություն ունեցող օրենքը, ապա մոդելային օրենքը պետք է սերտորեն կապված լինի վերջինիս հետ և լրացնի օրենքով առկա բացերը:

Ինչ վերաբերում է **ներդաշնակության և միասնականացման երկրորդ ձևին, ապա** այն օժտված է ավելի «անկախ» ներպետական բնույթով: Այսինքն, պետության օրենսդրական փոփոխությունները հանդիսանում են այլ պետության օրենքների (կամ միջազգային իրավունքի) ցանկացած միտումների կամ ասպեկտների հիմնավորված և ողջամիտ ընկալման, ընդունման արդյունք: Այս պարագայում պետությունը ծանրաբեռված չէ միջազգային-իրավական պարտավորություններով: Դրա վառ օրինակ են հանդիսանում ԽՍՀՄ-ի փլուզումից հետո նորանկախ պետություններում ազատ շուկայական հարաբերությունների ձևավորում, օրենսդրական բարեփոխումների գործընթացը և այլն: Այնուամենայնիվ ակնհայտ է, որ նորանկախ պետության համար անհնար է լիարժեքորեն ազատվել միազգային-իրավական պարտավորություններից, կամ գերտերության ճնշումից²³⁷: Օրինակ, հետխորհրդային պետությունների վրա իր հսկայական ազդեցությունն են ունեցել ԱՄՆ-ն և Եվրոմիությունը, որոնք պետությանը հատկացված դրամաշնորհների, մերձեցմանն ու աղքատության վերացմանն ուղղված ծրագրերի միջոցով անուղղակի ներգործություն են իրականացրել ինչպես տնտեսության զարգացման, այնպես էլ իրավունքի գլոբալացման գործընթացի վրա: Նույնանման մոտեցում են ցուցաբերել նաև Առևտրի համաշխարհային կազմակերպությունն ու Հյուսիսատլանտյան դաշինք կազմակերպությունը: Իրավունքի գլոբալացման գործընթացում իրենց ուրույն տեղ են զբաղեցնում նաև անդրազգային կորպորացիաները, քանզի զարգացած երկրներն ու անդրազգային կորպորացիաները դրդում են ինքնին շխան պետություններին իրականացնել սոցիալ-տնտեսական, իրավական և ռազմական ոլորտի բարեփոխումներ՝ խոստանալով աջակցել վերոնշյալ ոլորտների արդիականացմանը:

²³⁷ Տե՛ս **Шестакова Е.В.** Модельное законодательство: Теоретико-правовые аспекты и практика применения. Дисс... канд. юрид. наук, М., 2006. С. 16-19; Տե՛ս նույնի *Отличие модельных законов от других единообразных актов // Право и государство: теория и практика. М., Право и государство. 2006. № 8. С. 134-144.*

Այնուամենայնիվ, այդպիսի ներգործության հետևանքով պետությունները հետզհետե կորցնում են իրենց ինքնիշխանությունն ու անկախությունը²³⁸:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ վերջին տասնամյակում միասնականացումը (ունիֆիկացիան) կրում է կոնկրետ նպատակաուղղված բնույթ: Օրինակ՝ մարդու իրավունքների եվրոպական չափանիշներին համապատասխանելու նպատակով, միասնականացվում են մի շարք ներպետական, ազգային իրավական նորմեր:

Ինչպես իրավագիտորեն բանաձևել է Վ.Հ. Հովհաննիսյանը. «Պետությունները պարտավոր են միջոցներ ձեռնարկել, որպեսզի ոչ միայն խուսափեն ներպետական իրավունքի և միջազգային իրավունքի կոլիզիայից, այլև ապահովեն ազգային իրավունքի համապատասխանությունը ստանձնած միջազգային իրավական պարտավորություններին»²³⁹: Գործնականում այդ համապատասխանությունը պետությունները ապահովվում են իմպլեմենտացիայի միջոցով:

Հատկանշական է, որ **իմպլեմենտացիան**, որպես միջազգային իրավունքի նորմերի անմիջական իրացման (կիրարկման) եղանակ, ընդգրկում է **ինկորպորացիան**, երբ միջազգային պայմանագրերի իրավաբանական ձևակերպումներն առանց փոփոխության, երբեմն բառացիորեն, ընգրկվում են ազգային-իրավական համակարգ, **փոխակերպումը (տրանսֆորմացիան)**, որի դեպքում փոփոխության է ենթարկվում տեքստն առանց վերջինիս իմաստի փոփոխության, որոշակի իրավաբանական տեխնիկայի շնորհիվ, և իրավաբանական **հղումը**, որն անմիջականորեն մատնանշում է սկզբնաղբյուրը՝ միջազգային

²³⁸Մանրամասն տե՛ս Կոնվենցիա Անդրազգային Կորպորացիաների մասին (06.03.1998թ.):, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=44010/12.05.2018թ./>; Տե՛ս նաև **Вернер К., Вайс Г.** Чёрная книга корпораций, Ультра. Культура. Екатеринбург. 2007.С. 42-58; **Лысенко Д. Л.** Проблема правового статуса транснациональных корпораций (международно-правовые аспекты).Дисс. ... канд. юрид. наук. М., 2003. С.49-75; **Осмнин Б.И.** Транснациональные корпорации и международное право. Дисс. ... канд. юрид. наук. М., 1983. С.11-24, 62-73; **Шевцова О.**, Правовая природа транснациональных корпораций//Журнал международного права и международных отношений, №4, М., 2008,С. 24-29; **Dohher W.J.** The multinational and the legitimation of sustainable development// Transnational corporation. New York and Geneva. 2017. Vol. 24, № 3. P.49-61; **Rugman A. M., Verbeke A.** Regional transnationals and Triad strategy// Transnational corporation. New York and Geneva. 2004. Vol. 13, № 3. P.1-21.

²³⁹Տե՛ս **Հովհաննիսյան Վ.Հ.** Միջազգային պայմանագրերի կատարման ազգային իրավական միջոցները, http://www.diplomat.am/publ/mijazgayin_paymanagrер knqum ev gorcacum/mijazgayin_paymanagreri katarman azgayin iravakan mijocnery/43-1-0-708/20.05.2018:

պայմանագիրը²⁴⁰: Ուշագրավ է, որ **արդի պետության և իրավունքի տեսությունում միջազգային իրավունքի նորմերի անմիջական կիրարկումը (հմալիմենտացիան) հաճախ անվանում են փոխակերպում (տրանսֆորմացիա), կամ զուտ ինկորպորացիա**: Այդ տեսակետի կողմակից են նաև հայրենական իրավաբանները: Այնուամենայնիվ, իրավաբաններից շատերը գտնում է, որ անհրաժեշտ է պահպանել «հմալիմենտացիա» եզրույթը, որպես ամբողջական բնութագրիչ հասկացություն, որի ներսում «փոխակերպումը» հանդիսանում է այդ հասկացության դրսորման եղանակ²⁴¹:

Ինչպես արդեն նշել ենք, **ինկորպորացիայի** ներքո դիտարկվում են այն դեպքերը, երբ օրենքի դրույթներն ամբողջովին համընկնում են միջազգային պայմանագրի դրույթներին: Ավելին, եթե նույնիսկ օրենքի տեքստն ամբողջովին պարունակում է միջազգային պայմանագրի բովանդակությունը, միևնույն է, այն մնում է որպես ներքին իրավունքի աղբյուր²⁴²: Այսպես, ինկորպորացիայի օրինակ կարող են լինել ՀՀ քրեական օրենսգրքի այն հոդվածները, որոնք նվիրված են ցեղասպանություն ու էկոցիդ հանցագործություններին, քանի որ գրեթե նույնությամբ կրկնվում են ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու» մասին կոնվենցիայի առանձին դրույթներ՝ ավելացրած ցեղասպանության հանցագործության համար նախատեսվող պատժատեսակն ու պատժաչափը միայն, ինչպես նաև «Շրջակա միջավայրի վրա ներգործության միջոցների ռազմական կամ ցանկացած այլ թշնամական օգտագործման արգելման» մասին Կոնվենցիան²⁴³:

Փոխակերպման գործընթացում համապատասխան միջազգային պայմանագրի նորմերը անցնում են վերամշակում, վերածնակերպում նախքան ազգային

²⁴⁰Տե՛ս **Бездров Ю.С.** Интеграция как международно-правовой метод правовой конвергенции//Lex Russica. М., № 12(133). 2017. С. 124-132; **Вельяминов Г.М.** Понятие международного частного права и наука о транснациональных частноправовых отношениях. Труды /Института государства и права Российской академии наук, М., №3.2015.С. 127-151; **Усенко Е.Т.** Соотношение и взаимодействие международного и национального права и Российская Конституция // Московский журнал международного права. М., 1995. № 5. С. 13–28.

²⁴¹Տե՛ս **Հովհաննիսյան Վ. Հ.**, նշված աշխտ.:

²⁴²Տե՛ս նույն տեղում:

²⁴³Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրք (ընդ. 18.04.2003թ.), հոդվ. 393,394, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=69646/20.05.2017թ./>; «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու» մասին կոնվենցիա (09.12.1948թ.), <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75835/20.05.2017թ./>; «Շրջակա միջավայրի վրա ներգործության միջոցների ռազմական կամ ցանկացած այլ թշնամական օգտագործման արգելման» մասին Կոնվենցիա (ընդ. 18.05.1977թ.) <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=76863/20.05.2017թ./>:

օրենսդրության մեջ ընգրկվելը: Նորմերի փոխակերպումը պայմանավորված է ներազգային իրավական անվանդոյթներով, չափորոշիչներով:

Ուշագրավ է Վ.Հ. Հովհաննիսյանի դիրքոշումն այն մասին, որ փոխակերպումը կարող է դրսևորվել ինկորպորացիայի, ռեցեպցիայի և հղման միջոցով: Նշված եղանակների օգնությամբ, որոնց ամբողջությունը միջազգային պրակտիկայում անվանվում է նաև իմպլեմենտացիա, պետություններն իրենց միջազգային պայմանագրային պարտավորությունները փոխակերպում են ազգային իրավունքի և ապահովում դրանց կատարումը:

Միջազգային պայմանագրային նորմերի ուղիղ փոխակերպման դեպքում պետության կնքած, ուժի մեջ մտած պայմանագիրը ձեռք է բերում օրենքի ուժ: Նման փոխակերպման համար իրավական հիմք է հանդիսանում այն, որ շատ պետություններ միջազգային իրավունքը ճանաչել են իրենց ներքին իրավունքի մաս կամ ընդունում են, որ միջազգային իրավական նորմերն իրավաբանական ուժով վեր են ներպետական օրենսդրությունից:

3.2. Համեմատական իրավունքի պատմական զարգացումը իրավունքի գլոբալացման ակունքներում

Իրավահամեմատական վերլուծությունը և համեմատական իրավունքը իրենց պատմական զարգացման ընթացքում ունեցել են բազմաթիվ պատճառներ, սակայն այդ պատճառների շարքում առանձնահատուկ տեղ է զբաղեցրել հենց առկա իրավական համակարգերի միջև հակասությունների վերացումը և դրանց միավորումը մեկ՝ համընդհանուր իրավական տրամաբանության և իրավունքի ներքո: Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ համեմատական իրավունքը անբաժան է իրավունքի գլոբալացման գործընթացից:

Իրավագիտությունում՝ համեմատական իրավունքի առաքելությունը իրավունքի գլոբալացման գործընթացում լիարժեք ընկալելու նպատակով անհրաժեշտ է անդրադարձ կատարել համեմատական իրավունքի պատմական զարգացմանը՝

բացահայտելու համար տարբեր ժամանակաշրջանների և ազգերի իրավագետների և փիլիսոփաների վերաբերմունքը համեմատական իրավունքի նկատմամբ²⁴⁴:

Համեմատական իրավունքի պատմությունն ուսումնասիրելու դեպքում միայն կկարողանանք պատասխանել հետևյալ հարցերին՝

- Ի՞նչն է ստիպել տարբեր ժամանակների իրավագետներին ուսումնասիրել իրավունքի պատմությունը, օտարերկրյա իրավունքը և կատարել այդ ուսումնասիրությունների համեմատական վերլուծություն,

- Արդյո՞ք առկա է համեմատական իրավունքի և իրավունքի գլոբալիզացիայի միջև պատճառահետևանքային կապ: Եթե այո, ապա ինչպես է այն դրսևորվում, և դրսևորվում է արդյոք ուղղակի կամ անուղղակի կապի միջոցով:

Համեմատական իրավունքը և իրավահամեմատական վերլուծությունը, ժամանակակից իմաստով, սկիզբ են առել 20-րդ դարի սկզբին, սակայն գիտական շրջանակներում տարածված է այն կարծիքը, որ, այնուամենայնիվ, իրավահամեմատական վերլուծությունը սկիզբ է առել ավելի վաղ: Այսպես, իրավագետների գերակշիռ մասը իրավահամեմատական վերլուծության վերաբերյալ պատմական ակնարկ կատարելիս նշում է Հունաստանի անտիկ ժամանակաշրջանի ամենաառաջավոր փիլիսոփաներին²⁴⁵: Համեմատական իրավունքի առաջացման համար առաջին քայլերը կատարած հույն փիլիսոփաների շարքում հարկ է նշել հատկապես Արիստոտելին, որն իր հայտնի «Քաղաքականություն» աշխատության մեջ կատարել է համեմատական վերլուծության մեզ հայտնի փորձը: Դրա մասին է գրել Հարվարդի համալսարանի հայտնի իրավագետ Չ. Դոնահյուն, նշելով. «Եթե միավորենք Արիստոտելի «Քաղաքականություն» գործը վերջինիս տեղեկատվության հավաքելու ջանքերի հետ, ապա քիչ կլինեն կասկածները այն մասին, որ Արիստոտելի և իր դպրոցի կատարածը հանդիսանում է իրավահամեմատական իրավունք»²⁴⁶: Ուշագրավ է Կ. Յվայգերտի և Հ. Քեթցի անդրադարձը համեմատական իրավունքի պատմությանը, որի շրջանակներում իրավագետները դիտարկում են Պլատոնին, քանի որ վերջինս իրականացրել է հունական քաղաք-պետությունների օրենքների

²⁴⁴Տե՛ս **Марченко М.Н.** Сравнительное правоведение.Уч., 2-е изд., М., Проспект. 2013.

²⁴⁵Տե՛ս The Oxford Handbook of Comparative Law/ Ed. **Reimann M., Zimmermann R.**, Oxford. OUP. 2012. P. 2-4.

²⁴⁶Տե՛ս նույն տեղում, էջ 5:

համեմատություններ դրանց հիման վրա ներկայացնելով կատարյալ սահմանադրության նախագիծը²⁴⁷: Ավելին, անդրադարձ կատարելով անտիկ Հունաստանի հայտնի օրենսդիրներ Լիկուրգոսին (Սպարտա, մ.թ.ա. IX-VIII դդ.), Դրակոյին (Աթենք, մ.թ.ա.VII դ.) և Սողոնին (Աթենք, մ.թ.ա.VII-V դդ.) Ռ. Սկարսիգլիան նշում է, որ վերջիններս ճանապարհորդել են բազմաթիվ տարիներ՝ հյուրընկալելու համար այն պետությունները, որտեղ առկա են եղել առավել լավ օրենքներ²⁴⁸: Վերոնշյալ ակնարկներից կարելի է եզրակացնել, որ նույնիսկ համեմատական իրավունքի առաջացման ամենավաղ շրջանում հիմնական նպատակը եղել է առկա իրավական համակարգի զարգացման համար լավագույն իրավական մտքի բացահայտումը:

Հույն փիլիսոփաների և օրենսդիրների գործը համեմատական իրավունքի զարգացման ասպարեզում շարունակել են Հին Հռոմի օրենսդիրները և իրավագետները: Նշվածին հարկ է հավելել նաև այն, որ վերոնշյալ ժամանակաշրջանում օրենսդրությունը զարգացվում էր բացառապես ուժեղ պետությունների կողմից՝ իրենց ազդեցության տարածման շրջանակներում, ինչի արդյունքում բազմաթիվ պետությունների օրենքները մշակելիս առավելապես կարևորվում էր ոչ թե դրանց արդյունավետությունը կամ տվյալ երկրի ավանդույթների հետ համահունչ լինելը, այլ՝ տվյալ հզոր երկրի հրամայական պահանջը: Հռոմեացի իրավագետների կողմից կատարվել են բազմաթիվ փորձեր Հռոմեական և օտար իրավունքի համեմատական ուսումնասիրությունների գործում, սակայն առավել համակարգված մեթոդալոգիա կարելի է տեսնել 212 թվականի «Անտոնինուսի Սահմանադրությունում»²⁴⁹, քանի որ այդ փաստաթղթով փորձ է կատարվել վերացնել հռոմեական և օտար իրավունքների միջև առկա հակասությունները: Նմանատիպ երևույթ է հանդիսանում նաև *Jus gentium*-ը՝ սովորույթային իրավունքը, որի նորմերով էին կարգավորվում օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց միջև առաջացող իրավահարաբերությունները: Վ. Դ. Ավետիսյանի համաձայն՝ մասնավոր

²⁴⁷Տե՛ս **Zweigert K., Koetz H.** An Introduction to Comparative Law/trad. Weir T., 3rd ed., Oxford.OUP., 1998.P.49-52.

²⁴⁸Տե՛ս **Scarciglia R.** A Brief History of Legal Comparison: A Lesson from the Ancient to Post-Modern Times// Beijing Law Review. №06(04). 2015. P. 296-310.

²⁴⁹Մարկուս Ավրելիոս Անտոնինուս Կարակալլա կայսրի հրամանը, որի համաձայն Հռոմեական կայսրության բոլոր ազատ բնակչությանը շնորհվել է Հռոմի քաղաքացիություն:

իրավունքի այս ճյուղի զարգացման հիման վրա էլ ձևավորվել է ներկայիս միջազգային իրավունքը²⁵⁰: Ըստ Չ.Պ. Շերմանի, Աստվածային իրավունքը (Lex Dei) կամ «Մովսեսի և հռոմեական օրենքների համեմատությունը» (Collatio legum Mosaicarum et Romanorum) հանդիսանում է համեմատական իրավունքի ամենից հին աշխատություններից, որտեղ հատկապես ուսումնասիրվում են դելիկտային իրավունքի և քրեական իրավունքի նմանություններն ու տարբերությունները²⁵¹:

Իրավահամեմատական վերլուծության հետագա զարգացումը տեղի է ունենում արդեն միջնադարում՝ մանավանդ Արևմտյան Հռոմեական Կայսրության անկման (476 թվական) և գերմանական ցեղերի ներխուժման ժամանակահատվածում, երբ հռոմեականից էականորեն տարբերվող գերմանական իրավունքը հռոմեականի հետ զուգահեռ կիրառվում էր կայսրության տարածքում: Նշված հանգամանքը ստիպեց ժամանակի իրավաբան-փիլիսոփաներին զբաղվել հռոմեական և գերմանական իրավունքների համեմատական ուսումնասիրություններով: Մինևույն ժամանակ, միջնադարում իրավունքի համեմատական վերլուծության պատճառ էր եկեղեցական կամ կանոնական իրավունքի զարգացումը: Սա պայմանավորված էր նրանով, որ այդ ժամանակի իրավագետների և մտավորականության մեծամասնությունը հանդիսանում էին եկեղեցու սպասավորներ: Իրավունքի ոլորտում համեմատական ուսումնասիրություններով էին զբաղվում նաև միջնադարյան գիտական զարգացումը առաջ տանող Բոլոնիայի համալսարանից սերված գիտնականները՝ գլոսատորները, ինչպես նաև վերջիններիս հետևորդները՝ ետգլոսատորները (մեկնիչներ կամ կոմենտատորներ), որոնք «ձգտում էին վերարտադրել հռոմեական իրավունքի ոգին, նրա էությունը և դրա համար ստեղծում էին ընդհանրական հասկացություններ»²⁵²: Ետգլոսատորների աշխատանքն իրենից ներկայացնում էր պարբերական համեմատությունների կատարում այդ ժամանակաշրջանում գործող իրավունքների, հատկապես՝ գերմանական և կանոնական իրավունքների կամ գերմանական և հռոմեական իրավունքների միջև:

²⁵⁰Տե՛ս Ավետիսյան Վ.Դ. Հռոմեական մասնավոր իրավունք, Եր., ԵՊՀ հրատ., 2013, էջ 13:

²⁵¹Տե՛ս Sherman C. Ph. Roman Law in the Modern World. Boston. Boston Book Co. 1917.P 415-418.

²⁵²Սաֆարյան Գ.Հ., Եսայան Ա.Կ., նշված աշխտ., էջ 99:

Հռոմեական կայսրությունից ի վեր **Հռոմեական իրավունքի մասով տեղի էր ունեցել իրավունքի գլոբալացում**, քանի որ մինչև 17-րդ դարը իրավագետների կողմից ուսումնասիրվող տարբեր իրավական համակարգերը համեմատության մեջ էին դրվում հենց Հռոմեական իրավունքի հետ, որը հանդիսանում էր այդ ժամանակաշրջանների քաղաքակիրթ պետությունների կողմից ամենից կիրառելի իրավունքը և ուներ նմուշային նշանակություն պետությունների համար իրենց ազգային իրավական համակարգերի զարգացման գործում: 17-18-րդ դարերում համեմատական վերլուծության զարգացում տեղի ունեցավ Անգլիայում, պայմանավորված ընդհանուր իրավունքի (common law) և արդար իրավունքի (equity) ունիֆիկացմամբ: Այս ժամանակաշրջանում, Եվրոպայում իրավահամեմատական վերլուծությունների կատարման հիմնական խթանը հանդիսանում էին տարբեր երկրների կամ տարածաշրջանների իրավունքների միջև ընդհանրությունների հայտնաբերումը, ինչն անհրաժեշտ էր «բոլորի կողմից ընդունելի տեսակետը» կամ «ընդհանուր սկզբունքը» (Communis opinio) հասկանալու և դատարաններում կիրառելու համար²⁵³: Միևնույն ժամանակ, Հյուսիսային Ամերիկայում իրավահամեմատական վերլուծություն կատարելու հիմնական պատճառն էր հանդիսանում անգլիական և ֆրանսիական իրավունքների քաղաքական բախումը: Այսպես, եթե ամերիկացի դատավորները և իրավագետները կիրառում էին Անգլիական իրավունքի վերաբերյալ Վ. Բլեքսթոնզի մեկնաբանությունները, ապա Ֆրանսիական հեղափոխությունից հետո լիբերալ Հյուսիսային ամերիկացիները մեծ հետաքրքրություն էին ցուցաբերում ֆրանսիական իրավունքի նկատմամբ:

19-րդ դարը ժամանակակից իմաստով համեմատական իրավունքի համար հանդիսացել է սկզբնական կետ: Սա կարող է պայմանավորված լինել նրանով, որ այդ դարաշրջանի բազմաթիվ փիլիսոփաների ուսումնասիրության առարկան էր հանդիսանում «գիտության փիլիսոփայությունը»: Փիլիսոփայության այս ուղղության հետևորդների շարքում հարկ է նշել Ջ. Ս. Միլլին, ով իր աշխատություններում բազմիցս նշել է. *«դատողությունը չի հանդիսանում հայեցակարգերի միջև*

²⁵³Այդ ժամանակաշրջանում, համեմատական վերլուծություն են իրականացրել հանրահայտ մտավորականներ, որոնցից են՝ Ջ. Սելդենը, Հ. Հրոցիոսը, Ջ. Վիկոն և իշխանությունների բաժանման սկզբունքի հիմնադիրը համարվող Շ.-Լ. Մոնտեսքյուն(տե՛ս **Scarciglia R.** A նշված աշխտ. էջ 302:)**Ջ**

հարաբերությունների ճանաչում, այլ հանդիսանում է փաստերի օրինաչափության (հաջորդականության), համակեցության կամ նմանության ճանաչում, իսկ հիմնավորումը դա երկու հասկացությունների համեմատումն է երրորդի միջոցով (ներքո)»²⁵⁴: Գերմանիայում, 19-րդ դարի առաջին կեսին համեմատական իրավունքի զարգացման գործում հատկապես մեծ ներդրում ունեցավ տվյալ ժամանակաշրջանի ամենահայտնի քրեական իրավունքի դասախոս Պ. Ֆեյերբախը, ով ձևակերպեց «Համեմատական իրավունքի համընդհանուր գիտության» տեսությունը: Ըստ Պ. Ֆեյերբախի՝ իրավագիտությունը էմպիրիկ (փորձարարական) գիտություն է, սակայն այն սահմանափակված չէ ժամանակով և տարածությամբ: Ավելին, վերջինիս ուսումնասիրության առարկա պետք է լինի բոլոր ժամանակների և ազգերի իրավունքը, իրավական ինստիտուտները, ինչն էլ պետք է ուղեկցվի համեմատություններով²⁵⁵:

Ֆրանսիայում, 19-րդ դարում, նույնպես նկատվեց այլ իրավական համակարգերի ուսումնասիրության հետաքրքրություն: Դեռևս 1801 թվականին Նապոլեոն Բոնապարտի կողմից ստեղծվել էր կենտրոն, որը զբաղվում էր այլ պետությունների ամենից կարևոր օրենքների դասակարգմամբ, թարգմանությամբ և ուսումնասիրությամբ: Նշված կենտրոնը սակայն երկար կյանք չունեցավ և սահմանափակվեց բացառապես պրուսական պետությունների ընդհանուր օրենսգրքի թարգմանությամբ²⁵⁶: Այնուամենայնից, արդեն 1831 թվականին Փարիզում գտնվող Ֆրանսիայի քոլեջում բացվում է Համեմատական իրավունքի ամբիոնը, որը ուներ պատմության և փիլիսոփայության ուղղվածություն: Այդ ժամանակաշրջանի, համեմատական իրավունքով զբաղվող ֆրանսիացի իրավագետների շարքում հարկ է նշել Է. Լամբերտին, ով նշում է, որ «լեհ, ռումինացի, չեխ և հարավսլավիացի իրավագետները լավ հասկացել են, որ իրենց մասնակցությունը համեմատական իրավունքի շարժմանը հանդիսանում է լավագույն միջոցը աշխատելու իրենց ազգային իրավունքը ունիֆիկացիոն կերպով կողիֆիկացիայի ենթարկելու վրա: Մարդու

²⁵⁴Mill J. S. A System of Logic Ratiocinative and Inductive Presenting: A Connected View of the Principles of Evidence and the Methods of Scientific Investigation. CreateSpace Independent Publishing Platform. 2.P. 205; Նոյնի՝ An examination of Sir William Hamilton's philosophy, and of the principal philosophical questions discussed in his writings. 2nd ed., London. Longmans Co., 1865. P.445-447.

²⁵⁵Տե՛ս Hug W. The History of Comparative Law// Harvard Law Review. Vol. 45. № 6. 1932.P. 1027-1070.

²⁵⁶Տե՛ս Scarciglia R. A նշված աշխտ. էջ 304:

«համեմատական հոգեբանության» կարևորության վերաբերյալ է. Լամբերտը նշում է, որ մարդու հոգեբանությունը, հիմնված փորձի վրա, էականորեն առանձնացված է համեմատական հոգեբանությունից, քանի որ վերջինս շատ օբյեկտիվ է²⁵⁷: Հեղինակը մեծ ներդրում է ունեցել համեմատության գործնական նշանակության զարգացման գործում, ներկայացնելով իրավական համեմատության իրականացման երկու տարբեր փուլերը: Այսպես, առաջին փուլում հետազոտողը հաստատում է յուրաքանչյուր օրենսդրության ընդհանուր տարրերը, իրավական համակարգերի և ինստիտուտների վերլուծության միջոցով, իսկ երկրորդ փուլով համեմատություն իրականացնողը ներկայացնում է իր վերլուծության արդյունքները՝ հետագայում օրենսդիրների կամ այլ պետությունների իրավագետների կողմից կիրառման համար:

Անգլիայում համեմատական իրավունքի զարգացումը մեծ թափ առավ 19-րդ դարի կեսերին, երբ Վ. Բուրժը, բավարարելով օտարերկրյա իրավունքի վերաբերյալ այդ ժամանակաշրջանի անգլիացի իրավագետների պահանջը, հրապարակեց այդ խնդրի վերաբերյալ իր աշխատությունները²⁵⁸: Ավելի ուշ, 1854 թ., Լ. Լևին արդեն ցանկանալով բավարարել անգլիացի **առևտրականների պահանջները** այլ երկրների առևտրականների հետ հարաբերություններում, գրեց մեկ այլ, ոչ պակաս հեղինակավոր իրավահամեմատական աշխատություն «*Առևտրային իրավունքը, դրա սկզբունքները և կառավարում, Մեծ Բրիտանիայի առևտրական իրավունքը համեմատած Հռոմեական իրավունքի հետ և 59 այլ երկրների*²⁵⁹ օրենսգրքերի և օրենքների հետ» խորագրով, որում նա համեմատում է անգլիական առևտրային իրավունքը (այդ իրավունքի տարբեր ինստիտուտները) աշխարհի գրեթե բոլոր երկրների իրավունքների հետ: Հարկ է նշել, որ Լ. Լևին, ներկայացնում է առևտրային իրավունքի վերաբերյալ **միջազգային համընդհանուր օրենսգրքի ստեղծման**

²⁵⁷Տե՛ս **Lambert É.** Comparative psychology, Extrait de Encyclopaedia of the social science, volume 4, New York 1959.P. 126-129:

²⁵⁸Տե՛ս **Burge W., Wood Renton A., Grenville Phillimore G., Bewes W. A.** Burge's Commentaries on Colonial and Foreign Laws, generally, and in their conflict with each other, and with the law of England.1907.P.3-5.

²⁵⁹Վերնագրում նշվում են բոլոր 59 երկրները:

գաղափարը, որը հանդիսանում է իրավունքի մի ամբողջ ճյուղի ունիֆիկացման առաջին առաջարկն աշխարհում ²⁶⁰:

Իսպանիայում համեմատական վերլուծությունն իր զարգացումն էր ապրում հատկապես սահմանադրական իրավունքում: Հարկ է նշել հատկապես Օվիեդո համալսարանի դասախոս Ադոլֆո Պոսադային, ով գրել է իր «Քաղաքական իրավունք» հայտնի աշխատությունը, որը չնայած առաջին հերթին հանդիսանում է գիտական աշխատանք սահմանադրական իրավունքի վերաբերյալ, սակայն ներառում է սահմանադրական իրավունքի համեմատական վերլուծության բազմաթիվ տարրեր: Իսպանական համեմատական իրավունքի գործում մեծ ներդրում է ունեցել նաև Գումերսինդո դե Ասկարատեն, ով 1873-1915 թվականներին եղել է Մադրիդի համալսարանի Համեմատական իրավունքի ամբիոնի ղեկավարը և մեծ ներդրում է ունեցել Իսպանիայի համեմատական իրավունքի զարգացման գործում:

ԱՄՆ-ում 19-րդ դարի սկզբին տիրում էր ընդդիմադիր մթնոլորտ Անգլիական իրավունքի դեմ, որը պայմանավորված 18-րդ դարի վերջին Անգլիայի հետ «Անկախության պատերազմով»: Այս ժամանակահատվածում օրենքով արգելվում է դատարաններում անգլիական իրավական նյութերի կիրառումը: Օրինակ, Նյու Ջերսիում, ոչ միայն արգելվում էր անգլիական դատական նախադեպի կիրառումը, այլ նաև արգելված էր որևէ հավաքածուի, մեկնաբանությունների, դասախոսությունների, գիտական աշխատությունների կամ այլ՝ ընդհանուր իրավունքի նյութերի կիրառումը²⁶¹: Անգլիական իրավունքի անտեսման ժամանակաշրջանում ԱՄՆ-ում համեմատական իրավունքի կիրառման գործում մեծ ներդրում ունեցան Ջ. Սթորին և Ջ. Կենտը ովքեր հանդիսանում էին Հռոմեական և Եվրոպական (հատկապես՝ Ֆրանսիական) իրավունքի ակտիվ հետևորդներ: Ջ. Սթորիի և Ջ. Կենտի վճիռներն, աշխատությունները և աշխատանքները, հատկապես Կենտի «*Ամերիկյան իրավունքի մեկնաբանություններ*» (“*Commentaries on American Law*”) աշխատությունը, մեծ ազդեցություն ունեցավ ամերիկյան իրավագիտության վրա²⁶²: ԱՄՆ-ում,

²⁶⁰Տե՛ս **Zweigert K., Koetz H.** An Introduction to Comparative Law/trad. Weir T., 3rd ed., Oxford.OUP., 1998.P. 56:

²⁶¹Տե՛ս **Friedman L. H.** History of American Law. New York. Touchstone. 3rd ed., 2005. P.98:

²⁶²Մանրամասն տե՛ս **Commentaries on American Law/Ed.J. Kent**, NY.,V.1.1826; **Pound R.**, The Influence of the Civil Law in America, V.1. 1938.P 1-17:

համեմատական իրավունքի զարգացման գործում մեծ ներդրում է ունեցել նաև Ջ. Բրջեսը, ով իր 1891 թ. «Քաղաքագիտություն և համեմատական սահմանադրական իրավունք» գրքում պետական կառավարման տեսանկյունից կարևորում է սահմանադրական իրավունքում իրավահամեմատական վերլուծության կատարումը:

Համեմատական իրավունքի զարգացման գործում կարևոր նշանակություն ունեն 1900 թվականին Փարիզում կայացած «Համեմատական իրավունքի առաջին միջազգային համագումարը» որին մասնակցում էին մասնագետներ Եվրոպական տարբեր երկրներից, և նրանց քննարկման առարկան էր համեմատական իրավունքի բնույթը, նպատակը և ընդհանուր հետաքրքրությունը: Համագումարում կարևոր նշանակություն էր տրվել **«քաղաքակիրթ աշխարհի համար ընդհանուր իրավունքի» ստեղծման գաղափարը**, ինչը պետք է կատարվեր միջազգային իրավունքի միջոցով: Այնուամենայնիվ, համագումարի հիմնական թեման հանդիսանում էր համեմատական իրավունքը և կողմնակցական (քանի որ համագումարին մասնակցում էր ընդամենը մեկ անգլիացի իրավագետ, իսկ մնացած իրավագետները եվրոպական մայրցամաքի այնպիսի երկրներից էին, որոնք հանդիսանում էին ռոմանոգերմանական իրավական ընտանիքի անդամ): Համագումարի մասնակիցների կարծիքով համեմատական իրավունքը հետապնդում էր երկու նպատակ. **տարբեր իրավահամակարգերի ընդհանուր խնդիրների բացահայտումը և համեմատական ուսումնասիրության գործառույթները, նպատակները և մեթոդաբանությունը**: Համեմատական իրավունքի առաջին միջազգային համագումարից հետո համեմատական իրավունքը մեծ տարածում ձեռք բերեց բազմաթիվ երկրներում: Իրավունքի այս ճյուղի զարգացումը հատկապես արագացավ Առաջին համաշխարհային պատերազմից հետո, պայմանավորված աշխարհում բազմաթիվ հետազոտական կենտրոնների ստեղծմամբ:

Գերմանիայում համեմատական իրավունքի զարգացման գործում մեծ ներդրում ունեցավ Է. Ռաբելը, ով 1917թ. հիմնադրեց Գերմանիայում համեմատական իրավունքի առաջին ինստիտուտը (Kaiser Wilhelm Gesellschaft): Ռաբելը ունի համեմատական իրավունքի բազմաթիվ աշխատություններ, որոնք էական ազդեցություն են թողել ժամանակի իրավագետների և համեմատական վերլուծության մեթոդոլոգիայի զարգացման վրա: Է. Ռաբելի համաձայն, իրավական կանոնները և

հասկացությունները դատավորների կողմից կիրառելի են բոլոր իրավական համակարգերի կողմից, որոնց միջև առկա իրավական հակասությունները լուծվում են համեմատական իրավունքի կիրառմամբ²⁶³: Այս մոտեցման հետ համաձայն էին համեմատական իրավունքի բազմաթիվ իրավագետներ, ինչն էլ էականորեն նպաստեց աշխարհում համեմատական իրավունքի զարգացմանը:

Այսպիսով, ուսումնասիրելով համեմատական իրավունքի պատմության ամենանշանակալից պահերը, կարող ենք նշել, որ համեմատական իրավունքի զարգացման տարբեր փուլերում համեմատական իրավունքի նպատակը և շարժիչ ուժը տարբեր են եղել: Այսպես.

- Հին Հունաստանում, փիլիսոփաների կողմից այլ քաղաք-պետությունների կամ ազգերի իրավական համակարգերի ուսումնասիրությունները ուղղված են եղել առկա իրավունքի զարգացմանը, ինչի լավագույն օրինակն է Պլատոնի «կատարյալ սահմանադրությունը»: Իր հերթին, Հին Հռոմում «բացարձակ իրավունքի» վերհանումն կատարվում էր ոչ թե օբյեկտիվ ուսումնասիրությունների հիման վրա, այլ առավելապես հռոմեական իրավունքի, որպես բացարձակ իրավունքի, առաջխաղացման և ազդեցության տարածման միջոցով: Ակնհայտ է իրավունքի մասնակի գլոբալացումը հռոմեական իրավունքով, քանի որ այն լինելով հին դարերում ամենազարգացածը, աստիճանաբար դառնում է հին աշխարհում տարածքային առումով (Հռոմեական կայսրության ընդլայնմանը զուգահեռ) ամենակիրառելի իրավունքը: Համեմատական իրավունքը գործում էր հենց այդ ուղղությամբ:

- Միջնադարում և Վերածննդի ժամանակաշրջանում Հռոմեական իրավունքը պահպանել էր իր, որպես համընդհանուր իրավունքի, ազդեցությունը նախկին Հռոմեական կայսրության տարածքում, ուստի նույնիսկ գերմանական ցեղերի և եկեղեցական իրավունքի վերելքի պայմաններում համեմատական իրավունքի նպատակներից էր շարունակում մնալ Հռոմեական իրավունքի, որպես համընդհանուր իրավունքի կիրառման ապահովումը: Հռոմեական իրավունքի մասնակի գլոբալացումն միջնադարում այնպես ամուր էր ներթափանցել իրավագիտության մեջ, որ նույնիսկ

²⁶³ **Rheinstein M.** In Memory of Ernst Rabel//The American Journal of Comparative Law. V. 5. Issue 2, Spring 1956. P. 185-196.

գերիշխող եկեղեցական իրավունքը ուսումնասիրվում և համեմատվում էր Հռոմեական իրավունքի հետ:

- 17-18-րդ դդ. համեմատական իրավունքի ուսումնասիրության առարկան «ընդհանուր սկզբունքի» և «համընդհանուր արդարության» բացահայտումն էր: Այս ժամակաշրջանում համեմատական իրավունքի միջոցով իրավունքի գլոբալիզացիային հասնելու ձգտումն այնքան մեծ էր, որ նույնիսկ առաջին անգամ առաջարկվեց վերազգային կազմակերպության ստեղծման գաղափարը: Իր հերթին, 19-րդ դարում համեմատական իրավունքը «գիտության փիլիսոփայության» զարգացմանը զուգահեռ ունեցավ մեթոդաբանական զարգացում, ինչի արդյունքում գիտական ուսումնասիրություններում սկսեց առանձնահատուկ կերպով կարևորվել համեմատական վերլուծությունը: Այս ժամանակաշրջանում, համեմատական իրավունքի կիրառման մեջ կարևորվում էր հատկապես **համընդհանուր իրավական զարգացումը**: Իրավունքի ընդհանուր զարգացմանը զուգահեռ, մի շարք կարևոր օրենսգրքերի (հատկապես՝ Ֆրանսիայի և Գերմանիայի քաղաքացիական օրենսգրքերի) և այլ իրավական ակտերի մշակումը, որպես իրավունքի կոնկրետ ճյուղերի կողմնակցի առաջին քայլեր ժամանակակից իմաստով, իսկ որոշ դեպքերում՝ նաև իրավունքի կոնկրետ ճյուղի համեմատական ուսումնասիրությունները մի շարք երկրների իրավական համակարգերի վերաբերյալ, հանգեցրին ոչ միայն ազգային իրավունքի ունիֆիկացմանն, այլև առաջ քաշեցին միջազգային համընդհանուր օրենսգրքի ստեղծման գաղափարը և հիմք նախապատրաստեցին միջազգային ունիֆիկացիոն գործընթացների համար: Սա, համեմատական իրավունքի միջոցով իրավունքի գլոբալացման առաջին իրավագիտական և գործնականում հիմնավորված դրսևորումներն էին, ինչի արդյունքում առաջացավ միջազգային իրավունքը ժամանակակից իմաստով, ինչն էլ հանդիսանում էր իրավունքի գլոբալիզացիայի ամենավառ դրսևորումը:

- 20-րդ դարը վստահաբար կարող ենք համարել իրավունքի գլոբալացման առաջին փուլ, քանի որ հենց այս ժամանակաշրջանում էր, որ միջազգային իրավունքն իր զարգացումն ապրեց և դարձավ իրավունքի լիարժեք ճյուղ: Դեռևս 1900թ. Փարիզում կայացած «Համեմատական իրավունքի առաջին միջազգային

համագումարից» համեմատական իրավունքի հեղինակավոր իրավագետների կողմից կարևորվում էր «քաղաքակիրթ աշխարհի համար ընդհանուր իրավունքի» ստեղծման գաղափարը, ինչը պետք է կատարվեր իրավահամեմատական վերլուծությունների միջոցով **տարբեր իրավահամակարգերի միասնականացմամբ և ընդհանուր խնդիրների բացահայտմամբ, իրավունքի զարգացման գործում համեմատական իրավունքի կիրառմամբ և, ի վերջո, իրավունքի գլոբալիզացիայի ամենավառ դրսևորումը հանդիսացող միջազգային իրավունքի զարգացման միջոցով:**

Ինչպես տեսնում ենք, համեմատական իրավունքի զարգացման գրեթե բոլոր ժամանակաշրջաններում «բացարձակ իրավունքի», իրավունքի «ընդհանուր սկզբունքների» կամ համընդհանուր իրավունքի գաղափարը միշտ առկա է եղել, չնայած գրեթե բոլոր ժամանակաշրջաններում համեմատական իրավունքի նպատակը եղել է իրավունքի զարգացումը:

Այսպիսով, տարբեր ժամանակների և պետությունների իրավական համակարգերը պարբերաբար միմյանցից փոխառել են իրավական մտքի լավագույն դրսևորումները և օրինակ են հանդիսացել պետությունների իրավունքի զարգացման համար, արդյունքում բերելով **իրավունքի անուղղակի գլոբալիզացիայի, որտեղ գործիքը հանդիսացել է համեմատական իրավունքը, իսկ մեթոդը՝ իրավահամեմատական վերլուծությունը:**

3.3. Իրավունքի գլոբալացման ներառումը գլոբալացման ինդեքսներում .

տեսական-կիրառական առանձնահատկություններ

Գլոբալացումն օբյեկտիվ գործընթաց է և, ի հավելումն տեսաբանների կողմից կատարվող տեսական ուսումնասիրությունների, գործնականորեն հաշվարկվող և գնահատվող երևույթ է: Այն որոշակի հարթություններում ազդում է տրամաբանորեն չափելի տարրերի՝ ցուցանիշների վրա, որոնք էլ գլոբալացման աստիճանի չափման հաշվարկների փոփոխականներն են: Ինդեքսների հաշվարկման եղանակները միասնական չեն, ուստի տարբեր ինդեքսներում կիրառվում են տարբեր փոփոխականներ: Միևնույն ժամանակ տարբեր ինդեքսների հաշվարկներում կիրառվող բազմաթիվ տարրեր շատ հաճախ կրկնվում են: Դրանց շարքում են

հատկապես առևտուրը, օտարերկրյա ուղղակի կամ ածանցյալ ներդրումները, տուրիզմը, տրանսֆերտային վճարումները, համացանցի օգտագործման հետ կապված մի շարք ցուցանիշներ, իսկ իրավաքաղաքական ոլորտում՝ անդամակցությունը միջազգային կազմակերպություններին: **Այնուամենայնիվ, գլոբալիզացման ինդեքսների հաշվարկներում չեն ներառվում իրավունքի գլոբալիզացման դրսևորումները: Կարծում ենք, որ ինդեքսների հաշվարկներն առավել ճշգրիտ դարձնելու նպատակով անհրաժեշտ է հաշվի առնել նաև իրավունքի գլոբալացման ցուցանիշները:**

Գլոբալացման ինդեքսներում իրավունքի գլոբալացման տարրերի ներառման հարցը քննարկելու համար անհրաժեշտ է նախ և առաջ հասկանալ, թե գլոբալացման չափման ինչպիսի ինդեքսներ գոյություն ունեն, և ինչ տարրեր են ներառվում այդ ինդեքսներում: Այնուհետև, ելնելով այն կանխավարկածից, որ իրավունքի գլոբալացումը հանդիսանում է ներկայումս փաստացիորեն տեղի ունեցող գործընթաց, կփորձենք ներկայացնել այն իրավական ցուցանիշները, որոնք իրավական մասով կարող են լրացնել ներկայումս առկա ինդեքսները և դարձնել դրանք առավել ճշգրիտ և իրական: Գլոբալացման ինդեքսներում իրավական ցուցանիշների կիրառման առաջարկը կրում է բացառապես տեսական-կիրառական բնույթ, ուստի սույն աշխատության շրջանակներում չի քննարկվի իրավական ցուցանիշներին որպես փոփոխականների՝ թվային արտահայտություն տալու հարցը:

Գլոբալացման ինդեքսների ներդրման գործում մեծ ավանդ ունեցող պրոֆեսոր Ու. Ռեննենի և Պ. Մարտենսի կողմից տրված գլոբալացման բնորոշման համաձայն՝ *«ժամանակակից գլոբալացումը բնորոշվում է որպես ազգերի միջև փոխհարաբերությունների ինտենսիֆիկացիա, որը խրախուսում է անդրազգային կառույցների հիմնադրումը, ինչպես նաև՝ մշակութային, տնտեսական, էկոլոգիական, քաղաքական, տեխնոլոգիական և սոցիալական գործընթացների համաշխարհային ինտեգրացիան համաշխարհային, անդրազգային, ազգային, տարածաշրջանային և տեղային մակարդակներում»*²⁶⁴:

²⁶⁴Տե՛ս **Rennen W., Martens P.** The Globalisation Timeline, The Integrated Assessment Journal, Vol. 4.№3, 2003.P. 142-146:

Գլոբալացման հովանու ներքո ինտենսիֆիկացվող վերոնշյալ գործընթացներին չափելի արտահայտություն տալու դեպքում հնարավոր է դառնում պատկերացում ստանալ գլոբալացման չափի մասին և համեմատել տարբեր երկրների գլոբալացման աստիճանները: Իրավագետները ուսումնասիրելով Քերնիի արտաքին քաղաքականության ինդեքսը, նշում են. «Գլոբալացումը փոխկապվածությունների համակարգ է, որը ներառում է ազգային տնտեսության վերաբաշխումը ինտեգրված աշխարհի տնտեսության մեջ ապրանքների և արտադրական գործոնների շարժի առավելագույն քիչ խոչընդոտներով»²⁶⁵:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ ներկայում առկա են գլոբալացման բազմաթիվ ինդեքսներ, որոնք հիմնականում դասակարգվում են 2 մեծ խմբի՝ սինթետիկ ինդեքսներ և միատարր (single) ինդեքսներ²⁶⁶: Այսպես Պ. Սամիմին ու Ա. Բուանգը մանրակրկիտ ուսումնասիրության ենթարկելով ինդեքսների տարատեսակները, **սինթետիկ ինդեքսների** շարքում նշել են հետևյալները.

- Քերնիի արտաքին քաղաքականության ինդեքսը (Kearney/Foreign Policy կամ KFP Index of Globalisation),
- ԿՕՖ գլոբալիզացիայի ինդեքսը (KOF Index of Globalization) ²⁶⁷,
- Գլոբալացման կամ տարածաշրջայնացման ուսումնասիրության կենտրոնի կողմից մշակված ինդեքսը²⁶⁸
- Մասստրիխտի գլոբալիզացիայի ինդեքսը (Maastricht Globalization Index կամ MGI),
- Գ-ինդեքսը (G-Index)²⁶⁹,
- Նոր գլոբալիզացիայի ինդեքսը (New Globalisation Index կամ NGI):

²⁶⁵Տե՛ս **Bhandari A. K., Heshmati A.** Measurement of Globalization and Its Variations Among Countries, Regions and Over Time, Institute of Labor Economics, Discussion Paper Series No. 1578. 2005. P. 37:

²⁶⁶Տե՛ս **Samimi P., Lim Ch. G., Buang A. A.** Globalization Measurement: Notes on Common Globalization Indexes, Scientific Papers, Issue 7. 2011. P. 5:

²⁶⁷KOF Index of Globalization, KOF-ը «Konjunkturforschungsstelle» գերմաներեն բառի հապավումն է, ինչը թարգմանավար նշանակում է Տնտեսական ցիկլի հետազոտման ինստիտուտ: Այդ մասին մանրամասն տե՛ս <https://www.kof.ethz.ch/en/forecasts-and-indicators/indicators/kof-globalisation-index.html/,/05.01.2017/>:

²⁶⁸«Centre for the Study of Globalisation and Regionalisation» Վարվիկի համալսարանի Քաղաքագիտության և միջազգային ուսումնասիրությունների բաժնի միջդիսցիպլինար ուսումնասիրության կենտրոն է: <https://warwick.ac.uk/fac/soc/pais/research/researchc/csgr/,/05.01.2017/>:

²⁶⁹Ինդեքսի անվանման մեջ «Գ» տառը «գլոբալիզացիա» բառի հապավումն է:

Ինչ վերաբերում է **միատարր ինդեքսներին**, ապա հեղինակները ինդեքսները դասակարգելիս, առանձնացնում են հետևյալ երկու ուղղություններ. 1) Առևտրային գլոբալացում, որը ներառում է միջին տարիֆային տոկոսադրույքներն ու մատչելիությունը, և 2) Ֆինանսական գլոբալացումը, որն ընգրկում է արժույթի միջազգային հիմնադրամի սահմանափակումների չափում, արտաքին ուղղակի ներդրումներ, ինչպես նաև՝ արտաքին ակտիվներ և պարտավորություններ:

Որոշ ինդեքսներում (օրինակ՝ ԿՕՖ գլոբալիզացիայի ինդեքսում) առանձնացվում են **դե ֆակտո և դե յուրե գլոբալացման հաշվարկներ**: Ի տարբերություն դե յուրե հաշվարկների՝ դե ֆակտո հաշվարկներում հաշվի են առնվում բացառապես փաստացի, թվերով արտահայտված տվյալներ, օրինակ՝ համախառն կապիտալի հոսքը, օտարերկրյա ուղղակի ներդրումները և այլն:

Միատարր ինդեքսների դեպքում առավելապես կարևորվում է առևտրի և ֆինանսների միջոցով տեղի ունեցող տնտեսական գլոբալացումը, իսկ սինթետիկ ինդեքսների դեպքում հեղինակները փորձում են հաշվի առնել գլոբալացումը պայմանավորող բոլոր տարրերը և փոփոխականները: Ուստի, հաշվի առնելով, որ սույն հոդվածի նպատակներից են գլոբալիզացիայի ինդեքսների կատարելագործումը և դրանք իրականությանն ավելի մոտեցնելը, իրավունքի գլոբալիզացիայի տարրերի ավելացմամբ կուսումնասիրվեն սինթետիկ ինդեքսները, և իրավունքի գլոբալիզացիայի տարրերի առաջարկը կկատարվի հենց այդ ինդեքսների համար:

Մեր նպատակն է՝ գլոբալացման ինդեքսների կատարելագործումն ու դրանք իրականությանն ավելի մոտեցնելը իրավունքի գլոբալացման տարրերի ավելացմամբ: Այդ պատճառով, թեմայի շրջանակներում ուսումնասիրելով սինթետիկ ինդեքսները, առաջարկում ենք ներմուծել իրավունքի գլոբալացման տարրերը սինթետիկ ինդեքսների համատեքստում:

Հարկ է նշել, որ, ի թիվս վերոնշյալ ինդեքսների, առկա են նաև գլոբալացման վիճակագրական այլ ցուցանիշների վերաբերյալ աշխատություններ: Դրանցից է, օրինակ՝ ՏՀԶԿ տնտեսական գլոբալացման ցուցանիշը, Համաշխարհային բանկի զարգացման ցուցանիշները, ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողովի «Զարգացում և գլոբալացում. Փաստեր և ցուցանիշներ» աշխատությունը և

Համաշխարհային քաղաքականության համաժողովի աղյուսակները և դիագրամները²⁷⁰:

Այսպես, **Քերնիի արտաքին քաղաքականության** ինդեքսը համարվում է գլոբալացման չափման առաջին ինդեքսներից մեկը, որի մեթոդը հիմնված է եղել դեռևս 1998թ.-ին, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի զարգացման ինդեքսի վրա: Ինդեքսների հաշվարկման մեթոդաբանության վերաբերյալ առավել լավ պատկերացում կազմելու համար նշենք, որ այս ինդեքսի հաշվարկման մեթոդը ներառում է 4 հաջորդական գործողությունների կատարում.

1. Որոշվում են այն փոփոխականները, որոնք պետք է ներառվեն ինդեքսի հաշվարկման գործում:

2. Որոշվում են փոփոխականների քանակական միավորները:

3. Քանակական միավորները համապատասխանեցվում են միմյանց (օրինակ՝ մի փոփոխականը կարող է արտահայտված լինել մարդկանց քանակով, մեկ այլ փոփոխականը ունենա դրամական արտահայտություն):

4. Վերոնշյալ համապատասխանեցված քանակական միավորները հաշվարկվում են սովյալ երկրի գլոբալիզացման աստիճանը ստանալու համար²⁷¹:

ԿՕՖ գլոբալացման ինդեքսը մշակվել է գերմանացի տնտեսագետ Աքսել Դրեհերի կողմից, որն ի տարբերություն մնացած գիտնականների, տարանջատում է ինդեքսում հաշվարկվող դե ֆակտո և դե յուրե տարրերը²⁷²:

Մասստրիխտի գլոբալացման ինդեքսը զարգացրել են Պ. Մարտենսը և Դ. Ժիվիչը 2006թ.-ին, վերամշակվել է 2008 թ.ին՝ Պ. Մարտենսի և Մ. Ռազայի կողմից, իսկ 2015 թ.ին՝ վերոնշյալ հեղինակների միացել է Լ. Ֆիզը²⁷³: Եթե Մասստրիխտի գլոբալացման ինդեքսը ծածկում էր 117 երկրներ, ապա ԿՕՖ գլոբալացման ինդեքսը, 2006 թվականի դրությամբ, ծածկում էր 122 երկիր՝ 1970-2002թթ., իսկ ներկայիս

²⁷⁰Տե՛ս **Akram Ch. M., Faheem M.A.,Khyzer Bin Dost M., Abdullah I.** Euro Indicator//Selected Readings, Focus on: Measuring Globalization. European Commission, Luxembourg. Vol. 2. № 23. 2011. P. 291-297.

²⁷¹Տե՛ս **Lockwood B.** How Robust is the Foreign Policy/Kearney Index of Globalisation?, CSGR Working Paper № 79/01. 2001. P. 3:

²⁷²Տե՛ս **Gygli S., Haelg F., Sturm J.-E.** The KOF Globalisation Index -Revisited, KOF Working Papers, No. 439, 2018. P. 11:

²⁷³Տե՛ս **Martens P., Figge L.S.** New Directions in Globalization Indices// Globalizations, Maastricht. V. 12, № 2, 2015. P. 217-228:

ծածկում է 207 երկիր՝ 1970-2014 թթ. կատարված դիտարկումների արդյունքների հիման վրա: Չնայած վերոնշյալ ինդեքսների վերլուծության մեթոդաբանությունները նման են, սակայն օժտված են նաև տարբերություններով: Օրինակ՝ Մասստրիխտի գլոբալացման ինդեքսը ներառում է նաև շրջակա միջավայրի փոփոխականը, իսկ ԿՕՖ գլոբալիզացիայի ինդեքսում այն բացակայում է:

Գ-ինդեքսը կիրառվել է Համաշխարհային շուկայի ուսումնասիրության կենտրոնի կողմից: Այս ինդեքսը արժանացել է քննադատությունների այն պատճառով, որ հանդիսանում է գլոբալացումը ամբողջությամբ չափող ինդեքս, սակայն իրականում այն հիմնականում (90 տոկոսով) կենտրոնացած է տնտեսական ոլորտի վրա²⁷⁴:

Հանդիսանալով առավել նոր ինդեքս, **Նոր գլոբալացման ինդեքսի** հիմնական առանձնահատկությունն այն է, որ այն ունի 21 փոփոխական, որոնցից 5-ը երբևէ չեն կիրառվել մյուս ինդեքսներում (որոնց անդրադարձ է կատարվել մեր աշխատության շրջանակներում) : Հաշվի առնելով Գ-ինդեքսի՝ դեպի առավելապես տնտեսական ոլորտ ունեցած ուղղվածությունը՝ աղյուսակ 1-ում ներկայացված են միայն Քերնիի արտաքին քաղաքականության, ԿՕՖ գլոբալացման, Մասստրիխտի գլոբալացման և Նոր գլոբալացման սինթետիկ ինդեքսների ցուցանիշները²⁷⁵:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ գլոբալացման ինդեքսների թերություններից է այն հանգամանքը, որ այս ինդեքսները չեն ներառում բոլոր այն տարրերը, որոնք գլոբալացման չափումը կարող են դարձնել ավելի ճշգրիտ: Շատ դեպքերում դա պայմանավորված է այդ տարրերի վերաբերյալ տեղեկատվության հասանելիությամբ և որակով²⁷⁶: Արտասահմանյան իրավագետներից շատերը նշում են, որ գլոբալացման էության վերաբերյալ նոր հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ է միջգիտակարգային համագործակցություն՝ մեթոդոլոգիաների, փոփոխականների, դրանց միավորների ընտրության և այլ խնդիրների լուծման համար: Այսպես, **հավելված 1-ում** ներկայացված ինդեքսների խմբավորումներում, ինդեքսներում հաշվարկվող փոփոխականները խմբավորվում են հիմնականում ըստ տնտեսական,

²⁷⁴Տե՛ս **Apostoaie M. C.** Measuring economic globalization – Facts and Figures, The Annals of the Stefan cel Mare University of Suceava, Fascicle of the Faculty of Economics and Public Administration, Vol. 11. No. 2(14), 2011. P.107:

²⁷⁵Տե՛ս Հավելված 1, էջ 187:

²⁷⁶Տե՛ս **Potrafke N.**, The Evidence on Globalisation//The World Economy, 2015, V. 38. Issue 3.P. 512:

Ֆինանսական, սոցիալական և մշակութային ոլորտների, ընդ որում՝ որոշ դեպքերում այդ խմբերը կարող են ներառված լինել այլ խմբում, կամ մի խումբը ունենա ենթախմբեր, որոնք այլ ինդեքսի դեպքում հանդես են գալիս առանձին խմբի տեսքով²⁷⁷:

Կատարված ուսումնասիրությունների հիման վրա առաջարկում ենք իրավունքի գլոբալացման տարրերը ներառել քննարկվող սինթետիկ ինդեքսներում: Նախ և առաջ անհրաժեշտ է հավելված 1-ի քննարկվող ինդեքսներում ավելացնել «Իրավական ոլորտ» կամ նմանատիպ անվանմամբ խումբ: Իրավական ոլորտը առանձին նախատեսելու անհրաժեշտությունը պայմանավորված է նախ և առաջ նրանով, որ յուրաքանչյուր պետության մեջ առկա տնտեսական, սոցիալական կարևորագույն ոլորտների հետ միևնույն հարթության վրա է գտնվում նաև իրավականը: Ավելին՝ վերջինս իր գործողությամբ ուղղակիորեն առնչվում է բոլոր մնացած ոլորտներին, քանի որ բոլոր մյուսների կարգավորումները կատարվում են իրավական մակարդակում՝ համապատասխան իրավական նորմերի սահմանմամբ: Իրավունքը մշտապես սերտ կապի մեջ է տնտեսագիտության կամ սոցիոլոգիայի հետ: Այսպես, Մ.Ն. Մարչենկոն նշում է, որ տնտեսական գործընթացների պետական-իրավական կարգավորմամբ չմիջնորդավորված զարգացումը կարող է հանգեցնել նյութական արտադրության ամբողջ համակարգի խանգարմանը և անկմանը: Նմանատիպ կապ առկա է նաև սոցիոլոգիայի և իրավագիտության մեջ, երբ սոցիոլոգիան, ուսումնասիրելով հասարակության և նրա անդամների վարքագիծը, ուղղակի կախվածության մեջ է իրավագիտությունից, քանի որ յուրաքանչյուր հասարակության կարգավորման գործում առավել որոշիչ դեր ունեն հենց իրավական նորմերով տրվող կարգավորումները: Ուստի, տնտեսական, սոցիալական գլոբալացման տարրերի մասին խոսելիս անհրաժեշտ է դրանց հետ զուգահեռ անդրադարձ կատարել նաև իրավունքին և իրավական գլոբալացմանը, քանի որ իրավունքի գլոբալացումով պայմանավորված իրավական համակարգի փոփոխությունները անխուսափելիորեն բերում են մյուս ոլորտների, հասարակության

²⁷⁷Մասստրիխտի գլոբալացման ինդեքսում ֆինանսական բնույթի տարրերը ներառված են «Տնտեսական ոլորտ» խմբում, իսկ ԿՕՖ գլոբալացման ինդեքսում «Մշակութային գլոբալացումը» հանդիսանում է «Սոցիալական գլոբալացման» խմբի ենթախմբերից մեկը:

գլոբալիզացվածության աստիճանի բարձրացմանը՝ այդպիսով ազդելով պետության ընդհանուր գլոբալիզացման մակարդակի վրա:

Գլոբալացման առկա ինդեքսներում իրավական գլոբալացման տարրերին ուրոշակի անդրադարձ կարելի է համարել «միջազգային կազմակերպություններ» և «միջազգային պայմանագրեր» ցուցանիշների առկայությունը, որոնք ներառվում են «քաղաքական ոլորտ» խմբի մեջ: Չնայած նրան, որ «քաղաքական ոլորտ» խումբը որոշ հեղինակներ համարում են գլոբալացման ինդեքսներում առկա բաղադրիչներից ամենամեծ նպաստող տարրը²⁷⁸, այնուամենայնիվ կարծում ենք «միջազգային պայմանագրերը», ինչպես նաև սույն աշխատության մեջ առաջարկվող մի շարք ցուցանիշներն անհրաժեշտ է խմբավորել առանձին՝ «իրավական ոլորտ» խմբում: Նշվածը կարող ենք հիմնավորել նրանով, որ միջազգային պայմանագրերը, լինելով քաղաքական որոշումների արդյունք (ինչպես անդամակցությունը միջազգային կազմակերպություններին), էական ազդեցություն են ունենում տվյալ երկրի իրավական համակարգի վրա:

Հասկանալու համար, թե իրավունքի գլոբալացումը ինչպիսի ազդեցություն է ունենում պետության և հասարակության վրա, անհրաժեշտ է անդրադարձ կատարել նաև իրավունքի գործառույթներին: Իրավունքի գլոբալացման դեպքում տարբեր համակարգերում այդ գործառույթները կատարող իրավական նորմերը միասնականացվում են: Արդի գլոբալ պայմաններում իրավունքի հիմնական գործառույթները կարելի է դասակարգել հետևյալ կերպ²⁷⁹.

1) Հասարակական հարաբերությունները կարգավորող գործառույթներ (մարդկանց գործողություններին հաղորդում են համաձայնեցվածության, կարգավորվածություն, վստահություն):

2) Հասարակական կարգի պաշտպանության միջոցներ (հասարակության վտանգավոր և վնասակար արարքների համար սահմանում է իրավական պատասխանատվության միջոցներ),

²⁷⁸Տե՛ս **Bhandari A. K., Heshmati A.** Measurement of Globalization and Its Variations Among Countries, Regions and Over Time, Institute of Labor Economics, Discussion Paper Series No. 1578, 2005, էջ 37:

²⁷⁹Տե՛ս **Матузов Н.И. Малько А. В.**, Теория государства и права. Учебник, Москва, Издательство «Юристъ», 2004, էջ 71:

3) Գլոբալ առաջընթացի համատեքստում հասարակության թարմացման և զարգացման գործառույթներ (նպաստում է այն սոցիալական կապերի զարգացմանը, որոնցով հետաքրքրված է հասարակությունը),

4) Արդի գլոբալ (սոցիալական, էկոլոգիական և այլ) խնդիրների լուծմանն ուղղված գործառույթներ,

5) Հասարակությունում անհատի իրավունքները, ազատություններն ու պարտականությունները սահմանող գործառույթներ:

Ինչպես տեսնում ենք, իրավունքի վերոնշյալ գործառույթներից գրեթե բոլորն ուղղված են հասարակության և հասարակական հարաբերությունների զարգացման միջոցով անդամների վարքագծի կարգավորմանը, ուստի հասարակության ցանկացած ոլորտ, հասարակության անդամների ցանկացած գործառույթ կամ գործունեության ոլորտ ենթակա են իրավունքի միջոցով իրավական կարգավորման: Իրավունքի գլոբալացման դեպքում տեղի է ունենում տարբեր պետությունների իրավական կարգավորումների միասնականացում, ինչն անխուսափելիորեն իր ազդեցությունն է ունենում նաև մարդկային գործունեության մյուս ոլորտների վրա: Այսպիսով, ընդունելով իրավունքի կարևորությունը հասարակության մեջ, մարդկային գործունեության բոլոր ոլորտներում և ընդգծելով իրավունքի գլոբալացման՝ պետության ընդհանուր գլոբալիզացման աստիճանը հաշվարկելու գործընթացի վրա ունեցած ազդեցությունը, անհրաժեշտ է վեր հանել այն իրավական տարրերը, որոնք կարող են լինել գլոբալացման աստիճանի ցուցանիշներ, և որոնք անհրաժեշտ է ներառել գլոբալացման սինթետիկ ինդեքսների ցուցանիշների շարքում:

Գլոբալացման սինթետիկ ինդեքսներում «իրավական ոլորտ» խմբի մեջ առաջարկում ենք ներառել իրավունքի գլոբալացման հետևյալ ցուցանիշները.

1. Ազգային իրավունքում միջազգային իրավական սկզբունքների դրսևորումները:

Ազգային իրավական համակարգի գլոբալիզացման թերևս առաջին ցուցանիշներից կարող է լինել միջազգային լավագույն փորձի կիրառությունը, ինչի մասին կարող է վկայել միջազգայնորեն ընդունված իրավունքի **սկզբունքների** առկայությունը տվյալ իրավական համակարգում: Վ.Ս. Ներսիսյանցն իրավունքի սկզբունքները

բնորոշում է որպես *այնպիսի ընդհանուր նորմ-սկզբունքներ, որոնք ամբողջ ազգային իրավունքի կամ իրավունքի ճյուղի համար հիմնասյուներ են և սահմանում են ընդհանուր հասկացությունները (ընգդ. մերն է՝ Ա. Տ.-Բ.)*²⁸⁰: Ըստ Լ.Ա. Մորոզովայի՝ «իրավունքի սկզբունքները այն հիմնարար գաղափարներն են, որոնք ամրագրված են իրավունքի պաշտոնական աղբյուրներում, կամ որոնք ճանաչում են ձեռք բերել իրավական գործունեությունում և արտացոլում են հասարակական հարաբերությունների զարգացման օրինաչափությունները» (ընգդ. մերն է՝ Ա. Տ.-Բ.)²⁸¹: Օրինակ՝ անգլոսաքսոնական իրավական ընտանիքում իրավունքի ընդհանուր սկզբունքները ձևավորվում են դատական նախադեպի միջոցով և այդ նախադեպերի արդյունքում, իսկ ռոմանագերմանական համակարգում իրավունքի ընդհանուր սկզբունքները ձևավորվում են իրավունքի պատմական զարգացման ընթացքում, հատկապես դոկտրինալ մակարդակում և հաշվի են առնվում իրավաստեղծ գործընթացում: Լ.Ա. Մորոզովան իրավունքի սկզբունքները բաժանում է ընդհանուր իրավական, միջճյուղային և ճյուղային սկզբունքների, ինչից հետևում է, որ իրավական համակարգում միջազգային սկզբունքների դրսևորումները կարելի է գտնել ինչպես ընդհանուր իրավունքում, այնպես էլ՝ իրավունքի կոնկրետ ճյուղերում²⁸²:

2. Միջազգային պայմանագրերի կիրառումը և դրանց ինկորպորացվածության աստիճանը

Գլոբալացման ինդեքսներում անհրաժեշտ է ուսումնասիրել միջազգային պայմանագրերը ոչ միայն քանակային առումով, ինչպես ԿՕՖ դե յուրե սկզբունքների «միջազգային պայմանագրեր» ցուցանիշի դեպքում, այլև՝ հաշվի առնելով, թե որքան են դրանք կիրառվում այն վավերացրած պետությունում և որքանով են ինկորպորացված ազգային համակարգերում: Միջազգային պայմանագրերը գրեթե բոլոր պետություններում ունեն առավել բարձր իրավական ուժ, քան տվյալ երկրի օրենքները և մյուս նորմատիվ իրավական ակտերը: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածն ամրագրում է. «Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության

²⁸⁰Տե՛ս **Нерсесянц В. С.**, Проблемы общей теории права и государства.М.,Норма. 2001, էջ 135:

²⁸¹Տե՛ս **Морозова Л. А.** Теория государства и права. Учебник. 4-е издание, М.,Эксмо. 2010, էջ 193:

²⁸²Տե՛ս նույն տեղում, էջ 194:

դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը»²⁸³: Այնուամենայնիվ միշտ չէ, որ միջազգային պայմանագրի բարձր իրավական ուժը ենթադրում է այդ փաստաթղթով ամրագրված իրավական նորմերի կիրառում: Սա պայմանավորված է հասկապես այդ փաստաթղթերում ամրագրված նորմերի ընդհանուր բնույթով կամ այդպիսի փաստաթղթերով նախատեսվող իրավական ինստիտուտների լայն կարգավորումներով: Միջազգային պայմանագրերի իրավական նորմերի ընդհանուր բնույթը և ընդարձակ կարգավորումները բերում են ազգային իրավունքում դրանց ինկորպորացման հարցին, ինչը, կարծում ենք, ստեղծում է լրացուցիչ երաշխիքներ այդ նորմերի կիրառման համար, և ինչի արդյունքում այդ նորմերի կիրառման համար նախատեսվում են անհրաժեշտ ներպետական կարգավորման լծակներ: Այսպես, եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու վերաբերյալ միջազգային համաձայնագրերը նախատեսում են որոշ դրույթներ, որոնց կիրառման համար անհրաժեշտ է ազգային իրավունքում այդ լայն նորմերի մասնավորեցում²⁸⁴: Օրինակ՝ նշված համաձայնագրերում (ինչպես ՏՀԶԿ-ի, այնպես էլ ՄԱԿ-ի մոդելային համաձայնագրերի դեպքում) նախատեսում է «մշտական հաստատություն» կամ «մշտական ներկայացուցչություն» հասկացությունը, որը, սակայն, ներառում է բավականին լայն շրջանակ, ինչի արդյունքում անհրաժեշտություն է առաջանում հարկային օրենսդրության մակարդակում նախատեսել այդ հասկացությունը և տալ այդ ինստիտուտի առավել մասնավոր և մանրամասն կարգավորում²⁸⁵: (ՀՀ հարկային օրենսգիրք, հոդված 27): Միաժամանակ, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, ամրագրելով մարդու բոլոր հիմնարար իրավունքները և ազատությունները, ներառում է ընդամենը 30 հոդված: Փաստաթղթի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ հռչակագրում նշված իրավունքները կրում են ընդհանուր բնույթ, և դրանց ուղղակի, իրավիճակային կիրառման համար առկա է մասնավորեցման, պարզաբանման անհրաժեշտություն: Այդ նպատակով

²⁸³ՀՀ Սահմանադրություն (փոփ. 06.12.2015թ.), հոդվ. 5, մաս 3, <http://www.president.am/hy/constitution-2015/12.06.2017/>:

²⁸⁴Հայաստանի Հանրապետության կողմից կրկնակի հարկումը բացառելու մասին կնքած պայմանագրերի ցանկը ներկայացված է հետևյալ հղումով՝ <http://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTLDoubleTaxationAvoidance/12.06.2017/>:

²⁸⁵Տե՛ս ՀՀ Հարկային օրենսգիրք (ընդ. 04.10.2016թ.), հոդվ. 27, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=109017/12.06.2017/>:

նշված իրավունքներն ամրագրվում են օրենսդրական մակարդակում (ընդհուպ՝ սահմանադրությունում), ինչի հիման վրա էլ ձևավորվում է այդ իրավունքների պաշտպանության և կիրառման երաշխիքների անհրաժեշտ նորմատիվ-իրավական բազան: Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում կարևոր դեր է կատարում նաև նախադեպերի կիրառումը ազգային դատարանների կողմից, ինչն էլ իրավունքի գլոբալացման հաջորդ ցուցանիշի քննարկման առարկան է:

3. Միջազգային դատական կամ արբիտրաժային նախադեպերի կիրառումը:

Իրավունքի գլոբալացման կարևոր ցուցանիշներից է միջազգային դատական կամ արբիտրաժային նախադեպերի կիրառումը ազգային դատարանների և արբիտրաժային տրիբունալների կողմից որոշումների կայացման գործում, որի շնորհիվ իրավունքի գլոբալացումը օրենսդրական կարգավորումների մակարդակից տեղափոխվում է նախադեպային կարգավորման մակարդակ: Եթե միջազգային դատական նախադեպերի կիրառումը ենթադրում է այնպիսի միջազգային դատարանների կողմից կայացված որոշումների կիրառում, որոնց կայացրած որոշումները միջազգային պայմանագրի ուժով նախատեսում են պարտադիր կիրառելիություն տվյալ երկրում, ապա արբիտրաժային որոշումների նախադեպային կիրառումը առավելապես պայմանավորված է տվյալ արբիտրաժային տրիբունալի հայեցողությամբ: Եթե միջազգային դատարանների կողմից տվյալ պետության համար պարտադիր որոշումների կիրառումը պայմանավորված է տվյալ երկրի իրավակիրառ բարձր մակարդակով, ապա միջազգային արբիտրաժային որոշումների նախադեպային կիրառումը, կրելով ոչ պարտադիր բնույթ, պայմանավորված է իրավագիտակցության մակարդակով և ավելի կիրառելի ցուցանիշ է տվյալ երկրում իրավունքի գլոբալացման մակարդակը ցույց տալու համար: Սույն ցուցանիշի կիրառումը ենթադրում է առավելապես ազգային դատարանների կողմից միջազգային «պարտադիր» նախադեպի կիրառման քանակային ուսումնասիրություն: Օրինակ՝ ՀՀ իրավական համակարգում միջազգային դատական նախադեպերի կիրառման ցուցանիշ կարող է լինել ոչ միայն ՀՀ Սահմանադրական դատարանի կամ ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներում, այլ նաև առավել ցածր դատական աստիճաններում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պարտադիր իրավական ուժ ունեցող

որոշումներին կատարվող անդրադարձների, իսկ արբիտրաժային որոշումների դեպքում, համապատասխանաբար, ՀՀ Արբիտրաժային տրիբունալների կողմից միջազգային հեղինակավոր արբիտրաժային տրիբունալների կայացրած որոշումներին կատարվող անդրադարձների քանակը:

Ամփոփելով վերոնշյալը՝ առաջարկում ենք սինթետիկ ինդեքսներում ավելացնել «իրավական ոլորտ» խումբը, իսկ այդ խմբի ներքո ավելացնել հետևյալ ցուցանիշները. 1) Ազգային իրավունքում միջազգային իրավական սկզբունքների դրսևորումները, 2) Միջազգային պայմանագրերի կիրառումը և դրանց ինկորպորացվածության աստիճանը, 3) Միջազգային դատական կամ արբիտրաժային նախադեպերի կիրառումը:

Ինչպես նշվեց, ինդեքսներում իրավական ցուցանիշների ներառման առաջարկությունը կրում է զուտ տեսական-կիրառական բնույթ, ինչով փորձ է կատարվում ինդեքսներով զբաղվող մասնագետների ուշադրությունը սևեռել նաև այն իրավական տարրերի վրա, որոնք ազդում են ընդհանուր գլոբալացման վրա, և որոնց ներառումը հնարավորություն է տալիս գլոբալացման չափումը դարձնել ավելի ճշգրիտ և օբյեկտիվ: Գլոբալացման ինդեքսներում «իրավունքի գլոբալացում» խմբի ներքո վերոնշյալ ցուցանիշներին թվային արտահայտություն տալը կարող է տեղի ունենալ միջմասնագիտական ուսումնասիրության արդյունքում, երբ իրավագետների կողմից առաջարկվող իրավունքի գլոբալացումը արտահայտող տարրերին գլոբալացման ինդեքսներով զբաղվող մասնագետները կփորձեն տալ ինդեքսներում ներառված մյուս ցուցանիշների հետ համաձայնեցված թվային արտահայտություններ:

3.4. Իրավակարգավորիչ մրցակցության առանձնահատկությունները իրավունքի գլոբալացման համատեքստում

Արդի ժողովրդավարական, իրավական պետությունում գլոբալացման գործընթացներում միասնականացման է ենթարկվում գրեթե ամեն ինչ՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հասկացություններից մինչև պետական կառավարման ու կառուցվածքի ձևեր: Ինչպես ցույց է տալիս ժամանակակից իրավաստեղծ պրակտիկան, համաշխարհային գլոբալացումից անմասն չեն մնում նաև

հասարակական հարաբերությունները կարգավորող ընդհանուր կանոնները՝ իրավունքի նորմերը: Իրավունքի նորմերի գլոբալիզացիայի ապահովման գործում էական նշանակություն ունեն հատկապես հետևյալ գործոնները (երևույթները)՝

- զարգացած պետությունների կողմից իրենց ազդեցության տարածումը զարգացող պետությունների վրա,

- վերազգային կազմակերպությունների ստեղծումը և դրանց մասնակիցների իրավական համակարգերի միասնականացումը,

- իրավաբանությունում իրավահամեմատական մեթոդի կիրառումը,

- իրավակարգավորիչ մրցակցությունը:

Վերջինի նպատակն է մասնավոր հատվածի համար գրավչության ստեղծումը և արդյունքում՝ առավել բարենպաստ իրավահամակարգեր առաջարկելու միջոցով պետությունների կողմից օտարերկրյա կապիտալի ներգրավումը:

Իրավունքի նորմերի գլոբալացման վրա իրավակարգավորիչ մրցակցության ազդեցությունն ուսումնասիրելու և այդ կապակցությամբ որևէ վերլուծություն անելուց առաջ պետք է հասկանալ, թե ինչ է իրենից ենթադրում իրավակարգավորիչ մրցակցությունը: Ընդհանուր առմամբ մրցակցությունը բնական երևույթ է, կամ ավելի շուտ՝ գործընթաց, որն, առավել լայն իմաստով, մի երևույթի ձգտումն է ունենալու առավել նպաստավոր դիրք նմանատիպ այլ երևույթների նկատմամբ: Մրցակցությունը գործունեություն կամ պայման է ձգտելու որևէ ձեռքբերման կամ հաղթանակի մնացածների պարտության հաշվին կամ ունենալով առավելություն մնացածների նկատմամբ²⁸⁶: Հարկ է նշել, որ «մրցակցություն» բառը իրավաբանների և տնտեսագետների մոտ առաջին հերթին կապվում է պետության ներսում տնտեսվարող սուբյեկտների միջև առկա տնտեսական մրցակցությանը, որը պաշտպանելու նպատակով միաժամանակ խրախուսվում և վերահսկվում է կառավարության կողմից: Պետության ներսում տնտեսվարող սուբյեկտների միջև մրցակցությունը նման է պետության կողմից կապիտալի ներգրավմանն ուղղված մրցակցությանը, այն տարբերությամբ, որ կապիտալի ներգրավման մրցակցության դեպքում տնտեսվարող սուբյեկտների փոխարեն հանդես են գալիս պետությունները, իսկ այդպիսի

²⁸⁶Cambridge Dictionary <https://dictionary.cambridge.org/dictionary/english/competition //14.03.2017/>:

մրցակցության խրախուսումը և այդ մրցակցության վերահսկումն իրականացնում են միջազգային կառույցները (Համաշխարհային բանկ, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն): Ի տարբերություն տնտեսվարող սուբյեկտների միջև մրցակցության, որտեղ մրցակիցները փորձում են առավելագույն շահույթ ստանալ հիմնականում ապրանքների կամ ծառայությունների սպառումը մեծացնելու միջոցով, պետությունների միջև ընթացող մրցակցության նպատակն առավելապես կապիտալի ներհոսքի ծավալների մեծացումն է, որն իրականություն է դառնում պետության կողմից առաջարկվող նպաստավոր պայմաններից օգտվող սուբյեկտների քանակի մեծացման հաշվին: Օտարերկրյա ձեռնարկատերերն օգտվում են առաջարկվող պայմաններից, ինչը նրանց հնարավորություն է տալիս օգտագործել իրենց կապիտալն առավել արդյունավետ կերպով (օրինակ՝ հարկային բեռի թեթևացմամբ)՝ ստանալով ավելի մեծ ձեռնարկատիրական օգուտ: Մրցակցությունը բնության մեջ հանդիսանում է կենդանական և բուսական աշխարհի զարգացման՝ էվոլյուցիայի կարևորագույն պայմաններից մեկը: Մրցակցության դրսևորման ձևերը փոփոխությունների են ենթարկվել մարդկության զարգացման ընթացքում, և, եթե սկզբնական շրջանում մրցակցությունը «մարդկանց աշխարհում» դրսևորվում էր անհատական և խմբային (ցեղեր, ազգեր) մակարդակներում, ապա մարդկության հետագա զարգացումը բերեց մրցակցության առավել ինստիտուցիոնալ միավորումների՝ պետությունների միջև, որը դեռևս հնագույն ժամանակներից ընթանում է հիմնականում ռազմական ասպարեզում: Գլոբալիզացիայի արդյունքում պետությունների միջև տնտեսական կապերի մերձեցումը, ինչպես նաև՝ ձեռնարկատիրական կազմակերպությունների հզորացումը բերեց մի իրավիճակի, երբ ռազմական հակադրությունները դարձան անցանկալի, արդյունքում տարբեր պետությունների միջև խնդիրները սկսեցին լուծում ստանալ ֆինանսական ազդեցությունների կամ նմանատիպ լծակների կիրառությամբ: Պետությունները՝ միմյանց վրա ազդեցություն տարածելու և իրենց մրցակցային դիրքն աշխարհում բարելավելու համար ունեն ֆինանսական հզորության կարիք, որն, ի թիվս այլնի, ենթադրում է նաև պետության ֆինանսական ներուժ կամ, այլ կերպ ասած, պետական «հարստության» առկայություն: Պետության ֆինանսական հզորությունը

պայմանավորված է պետության տնտեսության զարգացածության մակարդակով, ինչը դասական իմաստով կապվում է տվյալ պետության արտադրական հզորության հետ: Սակայն, եթե արտադրական հզորությունը շատ դեպքերում կապված է այնպիսի օբյեկտիվ չափանիշների հետ, ինչպիսին մեծ տարածքն է և մեծ բնակչությունը (օրինակ՝ Չինաստանի դեպքում), ապա այդպիսի հատկանիշներից զուրկ պետությունները պետք է ձեռնարկեն այլ միջոցներ: Զարգացող և փոքր պետությունները, ունենալով արտադրական փոքր պոտենցիալ, պետք է փնտրեն տնտեսական զարգացման այլ եղանակներ, որպեսզի ունենան իրենց դերը և կշիռը միջազգային հարցերում, այլ պետությունների հետ հարաբերություններում:

Պետությունները՝ կապիտալի ներգրավման նպատակով մրցակցություն կարող են ծավալել անկախ իրենց մեծ կամ փոքր, զարգացած կամ զարգացող լինելու հանգամանքից: Կապիտալի ներգրավումը, հանդիսանալով տնտեսության զարգացման կարևորագույն պայմաններից մեկը, ներկա աշխարհում կապիտալի հարաբերականորեն²⁸⁷ ազատ շարժի պարագայում, դրսևորվում է ինչպես անմիջականորեն ներդրումների ներգրավմամբ կամ ներդրումային հոսքերի միջանկյալ օղակ լինելով, այնպես էլ՝ օտարերկրյա ձեռնարկությունների համար նոր «տուն» կամ կենտրոն դառնալու հանգամանքով: Ուստի, արդի ժամանակաշրջանում պետությունների մրցակցության դրսևորման մեջ կարևոր դեր է խաղում հենց կապիտալի ներգրավմանն ուղղված մրցակցությունը: Այդ գործում հաջողություն ունենալու համար պետությունները պետք է ստեղծեն որոշակի նպաստավոր պայմաններ, ինչով կարող են խրախուսել օտարերկրյա կամ «դրսի» ձեռնարկատերերի կապիտալի տեղափոխումն իրենց երկիր:

Տնտեսագիտության տեսաբանների հիմնավորած մրցակցությունն իր դրսևորումն է ստանում իրավակարգավորիչ մրցակցության համատեքստում, երբ պետությունների՝ կապիտալի ներգրավմանն ուղղված մրցակցության դեպքում բարենպաստ պայմաններն առաջարկվում են բարենպաստ իրավակարգավորումներում: Այսպիսով, իրավակարգավորիչ մրցակցությունը պատմականորեն զարգացել և ի հայտ է եկել

²⁸⁷Կապիտալի ազատ տեղաշարժը միջազգային մակարդակում, կարող է զիջել տնտեսական ինտեգրացիաներում միավորված երկրների միջև առաջացող կապիտալի ազատ տեղաշարժին: Օրինակ, ԵՄ անդամ պետությունների միջև կապիտալի տեղաշարժը առավել ազատ է քան, ԵՄ անդամ երկրի և երրորդ երկրի միջև կապիտալի շարժը:

բավականին ուշ, պետությունների զարգացման այն փուլում, երբ ռազմական մրցակցությունը հետզհետե գիշեց իր դիրքերը պետությունների տնտեսությունների միջև ընթացող մրցակցությանը: Տնտեսական զարգացման կարևորագույն տարրերից էր կապիտալի հնարավորին չափ մեծ ներհոսքի ապահովումը երկիր, որը նպաստում էր երկրի տնտեսական զարգացմանը: Կապիտալի ներգրավման համար պետությունները, զարգացնելով իրենց տնտեսությունը, արտաքին կապիտալի ներգրավման նպատակով սկսեցին կիրառել տարբեր մեխանիզմներ, որոնց շարքում էական նշանակություն ունեցավ օտարերկրյա կապիտալի համար հենց իրավակարգավորումներով պայմանավորված նպաստավոր պայմանների ստեղծումը:

Հարկ է նշել, որ իրավակարգավորումներով պայմանավորված առավելությունների ստեղծումը և այդպիսով կապիտալի ներհոսքի ապահովումը նախ և առաջ պայմանավորված է ձեռնարկատիրական ոլորտը կարգավորող իրավակարգավորումների դերի մեծացմամբ: Ըստ Ա. Սմիթի. «*շուկան և առևտուրը, ընդհանուր առմամբ, լավ բաներ են, այն պայմանով, որ առկա է մրցակցություն և իրավակարգավորումների շրջանակ, որը բացառում է սոցիալապես վնասակար հետևանքների բերող դաժան եսասիրությունը, ազահությունը և անկշտությունը*»²⁸⁸: Երկրի ներսում առկա իրավակարգավորիչ մրցակցության դեպքում երկու անհրաժեշտ երևույթների՝ մրցակցության և պատշաճ իրավակարգավորումների սերտ կապն առողջ շուկայական հարաբերությունների պայմաններում բերում է տնտեսական մրցակցություն:

Իրավակարգավորիչ մրցակցությունը պետություններում նախ և առաջ ենթադրում է արդյունավետ իրավական, հարկային, ֆինանսական համակարգերի առկայություն, որոնք իրենց արդյունավետությամբ գրավիչ են նաև ոչ ռեզիդենտ անձնանց համար՝ նման իրավական համակարգում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու կամ իրենց ձեռնարկություններն այդպիսի արդյունավետ միջավայր տեղափոխելու համար: Հարկ է նշել, որ պետությունների միջև և պետությունների ներսում առկա մրցակցային մոտեցումներն էականորեն տարբերվում են միմյանցից: Սա նախ և առաջ պայմանավորված է մրցակցության մեջ դրվող տարրերի տարբերությամբ: Այսպես,

²⁸⁸Kurz H. D., Smith A. On markets, competition and violations of natural liberty//Cambridge Journal of Economics, V. 40. Issue 2. 2016. P. 615–638.

Եթե պետության ներսի տնտեսվարող սուբյեկտների միջև մրցակցության դեպքում այդ սուբյեկտներն առաջին հերթին փորձում են առաջարկել առավել որակյալ (որից հետո միայն՝ հնարավորինս էժան) ապրանք կամ ծառայություն, ապա պետությունների իրավակարգավորիչ մրցակցության դեպքում նախ և առաջ առաջարկվում են հնարավորինս թույլ և ճկուն իրավակարգավորումներ: Այսպիսով, կարող ենք ասել, որ եթե պետության ներսում առկա մրցակցությունն այնպիսին է, որի դեպքում մասնակիցները ձգտում են առավել բարձր չափանիշների, ապա պետությունների միջև մրցակցության պարագայում դրսևորվում է իրավագետ Ա. Բերլիի և տնտեսագետ Գ. Մինսի «Ժամանակակից կորպորացիան և մասնավոր սեփականությունը» համատեղ աշխատությամբ առաջարկվող «մրցավազք դեպի ներքև» հայեցակարգը, որի հիմնական գաղափարն այն է, որ մրցակցությունը հաճախ բերում է չափանիշների (ստանդարտների) նվազեցմանը: Ուշագրավ է Ս. Շրամի «մրգավազք դեպի ներքև» երևույթի վերաբերյալ սահմանումը, համաձայն որի, վերջինս մի գործընթաց է, երբ պետությունները մրցակցում են՝ առաջարկելով առավել ցածր գին, իջեցնելով հարկերը, ծախսերը, թուլացնելով կարգավորումները և այլն, միջազային շուկայում գրավիչ դառնալու կամ անցանկալի մասնակիցներից ազատվելու նպատակով²⁸⁹:

Վերոգրյալը ամփոփելով կարող ենք հաստատել, որ իրավակարգավորիչ մրցակցությունը առաջին հերթին հանդիսանում է մրցակցություն այդ երևույթի դասական իմաստով, երբ՝ 1) կողմերը մրցակցում են առաջարկվող առավելություններով սպառողներին գրավելու միջոցով, 2) այն տնտեսագիտորեն հիմնավորված երևույթ է և մի շարք տնտեսագետների կողմից այն համարվում է տնտեսական զարգացման նախապայման, 3) այն ընդունվել է նաև ԱՄՆ դատական պրակտիկայի շրջանակներում և քաղաքագետների կողմից, 4) այս երևույթի հետևանքն է չափանիշների նվազեցման հակվածությունը, ինչը տարածված է «մրցավազք դեպի ներքև» կամ «մրցավազք դեպի արդյունավետություն» անվանումներով:

²⁸⁹Տե՛ս **Sanford F. Schram**, *After Welfare: The Culture of Postindustrial Social Policy*, published by NYU Press, 2000.P. 91

իրավակարգավորիչ մրցակցությամբ իրավունքի գլոբալացման գնահատման նպատակով անհրաժեշտ է իրավական առումով գնահատել հենց «մրցավազք դեպի ներքև» երևույթը, որը, կարծում ենք, իրավական համակարգերի վրա կարող է ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն: Եթե տնտեսագիտության տեսանկյունից «մրցավազք դեպի ներքև» երևույթը, ինչ-որ տեղ կարելի է համարել բացասական երևույթ, ապա՝ իրավական տեսանկյունից վերջինս կարող է համարվել բավականին դրական, ինչի մասին է վկայում սույն երևույթի մեկ այլ՝ «մրցավազք դեպի արդյունավետություն» անվանումը: Նման մրցակցության արդյունքում երկրների մրցակցային դիրքերի բարելավմամբ պայմանավորված, իրավակարգավորումները դառնում են առավել դյուրին և արդյունավետ հատկապես իրավունքի «սպառողների» համար: Ի հակադրություն վերոնշյալի, իրավացիորեն կարող ենք պնդել նաև, որ իրավակարգավորիչ մրցակցության մեջ արդյունավետ դիրք գրավելու պետությունների մղումը կարող է հանգեցնել իրավակարգավորումների չափից ավելի դյուրինացմանը, ինչը հանգեցնում է իրավունքի արդյունավետության նվազեցմանը՝ անտեսելով իրավունքի հանրաճանաչ սկզբունքներն ու արհեստականորեն ստեղծելով իրավունքի բացեր:

Ամփոփելով՝ վստահաբար կարող ենք պնդել, որ իրավակարգավորիչ մրցակցությունը, որպես իրավունքի գլոբալիզացիայի ձև, իրավական տեսանկյունից ընդունելի է այնքանով, որքանով չի հանգեցնում իրավական համակարգում հանրաճանաչ սկզբունքների ոտնահարմանը և չի առաջացնում իրավունքի բացեր: Իրավակարգավորիչ մրցակցության նպատակը պետք է լինի ոչ թե ամեն գնով իրավակարգավորումների գրավչության ապահովումը, այլ արդյունավետ իրավահամակարգի ձևավորումը, որը, բնականաբար, ոչ միշտ է գրավիչ իրավունքի սուբյեկտների համար²⁹⁰:

²⁹⁰Հատկապես օֆշորային և իրավական տեսանկյունից անհիմն իրավակարգավորումներ փնտրող սուբյեկտների դեպքում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Կատարված հետազոտությունների արդյունքների հիման վրա հեղինակը հանգել է հետևյալ եզրակացությունների .

1. Ժամանակակից գլոբալացումը բնորոշվում է որպես ազգերի միջև փոխհարաբերությունների ինտենսիվացում, որը խրախուսում է անդրազգային կառույցների հիմնադրումը, ինչպես նաև՝ մշակութային, տնտեսական, էկոլոգիական, քաղաքական, տեղեկատվական և սոցիալական գործընթացների սերտաճումը համաշխարհային, անդրազգային, ազգային, տարածաշրջանային և տեղային մակարդակներում:

Գլոբալացման հովանու ներքո ինտենսիֆիկացվող վերոնշյալ գործընթացներին չափելի արտահայտություն տալու դեպքում, ինդեքսավորումը հնարավորություն է ընձեռում պատկերացում կազմել գլոբալացման չափի մասին և համեմատել տարբեր երկրների գլոբալացման աստիճանները:

2. Գլոբալացումն օբյեկտիվ գործընթաց է, գործնականորեն հաշվարկվող և գնահատվող երևույթ: Այն որոշակի հարթություններում ազդում է տրամաբանորեն չափելի տարրերի՝ ցուցանիշների վրա, որոնք էլ գլոբալացման աստիճանի չափման հաշվարկների փոփոխականներն են: Ինդեքսների հաշվարկման եղանակները միասնական չեն, ուստի տարբեր ինդեքսներում կիրառվում են տարբեր փոփոխականներ: Միևնույն ժամանակ տարբեր ինդեքսների հաշվարկներում կիրառվող բազմաթիվ տարրեր շատ հաճախ կրկնվում են: Դրանց շարքում են հատկապես առևտուրը, օտարերկրյա ուղղակի կամ ածանցյալ ներդրումները, տուրիզմը, տրանսֆերտային վճարումները, համացանցի օգտագործման հետ կապված մի շարք ցուցանիշներ, իսկ իրավաքաղաքական ոլորտում՝ անդամակցությունը միջազգային կազմակերպություններին: **Այնուամենայնիվ, գլոբալացման ինդեքսների հաշվարկներում չեն ներառվում իրավունքի գլոբալացման դրսևորումները: Կարծում ենք, որ ինդեքսների հաշվարկներն առավել ճշգրիտ դարձնելու նպատակով անհրաժեշտ է հաշվի առնել նաև իրավունքի գլոբալացման ցուցանիշները:**

3. Գլոբալացման ինդեքսներում իրավունքի գլոբալացման տարրերի ներառման հարցը քննարկելու համար անհրաժեշտ է, նախ և առաջ, պարզել, թե գլոբալացման

չափման ինչպիսի ինդեքսներ գոյություն ունեն, և ինչ տարրեր են ներառվում այդ ինդեքսներում: Այնուհետև, ելնելով այն կանխավարկածից, որ իրավունքի գլոբալացումը հանդիսանում է ներկայումս փաստացիորեն տեղի ունեցող գործընթաց, աշխատանքում ներկայացվում են այն իրավական ցուցանիշները, որոնք իրավական առումով կարող են լրացնել ներկայումս առկա ինդեքսները և դարձնել դրանք առավել ճշգրիտ և իրական:

4. Իրավունքի կարգավորումների միասնականացումն անխուսափելիորեն իր ազդեցությունն է ունենում մարդկային գործունեության ոլորտների վրա: Այսպիսով, ընդունելով իրավունքի կարևորությունը հասարակության մեջ, մարդկային գործունեության բոլոր ոլորտներում և ընդգծելով իրավունքի գլոբալացման՝ պետության ընդհանուր գլոբալացման աստիճանը հաշվարկելու գործընթացի վրա ունեցած ազդեցությունը, անհրաժեշտ է վերհանել այդ իրավական տարրերը, որոնք կարող են լինել գլոբալացման աստիճանի ցուցանիշներ, և որոնք անհրաժեշտ է դասել գլոբալացման սինթետիկ ինդեքսների ցուցանիշների շարքին:

5. Գլոբալացման սինթետիկ ինդեքսներում «իրավական ոլորտ» խմբի մեջ առաջարկում ենք ներառել իրավունքի գլոբալացման հետևյալ ցուցանիշները.

3. Ազգային իրավունքում միջազգային իրավական սկզբունքների դրսևորումները:

Ազգային-իրավական համակարգի գլոբալացման, թերևս, առաջին ցուցանիշներից կարող է լինել միջազգային լավագույն փորձի կիրառությունը, ինչի մասին կարող է վկայել միջազգայնորեն ընդունված իրավունքի **սկզբունքների** առկայությունը տվյալ իրավական համակարգում:

4. Միջազգային պայմանագրերի կիրառումը և դրանց ինկորպորացվածության աստիճանը:

Գլոբալացման ինդեքսներում անհրաժեշտ է ուսումնասիրել միջազգային պայմանագրերը ոչ միայն քանակային առումով, ինչպես «միջազգային պայմանագրեր» ցուցանիշի դեպքում, այլև՝ հաշվի առնելով, թե որքան են դրանք կիրառվում այն վավերացրած պետությունում և որքանով են ինկորպորացված ազգային համակարգերում: Միջազգային պայմանագրերը գրեթե բոլոր պետություններում ունեն

առավել բարձր իրավական ուժ, քան տվյալ երկրի օրենքները և մյուս նորմատիվ իրավական ակտերը:

5. Իրավունքի գլոբալացման կարևոր ցուցանիշներից է միջազգային դատական կամ արբիտրաժային նախադեպերի կիրառումը ազգային դատարանների և արբիտրաժային տրիբունալների կողմից որոշումների կայացման գործում, որի շնորհիվ իրավունքի գլոբալացումը օրենսդրական կարգավորումների մակարդակից տեղափոխվում է նախադեպային կարգավորման մակարդակ: Եթե միջազգային դատական նախադեպերի կիրառումը ենթադրում է այնպիսի միջազգային դատարանների կողմից կայացված որոշումների կիրառում, որոնց կայացրած որոշումները միջազգային պայմանագրի ուժով նախատեսում են պարտադիր կիրառելիություն տվյալ երկրում, ապա արբիտրաժային որոշումների նախադեպային կիրառումը առավելապես պայմանավորված է տվյալ արբիտրաժային տրիբունալի հայեցողությամբ: Եթե միջազգային դատարանների կողմից տվյալ պետության համար պարտադիր որոշումների կիրառումը պայմանավորված է տվյալ երկրի իրավակիրառման բարձր մակարդակով, ապա միջազգային արբիտրաժային որոշումների նախադեպային կիրառումը, կրելով ոչ պարտադիր բնույթ, պայմանավորված է իրավագիտակցության մակարդակով և հանդիսանում է տվյալ երկրի իրավունքի գլոբալացման մակարդակը բնութագրող առավել կիրառելի ցուցանիշ: Սույն ցուցանիշի կիրառումը ենթադրում է առավելապես ազգային դատարանների կողմից միջազգային «պարտադիր» նախադեպի կիրառման քանակային ուսումնասիրություն: Օրինակ, ՀՀ իրավական համակարգում միջազգային դատական նախադեպերի կիրառման ցուցանիշ կարող է լինել ոչ միայն ՀՀ Սահմանադրական դատարանի կամ ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներում, այլ նաև ՀՀ Վերաքննիչ, առաջին ատյանի ընդհանուր իրավասության, ինչպես նաև մասնագիտացված դատարաններում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պարտադիր իրավական ուժ ունեցող որոշումներին կատարվող անդրադարձերի, իսկ արբիտրաժային որոշումների դեպքում, համապատասխանաբար, ՀՀ ԱԱՊ կից արբիտրաժային հաստատության (Արբիտրաժային դատարանի) կողմից միջազգային

հեղինակավոր արբիտրաժային տրիբունալների կայացրած որոշումներին կատարվող անդրադարձերի քանակը:

6. Ամփոփելով կատարված ուսումնասիրությունները՝ առաջարկում ենք սինթետիկ ինդեքսներում ավելացնել «իրավական ոլորտ» խումբը, իսկ այդ խմբի ներքո ավելացնել հետևյալ ցուցանիշները. 1) Ազգային իրավունքում միջազգային իրավական սկզբունքների դրսևորումները, 2) միջազգային պայմանագրերի կիրառումը և դրանց ինկորպորացվածության աստիճանը, 3) միջազգային դատական կամ արբիտրաժային նախադեպերի կիրառումը:

7. Գլոբալացման ինդեքսներում իրավական ցուցանիշների ներառման առաջարկը կրում է զուտ տեսական-կիրառական բնույթ, ինչով փորձ է կատարվում ինդեքսներով զբաղվող մասնագետների ուշադրությունը սևեռել նաև այն իրավական տարրերի վրա, որոնք ազդում են ընդհանուր գլոբալացման վրա, և որոնց ներառումը հնարավորություն է տալիս գլոբալացման չափումը դարձնել ավելի ճշգրիտ և օբյեկտիվ: Գլոբալացման ինդեքսներում «իրավունքի գլոբալացում» խմբի ներքո վերոնշյալ ցուցանիշներին թվային արտահայտություն տալը կարող է տեղի ունենալ միջմասնագիտական ուսումնասիրության արդյունքում, երբ իրավագետների կողմից առաջարկվող իրավունքի գլոբալացումը արտահայտող տարրերին գլոբալացման ինդեքսներով զբաղվող մասնագետները կփորձեն տալ ինդեքսներում ներառված մյուս ցուցանիշների հետ համաձայնեցված թվային արտահայտություններ:

8. Արդի ժողովրդավարական, իրավական պետությունում գլոբալացման գործընթացներում միասնականացման է ենթարկվում գրեթե ամեն ինչ՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հասկացություններից մինչև պետական կառավարման ու կառուցվածքի ձևեր:

Ինչպես հետևում է ժամանակակից իրավաստեղծ պրակտիկայի վերլուծությունից, համաշխարհային գլոբալացումից անմասն չեն մնում նաև հասարակական հարաբերությունները կարգավորող ընդհանուր կանոնները՝ իրավունքի նորմերը: Իրավունքի նորմերի գլոբալացման ապահովման գործում էական նշանակություն ունեն հատկապես հետևյալ գործոնները (երևույթները)՝

- զարգացած պետությունների կողմից իրենց ազդեցության տարածումը զարգացող պետությունների վրա,

- վերազգային կազմակերպությունների ստեղծումը և դրանց մասնակիցների իրավական համակարգերի միասնականացումը,

- իրավաբանության մեջ իրավահամեմատական մեթոդի կիրառումը,

- իրավակարգավորիչ մրցակցությունը:

Վերջինիս նպատակն է մասնավոր հատվածի համար գրավչության ստեղծումը և արդյունքում՝ առավել բարենպաստ իրավահամակարգեր առաջարկելու միջոցով պետությունների կողմից օտարերկրյա կապիտալի ներգրավումը:

9. Իրավունքի նորմերի գլոբալիզացիայի վրա իրավակարգավորիչ մրցակցության ազդեցությունն ուսումնասիրելու և այդ կապակցությամբ որևէ վերլուծություն անելուց առաջ պետք է հասկանալ, թե ինչ է իրենից ենթադրում իրավակարգավորիչ մրցակցությունը: Ընդհանուր առմամբ մրցակցությունը բնական երևույթ է, կամ ավելի շուտ՝ գործընթաց, որն առավել լայն իմաստով, մի երևույթի ձգտումն է ունենալու առավել նպաստավոր դիրք նմանատիպ այլ երևույթների նկատմամբ: Իրավակարգավորիչ մրցակցությունն առաջին հերթին հանդիսանում է մրցակցություն այդ երևույթի դասական իմաստով, երբ՝

- կողմերը մրցակցում են առաջարկվող առավելություններով սպառողներին գրավելու միջոցով,

- երկրորդ՝ այն տնտեսագիտորեն հիմնավորված երևույթ է և մի շարք տնտեսագետների կողմից այն համարվում է տնտեսական զարգացման նախապայման,

- երրորդ՝ այն ընդունվել է նաև ԱՄՆ դատական պրակտիկայի շրջանակներում:

- չորրորդ, այս երևույթի հետևանքն է՝ չափանիշների նվազեցման հակվածությունը, ինչը հաճախ ներկայանում է «մրցավազք դեպի ներքև» կամ «մրցավազք դեպի արդյունավետություն» անվանումներով:

10. Իրավակարգավորիչ մրցակցությամբ իրավունքի գլոբալացման գնահատման նպատակով անհրաժեշտ է իրավական առումով գնահատել հենց «մրցավազք դեպի ներքև» երևույթը, որը, կարծում ենք, իրավական համակարգերի վրա կարող է ունենալ

ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն: Եթե տնտեսագիտության տեսանկյունից «մրցավազք դեպի ներքև» երևույթը, ինչ-որ տեղ կարելի է համարել բացասական երևույթ, ապա՝ իրավական տեսանկյունից վերջինս կարող է համարվել բավականին դրական, ինչի մասին է վկայում սույն երևույթի մեկ այլ՝ «մրցավազք դեպի արդյունավետություն» անվանումը: Նման մրցակցության արդյունքում երկրների մրցակցային դիրքերի բարելավմամբ պայմանավորված, իրավակարգավորումները դառնում են առավել դյուրին և արդյունավետ հատկապես իրավունքի «սպառողների» համար:

11. Ի հակադրություն վերոնշյալի, իրավացիորեն կարող ենք պնդել նաև, որ իրավակարգավորիչ մրցակցության մեջ արդյունավետ դիրք գրավելու պետությունների մղումը կարող է հանգեցնել իրավակարգավորումների չափից ավելի դյուրինացմանը, ինչը հանգեցնում է իրավունքի արդյունավետության նվազեցմանը՝ անտեսելով իրավունքի հանրաճանաչ սկզբունքներն ու արհեստականորեն ստեղծելով իրավունքի բացեր: Հետևաբար, վստահաբար կարող ենք պնդել, որ իրավակարգավորիչ մրցակցությունը, որպես իրավունքի գլոբալիզացիայի ձև, իրավական տեսանկյունից ընդունելի է այնքանով, որքանով չի հանգեցնում իրավական համակարգում հանրաճանաչ սկզբունքների ոտնահարմանը և չի առաջացնում իրավունքի բացեր: Իրավակարգավորիչ մրցակցության նպատակը պետք է լինի ոչ թե ամեն գնով իրավակարգավորումների գրավչության ապահովումը, այլ արդյունավետ իրավահամակարգի ձևավորումը, որը, բնականաբար, ոչ միշտ է գրավիչ իրավունքի սուբյեկտների համար:

12. Հասկանալու համար, թե իրավունքի գլոբալացումը ինչպիսի ազդեցություն է ունենում պետության և հասարակության վրա, անհրաժեշտ է անդրադարձ կատարել նաև իրավունքի գործառույթներին: Իրավունքի գլոբալացման դեպքում տարբեր համակարգերում այդ գործառույթները կատարող իրավական նորմերը միասնականացվում են: Արդի գլոբալ պայմաններում իրավունքի հիմնական գործառույթները կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

- 1) Հասարակական հարաբերությունները կարգավորող գործառույթներ (մարդկանց գործողություններին հաղորդում են համաձայնեցվածության, կարգավորվածություն, վստահություն),
- 2) Հասարակական կարգի պաշտպանության միջոցներ (հասարակության վտանգավոր և վնասակար արարքների համար սահմանում է իրավական պատասխանատվության միջոցներ),
- 3) Գլոբալ առաջընթացի համատեքստում հասարակության թարմացման և զարգացման գործառույթներ (նպաստում է այն սոցիալական կապերի զարգացմանը, որոնցով հետաքրքրված է հասարակությունը),
- 4) Արդի գլոբալ (սոցիալական, էկոլոգիական և այլ) խնդիրների լուծման ուղղված գործառույթներ,
- 5) Հասարակությունում անհատի իրավունքները, ազատություններն ու պարտականությունները սահմանող գործառույթներ:

Այսպիսով, կարելի է ամփոփել, որ իրավական գլոբալացումը սրբագրումներ է կատարում իրավունքի էության, իրավագիտակցության, իրավական գաղափարախոսության, իրավակարգավորումների, իրավական գործառույթների և այլ իրավական երևույթների ձևի ու բովանդակության մեջ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1) Միջազգային փաստաթղթեր և նորմատիվ իրավական ակտեր

1. «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր», (ընդ. 10.12.1948թ.)
<http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=1896/./12.06.2017:>
2. «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» (ընդ. 16.12.1966թ.)
միջազգային դաշնագիր <http://www.idcarmenia.am/sites/default/files/attachments/dahsnagir.pdf/./12.06.2017:>
3. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների» պաշտպանության
մասին կոնվենցիա (ընդ., 04.11.1950թ.) <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=20870/./27.08.2017>
4. Կոնվենցիա Անդրազգային Կորպորացիաների մասին (06.03.1998թ.):,
<http://www.irtek.am/views/act.aspx?aid=44010/12.05.2018թ./:>
5. «Շրջակա միջավայրի վրա ներգործության միջոցների ռազմական կամ
ցանկացած այլ թշնամական օգտագործման արգելման» մասին Կոնվենցիա (ընդ.
18.05.1977թ.) <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=76863/20.05.2017թ./:>
6. «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու» մասին
կոնվենցիա (09.12.1948թ.), <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75835/20.05.2017թ./:>
7. Декларация мирового этноса (прин.04.09.1993г.) <http://anthropology.ru/ru/text/dokumenty/deklaraciya-mirovogo-etosa#deklaraciya-mirovogo-etosa-refref/./12.09.2017/:>
8. ՀՀ Սահմանադրություն (ընդ. 05.07.1995թ., փոփ. 27.11.2005թ., 06.12.2017թ.),
<http://www.president.am/hy/constitution-2015/./24.09.2018/:>
9. «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք (ընդ. 07.02.2018թ.,
ուժի մեջ է մտել 09.04.2018թ.), <https://www.arlis.am/documentview.aspx?docID=68011/./12.07.2017:>
10. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք (ընդ.01.07. 1998) <https://www.arlis.am/documentview.aspx?docID=68011/./12.09.2017/:>
11. «ՀՀ Փաստաբանության մասին» ՀՀ օրենք (14.12.2004թ.) <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2255/./05.02.2017/:>

12. ՀՀ քրեական օրենսգիրք (ընդ. 18.04.2003թ.), հոդվ. 393,394, http://www.arlis.am/Document_View.aspx?docid=69646/20.05.2017թ./:
13. «Պաշտոնական վիճակագրության մասին» ՀՀ օրենք (ընդ. 21.03.2018թ.), <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150563/12.05.2018թ./:>
14. «Պաշտոնական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի նախագիծ <https://www.e-draft.am/projects/433/12.05.2018թ./:>
15. Մաքսային միության մաքսային տարածքում ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտիների և «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի հետ կապված հարցերի վերաբերյալ» համաձայնագիր (18.06.2010թ.) <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=95232/12.08.2018/>
16. Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ցուցումներին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 42 արձանագրային որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ Կառավարության № 13 արձանագրային որոշում(05.04.2012թ.), <https://www.e-gov.am/protocols/item/159/,/15.06.2018/:>
17. Փաստաբանի վարքագծի կանոնակարգ (ընդ.11.02.2012թ.) <http://advocates.am/images/general meetings/2012/ Kanonagirk 11.02.2012. pdf//05.02.2017/:>
18. Конституция Исламской Республики Иран (прин.15.11. 1979 г.), http://www.cis-emo.net/sites/default/files/imagesimce/constitution_of_iran.pdf/,/05.10.2018/:
19. Конституция Исламской Республики Пакистан (12.04.1973 г.), <https://www.worldislamlaw.ru/?p=245/,/05.10.2018/:>
20. Конституция США (прин. 25.05.1787), https://meet-usa.com/ru/article/konstitucija_ssha/
21. Конституция Швеции (Королевства Швеция)<https://legalns.com/download/books/cons/sweden.pdf/15.03.2017/:>
22. Swiss Civil Code of 10 December 1907 (Status as of 1 January 2017) <https://wipolex.wipo.int/ru/legislation/details/17179/,/16.04.2017/:>
23. Бангалорские принципы поведения судей. ООН (прин.26.11.2002), http://www.un.org/ru/documents/declconv/conventions/bangalore_principles.shtml20.02.2017/:

24. Basic Principles on the Role of Lawyers (Adopted by the 8th United Nations Congress on the Prevention of Crime and the Treatment of Offenders, Havana, Cuba 27 August to 7 September 1990), <https://www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/RoleOfLawyers.aspx>,/15.02.2017/;

25. Council of Europe Recommendation Rec(2000)21 of the Committee of Ministers to Member States on the freedom of exercise of the profession of lawyer, https://www.asianajaliitto.fi/files/19/R2000_21_Freedom_of_exercise_of_the_profession_of_lawyer.pdf,/15.02.2017/;

26. Resolution of the European Parliament of 23 March 2006 on the legal professions and the general interest in the functioning of legal systems, (23.06.2006) <http://ecec.net/about-ecec/charter-for-liberal-professions/>,/15.02.2017/;

2) Դատական պրակտիկայի նյութեր

1. Էրիկ Վալերիկի Մարգարյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2014 թ. մարտի 28-ի թիվ ՍԴ3/0045/01/13 որոշումը <https://www.arlis.am/documentview.aspx?docid=90987/>,/15.08.2018/;

2. Ֆրունզե Գալստյանի գործով վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09 որոշում <http://www.datalex.am/?app=AppPrecedentCaseSearch&page=default&tab=criminal/>,/15.06.2018/;

3. Cheney v. Conn (H.M. Inspector of Taxes)(1) Cheney v Commissioners of Inland Revenue (1964-1968) 44 TC 217. https://library.croneri.co.uk/cch_uk/btc/44-tc-217/ 15.07.2017/;

4. Donoghue v Stevenson, Case Report, House of Lords, 26.05. 1932, <https://www.scottishlawreports.org.uk/resources/dvs/donoghue-v-stevenson-report.html> /15.07.2017/;

3) Մասնագիտական գրականություն (մենագրություններ, դասագրքեր և հոդվածներ)

1. **Ավետիսյան Վ.Դ.**, Հռոմեական մասնավոր իրավունք, Եր., , ԵՊՀ հրատ., 2013, 216 էջ:

2. Դատական նախադեպը որպես իրավունքի աղբյուր: Հոդվածների ժողովածու. Եր. Տիգրան Մեծ, 2005. 144 էջ:

3. Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով, դատական համակարգի անկախության վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի գեկույց. ընդունվել է Վենետիկի հանձնաժողովի կողմից 82-րդ լիագումար նիստում (Վենետիկ, 12-13-ը մարտի 2010թ.). Մաս 1, Վենետիկ, 2010, 57 էջ:

